Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 15-ի N 39 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՐՏԱՇԱՏ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ 5

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 7

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

2. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 16

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 21

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ 40

4.1. Արդյունաբերության,ՓՄՁ ոլորտների իրավիճակի վերլուծություն 40

4.2. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները 53

4.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները 53

4.4. Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները 56

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 60

5.1. Կրթություն **60**

5.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն 60

5.1.2. Կրթության ոլորտի ռազմավարությունը 77

5.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդություն **79**

5.2.1. Մշակույթի ոլորտի իրավիճակի վերլուծություն 79

5.2.2. Մշակույթի ոլորտի ռազմավարություն 93

5.3 Սպորտ և երիտասարդություն **94**

5.3.1 Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն 95

5.3.2. Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի ռազմավարություն 101

5.4. Առողջապահություն **101**

5.4.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն. 101

5.4.2 Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և 116

ռազմավարությունը

5.5. Սոցիալական պաշտպանություն 123

5.5.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն 123

5.5.2. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 149

5.5.3. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն 151

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 154

6.1. Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը 154

6.2 Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը 168

7. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 171

7.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն 171

7.2. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը 180

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 182

8.1. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը 182

8.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը 188

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 192

9.1. Բնակավայրերի տարածական պլանավորում 192

9.2. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում 193

9.3. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում 194

9.4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում 195

9.5. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում 196

9.6. Մարզական օբյեկտների հիմնանորոգում 196

9.7. Բազմաբնակարան բնակելի շենքեր և բնակելի տներ 197

9.8. Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում 198

9.9. Հրշեջ փրկարարական ջոկատների կառույցների հիմնանորոգում 199

10. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 199

10.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն 199

10.2. Ճանապարհաշինություն. տրանսպորտային ենթակառուցվածքներ 199

10.3 Ջրամատակարարում 203

10.4. Գազամատակարարում 209

11. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 213

11.1. Տարածքային կառավարում 213

11.1.1 Վարչատարածքային բաժանում 213

11.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ 214

11.1.3 Մարզպետարանի կառավարում 216

11.1.4 Քաղաքացիական ծառայություն 217

11.1.5 Էլեկտրոնային կառավարում 218

11.2. Տեղական ինքնակառավարում 219

11.2.1 Համայնքային խնդիրներ 219

11.2.2 Համայնքային ծառայություն 222

11.2.3 Տեխնիկական ապահովվածություն 225

11.2.4 Համայնքների զարգացում 226

11.3. Քաղաքացիական հասարակություն 232

12. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 235

12.1 Մարզի առավել վտանգավոր տարածքներ 235

12.2 Բնական աղետներ 237

12.3 Տեխնածին աղետներ 238

12.4 Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում 239

12.5 Քաղաքացիական պաշտպանության վիճակը, առկա խնդիրները և առաջարկվող միջոցառումները 239

13. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 241

14. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 249

15. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տնտեսական զարգացման հեռանկարները, Արարատի մարզի տարբեր համայնքներում ՀՀ նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ բարձրացված հիմնախնդիրները և նրանց լուծման ուղիները ներառվեցին ՀՀ նախագահի 2008թ. հուլիսի 30-ի կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում: Կարճ ժամանակում դրանց զգալի մասն իրենց լուծումները ստացան, իսկ չլուծված խնդիրները ընդգրկվեցին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 353-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:

Զարգացման ծրագրի իրականացման ընթացքում լուծվեցին առաջադրված բազմաթիվ հիմնախնդիրներ, առաջ եկան նոր գաղափարներ, սկիզբ առան նոր մտահղացումներ, սակայն բնականաբար մնացին նաև չլուծված խնդիրներ, որոնց տրվող լուծումները դարձան առաջնահերթ, օրվա խնդիր, հրատապ լուծման ենթակա:

Սույն՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝ ՀՀ Արարատի մարզի ավարտվող զարգացման ծրագրի տրամաբանական շարունակությունն է և որի նպատակն է ապահովվել Արարատի մարզի տնտեսության շարունակական զարգացումը որակական նոր, արդիական մոտեցումներով:

Արարատի մարզը իր զարգացած գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ և իր տնտեսական ներուժով Հայաստանի Հանրապետության կարևորագույն մարզերից է: Արարատի մարզի տնտսկան զարգացումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսության համար:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին»:

Ինչպես նախորդ՝ Արարատի մարզի զարգացման քառամյա ծրագիրը սույն զարգացման ծրագիրը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի:

Հավատարիմ մնալով՝ նախորդ զարգացման ծրագրի կարգախոսին՝ <<<Հայացքով դեպի գյուղական համայնքներ>>, ծրագրի իրականացումը կնպաստի մարզի 93 գյուղական համայնքներին մարտահրավերներին դիմակայելուն և կապահովվի նրանց կողմից առաջնահերթության սկզբունքներով ներկայացրած հիմնախնդիրների լուծմանը:

Արարատի մարզի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող սույն ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է 2011-2014թթ. ՀՀ Արարատի մարզի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի հիմնական ուղղությունները, ինչպես նաև մարզային զարգացման հանձնաժողովում, ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկված մասնագետների հարուստ փորձը:

Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի աջակցություն է ցուցաբերել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, ինչպես նաև համագործակցությունը ճյուղային նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման այլ մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ:

Մասնակցային գործընթացի ապահովման համատեքստում, ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները:

Մարզի զարգացման ծրագիրը Արարատի մարզում ներդրումներ կատարելու առաջարկ է ուղղված միջազգային, դոնոր կազմակերպություններին, գործարարներին, շահագռգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Արարատի մարզպետարանն ակնկալում է, որ ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկությունները հետաքրքրություն կներկայացնեն նշված անձանց ու կազմակերպությունների համար և պատրաստ է բոլոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության՝ հանուն Արարատի մարզի կայուն զարգացման:

Համոզված եմ, որ այս և նմանատիպ այլ ծրագրերի հետևողական և արդյունավետ իրականացման շնորհիվ կապահովվի Արարատի մարզի տնտեսության զարգացման հզոր և կայուն առաջընթաց:

Ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Արարատի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված ոլորտային աշխատանքային խմբերին, աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի անունից հայտնում եմ իմ երախտագիտությունը և խորին շնորհակալությունը:

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետ՝ **Ռ. Աբրահամյան**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ՀԶԾ	Հեռանկարային զարգացման ծրագիր
ՀԶՌԾ	Հեռանկարային զարգացման վ ռազմավարական ծրագիր
ՀՍՆՀ	Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր
ՄԶԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՄԶԾ	Մարզի զարգացման ծրագիր
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ
ՍՄՎ	Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՈՒԹՀՎ	Ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների վերլուծություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության հեղինակած Հայաստանի Հանրապետության կառավարություն 27 մարտի 2014 թվականի N 442–Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում հիմնական ռազմավարական գերակայությունները ներառում են կայուն և արագ տեմպերով Հայաստանում տնտեսական աճի ապահովումը, նպատակային սոցիալական քաղաքականությունը և պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տեսլականում կարևորվում է ոչ միայն աղքատության հաղթահարումը, այլև տևական տնտեսական աճի քաղաքականության իրականացման ապահովումը:

2. Կառավարության ծրագրերում, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարություն 27 մարտի 2014 թվականի N 442 –Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, ուշադրության են արժանացել Հայաստանում տնտեսական աճի արագացմանը զուգընթաց խորացող տարածքային զարգացման անհամաչափությունների վերացման խնդիրները, որը ենթադրում է, որ անհրաժեշտ կլինի էականորեն արագացնել մարզերի տնտեսական զարգացման տեմպերը, դրանք մոտեցնելով Երևանի զարգացման տեմպերին, այնպես անել, որ դրանք գերազանցեն մայրաքաղաքի տնտեսական աճի տեմպերին: Այդ տեմպերն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնց մեջ էական դեր կխաղա ինչպես պետական, այնպես էլ, հատկապես մասնավոր ներդրումների վերաուղղումը Երևանից դեպի մարզեր, ինչպես նաև դրանց միջմարզային բաշխման հավասարեցման խրախուսումը:

3. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարություն 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված ծրագրի՝ տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացի համար: Հայաստանի Հանրապետության կառավարության գործողություններն այս ոլորտում իրականացվելու են հետևյալ ուղղություններով՝

1) իրականացվելու է Երևանի բեռնաթափման համալիր ծրագիրը՝ պետական, կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառույթներ իրականացնելով հանրապետության մյուս տարածքներում, բարձրացնելով այլ քաղաքների դերը հանրային գործընթացներում

2) պետական աջակցության տարբեր ձևերի կիրառմամբ, պետություն - մասնավոր հատված համագործակցությամբ, նպատակային ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ խրախուսվելու են սոցիալ-տնտեսական առումով առանձնահատուկ նշանակություն ունեցող համայնքների զարգացման տեմպերի արագացումը և ներդրումային ակտիվությունը

3)մշակվելու է տարածքային համաչափ զարգացման նոր գործիքակազմ

4)Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպաստելու է համայնքներում մրցակցային առավելությունների վրա հիմնված տնտեսական զարգացման տարբեր մոդելների ներդրմանը

5)սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար իրականացվելու են հատուկ օժանդակության ծրագրեր:

4.Համաձայն ԿԶԾ-ում ներկայացված փորձագիտական գնահատումների՝ 2000-2006թթ. տնտեսական աճի միջին տարեկան տեմպը Երևանում կազմել է 16.8%՝ նույն ժամանակահատվածում երկրում արձանագրված միջին տարեկան 11.5% տնտեսական աճի պարագայում: Միևնույն ժամանակ, Երևանից դուրս տնտեսական զարգացման միջին տեմպը 2000-2006թթ. կազմել է 6.3%, այդ թվում՝ Հանրապետության այլ քաղաքներում՝ 7.6%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 5.4%: Ինչ վերաբերում է մարզային աճի տեմպերին, ապա միակ մարզը, որտեղ աճի տեմպերը գերազանցել են միջին հանրապետական ցուցանիշները՝ Սյունիքի մարզն է (միջին տարեկան 18.3% աճ)՝, որը հիմնականում պայմանավորված է լեռնահանքային արդյունաբերության արագ զարգացմամբ: Ըստ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների վերլուծությունները վկայում են, որ տնտեսական զարգացման մակարդակների տարբերության խորացման միտումը Երևանի և մարզերի միջև բնորոշ է եղել բոլոր մարզերին:

5. Ըստ մարզերի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշների վերլուծությունները վկայում են, որ տնտեսական զարգացման մակարդակների տարբերության խորացման միտումը Երևանի և մարզերի միջև բնորոշ է եղել գրեթե բոլոր մարզերին: Ինչ վերաբերում է Արարատի մարզին, ապա մարզի զարգացման աճի տեմպերը հետ չեն մնում միջին հանրապետական ցուցանիշներից: Արարատի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության խոշոր տնտեսական միավորներից մեկը:

6.Չնայած Արարատի մարզում գրանցված աճի տեմպերին, մարզն այսօր ունենալով ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևոր դիրք, բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով Հանրապետության ամենախոշոր վարչական և տնտեսական միավորներից մեկը, դեռևս մնում է որպես Հանրապետության սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ ունեցող տարածքներից մեկը: Այս առումով Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման սույն ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովումն է:

7.Արարատի ՄԶԾ-ը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած հայեցակարգի: Ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման և իրականացման ընթացքում Արարատի մարզպետարանում կուտակված փորձը:

8.ՄԶԾ առանցքը մարզի բոլոր համայնքների հիմնախնդիրներն են, որոնց լուծման գործընթացը մշտապես գտնվել է Արարարտի մարզպետարանի օրակարգում: Մարզի քաղաքային և գյուղական բոլոր համայնքներում բնակչության տարբեր սոցիալական խմբերի, գործարարների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ մարզպետարանի կազմակերպած շփումների արդյունքում, համայնքներից ստացված առաջարկությունները, դիտողությունները, հանձնարարականների տեսքով պարբերաբար իջեցվել են մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և անհրաժեշտության դեպքում դարձել հիմնախնդիրների լուծման ծրագրեր: Մարզպետարանի աշխատանքային խմբերի՝ մարզի համայնքների բնակչության հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների հիմնական նպատակն է եղել մարզի բնակչության իրական սոցիալ-տնտեսական վիճակի բացահայտումը, բնակիչներին մտահոգող և նրանց կողմից առաջ քաշված կարևորագույն հարցերի քննարկումը, հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև մարզի զարգացման խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը: Արդյունքում մարզի հիմնախնդիրները պարբերաբար ներկայացվել են կենտրոնական իշխանությանը և դրանց լուծումն ընթացք է ստացել:

9.Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը: Ոլորտային խնդիրները քննարկվել են ճյուղային նախարարություններում, հանրապետական գործադիր և պետական կառավարման մարմիններում:

10.Մարզի զարգացման ծրագրի մշակման ինստիտուցիոնալ համակարգը ձևավորվել և աշխատանքներն ընթացել են հետևյալ հերթականությամբ.

11.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի որոշմամբ ստեղծվել են Արարատի մարզային զարգացման հանձնաժողով, մարզի զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ, ոլորտային աշխատանքային տաս խմբեր: Նշված ինստիտուցիոնալ կառույցները հետևյալներն են՝

1) Արարատի մարզային զարգացման հանձնաժողով (կազմը՝ 15 հոգի)

2) Արարատի ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ (կազմը՝ 14 հոգի)

3) Արարատի ՄԶԾ կրթության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 8 հոգի, ոլորտը՝ կրթություն)

4)Արարատի ՄԶԾ առողջապահության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտը՝ առողջապահություն)

5)Արարատի ՄԶԾ քաղաքաշինության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 8 հոգի, ոլորտը՝ քաղաքաշինութուն)

6)Արարատի ՄԶԾ մշակույթի և սպորտի ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտները՝ մշակույթ, սպորտ, երիտասարդության հարցեր)

7)Արարատի ՄԶԾ սոցիալական ապահովության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 8 հոգի, ոլորտները՝ սոցիալական ապահովություն, երեխաների իրավունքների պաշտպանություն)

8)Արարատի ՄԶԾ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 12 հոգի, ոլորտները՝ տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն)

9) Արարատի ՄԶԾ համայնքային ենթակառուցվածքների զարգացման ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 7 հոգի, ոլորտները՝ քաղաքաշինություն, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ)

10)Արարատի ՄԶԾ արդյունաբերության, առևտրի, մասնավոր հատվածի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 6 հոգի, ոլորտները՝ արդյունաբերություն, զբոսաշրջություն, առևտուր, մասնավոր հատվածի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացում)

11)Արարատի ՄԶԾ գյուղատնտեսության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 9 հոգի, ոլորտը՝ գյուղատնտեսություն)

12)Արարատի ՄԶԾ և բնապահպանության ոլորտային աշխատանքային խումբ (կազմը՝ 6 հոգի, ոլորտը՝ բնապահպանություն):

12. Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկվել են Մարզային զարգացման հանձնաժողովի կողմից, ընդգրկվել են ծրագրում և ծրագրի նախնական տարբերակը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի միջոցով ներկայացվել է ճյուղային նախարարություններին ու պետական կառավարման այլ մարմիններին: Ծրագրի նախագծի նախնական տարբերակը քննարկման է դրվել նաև ՀՀ տարածքային կառավարման և և արտակարգ իրավիճակների նախարարության և Արարատի մարզպետարանի պաշտոնական կայքերում՝ հասարակայնության հետ լայն քննարկում ապահովելու նպատակով: Նախարարություններից, պետական կառավարման մարմիններից և հասարակայնությունից ստացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա ծրագրի նախագիծը մարզպետարանում լրամշակվել է: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում բոլոր շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների և Արարատի մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել ՄԶԾ նախագծի նախնական տարբերակի լայն քննարկում, որի արդյունքում արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել և ընգդրկվել նախագծում:

13. ՄԶԾ-ի վերջնական տարբերակը հաստատվել է ՄԶՀ նախագահի՝ ՀՀ Արարատի մարզպետի կողմից և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին:

14. Այս քննարկումներից և լրամշակումներից հետո ՄԶԾ վերջնական տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարություն հաստատմանը:

15. **ՀՀ Արարատի մարզի զարգացման ծրագրի կառուցվածքը** - Մարզի ընդհանուր համառոտ բնութագրից հետո, 3-րդ գլխում տրվում է աղքատության գնահատականը, վերլուծվում են դրա հիմնական պատճառները, վերջին տարիների միտումները և նախանշվում են այն ոլորտները, որտեղ ինստիտուցիոնալ բարեփոխումները որոշ ներդրումային ծրագրերի հետ համատեղ, հնարավորություն կտան առավել նպատակային և արդյունավետ ձևով կրճատել աղքատության մակարդակը: Այդ ոլորտներն են գործարար և ներդրումային միջավայրի զարգացումը, փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցումը, արդյունաբերությունը, էներգետիկան, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, սոցիալական ոլորտները (առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն), համայնքների զարգացումը (կառավարման ապակենտրոնացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում, մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային ենթակառուցվածքներ) և բնապահպանությունը:

16.Արարատի մարզի արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի ոլորտների վերաբերյալ վերլուծությունները, ոլորտների զարգացման հեռանկարները, ռազմավարությունը ներկայացված են գլուխ 4-ում: Այստեղ կարևորվել է մարզի արդյունաբերության բնագավառներում ունեցած հզոր ներուժի հիման վրա ոլորտների բազմաճյուղ զարգացումը:Մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղությունը գործարար ակտիվության բարձրացումն է մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության միջոցով: Այս գլխում վերլուծվում է մարզի տնտեսության իրավիճակը, նրա ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները, տնտեսության զարգացման աջակցմանն ուղղված միջոցառումները:

17.Մարզի սոցիալական ոլորտներում իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրները և զարգացման համար առաջարկվող միջոցառումները (Գլուխ 5) նպատակաուղղված են այդ ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը: Այս ուղղությամբ վերջին տարիներին բավականաչափ ծրագրեր են իրագործվել, սակայն ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ իրագործելու համար զգացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարության ու դոնորների առավել համակարգված գործունեության անհրաժեշտությունը:

18.Մարզի գյուղատնտեսության իրավիճակը և ոլորտի ռազմավարությունը վերլուծված է Գլուխ 6-ում: Այս ոլորտում կարևոր նպատակ է ֆերմերների եկամուտների ավելացումը և որպես արդյունք՝ գյուղական աղքատության կրճատումը, հիվանդությունների կանխարգելումը. գյուղական ենթակառուցվածքների զարգացումը, ֆերմերներին մատուցվող ուսուցողական-խորհրդատվական ծառայությունների բարելավումը, գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության աճի ապահովումը:

19.7-րդ գլխում ներկայացված է բնապահպանությունը, որտեղ առաջնային խնդիր է համարվում Արարատի մարզում: Բնապահպանական ռազմավարությունների խորը վերլուծությունը, միասնական արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական

հզորացմանը: Այստեղ ներկայացված են բնապահպանական իրավիճակը, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, արոտավայրերի պահպանման և շահագործման, դրանց կառավարման համակարգում համայնքային ընդգրկվածության ապահովման խնդիրները. էկոլոգիապես անվտանգ արդյունաբերության զարգացումը. բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացումը, մարզի լեռնային արոտավայրերի վիճակի գնահատումը և նրանց բարելավման միջոցառումների մշակումը և այլն:

20.8-րդ գլխում ներկայացված է Արարատի մարզի զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը: Այստեղ կարևորվել է Արարատի մարզի համար զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Նշված է, որ արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և ոլորտը կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին:

21.9-րդ գլխում ներկայացված է քաղաքաշինության ոլորտը, որտեղ ընդգրկված են մարզի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի կառավարման գործի բարելավման և այլ քաղաքաշինական խնդիրներ:

22. 10-րդ գլուխը նվիրված է մարզային և համայնքային ենթակառուցվածքներին: Այստեղ կարևորվել են մարզի և համայնքների ճանապարհային, ջրամատակակաման և գազամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազիֆիկացման գործընթացի ավելի արագ շարունակումը, բնակարանաշինության խնդիրները և այլն:

23.Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն ու քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված խնդիրները ներկայացված են 11-րդ գլխում: Այստեղ կարևորվել է տարածքային կառավարման և ՏԻ բնագավառի օրենսդրության կատարելագործումը, համայնքների, ինչպես նաև մարզպետարանի կարողությունների հզորացումը, քաղաքացիական հասարակության հետ հարաբերություններում մասնակցային գործընթացի ապահովումը՝ մարզային և համայնքային մակարդակի որոշումների ընդունման, ծրագրերի կազմման և իրագործման գործընթացում:

24.Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրները ներկայացված են 12-րդ գլխում, որտեղ տրված են բնական և տեխնածին աղետների կանխարգելման և Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման, սահմանված կարգով դրանց ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումները:

25.13-րդ գլուխը նվիրված է ՄԶԾ իրագործման ընթացքի մոնիտորինգին և գնահատմանը: Այստեղ հիմնավորված է այս գործառույթների անհրաժեշտությունը՝ ծրագրի արդյունավետ կառավարման, հետագայում նրանում անհրաժեշտ շտկումներ և փոփոխություններ անելու առումով: Ծրագրի արդյունավետ իրագործման երաշխիքը այս գործառույթների գծով մարզպետարանի կարողությունների բարձրացումն է, որի ուղղությամբ նախատեսված են որոշակի միջոցառումներ: Այս գլխում առանձին աղյուսակով ներկայացված են Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, դրանց իրագործումից ակնկալվող արդյունքը և արդյունքի մոնիտորինգի ցուցանիշները, ինչպես նաև մարզի տնտեսական զարգացումը և աղքատությունը բնութագրող համալիր ցուցանիշները:

26.Ծրագրի բոլոր հիմնական բաժինները շարադրված են հետևյալ տրամաբանական կառուցվածքով.

1) Ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն
2) Ոլորտի զարգացման հիմնախնդիրների բացահայտում
3) Ծրագրի նպատակները և ռազմավարություն
4) Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ միջոցառումներ:

27. Յուրաքանչյուր ոլորտի զարգացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է 14-րդ գլխում: Ծրագրի իրականացման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 89,110 մլրդ դրամ: Համայնքների քառամյա ծրագրերով ոլորտային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 17,94 մլրդ դրամ:

28.Արարատի մարզի զարգացման ծրագրի գաղափարախոսությունը, ռազմավարությունը համահունչ են Հայաստանի Հանրապետության կարևորագույն պետական ծրագրերին:

29.Ծրագրի նպատակը մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված տևական և կայուն քաղաքականության իրականացման ապահովման շնորհիվ մարզի կայուն զարգացումն է: Ծրագրի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
4) Մարզի տնտեսության ճյուղերի համաչափ զարգացում (դիվերսիֆիկացիա)
5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում

10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

2.ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

30. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը կազմավորվել է 1995թ. դեկտեմբերի 4-ին:

Արարատի մարզի տարածքը	-	2096 քառ. կմ
Գյուղատնտեսական նշանակության հողեր	–	156962 հա
այդ թվում՝ վարելահողեր	–	25465 հա
Մարզկենտրոնը	–	Արտաշատ քաղաք
Քաղաքային համայնքներ	–	4
Գյուղական համայնքներ	–	93
Բնակչությունը	–	260.800 հազ. մարդ
(մշտական, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ)		
այդ թվում՝		
քաղաքային	–	74,400 հազ. մարդ (28.5 %)
գյուղական	–	186.400 հազ. մարդ (71.5 %)

31. Արարատի մարզի տարածքը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի շուրջ 7 % -ը. իսկ ազգաբնակչությունը հանրապետության ամբողջ ազգաբնակչության 8.6%-ը: Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում: Մարզը հյուսիսից սահմանակից է մայրաքաղաքին, Արմավիրի և Կոտայքի մարզերին, արևելքից՝ Գեղարքունիքի մարզին, հարավ - արևմուտքից՝ Վայոց ձորի մարզին և հարավից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային:

32. Արարատի մարզի տարածքը բաժանված է հավասար մասերի՝ լեռնային և հարթավայրային: Արարատյան դաշտավայրը գրավում է մարզի տարածքի 40%-ը: Մարզն ընդգրկում է Ազատ և Վեդի գետի ջրավազանը, Գեղամա լեռնաշղթայի հարավ արևմտյան լանջերը՝ մինչև կատարային գոտին: Մարզի ամենաբարձր կետը Սպիտակասարի գագաթն է՝ 3555մ բարձրությամբ, որը հավերժ պատված է ձյունով:

33. Մարզում են սկիզբ առնում Ազատ և Վեդի գետերը: Մարզի տարածքով են անցնում Արաքս և Հրազդան գետերը:

34. Արարատի մարզը ունի չոր և խիստ ցամաքային կլիմա: Ձմռանը համեմատաբար ցուրտ է, հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10^0 C-ից 20^0 C ցուրտ, իսկ ամռանը շոգ է լինում, հուլիս ամսին օդի միջին ջերմաստիճանը 28^0 C-ից 33^0 C է (առավելագույնը 41^0C) :

35. Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096 քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7 %-ը, բնակչությունը՝ 260.8 հազ. մարդ կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության 8.2 %-ը:

36. Գյուղական բնակչությունը՝ 186.4 հազ. մարդ՝ ամբողջ բնակչության 71.4%, քաղաքայինը՝ 74.4 հազ. մարդ, 28.5%: Բնակչության խտությունը՝ 141 մարդ՝ 1 քկմ-ի վրա: Տնտեսությունների թիվը՝ 58228:

37. Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը (ծովի մակերևույթից 1600-2300 մ բարձրության վրա):

38. ՀՀ Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

39. Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին և Երևան-Երասխ երկաթուղին:

40. Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

41. 2013թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

1) արդյունաբերություն՝ 10.1 %,
2) գյուղատնտեսություն ՝ 14.9 %,

3) շինարարություն՝ 1.9 %,
4) մանրածախ առևտուր՝ 1.9 %,
5) ծառայություններ՝ 1.4 %:

43. Մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, 6 քոլեջ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ <<Արտաշատ>> համալսարանը, 55 առողջապահական հիմնարկներ՝ 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 49 բուժամբուլատորիա, մշակույթի օջախներ, Արտաշատ քաղաքում Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Պարույր Սևակի և Սպարապետ Վ.Սարգսյանի տուն թանգարանները, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը: Մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառի մի մասը: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքները:

44. Ուշագրավ է Խոր Վիրապ պատմաճարտարապետական հուշարձանը, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվում հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի հետ:

45. Խոր Վիրապ պատմաճարտարապետական՝ XIII դ. վանք-ամրոց համալիրը, եղել է հայոց ուխտատեղիներից մեկը և հանդիսացել է դպրության կենտրոն: Ունեցել է վարպետատուն, ուսուցչապետեր են եղել Վարդան Այգեկցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին: Հնում այստեղ է գտնվել պատմական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը: գելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին: <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցը ձևավորվել է 1958թ-ին: Այն ունի 29.0 հազ. հա տարածք՝ 1800 տեսակ բարձրակարգ բուսատեսակներով, ձկների՝ 7, փափկամորթների՝ 60, սողունների՝ 30, թռչունների՝ 130, կաթնասունների 40 տեսակներով: <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցի տարածքի 18 %-ը անտառածածկ է:

46. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ:

47. Մարզի գյուղատնտեսության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր ծավալում կազմում է 14.9 %:

48. Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ծավալի 10.1 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, <<Արարատ – ցեմենտ>>, <<Ոսկու կորզման ֆաբրիկան>>, Արտաշատի, Արարատի պահածոների, <<Մասիս տոբակո>>, <<Ինտերնեշնլ Մասիս տոբակո>> գործարանները:

49. Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

50. Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

51. Մարզը ունի 4 քաղաքային /Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս/, 93 գյուղական համայնք:

52. **Արտաշատ քաղաքը** - (2013թ. տարեվերջին՝ 22.0 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածք:

53. Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքներ), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը՝ կղմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

54. **Արարատ քաղաքը -** (2013թ. տարեվերջին՝ 20.3 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

55. **Վեդի քաղաքը** - (2013թ. տարեվերջին՝ 11.6 հազ. բնակիչ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

56. Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև ***գյուղատնտեսությունը,*** որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

57. **Մասիս քաղաքը** - (2013թ. տարեվերջին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

58. Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղու-թյունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը (մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում), թղթից և ստվարաթղթից արտադրատեսակնե-րի արտադրություն և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

59. ՀՀ Արարատի մարզի տնտեսության վերաբերյալ մանրամասն և ամբողջական ցուցանիշները, ինչպես նաև մարզի սոցիալ-տնտեսական բոլոր ցուցանիշները ներկայացված են սույն ծրագրի համապատասխան ոլորտների վերլուծական բաժիններում:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

60. Բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը մնում է ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրը, որն ամրագրված է ՀՀ կառավարության կողմից դեռևս 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ ընդունված «Կայուն զարգացման ծրագրում», ինչպես նաև Կառավարության կողմից հաստատված միջին ժամկետ ծախսային ծրագրում:

61. ՀՀ Կառավարությունը 27 մարտի 2014 թվականի N 442-Ն << Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1207-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> որոշմամբ վերանայվել է 2008 թվականին ընդունված «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ) հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները: Ոժի մեջ է <<Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը>>՝ (ՀԶԾ):

62. Այդ ծրագիրը նպատակ ունի հետճգնաժամային ռազմավարական համակարգված շրջանակ ապահովել Կառավարության քաղաքականությունների ձևավորման համար: Ծրագրի իրականացումը Կառավարությանը հնարավորություն է ընձեռելու միավորելու ազգային կարողությունները երկրի երկարաժամկետ զարգացման տեսլականի ձևավորման շուրջ՝ հաշվի առնելով կուտակված փորձը, առկա պայմաններն ու գլոբալ զարգացման մարտահրավերները, իրականացնել ռազմավարական խնդիրների տեղայնացում՝ ըստ հանրապետության առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և աղքատության դրսևորման առանձնահատկությունների:

63. Ծրագրի հեռանկարը մինչև 2025 թվականն է՝ նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը: Կառավարության երկարաժամկետ զարգացման ռազմավարության գերխնդիրը բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական ավելացումն է:

64. Երկրի զարգացման ներկա փուլի առանձնահատկություններից ելնելով՝ որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը հռչակված է որպես ծրագրի հիմնական նպատակ:

65. ՀՀ Կառավարության գործողություններն ուղղված են լինելու յուրաքանչյուրի համար սեփական ջանքերով աշխատանքին համապատասխան արդարացի վաստակ ստանալու հնարավորությունների ստեղծմանը: Ծրագրի իրականացումը

երաշխավորելու է հասարակության յուրաքանչյուր անդամի՝ սեփական պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու անվերապահ ընկալման ամրապնդումը: ՀՀ քաղաքացու անձնական զարգացմանը, մասնագիտական աճին, նրա քաղաքացիական դաստիարակությանն ու մշակույթի մակարդակի ավելացմանն ուղղված գործողությունները լինելու են Կառավարության ուշադրության կենտրոնում՝ յուրաքանչյուրի մոտ ամրապնդելով հայրենիքում ապրելու նախընտրելիությունը: Ուս մշակվել է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Որդեգրած մոտեցումը ենթադրում է նաև ծրագրի իրականացման ժամանակ սոցիալական գործընկերության և մասնակցային մոնիտորինգի հնարավորության ապահովում և խորացում:Համաձայն ՀՀ կառավարության և Քաղաքացիական համագործակցության ցանցի (ՔՀՑ) միջև 2013թ. փետրվարին ստորագրված հուշագրի, ՔՀՑ-ը ներկայացնելու է հանրության առավել լայն շերտերի շահերը ծրագրի իրականացման, մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերանայման գործընթացներում: Ծրագրի արդյունավետ իրագործման առումով կարևորվում է ՔՀՑ-ի ներգրավվածությունը պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության մշակման, որոշումների կայացման գնահատման, մոնիտորինգի և վերահսկման աշխատանքներին: Այդ նպատակով պետությունը սատարելու է քաղաքացիական հասարակության մասնակցային ինստիտուտի զարգացմանն ուղղված միջոցառումները և դրա կանոնակարգմանն ուղղված քայլերը: Մասնակցային գործընթացի շրջանակներում ՔՀՑ ինքնակարգավորման սկզբունքով ձևավորելու է կառուցվածքային միավորներ և սահմանելու է դրանց լիազորություններն ու պարտականությունները, իսկ ծրագրի իրականացման համար պատասխանատու պետական կառավարման մարմինները ապահովելու են համագործակցային և թափանցիկ միջավայր:

66. Ծրագրի հիմնական առաքելություններից է առաջիկա տարիներին ռազմավարական ուղենիշեր ապահովելը միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) մշակման համար:

67. Ծրագիրը բավարար ուղենիշեր է ապահովում ոլորտային ծրագրերի մշակման ժամանակ ընդհանուր տրամաբանությամբ առաջնորդվելու համար: Ծրագրային ժամանակահատվածում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առումով նշանակալի դեր է վերագրվում միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին: Այս առումով, առաջնային կարևորություն է տրվելու Մաքսային միությանը ՀՀ անդամակցությանն ու միության անդամ երկրների հետ տնտեսական կապերի հետագա զարգացմանն ու խորացմանը: Միաժամանակ, հիմք ընդունելով ընդհանուրը արժեքները, շարունակվելու է ներդաշնակ համագործակցությունը Եվրոպական միության հետ՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուղղություններով:

68. ՀԶԾ քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է ամբողջ երկրի մասշտաբով նախանշված գերակա ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային

կառավարման բարեփոխումներին, ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիտորինգի մեխանիզմների ներդրմանը: Այն ռազմավարական ծրագիր է, որի մարտավարությունը, այսինքն իրականացվելիք միջոցառումների ուղղվածության որոշումը,

69. ՀՀ Արարատի մարզի զարգացման ծրագիրը, հիմք ընդունելով ՀԶԾ-ի սկզբունքներն ու ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

70. ՀԶԾ զարգացման ընդհանուր միտումները 2008-2012թթ. Եվ ԿԶԾ-ի վերանայման անհրաժեշտությունը կայանում էր հետևյալում.

71. Կայուն զարգացման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ՝ համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ծավալման սկզբնական ժամանակահատվածում: Ճգնաժամի գործոնը չէր կարող հաշվի առնվել ծրագրի մշակման ժամանակ և դրա ծավալումը 2008-2009թթ. ամբողջ աշխարհում չէր կարող իր ազդեցությունը չունենալ Հայաստանի տնտեսության վրա և չազդել ԿԶԾ-ի կատարման գործընթացին և դրա ցուցանիշների ապահովմանը: Այսպիսով, ճգնաժամը արդեն իսկ ԿԶԾ-ի վերանայման հիմնական գործոն էր:

72. Ճգնաժամին անմիջապես նախորդող տարիներին (2003–2008թթ.) Հայաստանում ձևավորված տնտեսական աճի մոդելը հիմնված էր արտաքին ֆինանսավորման վրա (օտարերկրյա ուղղակի ներդրումների, պաշտոնական և ոչ պաշտոնական տրանսֆերտների), որի ծավալները տարեցտարի աճում էին: Դա պատճառ հանդիսացավ երկնիշ տնտեսական աճի պայմաններում ներմուծման առաջանցիկ աճի, ներքին շուկայում տեղական արդյունաբերական արտադրանքի մրցունակության աստիճանի նվազման, ոչ գյուղատնտեսական զբաղվածության աճի բացակայության, ինչպես նաև արտահանման հարաբերական և բացարձակ կրճատման:

73. Արդյունաբերության մրցունակության աստիճանի նվազման և արտահանման հարաբերական անկման պայմաններում երկրի տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժը դարձան շինարարությունը և ծառայությունների ոլորտը, որոնց գումարային տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, 2003թ. 50.1 տոկոսից աճելով, 2007 և 2008 թվականներին համապատասխանաբար կազմել է 56.4 տոկոս և 59.3 տոկոս: Միևնույն ժամանակ, արդյունաբերության և գյուղատնտեսության գումարային տեսակարար կշիռը, 2003 թ. 44 տոկոսից կրճատվելով, 2008 թ. կազմել է 29.6 տոկոս:

74. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին ֆինանսավորման և դրանով պայմանավորված ներքին պահանջարկի աճի վրա հիմնված տնտեսական աճի մոդելը չի կարող պահպանվել երկարաժամկետ հեռանկարում, ԿԶԾ-ն նախատեսում էր աստիճանական անցում կատարել ապրանքների և ծառայությունների արտահանման

առաջանցիկ աճի վրա հիմնված տնտեսական զարգացման մոդելի, որի արդյունքում պետք է աստիճանաբար նվազեր երկրի կախվածությունը արտաքին ֆինանսավորումից և ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում կրճատվեր շինարարության մասնաբաժինը:

75. 2008թ. սեպտեմբերից ծավալվող համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ազդեցությունը սկսեց Հայաստանում արտահայտվել 2008թ. չորրորդ եռամսյակից (երբ այդ եռամսյակում արտադրված ՀՆԱ-ն 2007թ. համապատասխան ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ կրճատվեց 1.2 տոկոսով) և շարունակվեց 2009 թվականին, երբ գրանցվեց ՀՆԱ-ի 14.1 տոկոս անկում: Ճգնաժամը դադարեց 2010թ., երբ համաշխարհային տնտեսությունը, այդ թվում նաև Հայաստանը, որտեղ գրանցվեց 2.2 տոկոս տնտեսական աճ, մտան վերականգնման փուլ:

76. Վերականգնողական աճը շարունակվել է 2011-2013 թթ.: Այսպես՝ 2011-2013 թ. աճը կազմել է 5.1 տոկոս: Աճը հիմնականում տեղի է ունեցել ծառայությունների (ներառյալ՝ առևտուրը) (2.2 տոկոսային կետ), գյուղատնտեսության (2.0 տոկոսային կետ) և արդյունաբերության (1.4 տոկոսային կետ) ոլորտների հաշվին: Շինարարությունը շարունակել է բացասական ազդել ՀՆԱ-ի վերականգնման վրա (-1.0 տոկոսային կետ):

77. Միևնույն ժամանակ, տնտեսական ճգնաժամը ի հայտ է բերել նոր գլոբալ մարտահրավերներ, որոնց պայմաններում առաջ է գալիս երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարության վերանայման անհրաժեշտություն՝ հետճգնաժամային իրողություններին համապատասխան, որոնցից հիմնականներն են.

1) Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսության էականորեն փոխված ճյուղային կառուցվածքը, որտեղ նկատելի կերպով կրճատվել է շինարարության և ավելացել մնացած բոլոր մակրոոլորտների տեսակարար կշիռը: Այն մի կողմից առավել կայուն է՝ համեմատած նախաճգնաժամային կառուցվածքի հետ, քանի որ ավելի քիչ է կախված արտաքին ֆինանսավորման ծավալներից, իսկ մյուս կողմից՝ չի կարող ապահովել շատ բարձր աճի տեմպեր զարգացման նախորդ մոդելի պես՝ շինարարության ծավալների և տնտեսական աճում ներդրման կտրուկ կրճատման պատճառով:

2) 2009-2011թթ. երկրի օտարերկրյա ֆինանսավորման (օտարերկրյա ուղղակի ներդրումների, մասնավոր տրանսֆերտների և պաշտոնական տրանսֆերտների զուտ հոսքի հանրագումար) ծավալների կտրուկ կրճատումը (մոտ 31 տոկոսով) էականորեն դժվարացնում է 2003-2007թթ. ներքին պահանջարկի աճի վրա հիմնված տնտեսական աճի մոդելի շարունակականությունը ներկայիս պայմաններում:

78. Միևնույն ժամանակ, նոր մարտահրավերներ է առաջ բերում այն հանգամանքը, որ մինչ այժմ տնտեսական աճը Հայաստանում, ըստ էության, չի հանգեցրել ոչ գյուղատնտեսական զբաղվածության ավելացմանը.

1) 1994-2003թթ. վերականգնողական աճի ընթացքում աշխատատեղերի էական կրճատման և կառուցվածքի փոփոխման հիմնական գործոն էր անցումային գործընթացը, որի հետևանքով ստեղծված տնտեսության նոր կառուցվածքը էականորեն ավելի քիչ պահանջարկ է ներկայացրել աշխատատեղերի նկատմամբ, քան վերացվող և վերափոխվող նախկին կառուցվածքը:

2) 2003-2008թթ. տնտեսական արագ աճը նույնպես չի բերել աշխատատեղերի քանակի աճի, քանի որ տնտեսական նոր ոլորտներում այն հիմնականում տեղի էր ունենում արտադրողականության և, հետևաբար, աշխատանքային եկամուտների աճի տեսքով, իսկ հին, ԽՍՀՄ-ից մնացած, ինչպես նաև սոցիալական ենթակառուցվածքի ոլորտներում շարունակվում էր աշխատատեղերի կրճատումը:

3) 2008-2009թթ. տնտեսական ճգնաժամի արդյունքում աշխատատեղերի քանակը կրճատվել է՝ պայմանավորված նոր ոլորտներում, մասնավորապես՝ շինարարությունում արտադրության և, հետևաբար, զբաղվածության ծավալների անկմամբ:

79. Նոր ռազմավարական ծրագրի մշակման կարևոր պատճառ է նաև ինչպես տնտեսական քաղաքականության, այնպես էլ դրա գործիքակազմի նկատմամբ տեսակետների փոփոխությունը, որը դրսևորվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ և շարունակվում է մինչ այժմ՝ հիմնականում շեշտադրելով պետության կարգավորիչ դերի և «ուղղակի» քաղաքականության նշանակության մեծացման կարևորությունը:

80. Բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը երկրի մարդկային կապիտալի զարգացման գրավականներից ու ՀԶԾ նպատակներից են:

81. Նախաճգնաժամային տարիներին Հայաստանում տարեցտարի արձանագրվում էր աղքատության մակարդակի անընդմեջ կրճատում: Այսպես՝ 2004-2008թթ. ընթացքում աղքատության ընդհանուր գծից ցածր գտնվող բնակչության մասնաբաժինը, ընդհանուր առմամբ, կրճատվել է 48.4 տոկոսով, 2008թ-ին կազմելով 27.6%՝ 2004թ.-ի 53.4%-ի փոխարեն:

82. Ճգնաժամով պայմանավորված տնտեսական անկման հետևանքով 2009թ. գրանցվեց հակառակ միտում՝ աղքատության մակարդակի աճ: 2009թ. աղքատ բնակչության մասնաբաժինը 2008թ. նկատմամբ աճեց 23.6 տոկոսով՝ կազմելով 35.0%: 2010թ. այն շարունակեց աճել՝ կազմելով 35.8%, իսկ 2011թ. և 2012թ. պայմանավորված տնտեսության վերականգնման միտումներով, նվազեց՝ կազմելով համապատասխանաբար 35.0% և 32.4%, սակայն դեռևս չվերադառնալով 2008 թ. մակարդակին: Նույն միտումներն արձանագրվեցին նաև ծայրահեղ աղքատության մակարդակի առումով. աղքատության պարենային գծից ցած գտնվող բնակչության մասնաբաժինը, որը 2004-2008թթ. ընթացքում կրճատվել էր 2.8 անգամ և 2008թ. կազմել 1.6%, 2009թ. աճեց, կազմելով 3.6%, իսկ այնուհետև՝ սկսեց նվազել և 2012թ. կազմեց 2.8%: Այսպիսով, 2012թ. դրությամբ՝ ՀՀ բնակչության մեկ երրորդից քիչ ավելին՝ 32.4%-ն աղքատ էր, իսկ շուրջ 3%-ը՝ ծայրահեղ աղքատ

83. 2008-2012թթ. ՀՆԱ-ի նկատմամբ աղքատության մակարդակի առաձգականությունն էապես մեծացավ: 2008-2009թթ. արձանագրված տնտեսական անկման յուրաքանչյուր տոկոսային կետ աղքատության ընդհանուր մակարդակն ավելացրեց 1.61 կետով, 2009-2010թթ.-ին՝ 2.35, 2010-2011թթ.-ին՝ 3.20, իսկ 2011-2012թթ.-ին՝ 11.29 տոկոսային կետով: Այսպիսի զարգացումները մեծապես խոչընդոտում են երկրի մարդկային կապիտալի զարգացմանն ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Երկրում աղքատության մակարդակի աճը պարունակում է աղքատության վերարտադրման, հասարակության բևեռացման աճի, երկրում մարդկային ու, որպես հետևանք՝ տնտեսական հեռանկարային զարգացման տեմպերին խոչընդոտելու վտանգ:

84. Պետության սոցիալական քաղաքականությունը 2008-2012 թվականներին միտված է եղել բնակչության աղքատացման ռիսկի նվազեցմանն ու հատկապես աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնմանը: Չնայած տնտեսական անկման պայմաններում բնակչության աշխատանքային եկամուտների աճի տեմպի կրճատմանը, պետությունը շարունակել է ստեղծված ֆիսկալ ծանր իրավիճակում կատարել իր սոցիալական պարտավորությունները: 2008-2012 թվականներին պետական սոցիալական տրանսֆերտների անվանական արժեքն ու մասնաբաժինը բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում կտրուկ աճել են: Եթե 2004-2007 թթ. սոցիալական տրանսֆերտները կազմել են շնչային դրամական ամսական եկամուտների շուրջ 14%-ը, ապա 2008-2012 թվականներին՝ միջին հաշվով 19%-ը: Սա պայմանավորված է սոցիալական ու ապահովագրական կենսաթոշակների, ինչպես նաև ընտանեկան ու այլ նպաստների միջին չափերի ավելացմամբ:

85. Տնտեսական անկումն ու աղքատության աճը պայմանավորել է թիրախային սոցիալական խմբերի աղքատության մակարդակների աճ ևս: 2009-2010թթ. ընթացքում աճել է մինչև 5 տարեկան երեխաների, կենսաթոշակառուների, զբաղվածների, այդ թվում՝ վարձու աշխատողների և ինքնազբաղվածների աղքատությունը: 2011թ.-ին նշված խմբերում աղքատության մակարդակները փոքր-ինչ նվազել են, բացի մինչև 5 տարեկան երեխաների խմբից, որտեղ այն շարունակել է աճել: 2012թ-ին աղքատ է եղել մինչև 5 տարեկան երեխաների շուրջ 39%-ը, ինքնազբաղվածների շուրջ 29%-ը, վարձու աշխատողների 23%-ը, կենսաթոշակառուների շուրջ 38%-ը: Մինչդեռ, երկրում հատուկ քաղաքականություններ են վարվել կենսաթոշակառուների ու վարձու աշխատողների աղքատության կրճատման համար: Մասնավորապես՝ դրանք ուղղված են ինչպես զբաղվածության աճին, այնպես էլ կենսաթոշակների ու նպաստների և միջին ու նվազագույն աշխատավարձի չափերի բարձրացմանն ու դրանց՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հետ հետզհետե համաձայնեցմանը: Այս քաղաքականությունները անուղղակիորեն պետք է նպաստեին նաև երեխաների աղքատության կրճատմանը: Բնական է, որ անկման ու ճգնաժամի ազդեցությամբ նշված քաղաքականությունները լիովին իրականացնել հնարավոր չի եղել: Ուստի, նպատակային խմբերում աղքատության աճը, մասնավորապես, բացատրվում է դրանով: Սակայն այն բացատրվում է նաև աղքատության մեջ հայտնված ընտանիքների կառուցվածքով,

դրանցում աշխատող անդամների, երեխաների ու թոշակառուների ներկայացվածությամբ: Բնակչության թիրախային խմբերում աղքատության մակարդակի աճը թելադրում է վերջիններիս ուղղված նպատակային քաղաքականությունների ուժեղացում, և ՀԶԾ-ն համալիր մոտեցում ունի այս խնդրին՝ իր բոլոր դրսևորումներով:

Աղյուսակ 3.1. Բնակչության առանձին խմբերի աղքատության ցուցանիշները 2008-2012թթ.

Տարիներ	Աղքատության մակարդակը բնակչության առանձին խմբերում, %			
	Մինչև 5 տարեկան երեխաներ	Կենսաթոշակառուներ	Վարձու աշխատողներ	Ինքնազբաղվածներ
2004թ.	41.9	33.2	27.5	31.0
2005թ.	34.9	30.0	22.7	27.3
2006թ.	35.3	26.5	21.3	23.9
2007թ.	33.2	27.6	20.0	20.8
2008թ.	32.0	34.5	20.7	23.3
2009թ.	39.6	39.9	25.5	29.7
2010թ.	42.7	38.7	28.0	29.8
2011թ.	45.3	35.3	26.8	28.7
2012թ.	38.8	37.5	23.4	28.9

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, 2005, 2008- 2013թթ.:

86. Աղքատության մակարդակի էական տարբերությունները երկրի տարբեր մարզերում, գյուղում ու քաղաքում՝ պահպանվում են և նույնիսկ՝ խորանում: Հայաստանում աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը թե՛ նախաճգնաժամային ժամանակահատվածում և թե՛ դրանից հետո, որպես կանոն, առավել տարածված է փոքր ու միջին քաղաքային բնակավայրերում: Այստեղ 2012 թ-ին աղքատության մակարդակը բարձր է եղել հանրապետական ցուցանիշից 7.8 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 40%: Երևանն այս տեսանկյունից կայունորեն մնում է ամենաբարենպաստ վիճակում և 2012թ-ին գրանցված աղքատության մակարդակն (25.6%) այստեղ ամենահամեստն է եղել: Արդյունքում, բնակչության բարեկեցության մակարդակների տարբերությունները Երևանի, ՀՀ այլ քաղաքների ու գյուղական բնակավայրերի միջև էլ ավելի են սրվել:

87. Աղքատության մակարդակի տարածքային տարբերություններն ու դրանց

սրումը թելադրում է երկրի տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված նպատակային քաղաքականության մշակումն ու իրականացումը դիտարկել որպես երկրի տարածքային զարգացման գերակայություն: Ծրագիրը նպատակադրում է ակտիվ տարածքային զարգացման քաղաքականության ներդրման միջոցով երկարաժամկետ հեռանկարում երկրում հասնել ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի՝ աղքատության մակարդակների տարածքային տարբերությունների նշանակալի կրճատման ու հարթեցման: Ծրագրով նախատեսված մակրոտնտեսական շրջանակը, տնտեսական, սոցիալական ու տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելուն ուղղված քաղաքականությունները երկարաժամկետ հեռանկարում պետք է բերեն աղքատության առավել արագ ու նշանակալի կրճատում փոքր ու միջին քաղաքներում և գյուղում, և այդ հիմքի վրա՝ բնակչության կենսամակարդակի տարածքային տարբերությունների մեղմացում:

88. 2008-2012թթ.. ընթացքում վերոնշյալ նախադրյալների առկայության պայմաններով հիմնավորված ՀՀ բոլոր մարզերում տեղի է ունեցել աղքատության մակարդակի աճ, իսկ դրա միջմարզային շեղումները կամ անհամաչափության բնութագրիչներն աճել են:

Աղյուսակ 3.2. Աղքատության մակարդակի մարզային շարժը Հայաստանում 2008-2012 թթ.

	2008թ.	**2012թ.**
Ընդամենը Հայաստան	27.6	32.4
Երևան	20.1	25.6
Արագածոտն	20.3	21.2
Արարատ	**31.3**	**34.6**
Արմավիր	24.5	34.3
Գեղարքունիք	32.0	35.5
Լոռի	34.2	38.7
Կոտայք	39.5	42.5
Շիրակ	42.4	46.0
Սյունիք	20.3	25.6
Վայոց ձոր	21.1	20.7
Տավուշ	23.2	27.5

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, 2013 թ.:

նպատակային տարածքային զարգացման քաղաքականության մշակումն ու ներդրումը

անհրաժեշտ է նաև բնակչության կենսամակարդակի մարզային տարբերությունների հարթեցման առումով:

89. ՀԶԾ-ի տեղայնացման հիմնախնդիրն առավել կարևորում է նպատակային տարածքային զարգացման քաղաքականության մշակումն ու ներդրումը, այն անհրաժեշտ է նաև բնակչության կենսամակարդակի մարզային տարբերությունների հարթեցման առումով, հրատապ է այն տարածաշրջանների համար, որոնց զարգացման միտումները զգալիորեն հետ են մնում հանրապետության միջին ցուցանիշներից՝ պայմանավորված լինելով տարածքի տնտեսական ներուժի սահմանափակություններով, ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացած ցանցով, բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով, բնակլիմայական խիստ պայմաններով և այլն:

70. Մինչև 2025 թվականը ՀՀ կառավարության կողմից կիրառվելիք տնտեսական ու սոցիալական քաղաքականության շնորհիվ նախատեսվում է է 2017թ-ին աղքատության մակարդակը երկրում հասցնել շուրջ 24%-ի (2012-ի՝ 32.4-ի փոխարեն), 2021-ին՝ շուրջ 18%-ի, իսկ 2025-ին շուրջ՝ 13%-ի: Ծայրահեղ աղքատության պարագայում Ծրագիրը նախատեսում է 2017 թ-ին այն հասցնել 2.4%-ի (2012-ի՝ 2.8-ի փոխարեն), 2021-ին՝ 2.1%-ի, իսկ 2025-ին՝ 1.8%-ի՝ ըստ էության լուծելով այս հիմնախնդիրը: Ծրագիրը նախատեսում է նաև անհավասարության կրճատումը երկրում և նրա առանձին տարածքային միավորների միջև:

71. Ինչ վերաբերում է բնակչության առանձին թիրախային խմբերի աղքատության մակարդակին, ապա նպատակադրում է աղքատության կրճատում երեխաների, կենսաթոշակառուների և զբաղվածների՝ վարձու աշխատողների ու ինքնազբաղվածների շրջանում: Մասնավորապես՝ աղքատ, այդ թվում՝ զբաղված աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների աճն ապահովելու նկատառումով նախատեսում է նվազագույն աշխատավարձի շարունակական աճ այն հաշվով, որ աղքատության վերին շեմի նկատմամբ դրա հարաբերակցությունն անընդմեջ աճի: Դրա արդյունքում նվազագույն զուտ աշխատավարձը, որը 2010-2012 թթ. կազմում էր աղքատության վերին շեմի շուրջ 89-90%-ը, 2017թ-ին կկազմի դրա շուրջ 160%-ը, 2021 թ-ին՝ 190%-ը, իսկ 2025 թ-ին՝ 240%-ը:

72. Կենսաթոշակառուների (ու նրանց ընտանիքների) աղքատության մակարդակի կրճատումն ապահովելու առումով նախատեսում է աշխատանքային կենսաթոշակների միջին մակարդակի անընդմեջ աճ՝ ինչի հետևանքով վերջինս 2017 թ-ին կկազմի աղքատության վերին շեմի շուրջ 125%-ը, 2021թ-ին՝ 155%-ը, իսկ 2025թ-ին՝ շուրջ 200%-ը

73. Վերոնշյալ աղքատությանը բնորոշ գործոնները գրեթե բոլորն առկա են Արարատի մարզում, որի հետևանքով մարզի աղքատության խնդիրներն ավելի սրված են, որտեղից հետևում է մարզի աղքատության հաղթահարման նպատակային ծրագրի հաստատման և իրականացման անհրաժեշտությունը:

74. Այսպիսով աղքատության պատկերը՝ ըստ աղքատության կլասիկ սահմանման՝ «աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր–մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է» պարզորոշ է նաև ՀՀ Արարատի մարզային պատկերի մեջ:

75. Ելնելով ԱՀՌԾ-ում ընդունված աղքատության հասկացության սահմանումից, ՀՀ Արարատի մարզի աղքատության գնահատումը կատարվել է երեք հիմնական ուղղություններով՝ մարզի բնակչության կենսաբանական, սոցիալական և հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման իրավիճակի վերլուծության միջոցով:

76. Աղյուսակ 3.2-ի տվյալները վկայում են, որ աղքատության մակարդակը ՀՀ Արարատի մարզում 2012 թվականին 2008թ.-ի համեմատ աճել է 3.3 տոկոսով:

77. Աղքատության մակարդակի փոփոխության թե՛ դրական և թե՛ բացասական միտումները պայմանավորված են երկրի աղքատության, մարզի տնտեսական զարգացման և մարզի համայնքների զարգացման առանձնահատկություններից բխող գործոններով:

78. ՀՀ Արարատի մարզում աղքատության մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

1) երկրի աղքատության ընդհանուր առանձնահատկություններից բխող գործոններ
2) մարզի տնտեսական զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ
3)մարզի համայնքների զարգացման առանձնահատկություններից բխող գործոններ:

79. Հանրապետության աղքատության առանձնահատկություններից ելնելով, մարզում գյուղական բնակչությունն առավել դանդաղ տեմպերով է հաղթահարում աղքատությունը, քան քաղաքայինը: Անհավասարության աստիճանը գյուղական բնակավայրերում նկատելիորեն բարձր է քաղաքային բնակավայրերի համեմատ, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես լուրջ աղքատածին գործոն:

80. ՀՀ Արարատի մարզի բնակչության շուրջ 30%-ը կենտրոնացած է քաղաքներում: Այդ պատճառով է պայմանավորված աղքատության ոչ ծածր տոկոսը մարզում՝ բնակչության մեծամասնությունը բնակվում են գյուղական տարածքներում, և չունեն մշտական աշխատանք:

81. Հայաստանում աղքատությունը առավել տարածված է աղետի, սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային գոտիներում: ՀՀ Արարատի մարզի 97 բնակավայրերից 9-ը սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրեր են և գտնվում են միմյանցից մեծ հեռավորությունների վրա, ուստի աղքատությունը և չքավորությունը այդ բնակավայրերում ավելի սուր են արտահայտված և ընդգծված:

82. Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս չափը: Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունը ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները: ՀՀ Արարատի մարզի համայնքների 4.1%-ը ունեն մինչև 500 բնակիչ, 14.4%-ը՝ 501-1000 բնակիչ, 59.8%-ը 1001-3000 բնակիչ, 11.3%-ը՝ 3001-5000 բնակիչ, և 6.0%-ը՝ 5001-10000 բնակիչ, 4.0%--ը՝ 10000 ավելի բնակիչ: Չնայած Արարատի մարզում փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների թիվը ցածր տոկոս է կազմում, սակայն մարզի համայնքների գրեթե 2/3-ի համար առկա են համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտներ:

83. Խոցելիության վրա ազդող գործոններից է նաև բնակչության անբարենպաստ կազմը: Տարեցների տեսակարար կշիռը մարզում 2012թ. կազմել է 11.4% (քաղաքային բնակչության մեջ այն կազմել է 11.7%, գյուղական բնակչության մեջ՝ 10.0%): Ընդ որում 2011-2012թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ Արարատի մարզում, մոտ 0.5%-ով նվազել է մինչև 19 տարեկանների թիվը, թե քաղաքային և թե գյուղական համայնքներում:

Աղյուսակ 3.3. Մշտական բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (քաղաքային/գյուղական կտրվածքով 2011-2012թթ.)

	Տարածաշրջան		2011թ.				2012թ.			
			տարիքային խմբերը				տարիքային խմբերը			
			մինչև 19տ.	20-64տ.	64-ից բարձր	Ընդամենը	մինչև 19տ.	20-64տ.	64-ից բարձր	Ընդամենը
1	ՀՀ Արարատի մարզ	քաղաքային	17419 / 24.2%/	49817 / 66.5%/	9470 / 11.3%/	74160	16210 / 23.0%/	49991 / 67.3%/	9632 / 11.7%/	74435
		գյուղական	38300 / 20.2%/	128420 / 70.5 %/	16945 / 9.3%/	182207	39334 / 20.8%/	169980 / 70.8%/	16994 / 10.0%/	186900
		ընդամենը	55719 / 21.31%/	178233 / 68.4%/	26415 / 10.3%/	260367	55544 / 20.8%/	179350 / 68.8%/	26421/ 11.4%/	261335

Աղբյուրը՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» 2012թ. էջ 55

84. Մարզում աղքատության մակարդակի բարձրացմանը նպաստել է նաև ֆինանսական ճգնաժամը, արդյունքում՝ մարզի թե քաղաքային և թե գյուղական համայնքներից սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ելնելով բազմաթիվ երիտասարդ և աշխատունակ տարիքի ընտանիքներ արտագաղթել են հանրապետությունից՝ մարզում թողնելով իրենց ծեր ծնողներին: Այդ է պատճառը, որ գյուղական համայնքներում տարեցները, թոշակառուները և հաշմանդամները մեծ տոկոս են կազմում:

Աղյուսակ 3.4.Կենսաթոշակառուների թիվը ՀՀ Արարատի մարզում /տարեվերջ/

ՀՀ	Տարածաշրջան	2010թ.	2011թ.	2012թ.
1	Արարատի մարզ	35 088	40 412	40 748
	1000 բնակչի հաշվով	167.0	165.6	178.9
2	Ընդամենը ՀՀ	520257	509312	508071
	1000 բնակչի հաշվով	155.5	159.8	167.6

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2012թ. էջ 105, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը» 2012թ. հունվար-դեկտեմբեր, էջ 150

85. Աղյուսակից երևում է, որ չնայած մարզում կենսաթոշակառուների թիվը 2012թ. 2010թ. համեմատ աճել է, սակայն աճել է նաև տեսակարար կշիռն 1000 բնակչի հաշվով: Ընդ որում ժողովրդագրության տեսակետից մարզում ամենացավոտ հարցերից է բնակչության «ծերացումը»: Մարզի բնակչության 15.38%-ը կենսաթոշակառուները են:

86. Նպաստառուների թիվը 2012թ.-ի տվյալներով կազմում է մարզի բնակչության 3.4%-ը: Աղյուսակի 3.5-ի տվյալները վկայում են, որ 2010-2012 թվականներին նպաստառուների թիվը ընդհանուր բնակչության թվի համեմատ նվազել է 0.8%-ով, որը պայմանավորված է բնակչության կենսապայմանների բարելավման և սոցիալական աջակցության համակարգում տեղի ունեցող փոփոխություններով: Նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես ավելի մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում: Նպաստառու է քաղաքային տնային տնտեսությունների 6.5%-ը, գյուղական տնային տնտեսությունների՝ ընդամենը 5.1%-ը:

Աղյուսակ 3.5. Նպաստառու ընտանիքների թիվը ՀՀ Արարատի մարզում

	Նպաստառու ընտանիքների քանակը				
	2008	**2009**	**2010**	**2011**	**2012**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	**129 414**	**123 293**	**108 940**	**96 358**	**111 412**
Ք.ԵՐԵՎԱՆ	23 863	21 931	19 217	15 951	17 891
ԱՐԱԳԱԾՈՏՆ	6 025	5 748	5 390	4 927	5 584
ԱՐԱՐԱՏ	***9 446***	***9 079***	***8 277***	***7554***	***8 830***
ԱՐՄԱՎԻՐ	5 912	6 015	5 545	5 220	5 973
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	14 907	15 198	13 902	12 370	14 482
ԼՈՌԻ	22 954	21 036	18541	17 824	20 833
ԿՈՏԱՅՔ	10 267	10 215	8 858	7 985	9 461
ՇԻՐԱԿ	21 405	20 517	17 829	14 661	16 679
ՍՅՈՒՆԻՔ	5 228	4 967	4 138	3 383	3 990
ՎԱՅՈՑ ՁՈՐ	2 615	2 527	2 186	1 975	2 257
ՏԱՎՈՒՇ	6 792	6 060	5 057	4 508	5 432

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2012թ. էջ 109

87. Ի տարբերություն քաղաքային տնային տնտեսությունների՝ գյուղական տնային տնտեսություններն ավելի բազմանդամ են: Ընտանիքի բազմանդամությունը նպաստում է աղքատության ռիսկի ավելացմանը: Բազմանդամ ընտանիքները, որոնք բաղկացած են մեծ թվով երեխաներից և ավելի քիչ կերակրողներից, ավելի աղքատ են, քան փոքր ընտանիքները:

88. Արարատի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումները գտնվում են ազգային մակարդակում և հետևաբար պահանջում են համընդհանուր պետական մոտեցում, առնչվում են.

1) Գյուղական տարածքների զարգացմանը
2) փոքր ու միջին համայնքների զարգացմանը
3) սահմանամերձ գոտիներին սոցիալ-տնտեսական աջակցությանը
4) խոցելի խմբերի սոցիալական օժանդակության պետական ծրագրերի մշակմանը, դրանց կատարելագործմանը և իրագործմանը:

89. Տնտեսական ներուժի առանձնահատկություններով պայմանավորված աղքատության խնդիրները հիմնականում առնչվում են մարզի տնտեսական ավանդույթների, արտադրական կառուցվածքի, համայնքների տիպաբանության, աշխատանքի շուկայի, ներդրումների միջավայրի և այլ տնտեսական զարգացումը կանխորոշող գործոններին:

90. ՀՀ Արարատի մարզի տնտեսական ներուժին չափազանց մեծ վնաս հասցրեց նախկինում հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր ձեռնարկությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի և իրացման շուկաների բացակայության և բարոյաֆիզիկական մաշվածության պատճառներով: Բացի այդ մարզի տնտեսության թուլացմանը նպաստել են, սահմանամերձ համայնքներում ականապատված հողերի առկայությունը, հաճախակի դարձած բնական աղետները և այլ գործոններ:

91. Ներկայումս մարզի նախկին արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, հատկապես վերամշակող ձեռնարկությունները չեն աշխատում կամ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ: Դա բացասական ազդեցություն է թողնում հատկապես նախկինում խոշոր արդյունաբերական կենտրոն հանդիսացող Արտաշատ և մյուս քաղաքային համայնքների կենսագործունեության, նրա բնակչության ապրելակերպի վրա:

92. ՀՀ Արարատի մարզն ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները բազմաճյուղ տնտեսություն ստեղծելու համար: Դրանք նախ և առաջ բազմազան և հարուստ բնական ռեսուսներն են՝ մետաղական և ոչ մետաղական շինանյութերի, այլ բնական շինանյութերի հանքավայրերը: Մարզի տնտեսության զարգացման համար առկա է նաև կրթական բարձր ցենզ և անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները:

93. ՀՀ Արարատի մարզի տնտեսության առանցքային ճյուղերից է արդյունաբերությունը: ՀՀ Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը 2013 թվականին ընթացիկ գներով կազմել է 130 մլրդ 621.1 մլն դրամ:

94. 2013 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի 10.1 %-ը բաժին է ընկել ՀՀ Արարատի մարզի արդյունաբերական կազմակերպություններին: Հանրապետության համախառն արտադրանքի ծավալում ՀՀ Արարատի մարզի թե արդյունաբերական, և թե գյուղատնտեսական արտադրանքների ցուցանիշները 2010թ. նկատմամբ ունեն աստիճանական աճի միտում (Աղյուսակ 3.7):

Աղյուսակ 3.6. Մարզի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի բաժինը հանրապետության համախառն արտադրանքի ծավալներում, 2010-2012թթ.

Մարզի տեսակարար կշիռը	2010թ.		2011թ		2012թ.	
	գումարը	%	գումարը	%	գումարը	%
ՀՀ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալը /մլրդ դրամ/	824.4	100	998.9	100	1120.5	100
Արարատի մարզ	**72.303**	**8.3**	**80. 864**	**9.1**	**104 .759**	**10.1**
ՀՀ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը /մլրդ դրամ/	636.7	100	795.0	100	841.5	100
Արարատի մարզ	**89.9**	**17.0**	**108.5**	**14.7**	**116.8**	**14.9**

Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» 2012թ. էջ 26-39, «Հայաստանի սոցիալ-տնտեսական» 2012թ., էջ 14-19

95. Մարզի արդյունաբերության ընդգծված առաջատար ճյուղը գյուղ մթերքի վերամշակումն է, որը ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 84.0 %-ը, 14.0 %-ը բաժին է ընկնում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանն ու բաշխմանը, 2.0 %-ը ընդերք մշակող արդյունաբերությանը և այլ ճյուղերին:

96. Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2013թ. կազմել է 136.4 մլրդ դրամ, որը կազմում է ՀՀ ծավալի 14,8%-ը:

97. Արարատի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը/ /164696հա/ ներառյալ տնամերձ հողամասերը, կազմում են մարզի ընդհանուր տարածքի մոտ 78.8%-ը:

98. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ հատկապես մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 47.4%: Վարելահողերը կազմում են հողատեսքերի 18.1% իսկ բազմամյա տնկարկները՝ 7.6%:

99. 2013թ. դրությամբ մարզում գործում էր 18390 գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, գյուղատնտեսական մթերքներ /կաթ, միս, հացահատիկ, պտուղ/ վերամշակող 60 կազմակերպություն:

100. Ուսումնասիրության արդյունքում մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

1)բնական աղետները (երաշտ, կարկուտ) և համապատասխան ծառայությունների բացակայությունը

2) ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը

3) սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գնելու անկարողությունը

4) գյուղատնտեսական տեխնիկայի պակասը

5) գյուղատնտեսական վարկերի անմատչելիությունը

6) ճանապարհների անբարեկարգ վիճակը

7) իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները

8) վերամշակման արտադրության սահմանափակությունը
9) անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը
10)տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը
11) մթերման ենթակառուցվածքի ոչ բավարար լինելը:

101. Հաշվի առնելով մարզի որոշ համայնքների տարածքային ցրվածությունն ու մեծ հեռավորությունը մարզկենտրոնից, մարզի քաղաքներից և մայրաքաղաքից, ճանապարհների բարեկարգման և նոր՝ ավելի կարճ ճանապահների կառուցման խնդիրը դառնում է գերակա բնակչության և համայնքների տնտեսական ակտիվության խթանման և մեկուսացվածության վերացման հարցում:

102. Ըստ ՀՀ Արարատի մարզի համայնքապետերի սուբյեկտիվ գնահատականների առանձնացվել են որոշակի գործոններ, որոնց առկայությունը խոչընդոտում է համայնքի զարգացումը:

103. Խոչընդոտները նախ և առաջ վերաբերում են գյուղատնտեսական արդյունավետ արտադրության կազմակերպման դժվարություններին: Դա մի կողմից պայմանավորված է հողերի որակով, մշակման դժվարություններով, իսկ մյուս կողմից վարկային և ենթակառուցվածքային անբարենպաստ պայմաններով (ոռոգում, ճանապարհ): Համայնքների զարգացումը խոչընդոտող գործոնների շարքում ծանրակշիռ դեր ունեն նաև բնական աղետները: Որից հետո միայն համայնքապետերն առանձնացրել են սոցիալական բնույթի հիմնախնդիրներ, սոցիալական ծառայությունների անմատչելիության, հոգևոր մեկուսացվածության հետ կապված հարցեր:

104. Մարզի 97 համայնքներում նշվել են հետևյալ հիմնախնդիրները, որոնք ներառված են համայնքների զարգացման քառամյա ծրագրում (2015-2018թթ.) և հրատապ լուծում են պահանջում: Հիմնախնդիրները ներկայացված են ըստ առաջնահերթությունների.

1) ճանապարհների վերանորոգում
2) ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում
3) խմելու ջրի համակարգի կառուցում և վերանորոգում
4) գործազրկության մակարդակի նվազեցում, աշխատատեղերի ստեղծում
5) գյուղատնտեսական տեխնիկայով ապահովում
6) գյուղատնտեսական արտադրանքի վերամշակող ձեռնարկությունների ստեղծում
7) համայնքների գազիֆիկացում:

105. Համայնքի բնակչության բարեկեցության բարձրացման համար բոլոր համայնքների ղեկավարները առաջարկել են նմանատիպ կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ: Նախ և առաջ նշվել են տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում:

106. Շատ համայնքներ (հատկապես փոքր) սեփական բյուջեի շրջանակներում չեն կարողանում լուծել համայնքի հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր է միջհամայնքային միավորումների դերը, որոնք կարող են աջակցել համայնքներին համատեղ լուծելու այն խնդիրները, որոնք համայնքներն առանձին-առանձին դժվարանում են լուծել: Մինչև միջհամայնքային միավորումների ձևավորումն այդ ընդհանուր խնդիրների լուծմանն աջակցում են մարզի 3 տարածաշրջաններում գործող համայնքների միությունները: Վերջիններս գործում են հասարակական կազմակերպության կարգավիճակով և ակտիվորեն համագործակցում են համայնքապետարանների հետ՝ իրենց նպաստը բերելով համայնքների բյուջեների եկամուտների ավելացմանը:

107. ՀՀ Արարատի մարզի աղքատության հաղթահարման գերակա խնդիրները, որոնց լուծումներն անմիջականորեն կապված են համայնքների զարգացման հետ, առնչվում են.

1) մարզային, համայնքային, միջհամայնքային ճանապարհների բարեկարգմանը
2) փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքների ներգրավմամբ միջհամայնքային միավորումների ձևավորմանը
3) սահմանամերձ և փախստականաբնակ համայնքների համար նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը
4) մարզի քաղաքների առաջանցիկ զարգացման քաղաքականությունների և համալիր ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

108. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան փոքր է համայնքը, այնքան սոցիալ-մշակութային ենթակառուցվածքները թույլ են (հատկապես գյուղական՝ քիչ բնակչություն ունեցող համայնքներում): Ընդ որում, եղածն էլ խորհրդային կարգերի ժառանգություն է (հատկապես մշակութային մասով), որը խիստ արդիականացման կարիք ունի:

109. Մարզի հանրակրթական համակարգում 2010-2014թթ. ընթացքում գործում են 112 պետական հանրակրթական դպրոցներ՝ 21-ը՝ հիմնական, 86-ը միջնակարգ և 5-ը՝ ավագ: Դպրոցներից 21-ը (18.7%) գործում են մարզի 4 քաղաքներում, 91-ը (81.3%) գյուղական համայնքներում:

110. Մարզի տարածքում պարտադիր հիմնական կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

111. ՀՀ Արարատի մարզում 75 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 64-ը համայնքային ենթակայության, 1-ը՝ գերատեսչական /Արարատ ցեմենտ ՓԲԸ-ի մանկապարտեզ/: Մանկապարտեզներում երեխաների թիվը 2014թ. 6314 է, խմբերի թիվը 206, մանկավարժների թիվը 536, իսկ 23 գյուղական համայնքների դպրոցներում գործում են նախակրթարաններ /նախակրթարաններ

112. 2014թ. ՀՀ Արարատի մարզի մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների քանակը կազմել է 55՝

1) բժշկական կենտրոն - 4
2) ծննդատուն - 1
3) առողջության կենտրոն - 1
4) բժշկական ամբուլատորիա - 49, /որից 14-ը համայնքային ենթակայության են, 35-ը մարզային/, որոնց կազմի մեջ են 44 բուժակ-մանկաբարձական կետեր:

113. Մարդկային աղքատության ցուցանիշների համակարգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից.

1) կրթության մատչելիություն
2) առողջապահության մատչելիություն
3) արժանավայել կենսապայմանների մատչելիություն:

115.Չնայած վերջին տարիներին մարզում իրականացված դպրոցաշինական/կրթական ծրագրերին, մարզում դեռևս շատ են այն դպրոցները, որոնց գույքային ու շենքային պայմանները գտնվում են անմխիթար վիճակում: Դպրոցներում գրեթե բացակայում են լաբորատոր պարագաները: Գրադարաններում հաշվառված գրքերի մոտ 20%-ն օգտագործելի չէ, քանի որ չի բավարարում ներկայիս ուսուցողական ծրագրերի պահանջներին:

116. Մարզում պետական բյուջեի և դոնորների միջոցներով իրականացվել են խմելու ջրամատակարարման բարելավման մի շարք ծրագրեր, որոնք դրական ազդեցություն են ունեցել ինչպես խմելու ջրի հասանելության ապահովման, այնպես էլ որակի առումով: Այսպես ՏՀԻ հետազոտության տվյալներով գյուղական համայնքներում իրականացված ծրագրերի ազդեցությունը հետազոտված համայնքների 4%-ը գնահատել է գերազանց, 44%-ը լավ, 45%-ը բավարար, իսկ 7%-ի կարծիքով այդ աշխատանքները ոչ մի ազդեցություն չեն ունեցել համայնքի բնակչության բարեկեցության մակարդակի վրա: Այդ է պատճառը, որ մարզի համայնքների մեծ մասի 2012-2016թթ. քառամյա ծրագրերում ընդգրկված են խմելու ջրատարների կառուցման և վերանորոգման, խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման ծրագրեր:

117. ՀՀ Արարատի մարզի բնակարանային ամենացավոտ հարցերից մեկն է քաղաքային համայնքների բազմաբնակարան շենքերի ամնխիթար, կիսավթարային և հակասանիտարական վիճակը: Բազմաբնակարան շենքերի գերակշռող մեծամասնությունը կառուցվել են 20-ից 50 տարի առաջ, և դրանց մեծ մասը ներկայումս ունի տանիքապատման, ջրամատակարարման ու ջրահեռացման խնդիրներ:

118. Փախստականների և ներքին տեղահանվածների սոցիալական անապահովության աստիճանը իջեցնելու համար մարզում անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ են տանել նոր սոցիալապես անքպատով խավի համար տների ձեռք բերման հարզում, որով կլուծվի ընտանիքների բնակարանային հարցը, որոնք ընդգրկված չեն առաջնահերթության ծրագրերում:

119. ՀՀ Արարատի մարզի քաղաքային համայնքներում իրականացված աղքատության մասնակցային գնահատման արդյունքները վկայում են, որ ընտանիքների աղքատության վտանգը մեղմելու և աղքատ ընտանիքներին սատարելու ամենակարևոր ուղղությունը համայնքի անդամների սոցիալական ակտիվների վերականգնումն է համայնքներում փոխօգնության և սոցիալական զարգացման հիմնադրամների ձևավորման միջոցով:

120. ՀՀ Արարատի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են.

1) նախադպրոցական, նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության բարելավմանը
2) մոր և մանկան առողջության պահպանմանը
3) խմելու ջրի հասանելիության ապահովմանը
4) քաղաքային տնտեսության բարեկարգմանը

121. Մարզի զարգացման ծրագրի վերջնական նպատակը պետք է լինի մարզի բնակչության համար կրթական և առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումն ու արժանավայել կենսապայմանների ապահովումը:

122.Հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման սահմանափակությունն աղքատության երևույթի թերևս ամենաքիչ ուսումնասիրված բաղադրիչն է: Սակայն որոշակի քանակական տվյալների վերլուծության միջոցով կարելի է պատկերացում կազմել մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման հնարավորությունների մասին:

123. 2014թ. Արարատի մարզի տարածքում գործում են 71 մշակույթի տուն, 10 երաժշտական, 5 արվեստի, 3 գեղարվեստի դպրոց, 93 հանրային և 1 մարզային գրադարան, 2 տուն-թանգարան, 1 պետական դրամատիկական, 3 տիկնիկային և 2 մանկական թատրոն:

124. Մշակույթի և սպորտի բնագավառում դեռևս չլուծված են մնում գյուղական համայնքների մշակույթի տների, ակումբ-գրադարանների, մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

125. Վերջին տարիներին հաճախ են կազմակերպվում մարզամշակութային, երիտասարդական միջոցառումներ, համերգներ, ցուցահանդեսներ, մրցումներ, ինչպես նաև հանրապետական և միջազգային միջոցառումներ, որոնց մասնակցում են ՀՀ Արարատի մարզի ներկայացուցիչները:

126. ՀՀ Արարատի մարզի բնակչության աղքատության հաղթահարման տեսանկյունից հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարման խնդրի լուծումը պահանջում է.

1) մարզի բնակչության հոգևոր-մշակութային պահանջմունքների որակական հետազոտությունների իրականացում

2) հոգևոր-մշակութային պահանջմունքների դասակարգում՝ ըստ բնակչության տարբեր խավերի համար գերակայությունների

3) որոշ համայնքների համար մեկուսացվածության վերացում՝ թերթերի հասանելիության ապահովման, հեռահաղորդակցության բարելավման միջոցով:

127. ՀՀ Արարատի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը.

1) մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում
2) գյուղատնտեսության զարգացում
3) սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում
4) մարզային ենթակառուցվածքների բարելավում
5) մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդում և հետագա զարգացում
6) բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում:

4.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1Արդյունաբերության, ՓՄՁ իրավիճակի վերլուծություն

128. Արդյունաբերությունը հանդիսանում է Արարատի մարզի տնտեսության կարևորագույն և հիմնական ոլորտներից մեկը: Խորհրդային տարիներին ներկայիս Արարատի մարզն ընդգրկող քաղաքներում, շրջաններում առկա էր արդյունաբերական հզոր համալիր՝ որն ընդգրկում էր արդյունաբերության բոլոր ճյուղերը: Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների, չնայած առաջատար է մնացել գյուղմթերքների մշակող արդյունաբերությունը, զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը: Իրենց դիրքերը զիջել են մեքենաշինությունը և սարքաշինությունը: Մարզի արդյունաբերական համալիրում ըստ արտադրության ծավալի արդյունաբերության ներուժը կենտրոնացված է Արարատի տարածաշրջանում: Մարզում գործում են 85 արտադրական ձեռնարկություններ, գործող ձեռնարկություններից 10-ը խոշոր են, մնացած ձեռնարկություններն իրենցից ներկայացնում են փոքր ու միջին արտադրություններ: Փոքր և միջին արտադրությունների մոտ 45%-ը գյուղմթերքներ վերամշակող ու սննդի արտադրության ձեռնարկություններ են:

129. Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2013թ. հունվար- դեկտեմբերին՝ ըստ մարզում գործող 85 արդյունաբերական կազմակերպությունների, ընթացիկ գներով կազմել է 130 մլրդ 621.1 մլն դրամի պատրաստի արտադրանք, նախորդ տարվա 104 մլրդ 463.5 մլն դրամի դիմաց:

130. Արտադրանքի իրացման ծավալը կազմել է 146 մլրդ 977.1 մլն դրամ, նախորդ տարվա 118 մլրդ 453.8 մլն դրամի դիմաց:

131. Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը 2013թ. կազմել է 119.5 %: Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալները վերջին տարիներին, հատկապես 2012թ. հետո, աճի զգալի միտում են արձանագրել: 2013թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2012թ. համեմատությամբ աճել է ավելի քան 27 մլրդ դրամով: Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 4.1.-ում:

Աղյուսակ 4.1.Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների

/մլն դրամ/

Արարատի մարզ	**2012թ.**	**2013թ.**	**Աճի տեմպերը %**
Թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով/ մլն դրամ/	113738.3	130131.7	125
Այդ թվում՝ Մշակող արդյունաբերություն	98582.9	110836.1	112.4
Ընդերք օգտագործում	2014.5	3305.8	164.1
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	13140.9	15989.8	121.68
Պատրաստի արտադրանքի իրացումը ընթացիկ գներով /մլն դրամ/	118453.8	146977.1	124.07
Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը %	105.6	119.5	113.1

132. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2013թ. հունվար - դեկտեմբերին հետևյալն է



133. Արարատի մարզի արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինը ՀՀ

ընդհանուրի մեջ բավականին մեծ է և այն 2013թ. կազմել է 10.1%:

134. Մարզի արդյունաբերության մեջ կարևոր նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը, որի ծավալը տարեցտարի ավելացել է և 2013թ. կազմել է մարզի արդյունաբերական համախառն արտադրանքի մոտ 85%-ը: Մշակող արդյունաբերությունը ավելացել է ի հաշիվ սննդամթերքի արտադրության /45.7%/ և ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակման /30.5%/, մեծ ծավալ է կազմում ծխախոտի արտադրատեսակների արտադրությունը /8.8%/:

135. 2011-2013թթ. ընթացքում մարզի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 26.9% և 52.6 %: Ըստ վիճակագրական մոնիտորինգի 79.5 % գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 13.3%-ը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր քանակում 12.8% կազմող խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 83.0%:

136. Արարատի մարզում արդյունաբերական ձեռնարկությունները բաշխված են մարզի բոլոր 3 տարածաշրջաններում: Արտաշատի տարածաշրջանում ակտիվ են 29 ձեռնարկություններ, որոնց գործունեության մեջ հիմնականում գերակշռում են սննդամթերքի և խմիչքների, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակման՝ բնական քարերից երեսապատման սալիկների արտադրությունը:

137. Արարատի տարածաշրջանում ակտիվ են 34 արդյունաբերական ձեռնարկություններ: Նրանց գործունեության մեջ գերակշռում է վերամշակող արդյունաբերությունը, մասնավորապես <<Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան>> և ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում (ցեմենտի, կրի և ազբոցեմենտային իրերի արտադրությունը) և բնական քարերի վերամշակումը՝ երեսապատման սալիկների արտադրությունր, և պլաստմասե շինարարական իրերի արտադրությունը:

138. Մասիսի տարածաշրջանում համեմատաբար ակտիվ են 22 ձեռնարկություններ, որոնց գերակշիռ մասը կրկին պատկանում է վերամշակման ոլորտին: Տարածաշրջանում հատկապես զարգացած է ծխախոտի ֆերմենտացիան, փայտանյութի մշակումը, քիմիական արտադրանքի թողարկումը և այլն:

139. Արարատի մարզի արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ տարածաշրջանների 2013թ. հունվար – դեկտեմբերին հետևյալն է՝



140. Արարատի մարզի տարածքում արդյունաբերական արտադրանքի թողարկման ոլորտում գործում են ինչպես խոշոր ընկերություններ (<<Արարատի ցեմենտի գործարան>>, <<Արարատի ոսկու կորզման ֆաբրիկան>>, <<Արտաշատի և Արարատի պահածոների գործարան>>, <<Վեդի Ալկո>>, <<Ավշարի գինու գործարան>>, <<Ինթերնեյշնլ Մասիս Տաբակ>>, <<ԱրմՎինկոն գինու գործարան>> և այլն), որոնք ունեն մեծ թվով աշխատակիցներ և կայացած ընկերություններ են, այնպես էլ բազմաթիվ միջին և փոքր ձեռնարկություններ:

141. **Մշակող արդյունաբերություն -** Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),
2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
3) ոչ մետաղական օգտակար հանածոների վերամշակում (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արդյունահանում, քարի կտրում և վերամշակում):

142. **Պահածոյագործություն -** Սննդամթերքի և ըմպելիքների արտադրության մեջ առանձնակի տեղ ունի պահածոյագործությունը, որը հանդիսանում է տնտեսության ավանդաբար զարգացած ոլորտներից մեկը: Դրա նախապայմանն է հանդիսանում

մարզում գյուղատնտեսության, մասնավորապես, բանջարեղենի և պտղի արտադրության զարգացվածության բավականին բարձր աստիճանը: Պահածոների արտադրությունը տեղակայված է հումքային բազայի կենտրոնում: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ մարզում արտադրվում է Հայաստանում արտադրվող պահածոների գերակշիռ մեծամասնությունը:

143. Արարատի մարզում պահածոների արտադրության ծավալները 2012թ. կազմել է 19 մլն 744.3 հազ. դրամ, իսկ 2013թ.-ին՝ 22 մլն 526 հազ. դրամ: Արարատի մարզը՝ հատկապես վերջին տարիներին, դարձել է պահածոների արտադրության անվիճելի առաջատարը Հայաստանում: 2013թ. մարզի մասնաբաժինը Հայաստանի արտադրության ծավալների մեջ զգալիորեն մեծացել է:

144. Արարատի մարզի առաջատար դիրքը պահածոների արտադրության ոլորտում մեծապես պայմանավորված է Արտաշատի և Արարատի պահածոների գործարանների գործունեությամբ, որոնք հանդիսանում են ոլորտի խոշորագույն ընկերություններ ոչ միայն մարզում, այլև Հանրապետությունում: Ընկերությունները կայուն փոխհարաբերություններ են հաստատել արտերկրյա իր գործընկերների հետ և արտադրանքի հիմնական մասը արտահանում են: Արտաշատի և Արարատի պահածոների գործարանների հանդիսանում են մարզում արտադրվող պտղի և հատկապես բանջարեղենի հիմնական մթերողները: Արարատի մարզի պահածոյագործական ընկերությունները իրենց արտադրանքը հիմնականում արտահանում են արտաքին շուկաներ:Մնացած՝ արտադրանքի 30%-40% -ը իրացվում է ներքին շուկայում:

145. Արարատի մարզում գործում են նաև պահածոների արտադրության մի քանի միջին ձեռնարկություններ՝ իրենց մեծությամբ առանձնանում են <<Մամիկոն և որդիներ>> և <<Ալիշան>> ընկերությունները, որոնք ունեն 60-80 աշխատող սեզոնից կախված:

146 **Ոգելից խմիչքների արտադրություն -** Հանդիսանում է տնտեսության զարգացած ոլորտներից մեկը: Արարատի մարզում օղու, գինու և կոնյակի արտադրական ծավալները ներկայացված են աղյուսակ 4.2 -ում:

Աղյուսակ 4.2 Արարատի մարզում օղու, գինու և կոնյակի արտադրություն /հազ.լիտր/

Արարատի մարզ	**2013թ.**	**2012թ.**
Օղու արտադրություն	9022.2	5614.5
Գինու արտադրություն	885.9	551.3

Կոնյակի արտադրություն	4118.7	2563.1

147. Կոնյակի արտադրության ծավալները շարունակել են աճել անկախ ցրտահարություններից: Կոնյակի արտադրության ծավալները աճել են այն պատճառով, որ այս ընկերությունները շարունակել են խաղողի մթերումները, նույնիսկ ցրտահարության հետևանքով բարձրացած գներով:

148. Մարզում գինու արտադրության ընկերությունները կենտրոնացած են հիմնականում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններում: Մասիսի տարածաշրջանում գործում է խաղողի մթերման և պահպանման մեկ կետ: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ խաղողի այգիների ծավալը Մասիսի տարածաշրջանում շատ փոքր է Արտաշատի տարածաշրջանի համեմատությամբ, որտեղ խաղողի տնկարքներ ունեն համայնքների մեծամասնությունը:

149. Արարատի մարզում շուրջ 20 ընկերություններ զբաղվում են խաղողի մթերումներով և ալկոհոլային խմիչքների արտադրությամբ: Դրանցից են <<Վեդի-Ալկո>>-ն, <<Ավշարի>> գինու գործարանը, <<Արարատի>> գինու գործարանը, <<Գրեյդ Վելին>>-ն, <<Վան 77>>-ը, <<Արտաշատի գինու – կոնյակի>> Արմվինկոն գործարանը, <<Տափերականի>> գինու գործարանը, Շահումյանի գինու - կոնյակի գործարանը, <<Քաղցրաշենի>> գինու - կոնյակի գործարանը, <<Մխչյանի գինու - կոնյակի գործարան>>-ը, <<Երասխի>> գինու գործարանը և այլ ընկերություններ, ինչպես նաև <<Երևանի կոնյակի>> գործարանի և <<Արարատ գինու – կոնյակի>> գործարանի խաղողի մթերման կետերը:

150. Նշված ընկերությունների մի մասը փոքր են՝ ունեն 20-30 աշխատողներ, հիմնական մասը միջին են՝ մինչև 50 աշխատողներ, իսկ խոշորները ունեն 100-ից ավելի աշխատողներ:

151. Օղու իրացման հիմնական շուկան ներքին շուկան է: Այստեղ անառարկելի առաջատարներն են Վեդի - Ալկոն և Ավշարի գինու-կոնյակի գործարանը, որոնք կառավարում են օղու տեղական շուկայի մոտ 50%-ը:

152. Ավանդաբար հայկական գինու խոշորագույն շուկան հանդիսացել է Ռուսաստանը և այս միտումը պահպանվել է առ այսօր: Արարատի մարզի գրեթե բոլոր ընկերությունները իրենց արտադրանքի շուրջ 80%-ը արտահանում են ռուսական շուկա:

153. Ալկոհոլային խմիչքներ արտադրող ընկերությունների համար ընդլայնման լուրջ հնարավորություն կարող է հանդիսանալ եվրոպական շուկան, որը լրջագույն պահանջներ է առաջադրում արտադրանքի որակական հատկանիշների, փաթեթավորման և արտաքին տեսքի համար:

154. Արարատի մարզի ալկոհոլային խմիչքներ արտադրող ընկերությունները լայնորեն համագործակցում են բանկերի և ֆինանսավորում իրականացնող այլ կառույցների հետ: Համեմատաբար խոշոր ընկերությունները տնօրինում են բավականին մեծ ֆինանսական ռեսուրսների, սակայն մթերումների սեզոնի ընթացքում նրանք նույնպես ունեն ֆինանսական որոշակի դժվարություններ: Ֆինանսական ռեսուրսներ են ներգրավում նաև միջազգային կառույցներից և անհատներից:

155. **Ոչ մետաղական օգտական հանածոների վերամշակում -** Արարատի մարզի տարածքում արտադրվում են մի շարք ոչ մետաղական օգտակար հանածոների տեսակներ, որոնց մեջ էական նշանակություն ունեն շինանյութերը: Շինանյութեր արտադրող խոշորագույն ձեռնարկությունը Արարատի ցեմենտի գործարանն է, որի հիմնական արտադրանքը ցեմենտն է: Քանի որ այս ձեռնարկությունը խոշորագույններից մեկն է Հայաստանում, այն որոշակի ազդեցություն ունի նաև մարզի տնտեսության զարգացման հեռանկարների վրա:

156. Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին շինանյութերի արտադրության ոլորտում աճել է ազբոցեմենտյա թիթեղների արտադրության ծավալները: Նվազել են ոչ հանքային շինանյութերի արտադրական ծավալները:

157. Շինանյութերի արտադրությամբ զբաղվող ընկերությունները հիմնականում տեղակայված են Արարատի և Արտաշատի տարածաշրջաններում: Բացի Արարատի ցեմենտի գործարանից, ոլորտում առանձնանում են նաև մի շարք այլ ընկերություններ՝ <<Հայճենապակի>>, <<Կավաշեն>>, <<Գալիք>>, <<Մոս>>, <<Վեդի պլաստ>> ՍՊԸ և այլն: Այս ընկերությունները թողարկում են ոչ հանքային շինանյութեր՝ գաջ, կիր, կլինկեր, ազբոցեմենտյա թիթեղներ, կղմինդրե սալիկներ, աղյուս, պլաստիկ խողովակներ և այլն: Նրանց թողարկած հիմնական արտադրատեսակները ներկայացված են աղյուսակ 4.3-ում:

Աղյուսակ 4.3 Արարատի մարզում արտադրված շինանյութերի հիմնական տեսակները

	2013Ã.	2012Ã.	² ×Çï »Ùå Á %
Î ÉÇÝÏ »ñ, Ñ³ ½ï áÝÝ³	0.8	41.6	1.9
ò »Ù»Ýï , Ñ³ ½ï áÝÝ³	554.9	500.1	111.0
Î Çñ, ï áÝÝ³	2229.0	2751.0	81.0
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, Ëáñ.Ù.	321.7	231.9	138.7
Ազբոցեմենտյա թիթեղ /շիֆեր/, հազ. å³ ÙÛ.ë³ ÉÇÏ	223112.0	2479.2	90³ Ý· ³ Ù
Երեսպատման սալեր բնական քարից, քառ.մ/	49473.6	48912.7	101.1
à ã Ñ³ Ýù³ ÙÇÝ ßÇÝ³ ÝÙáõÃ»ñ, Ëáñ.Ù.	169357.4	136466.5	124.1
² ÉáõÙÇÝ» ¨ Ù»ï ³ Õ³ å É³ ëï Çï Çñ»ñ, ù³ é.Ù.	6391.58	4916.6	130
ä É³ ëï Ù³ ëë³ Ûï Çñ»ñ, ï áÝÝ³	3971.6	2801.0	141.7

158. Շինանյութեր արտադրող կազմակերպությունների մեծ մասն աշխատում է

հզորությունների ցածր ծանրաբեռնվածությամբ: Արտադրության ծավալները հնարավոր է աճեն միջին հաշվով 2-3 անգամ: Արտադրության հետագա զարգացման և գործունեության ընդլայնման հիմնական խոչընդոտների շարքում նշվում են պատվերների, ֆինանսական ռեսուրսների սակավությունը, արտաքին շուկա դուրս գալու դժվարությունները և այլն:

159. Շինանյութեր արտադրող ընկերությունների հիմնական մասն օգտագործում են տեղական հումք: Բացառություն են կազմում պլաստիկ խողովակների և կղմինդրե սալիկների արտադրությունները, որոնց հումքային միջոցների հիմնական մասը ներկրվում է:

160. Արարատի մարզի շինանյութեր արտադրող ընկերությունների հիմնական իրացման շուկան Հայաստանն է: Պլաստիկ խողովակները, կիրը, գաջը և ոչ հանքային այլ շինանյութերն իրացվում են բացառապես ներքին շուկայում:

161. Մարզում շինանյութերի արտադրության ոլորտը զարգացման լավ հնարավորություններ ունի: Դրա հիմնավորումն այն է, որ առկա է իրացման շուկա, իսկ որոշ ընկերություններ ունեն արտահանման ներուժ և ներմուծվող արտադրանքը տեղական արտադրության շինանյութերով փոխարինելու հնարավորություն:

162. Արարատի մարզում օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման ոլորտը բավականին զարգացած է՝ քանի որ մարզի տարածքը հարուստ է տարբեր ապարների հանքերով, հիմնականում տրավերտին, մարմար և օնիքս: Բնագավառում գործում են ավելի քան 23 ընկերություններ, որոնց մեջ գերակշռում են Արարատի և Արտաշատի տարածաշրջանների ձեռնարկությունները: Համեմատաբար խոշոր ձեռնարկություններն են <<Մուլտի Գրուպ Սթոուն>>-ը և <<Փասեպ Ինթերնեյշնլ>>-ը:

163. Վերջին երկու տարիներին բավականին համեստ ցուցանիշներ են արձանագրվել երեսապատման սալիկների արտադրության ոլորտում:

164. Նրանց գործունեության մեջ հիմնականում օգտագործվում են տեղական արտադրության հումք և նյութեր: Որոշ դեպքերում Արարատի մարզում արդյունահանված քարե բլոկները վերամշակվում են Հայաստանի այլ մարզերում:

165. Երեսպատման սալիկներ արտադրող ընկերությունները բավականին լավ արդյունքներ են արձանագրել արտադրանքի արտահանման տեսանկյունից, առաջատարը <<Մուլտի Գրուպ Սթոուն>> ընկերությունն է, որը միայն ԱՄՆ արտահանում է տարեկան 10 հազ. մ^2: Արտահանման ուղղություններ են նաև Ռուսաստանը, եվրոպական երկրները, դիտարկվում է Մերձավոր Արևելքի շուկա մտնելու հնարավորությունները:

166. Այս ոլորտում գործող ընկերությունները որոշակի առավելություններ ունեն այլ մարզերում գործող նույն ոլորտի մյուս ընկերությունների նկատմամբ, քանի որ Հայաստանում որոշ քարատեսակների հիմնական պաշարները կենտրոնացած են հենց Արարատի մարզում:

167. **Արդյունաբերության այլ ոլորտներ -** Ի լրումն ներկայացված ոլորտների, Արարատի մարզում կան արդյունաբերության մի շարք ճյուղեր, որոնք իրենց կարևոր դերն ունեն մարզի տնտեսության մեջ: Դրանցից մի մասը ներկայացված է արդեն

կայացած և համեմատաբար խոշոր ձեռնարկություններով, իսկ մյուսը՝ դեռևս զարգացման փուլում գտնվող փոքր ձեռնարկություններով և անհատներով: Համեմատաբար խոշոր ձեռնարկություններով է ներկայացված քիմիական արդյունաբերությունը՝ <<Քրաուն քեմիքլ>> ՍՊԸ, ծխախոտի արտադրությունը՝ <<Մասիս տոբակո>> և <<Ինթերնեյշնլ Մասիս տոբակ>> ձեռնարկություններով, փաթեթավորման նյութերի արտադրությունը՝ <<Մասիսի գոֆրոտարա>> և այլն: Այս ընկերությունները համարվում են կայացած, տնօրինում են անհրաժեշտ ռեսուրսներ և ի վիճակի են զարգանալ առանց կողմնակի աջակցության:

168. **Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը -** Չնայած Հայաստանում ապրանքների և ծառայությունների տեղական սպառման էական աճին, երկրում սպառման մեծ մասը դեռևս կենտրոնացած է Երևանում: Փաստորեն երկրում առկա է սպառման հարաբերականորեն մեծ շուկա, սակայն ապրանքների և ծառայությունների պահանջարկը մարզերում և մասնավորապես ՀՀ Արարատի մարզում ցածր է մնում: չնայած Արարատի մարզը Հայաստանի մյուս մարզերի համեմատությամբ գտնվում է Երևանից՝ ամենամոտ հեռավորության վրա սպառողական ամենամեծ շուկայից,սակայն մայրուղիներով անցնող և Երևան հասնելու համար պահանջվող ժամանակահատվածը խոչընդոտում է սպառման շուկայի հասանելիութանը և որն էլ իր հերթին չնայած թույլ սակայն լուրջ թերություններ է ստեղծում մարզի արդյունաբերության և մասնավորապես ՓՄՁ-երի զարգացման համար:

169. Ոլորտում մարզի առկա հիմնախնդիրները պայմանավորված են հիմնականում նաև հետևյալ գործոններով.

1) Աշխատատեղերի անբավարար թիվը /գործազրկության բարձր մակարդակը մարզում
2) Տարբեր գործոններով պայմանավորված՝ կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակը:

170. Ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները:

1) Արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն
2) Ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինում
3) Միջազգային շուկայում տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում:
4) Օժանդակել Արարատի մարզի մի շարք (որքան հնարավոր է մեծ թվով) համայնքներում պտղի և բանջարեղենի վերամշակման փոքր արտադրությունների հիմնման և զարգացման գործընթացին: Սա ԱԳՏ-ներին թույլ կտա նվազեցնել տրանսպորտային ծախսերը դիվերսիֆիկացնել մթերումները և դրանք

իրականացնել ավելի բարձր գնով:

5) Օժանդակել ԱԳՏ-ների և վերամշակողների միությունների ձևավորմանը: Սա թույլ կտա միավորել ջանքերն ընդհանուր խնդիրների լուծման նպատակով:

6) Օժանդակել պահածոների դիվերսիֆիկացիայի և նոր արտադրատեսակների (մսի, ձկնամթերքի սնկի, և այլ պահածոների, մրգի) ներկայացման գործընթացին: Սա հիմնականում միտված է հզորությունների լիարժեք օգտագործմանը և սեզոնային տատանումները մեղմելուն:

7) Նախատեսել խաղողի մթերման ծավալների ավելացում (օժանդակել մարզում խաղողագործության ոլորտի զարգացմանն ու ծավալային աճին՝ շեշտը դնելով հատուկ տեխնիկական տեսակների ավելացման վրա): Այս առաջարկությունը բխում է մարզում բազմաթիվ մթերողների առկայությունից և մթերման պատրաստակամությունից:

8) Աջակցել գինեգործության օժանդակ արտադրությունների (օրինակ տակառագործության) զարգացմանը:

9) Ուսումնասիրել Հայաստանում (Արարատի մարզում) ձկան կերերի արտադրության հիմնման հնարավորություն, ինչը թույլ կտա նվազեցնել ձկան ինքնարժեքը:

10) Օժանդակել Արարատի մարզում ձկան վերամշակման (պահածոների արտադրություն, ձկան սառեցում, չորացում, ծխեխաշում և այլն) արտադրության ստեղծմանը, նախապես իրականացնելով իրագործելիության հետազոտությունը:

11) Օժանդակել Արարատի մարզում բնական քարերի արդյունահանման և վերամշակման ընկերությունների միության ստեղծմանը:

12) Ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման համար օժանդակություն ցուցաբերել մարզի տարածքում գործող ագրովերամշակող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի մթերման կազմակերպման և ագրովերամշակող կազմակերպությունների ու գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացներին,

13) Միջոցառումներ ձեռնարկել մարզի տարածքում գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

171. **ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն -** ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:

172. Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված էր իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում:

173. ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական

քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2012թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 27.1% 2011թ. 25.9% դիմաց՝ կրկնակի գերազանցելով 1999 թվականի մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 18%, 2011 թվականի 16.9%-ի դիմաց:

174. Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 73 923. ՓՄՁ սուբյեկտների քանակը 2010թ. համեմատ ավելացել է 25 տոկոսով: Ընդ որում ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը կենտրոնացված է Երևանում 53% –ը, Արարատի մարզում այն կազմում է 6%:

175. ՓՄՁ սուբյեկտների հանրապետական բաշխվածքը ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց հետևյալն է՝ գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է աղյուսակ 4.4 –ում:

Աղյուսակ 4.4 Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածք

Մարզեր	ՓՄՁ սուբյեկտներ			
	քանակ	[%]	ՓՄՁ սուբյեկտներում Զբաղվածների բաշխվածությունը [%]	ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալը[%]
Երևան	39 180	53	61	65
Արագածոտն	2 217	3	2	2
Արարատ	**4 438**	**6**	**4**	4
Արմավիր	4 436	6	4	5
Գեղարքունիք	2 957	4	3	2
Լոռի	4 436	6	6	5
Կոտայք	7 175	7	7	6
Շիրակ	3 696	5	6	4
Սյունիք	3 696	5	4	4

Վայոց Ձոր	1 741	2	1	1
Տավուշ	2 217	3	2	2
Ընդամենը ՀՀ	73 925	100	100	100

176. Արարատի մարզում ՓՄՁ սուբյեկտների թիվը կազմում է 4438: Ընդ որում Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր թվում Արարատի մարզի ՓՄՁ սուբյեկտները կազմում են ընդամենը 6 %: Հատկանշականը այն է, որ նախկինում գործող խոշոր ձեռնարկությունները աստիճանաբար իրենց տեղը զիջեցին փոքրերին, որոնք աշխատում են ավելի ճկուն և ապահովում են ավելի բարձր արդյունքներ:

177. ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:

178. Արարատի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսվում է իրականացնել <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) գործունեության շրջանակներում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Արարատի մասնաճյուղի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունները և ծրագրերը՝

1) Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր
2) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
3) ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղման աջակցություն
4) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
5) ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն
6) Հայաստանում <<Ձեռնարկությունների եվրոպական ցանցի>> հաղորդակցման կենտրոնի գործունեության կազմակերպում

179. ՓՄՁ-ներին ցուցաբերած աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմով /աղյուսակ 4.5/:

Աղյուսակ 4.5. ՓՄՁ աջակցման մեխանիզմները

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	Գործող ՓՄՁ-ներ	Սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10.0 մլն դրամ: Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում: Սեփական կապիտալի ֆինանսավորում:	Մինչև 2.0 մլն դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով:
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն, Ուսուցողական դասընթացներ	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար
Իրացման աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում Պիտակների տպագրություն Ինտերնետային կայքի պատրաստում Մասնակցություն ցուցահանդեսներին:	

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Արարատի մարզային կենտրոն

180. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում վարկավորումն իրականացվել է <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ>> բանկի միջոցով տարեկան 12% տոկոսադրույքով:

181. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 12 սկսնակ գործարարի:

182. ՓՄՁ սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

4.2. Ծրագրի արդյունքները և հետագա խնդիրները

183. Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի էր, սակայն այժմ պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմները ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում:

184. Ծրագրի շահառուների շրջանակները ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

4.3. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

185. ՄԶԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը զգալիորեն բարելավեց վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման առկա հնարավորություններից:

186. Ծրագրով իրականացված նախաձեռնությունները աջակցելով հանդերձ շահառու ՓՄՁ-ների գործունեության բարելավմանը դեռևս բավարար չեն էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը: Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է հիմնականում.

1) Առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր և խանութներ
2) Ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքների վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն
3) Շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

187. Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համայնքապետերը համարում են.

1) բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և

մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը

2) տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը

3) զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

4) համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

188. Համայնքների ղեկավարները ցանկանում են մասնակցել համայնքի մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի մշակմանը: Նման ծրագրերի մշակման և իրականացման համար համայնքապետերը աջակցություն են ակնկալում դոնոր կազմակերպություններից, ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամից, ինչպես նաև օտարերկրյա և տեղացի մասնավոր ներդրողներից:

189. Վերլուծությունը ցուցահանում է, որ մասնավոր ներդրումների ներհոսքը սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են.

1) Համայնքապետերը կարևորելով մասնավոր ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը, դեռևս չունեն հստակ պատկերացում ներդրումների խրախուսման իրենց դերի վերաբերյալ

2) Մասնավոր ներդրումների համար տեղական ռեսուրսների, մասնավորապես հողի և արտադրական տարածքների հատկացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը

3) Գործարար նախաձեռնությունների իրականացման համար անհրաժեշտ որակյալ աշխատուժի և մասնագետների պակասը:

190. ՓՄՁ-ի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ուսումնասիրությունների և վարչական մոնիտորինգի արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները: Այդ հիմնախնդիրները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով. մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրներով, ինչպես նաև սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակասով:

191. ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե՝ սկսնակ և թե՝ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության վրա:

192. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների և պետական

մարմինների միջև փոխհարաբերություններում դեռևս առկա մի շարք վարչարարական բնույթի խնդիրներին, մասնավորապես՝ կապված տնտեսավարող սուբյեկտների (ՓՄՁ-ի սուբյեկտների) ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի, տնտեսավարող սուբյեկտներում (ՓՄՁ-ի սուբյեկտներում) անհարկի ստուգումներ իրականացնելու հաճախականության փաստերի հետ և այլն:

193. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրները հանգում են հիմնականում ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությանը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարվանից ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությանը, ինչը լուրջ խնդիր է հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես, արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար:

194. ՓՄՁ-ի զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը: Այս ենթատեքստում լուրջ խնդիրներ են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը:

195. ՓՄՁ-ի սուբյեկտների համար լուրջ հիմնախնդիր է իրենց բիզնեսի կազմակերպումն ու կառավարումը: Այս հիմնախնդրի լուծման ուղղությամբ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը դեռևս բավարար չէ: Մյուս կողմից առկա է ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից նման ծառայությունների կարևորության չգիտակցման փաստը: Այս համատեքստում որակյալ խորհրդատվական ծառայությունների կարիք ունեն հատկապես սկսնակ գործարարները և գործող այն ՓՄՁ-ի սուբյեկտները, որոնք փորձում են շուկայում ներկայացնել նորարարական արտադրանք կամ ծառայություն:

196. Ընդհանրացնելով վերը շարադրվածը կարելի է փաստել, որ մարզի տնտեսական զարգացման ներկայիս փուլում ՓՄՁ-ի սուբյեկտների զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններն են՝

1) ՓՄՁ-ի սուբյեկտների (հատկապես սկսնակ գործարարների) համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչպես նաև երկարաժամկետ (3 տարուց ավելի ժամկետով) ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում, մասնավորապես արտադրության գիտատարր ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

2) սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն

ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը,

3) գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները,

4) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղման հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում առնչվում են թողարկվող արտադրանքի որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, ինչին էականորեն խոչընդոտում է ժամանակակից լաբորատորիաների բացակայությունը, որոնց փորձաքննության արդյունքները կընդունվեն արտահանող երկրներում,

5) միջմարզային և ներմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը,

6) տեղեկատվական հոսքերի անմատչելիությունը և դրանց ընկալման, մշակման ու փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ՓՄՁ-ի սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը,

7) շուկայական և մասնավորապես արտարժութային ռիսկերից ապահովագրման և դրանք կառավարելու հետ կապված բարդությունները, ինչը հատկապես խնդիրներ է ստեղծում արտադրության ոլորտում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար,

8) ՓՄՁ-ի սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ընձեռվող հնարավորությունների թերի և ոչ բավարար օգտագործման հետևանքով շուկայում թույլ մրցակցային դիրքերը, ինչը մասամբ պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների անմատչելիությամբ և դրանց կիրառման հնարավորությունների վերաբերյալ ոչ բավարար պատկերացումներով:

4.4Մասնավոր հատվածի զարգացման 2015-2018թթ. առաջնահերթությունները

197. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի

ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

4) Անհրաժեշտ է օժանդակություն ցույց տալ Արարատի մարզի ՓՄՁ-ին՝ շուկայավարման ռազմավարության մշակման և իրականացման հարցում: Դա կարող է իրականացվել համապատասխան ծառայության կամ կենտրոնի ստեղծման միջոցով:

5) Օժանդակել Արարատի մարզի ՓՄՁ-ին՝ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների հայտնաբերման և արտաքին ֆինանսավորման ներգրավման հարցերում: Այդ նպատակով անհրաժեշտ է բանակցություններ վարել բանկերի և ներդրումային հիմնադրամների հետ՝ ռեսուրսների հայթայթման կամ առկա միջոցների ուղղորդման նպատակով:

6) Գյուղմթերքներ մթերող կազմակերպությունների համար ստեղծել տարբերակված (երկարաժամկետ և կարճաժամկետ) ֆինանսական (հիմնականում վարկային)ռեսուրսներից մատչելի պայմաններով (ցածր տոկոսադրույք, մարման համապատասխան գրաֆիկ և այլն) օգտվելու հնարավորություններ:

7) Օժանդակել արտադրողների այլընտրանքային ֆինանսավորման կամ լիզինգային ծրագրի իրականացման հարցում:

8) Օժանդակել Արարատի մարզի տարածքում տեղեկատվական կենտրոնի հիմնադրման գործին:

9) ՓՄՁ-ին տեղեկություններ ապահովել ոլորտների ժամանակակից տեխնիկական զարգացումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև շուկայական վերջին զարգացումների վերաբերյալ:

10) Հնարավորինս օժանդակել տնտեսություններին՝ արդյունաբերական արտադրություն կազմակերպելու հարցում, միավորելով նրանց միությունների մեջ, ինչը թույլ կտա շուկա (արտաքին) մտնել արտադրանքի ավելի մեծ խմբաքանակով, համապատասխան դիզայնով, փաթեթավորմամբ և գովազդի ռազմավարությամբ:

198. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է Գծապատկերում.



199. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1)ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն

գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

200. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

201. 2015-2018 թվականների ընթացքում արդյունաբերության, ՓՄՁ սուբյեկտների գործունեության զարգացման ուղղությամբ նախատեսնվող միջոցառումների իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումները ներկայացված են հավելված 4-ում:

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

5.1.1 Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

202. Պետական ու ազգային կարևորագույն խնդիր է համարվում կրթության համակարգի պահպանումը, զարգացումը և միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը:

203. Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Կրթության ոլորտի բարեփոխումները սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ սոցիալ-տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, երբ կարևորվեց հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին մեր ինտեգրվելը, կրթության՝ որպես հիմնարար արժեքները փոխանցող և ազգային հարատևումն ապահովող համակարգի անհրաժեշտությունը: Կրթական համակարգի առջև ծառացած խնդիրները տարաբնույթ են ու պայմանավորված կյանքի հրամայականով, իսկ լուծումները՝ օրակարգային, ելնելով կրթության արագընթաց գլոբալացման և երկրի մրցունակության ապահովման անհրաժեշտությունից: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից է: Ոլորտի զարգացման քաղաքականությունը պետք է համահունչ լինի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Կրթություն՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարությանը և ուղղված լինի այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

204. ՀՀ Արարատի մարզի կրթության զարգացման տեսլականն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում:

1) կայուն տնտեսական աճի ապահովում

2) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում

3) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում:

205. **Նախադպրոցական կրթություն:** Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը Արարատի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը և մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը նվազել է անկախության առաջին տարիներին, տնտեսական դրությունը թեև կայունացման միտում ուներ, էներգետիկ ճգնաժամը ջեռուցման այլընտրանքային միջոցները /փայտ կերոսին և այլն/ ձեռք բերելու դժվարությունները, այնուհետև ֆինանսական ռեսուրսների սղությունը բերեցին մանկապարտեզ հաճախող երեխաների թվի նվազմանը: Բացի այդ, մանկապարտեզների փակման և երեխաների հաճախման թվաքանակի վրա իր ազդեցությունն է ունեցել նաև Արցախյան հակամարտությունը, հատկապես մարզի սահմանամերձ բնակավայրերում /Երասխ, Պ.Սևակ/:

206. Կարևորելով նախադպրոցական կրթության դերը երեխաների համակողմանի զարգացման համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008թ. հաստատել է <<Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը>>, որը ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակադրում է մինչև 2015թ. ավագ նախադպրոցական տարիքային խմբերի ընդգրկվածությունը հասցնել մինչև 90 տոկոսի:

207. Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության մարզի բոլոր նախադպրոցական հաստատություններում պետք է ապահովվել բազմաֆունկցիոնալ ծառայությունների գործարկումը տարբերակված ծրագրերով /այլընտրանքային ծառայություններով/, ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: 2004թ. մարզում ներդրվեց <<Այլընտրանքային ծառայության>> փորձնական 5 տարբեր ծրագրեր, որը բերեց երեխաների թվի ավելացմանը: 2010-2011 ուսումնական տարվանից <<Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում>> ծրագրի շրջանակներում ուսումնական հաստություններում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ գործարկվեց 17 դպրոցահեն նախապատրաստական խմբեր կարճաժամկետ ուսուցմամբ, այնուհետև նաև 2013-2014թթ. ուս. տարում ևս 6 խումբ, որը բերեց երեխաների կրթական հաստատություն հաճախման թվի աճին և կարճաժամկետ ուսուցման ապահովման /աղյուսակ 1/:

Աղյուսակ 5.1.1. 2014թ. ՀՀ Արարատի մարզում գործող դպրոցահեն նախապատրաստական խմբեր

Արարատի մարզ	Դպրոցահեն նախապատրաստական խմբեր	Հաճախող երեխաների թիվը

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2011թ	2012թ	2013թ	2014թ
	17	17	17	17	634	383	371	417

208. Վերջին տարիներին մարզի նախադպրոցական կրթության ոլորտում գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

209. Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով ՀՀ ԿԳՆ ԿԱԻ կողմից իրականացվել է նախադպրոցական կրթության չափորոշիչների մշակում և ներդրում, մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, խոսքի զարգացման պարապմունքները միջին խմբերում մեթոդական ձեռնարկները, մանկապարտեզի վաղ հասակի, կրտսեր առաջին, կրտսեր 2-րդ խմբի, միջին խմբի կրթական համալիր ծրագրերի ներդրում 75 մանկապարտեզներում և 23 նախակրթարաններում, որի արդյունքում էականորեն ավելացել է մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը:

210. Կարևորագույն խնդիրներից է պետության աջակցությամբ ժամանակակից տեխնիկական և հաղորդակցության տեխնոլոգիաների /ՏՀՏ/ ներդրումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ արդիական համակարգչային միջոցներով և որակյալ ինտերնետային կապով, որը թույլ կտա լուծել մի շարք խնդիրներ:

211. Իրավական հիմքի բացակայության պատճառով խիստ տարբեր են համայնքային նախադպրոցական հաստատություններում երեխաների կրթական ծրագրերի իրացման պայմանները, ծառայությունների իրականացման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը, նախադպրոցական մանկավարժական կադրերի վարձատրության խնդիրները հաստատություններում:

212.Անհրաժեշտություն է նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում մեկ սանի հաշվարկով ուսումնական հաստատության ֆինանսավորման նորմատիվային մոդելի ներդրումը, որը կնպատակի նախադպրոցական կրթության համակարգի առջև ծառացած հիմնախնդիրների լուծման, ուսումնական հաստատությունների զարգացման խթանման ու նախադպրոցական կրթության որակի բարձրացումն, ինչպես նաև ֆինանսական միասնական քաղաքականության ապահովմանը:

213. Արարատի մարզի վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ մանկապարտեզների թվի և մանկապարտեզ հաճախող երեխաների թվերի հարաբերակցությունը աճի միտում ունի:

Աղյուսակ 5.1.2. Նախադպրոցական հաստատությունների գործունեությունը

Արարատի մարզ	Նախադպրոցական հիմնարկների քանակը				Հաճախող երեխաների թիվը			
	2010թ	2011թ	2012թ	2013թ	2010թ	2011թ	2012թ	2013թ
	67	73	74	75	4652	4940	5351	5688

Աղյուսակ 5.1.3. նախադպրոցական հաստատությունների գործունեությունը

Արարատի մարզ	Նախադպրոցական հիմնարկների քանակը				Հաճախող երեխաների թիվը			
	2014թ	2015թ	2016թ	2017թ	2014թ	2015թ	2016թ	2017թ
	75	76	77	78	6314	6364	6414	6444

214. 2010-2013թթ. նախադպրոցական հաստատություններում երեխաների մոտ նկատելի է աղքատ և ոչ աղքատ խավերի ընդգրկվածության զգալի անհավասարություն, մինչդեռ հիմնական կրթությունում տարբեր խավերի ընդգրկվածությունը բավական բարձր է և համասեռ:

215. 1990-ական թվականներին հաշվառված 82 նախադպրոցական հաստատություններից 2003-2010թթ. մարզում գործել է մինչև 68 մանկապարտեզ, իսկ 2011-2014թթ.՝ 75 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 64-ը համայնքային ենթակայության, 1-ը՝ գերատեսչական /Արարատ ցեմենտ ՓԲԸ-ի մանկապարտեզ/: Մանկապարտեզներում երեխաների թիվը 2014թ. 6314 է, խմբերի թիվը 206, մանկավարժների թիվը 536, իսկ 23 գյուղական համայնքների դպրոցներում գործում են նախակրթարաններ /նախակրթարաններ աղյուսակ 1/:

Աղյուսակ 5.1.4. 2014թ. Արարատի մարզում գործող մանկապարտեզներ

	Համայնքը, մանկապարտեզի անվանումը, համարը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Ավագ խմբում(երում) ընդգրկված 5-6 տարեկանների թիվը
1	Արտաշատ ք.N1	6	132	48

2	Արտաշատ ք.N3	5	130	53
3	Արտաշատ ք.N4	6	188	66
4	Արտաշատ ք.N5	6	170	70
5	Արտաշատ ք.N6	3	78	24
6	Արտաշատ ք.N7	2	70	9
7	Արտաշատ ք.N8	4	110	33
8	Արևշատ	2	60	25
9	Այգեզարդ	2	60	31
10	Այգեստան	3	93	30
11	Բաղրամյան	2	70	0
12	Դալար	3	70	25
13	Դիմիտրով	1	35	11
14	Կանաչուտ	1	30	20
15	Մխչյան	3	106	37
16	Մրգավետ	2	78	28
17	Նարեկ	2	54	12
18	Դվին	2	59	30
19	Նորաշեն	1	45	11
20	Բուրաստան	1	26	18
21	Շահումյան	2	70	24
22	Ոստան	1	30	19
23	Հովտաշեն	2	42	15
24	Վ.Արտաշատ	4	132	35
25	Քաղցրաշեն	2	65	30
26	Գետազատ	2	55	14

27	Մրգավան	2	64	18
28	Արարատ ք N1	1	120	45
29	Արարատ ք N2	6	170	63
30	Արարատ ք N3	4	121	65
31	<<Արարատցեմենտ>> ՓԲԸ	6	137	58
32	Այգավան	5	142	36
33	Ավշար	2	83	25
34	Արարատ գ.	3	95	36
35	Արմաշ	3	92	28
36	Եղեգնավան	2	39	22
37	Գոռավան	2	78	27
38	Լուսառատ	3	92	25
39	Նոյակերտ	3	70	25
40	Նոր Կյանք	2	64	30
41	Ոսկետափ	3	78	36
42	Սուրենավան	3	100	24
43	ՈՒրցաձոր	3	96	25
44	Տափերական	4	106	30
45	Փ. Վեդի	4	126	35
46	Վանաշեն	3	97	23
47	Վեդու N1	4	174	49
48	Վեդու N2	4	174	47
49	Վեդու N3	4	195	49
50	Մասիս ք N1	3	70	23

51	Մասիս ք N2	3	70	33
52	Մասիս ք N3	8	195	54
53	Մասիս ք N4	5	115	46
54	Մասիս ք N5	4	95	32
55	Մասիս ք N7	2	45	17
56	Գեղանիստ	1	36	18
57	Դարակերտ	3	84	26
58	Հովտաշատ	3	115	28
59	Մարմարաշեն	2	80	15
60	Նորամարգ	2	53	16
61	Նորաբաց	2	60	20
62	Նոր Կյուրին	1	30	15
63	Նոր Խարբերդ	3	121	40
64	Ջրահովիտ	1	45	25
65	Սիս	1	25	14
66	Ղուկասավան	2	52	20
67	Հայանիստ	1	30	10
68	Դարբնիկ	1	25	14
69	Խաչփար	1	28	6
70	Արգավանդ	2	63	0
71	Այնթափ	6	235	0
72	Զանգակատուն	1	35	30
73	Պ.Սևակ	1	13	13
74	Նիզամի	1	23	20
75	Նոր Ուղի			

Ընդամենը	206	6314	2074

216. Մարզի 14 գյուղական համայնքներ չունեն նախադպրոցական հաստատություններ: Այնթապ գյուղում 2013թ. շահագործման է հանձնվել 6 խմբանոց մանկապարտեզի, իսկ Մարմարաշեն համայնքում 4 խմբանոց մանկապարտեզի նորակառույց շենքերը: 2011թ. ընթացքում ՀՍՆՀ–ի միջոցներով ավարտվել է Վանաշենի մանկապարտեզի վերանորոգման ծրագիրը, իրականացվել է շուրջ 69 մլն դրամի աշխատանքներ:

217. 4 գյուղական համայնքներում պահպանվել են մանկապարտեզի շենքերը, բայց գտնվում են ոչ բարվոք վիճակում: 2 համայնքների նորակառույց մանկապարտեզներում ընթանում են կահավորման աշխատանքներ: Մանկապարտեզների զգալի մասում կա հիմնանորոգման և լոկալ ջեռուցման անհրաժեշտություն:

218. Քաղաքային մանկապարտեզներում վիճակը համեմատաբար բարվոք է, դրանց մեծամասնությունը աշխատում են նաև ձմռանը, որը նույնպես նպաստում է երեխաների թվի կայունացմանը և աճին:

Աղյուսակ 5.1.5. Արարատի մարզի քաղաքային համայնքների մանկապարտեզներ

Քաղաք	Մանկապարտեզների թիվը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Մանկավարժների թիվը
Արտաշար	7	**33**	1680	96
Արարատ	4	**20**	550	50
Վեդի	3	**12**	400	29
Մասիս	6	**25**	600	135
ընդամենը	20	90	3230	310

219. Մանկապարտեզներում 3-6 տարեկանների ընդգրկվածությունը մարզում կազմում է 43%: Անմատչելիությունը, որպես չընդգրկվածության պատճառ առավել սուր է արտահայտված գյուղական բնակչության շրջանում, որտեղ բացակայում են նախադպրոցական հաստատությունները, առկա է նյութական անմատչելիությունը, համայնքների բյուջեի սղությունը և մանկապարտեզների սեզոնային բնույթի աշխատանքը:

220. Նախադպրոցական հաստատությունները քաղաքային համայնքներում գործում են 2-ից 8 խմբերով, իսկ գյուղական համայնքներում 1-ից 3 խմբերով:

Աղյուսակ 5.1.6. Արարատի մարզի գյուղական համայնքների մանկապարտեզներ

Մանկապարտեզների քանակը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Մանկավարժների թիվը
55	116	3084	226

221. Նախադպրոցական հաստատությունների առջև այսօր ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Նախադպրոցական հաստատությունների զգալի մասում կատարվել են մասնակի նորագումներ,որը բավարար չէ, մեծամասնության մոտ զգացվում է հիմանանորոգման անհրաժեշտություն: Կենտրոնական ջեռուցման համակարգը գրեթե չի գործում, մանկապարտեզներից 34-ը ջեռուցվում են լոկալ ջեռուցման համակարգով, 10-ը ջեռուցվում են էլեկտրական սարքերի միջոցով, ինչը մեծ տարածքի միջանցքների և դահլիճների պայմաններում արդյունավետ չէ, իսկ 31 ջեռուցում չունենալու պատճառով ձմռանը չեն գործում:

222. Մանկապատեզների գերակշռող մասը աշխատում են 8-ժամյա ռեժիմով և երեխաների համար կազմակերպվում է սննդի 3-անգամյա պարտադիր մատուցում, սակայն անհրաժեշտ է ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. օգոստոսի 12-ի N 42-Ն հրամանի պահանջները՝ մանկական սննդակարգում առաջնությունը տալ տեսականու բազմազանությանը և կալորիականությանը:

223. Մանկապարտեզներում օգտագործվող կոշտ և փափուկ գույքը բարոյապես և ֆիզիկապես մաշված է: Նախադպրոցական հաստատությունների մեծ մասը ունեն կոշտ և փափուկ գույքի, ուսուցողական դիդակտիկ պարագաների, խաղալիքների, բակային խաղերի, խմբասենյակների և դահլիճների կահավորման անհրաժեշտություն:

224. Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման ակտիվ միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտի կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է և անհրաժեշտ: 2013թ. ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից վերապատրաստվել են միջին խմբի 70 դաստիրակ,կրտսեր խմբի 41 դաստիարակ և 17 մեթոդիստ, սակայն անհրաժեշտություն կա ավագ խմբերի դաստիարակների և տնօրենների վերապատրաստման՝ իրավական, ֆինանսական, կառավարչական մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքների և կարողությունների կատարելագերծման նպատակով: Ճիշտ է մանկապարտեզներն ապահովված են

մասնագետ կադրերով, այնուամենայնիվ զգացվում է համապատասխան վերապատումների շարունակական անհրաժեշտություն:

225. Փորձը ցույց է տալիս, որ մարզում կարևորվում է այլընտրանքային ծառայությունների մատուցումը նախադպրոցահասակ երեխաներին, որոնք կարող են լրացնել կրթության այս օղակում առկա բացերը:

226. Մարզի նախադպրոցական հաստատությունների 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 5.1-ում:

227. **Միջնակարգ կրթություն -** Միջնակարգ կրթությունը հանդիսանում է կրթության հիմնական օղակը: Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: Այս նպատակով վերջին տարիներին սկիզբ է դրվել բազմաթիվ նախաձեռնությունների, որոնք ներառում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսները, ծրագրամեթոդական ապահովումը, նորմատիվ-իրավական դաշտը, ինստիտուցիոնալ համակարգը: Բարեփոխումների առանցքային նախաձեռնություններից մեկն անցումն էր 12-ամյա հանրակրթական համակարգին: Այս գործընթացի շրջանակներում 2009-2010 ուսումնական տարվանից ներդրվել է եռամյա ավագ դպրոցի ծրագիրը և առանձին գործող ավագ դպրոցների ցանցը: Ծրագիրն ուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը և արդիականացմանը: Ծրագրի ընդունումը կարևորվում է այն հիմնավորմամբ, որ ավագ դպրոցը դիտվում է որպես «նախամասնագիտական» կրթություն ապահովող հիմնական օղակ:

228. Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

229. Մարզի հանրակրթության ոլորտում 2011-2013թթ. ընթացքում իրականացվել են մեծածավալ՝ ավելի քան 5.3 մլրդ դրամի (շենքերի վերանորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների վերապատրաստման ծրագրեր), որոնք բնականաբար էական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի բարելավման վրա:

230. Մարզի հանրակրթական համակարգում 2010-2014թթ. ընթացքում գործում են 112 պետական հանրակրթական դպրոցներ՝ 21-ը՝ հիմնական, 86-ը միջնակարգ և 5-ը՝ ավագ: Դպրոցներից 21-ը (18.7%) գործում են մարզի 4 քաղաքներում, 91-ը (81.3%) գյուղական համայնքներում:

231. 2014թ. ընթացքում քաղաքային դպրոցներում սովորում են 8612 աշակերտներ (26.9 %) գյուղական՝ 23385 (73.1 %) :

232. Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտը Արարատի մարզում ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում

ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես. զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Արարատի մարզում կազմում է 100%:

Աղյուսակ 5.1.7. 2011-2012թթ. ուստարում Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն՝ ըստ սովորողների թվաքանակի

Մարզ	Սովորողների թվաքանակը												Ընդամենը		
	մինչև 100		101-300		301-500		501-700		701-1000		1001 և ավելի				
	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական	ընդամենը
Երևան	12	19	43	14	73	2	44	1	26		21		219	**36**	**255**
Արագածոտն	60		46		12		4		1				123		**123**
Արարատ	**7**		**52**		**39**		**13**		**1**				**112**		**112**
Արմավիր	12		62	2	31		12		2		2		121	2	123
Գեղարքունիք	33		46		31		14		3				127		**127**
Լոռի	56		70	1	33		4		4				167	**1**	**168**
Կոտայք	22		33	1	25		17		5		2		104	**1**	**105**
Շիրակ	65	1	69	3	26		6		3		1		170	**4**	**174**
Սյունիք	73		25		16		5		2				121		121
Վայոց Ձոր	24	1	22		5								51	**1**	**52**
Տավուշ	25		34		17		4		1				81		**81**
Ընդամենը	**389**	**21**	**502**	**21**	**308**	**2**	**123**	**1**	**48**	**0**	**26**	**0**	**1396**	**45**	**1441**

Աղբյուրը՝ Վիճակագրական տեղեկագիր <<Հանրակրթությունը Հայաստանում 2011-2012 ուսումնական տարում>>

233. Վերջին տարիների ընթացքում նկատվում է առաջին դասարան ընդունվողների թվի աճ, ծնելիության մակարդակի որոշակի բարձրացման պատճառով: Այսպես, եթե 2011-2012թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարան էին հաճախում 1498 երեխա, ապա 2012-2013թթ. ուսումնական տարում այդ թիվը հասավ 1507-ի: Ըստ 2013-2015թթ. ՄԺԾԾ տվյալների 2015-2016թթ. ուստարում առաջին դասարան կհաճախի մոտ 1690 աշակերտ:

234. 2013-2014 ուսումնական տարում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել են միջն հաշվով 31997 աշակերտ, որը անցած ուսումնական տարվա /2012-2013թթ./ համեմատ պակաս է 782 աշակերտով:

Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում պակասել է 43-ով՝ կազմելով 1636: Աշակերտների թվի նվազման պատճառով դպրոցներում նկատվում է դասարանների միջին խտության անկում: Դասարաններում աշակերտների միջին խտությունը բարձրացնելու համար անհրաժեշտություն է առաջանում կոմպլեկտավորել երկկոմպլեկտ դասարաններ:

235. Մարզային ենթակայության 107 դպրոցներում աշխատում են 4555 աշխատողներ, որոնցից 2623-ը ուսուցիչներ են, 275-ը աշխատում են մանկավարժական հաստիքներով իսկ մնացած 1657-ը վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ են:

236. Վերջին տարիների ընթացքում հետևողական աշխատանք է տարվել դպրոցներում աշխատող միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Միայն 2013թ հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ սովորելու են գործուղվել շուրջ 23 ուսուցիչներ:

237. Ուսուցչական անձնակազմի հիմնական ուսումնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 14.2 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 11.5, դասարանների միջին խտությունը՝ 19.5 աշակերտ:

238. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը էականապես կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը՝ դասավանդման մեթոդիկայի կատարելագործման նպատակով ամեն տարի մարզի ուսուցիչների 1/5-ը մասնակցել են դպրոց կենտրոններում և Կրթության ազգային ինստիտուտի Արարատի մասնաճյուղում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

239. Մարզում նպատակային աշխատանք է տարվել 1997թ. հիմնադրված <<Դասագրքերի շրջանառու հիմնադրամի>> շրջանակներում աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների պահանջարկի հիման վրա աշակերտները ապահովվում են դասագրքերով և կատարում համապատասխան ներդրումներ դպրոցի բանկային իրենց ենթահաշիվներին՝ ապահովվելով դասագրքերի 100 տոկոս վերարտադրություն:

240. 2013 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել ԴՇՀ-ի համակարգով հրատարակված 61405 հատ և 52175 հատ անվճար դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին տրամադրել է 9 948.6 հազար դրամ գումար:

241. Մարզի հանրակրթության ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր /շենքերի վերանորոգման, աշակերտական գույքի և համակարգիչների ձեռքբերման, ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր/, որոնք դրական ազդեցություն են ունեցել հանրակրթության որակի վրա:

242. Դպրոցների ֆինանսավորման կարգում պարբերաբար կատարվող բարեփոխումների պատճառով մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հետ համատեղ ըստ տարածաշրջանների, անց են կացվել հաշվապահների վերապատրաստման դասընթացներ, որի ժամանակ ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերի վարման և ֆինանսավորման նոր կարգի հետ կապված խնդիրները:

Աղյուսակ 5.1.8. 2010-2013թթ. կրթության ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացումների դինամիկան /հազ. դրամ/

Հ/Հ	Կրթության ոլորտ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
1	Հանրակրթություն	5736.1	5541.8	5491.9	5525.1
2	Ներառական կրթություն	17.6	18.4	20.9	27.2
3	նախակրթարան	-	15.4	36.0	38.9
	Ընդամենը	5753.8	5575.6	5548.7	5591.1

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության տվյալներ

243. ՀՀ Արարատի մարզում 2013թ.-ին մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը կազմել է 246032.0 դրամ, որը գրեթե 1.4 անգամ ավելին է 2008թ. մեկ սովորողին ընկնող գումարի չափից /177469.0/: Մարզի դպրոցական շենքերը և շինությունները, հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է:

244. Թեև հանրակրթական ոլորտը պետության գերակա ուղղություններից է և հատկացվող բյուջետային միջոցները տարեցտարի ավելանում են, սակայն դրանք դեռևս բավարար չեն դպրոցների լիարժեք պահպանման և գործարկման համար:

245. Մարզի դպրոցական շենքերի և շինությունների պահպանումը և շահագործումը՝ հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում են ՀՀ

կառավարության և Արարատի մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալները ավելացվում է:

246. 2011–2013թթ ընթացքում 95 դպրոցներում ՀՀ պետական բյուջեի միջոցներով և տարբեր ծրագրերով իրականացվել են տարաբնույթ շինվերանորոգման աշխատանքներ /տանիքի վերանորոգում, պատուհանների տեղադրում, ջեռուցման համակարգի կառուցում, մասնակի նորոգում, հիմնանորոգում և կառուցում/: Կառուցել է 2 դպրոցական շենք՝ Հնաբերդ, Սիփանիկ գյուղերում: 2011 թ-ից կառուցվում է Վարդաշեն գյուղի նոր դպրոցական շենքը:

247. Իրականացվել է ավելի քան 5.3 մլրդ դրամի աշխատանքներ. մասնավորապես.

1) 2011 թվականին պետական բյուջեով իրականացվել է 10 դպրոցների հիմնանորոգում - 384մլն 999,8 հազ. դրամ, 2 դպրոցների /Սիփանիկ, Վարդաշեն/ կառուցում -160մլն դրամ, Մարմարաշենի մանկապարտեզի կառուցում– 70 մլն դրամ և Փոքր Վեդու մանկապարտեզի հիմնանորոգում– 40մլն դրամ:

2) ՀՀ կառավարության 2011թ.փետրվարի 3-ի N108-Ն որոշմամբ /առաջին հրատապ ծրագրով/ վերանորոգվել են 41 հանրակրթական դպրոցներ, 15 մանկապարտեզներ, Ընդ որում 8 դպրոցներում կառուցվել են լոկալ ջեռուցման համակարգեր, 8 դպրոցներում տեղադրվել են մետաղապլաստե պատուհաններ, 22-ում վերանորոգվել են դպրոցական շենքերի տանիքները: ՀՀ կառավարության 2011թ.սեպտեմբերի 29-ի N1436-Ն որոշմամբ/երկրորդ հրատապ ծրագրով/ հատկացված միջոցներով վերանորոգվել են 14 հանրակրթական դպրոցներ, 10 մանկապարտեզներ:

3)2012 թվականին պետական բյուջեով մարզում իրականացվել է 9 դպրոցների հիմնանորոգում -200 010 000 դրամ, 3 դպրոցների կառուցում -449 382 500 դրամ, 1 մանկապարտեզի կառուցում – 180 935,0 դրամ:ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 24-ի N 711-Ն որոշմամբ /երրորդ հրատապ ծրագրով/ հատկացված միջոցներով վերանորոգվել են 12 հանրակրթական դպրոցներ, 9 մանկապարտեզներ:

4)2013 թվականին պետական բյուջեով իրականացվել է 8 դպրոցների հիմնանորոգում – 578 մլն 436, հազ.դրամ, 2 դպրոցների կառուցում - 147 մլն 478 հազ. դրամ: ՀՀ կառավարության 2013թ. փետրվարի 7-ի N 130-Ն որոշմամբ հատկացված միջոցներով վերանորոգվել են 15 հանրակրթական դպրոցներ, 8 մանկապարտեզներ, <Հայսեյսմշին> ԿՊԳՀԻ ՍՊԸ-ի կողմից կատարվել են մարզի 6 դպրոցական շենքերի՝ Հովտաշատի, Վանաշենի, Նոր Ուղու, Շաղափի, Լուսառատի և Լանջառի դպրոցները ուսումնասիրություններ և տրվել են եզրակացություններ վնասվածության և հետևանքների վերացման ուղղությամբ՝ վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի, շենքերը գտնվում են վթարային վիճակում և հրատապ ամրացման կարիք ունեն:

248. Արևաբույր գյուղի գործող դպրոցի շենքը դիտազննական գնահատմամբ գտնվում է անմխիթար վիճակում: Նպատակահարմար է կառուցել նոր դպրոցական շենք:

249. Մարզի թվով 51 դպրոցներ առաջնահերթության սկզբունքով անհրաժեշտ է ընդգրկել ՀՀ պետական կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրում:

250. Չնայած իրականացվող միջոցառումների կրթական հաստատություններում ներկայումս համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումները և նյութերը: Դպրոցները խիստ կարիք ունեն առարկայական դիդակտիկ պարագաների, համակարգչային տեխնիկայի: Հրատապ է նաև լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

251. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդի գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության հիմնական մասը հնամաշ է, իսկ մի մասը օգտագործման պիտանի չէ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

252. Մարզի դպրոցներում առկա է 1271 համակարգիչ, 937 համակարգչային սարքավորումներ, 116 համակարգչային դասարան:

253. Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով և ընդգրկված են Հայաստանի կրթական ցանցում /ՀԿՑ/:

254. Կարիքավոր համայնքներում տարրական կրթության մատչելիությունը բարելավելու համար Պարենային համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մարզի 89 դպրոցների տարրական դասարանների 12415 երեխաներ համար կազմակերպվում է դպրոցական սնունդ: 9429 երեխաների տրվում է դպրոցական տաք սնունդ, իսկ 2986 երեխաների՝ սառը /չոր/ սնունդ:

255. Չնայած իրականացվող միջոցառումներին, այնուամենայնիվ, կրթական հաստատություններում ներկայումս համարյա թե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մեծ մասը դեռևս աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, դասասենյակների կոմպլեկտներ, փափուկ գույքի խիստ կարիք ունի:

256. Արարատի մարզի կրթության ոլորտի հիմնախնդիրները ըստ մարզպետարանի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքների հետևյալն է.

1) դպրոցներն ապահովվել

ա.հիմնական և ավագ դպրոցի մոտ 650 և տարրական դպրոցի 250 աշակերտական սեղան-աթոռներով
բ.73 դասասենյակի կոմպլեկտով
գ.լաբորատոր սարքավորումներով և գույքով,

2) վերանորոգել և կահավորել դպրոցների

ա.բացօթյա խաղահրապարակները,
բ.բուֆետներն ու ճաշարանները,
գ.մարզադահլիճները

3) կահավորել կաբինետներն ու ուսուցչանոցները

ա.ապահովել 190 ուսուցչական սեղաններով

257. Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում: Չնայած 2006թ. դպրոցների խորհուրդների մոտ 610 անդամներ անցել են վերապատրաստումներ համաշխարհային բանկի ծրագրի շրջանակներում, սակայն դրանց կազմի փոփոխության պատճառով խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում աջակցություն ցուցաբերել դպրոցին, համարելով, որ դա պետության խնդիրն է:

258. Արտադպրոցական դաստիարակություն ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը: Մարզի 4 քաղաքային և 9 գյուղական համայնքներում գործում են սպորտային, արվեստի և երաժշտական ընհանուր թվով 25 դպրոցներ:

259. Ընդհանուր առմամբ, մարզում քիչ են կազմակերպվում համայնքային և միջհամայնքային մակարդակներում՝ առարկայական օլիմպիադաներ, մարզական մրցումներ, ցուցահանդեսներ, ամառային ճամբարներ:

260. **Մասնագիտական կրթություն -** Ներկայումս Արարատի մարզում գործում են 4 պետական և Եվրոպական քոլեջի Վեդու մասնաճյուղի ոչ պետական ենթակայության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները.

1) Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ
2) Արարատի պետական քոլեջ
3) Արարատի բժշկական քոլեջ
4) Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
5) Եվրոպական քոլեջի Վեդու մասնաճյուղ:

261. Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության ոլորտում

գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:

262. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2004 թվականին հավանության է արժանացել «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որով սահմանվել է այս համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները և դրանց լուծման ուղիները:

263. ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող՝ Արարատի տարածաշրջանային պետական, Արարատի պետական, Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջներում իրականացվում է նաև նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագիր

264. Ըստ Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագրի դրույթների երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և ներդրումային լայնածավալ ծրագրերի իրականացման պայմաններում համապատասխան կադրերի ապահովումը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը նոր խնդիրներ ու պահանջներ է առաջադրում նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգում: Տարեցտարի մեծանում է հատկապես նախնական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկը՝ մասնավորապես ծառայությունների մատուցման, սոցիալական և տնտեսական ոլորտներում:

265. Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումների շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1) Մշակվել և մարզի ուսումնական հաստատություններում ներդրվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչներ, որի նպատակն է որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և կրթության բովանդակության միջազգային չափանիշներին

2) Իրականացվել է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների, տնօրենների, խորհուրդների անդամների վերապատրաստումներ

3) ՀՀ Արարատի մարզում գործող բոլոր նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին պետության կողմից հատկացվող անվճար ուսուցմամբ /նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ/ տեղերի թիվը 2012-2013թթ. ուսումնական տարվանից ավելացել է 50%-ով:

266. Այս ոլորտում վերջին տարիներին, սակայն էական բարեփոխումներ չեն արձանագրվել՝ անընդհատ նվազում է մասնագիտական-տեխնիկական կրթության պետական պատվերը, որը բերում է ինքնաֆինանսավորմամբ զարգանալու անհրաժեշտության, որը ներկայիս սոցիալ-տնտեսական ոչ բավարար իրավիճակում բավականին բարդ է:

267. Այդ բոլոր հաստատությունները ունեն նաև ուսումնանյութական բազայի և շենքային պայմանների հրատապ բարելավման խնդիր:

5.1.2 Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

268. Ապահովելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու ընդլայնումը, կրթության զարգացումներն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար, հետագա զարգացումներն անրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող գերակա ուղղություններով.

1) ապահովել նախադպրոցական կադրերի արդյունավետ մասնակցությունը վերապատրաստման, կատարելագործման և ատեստավորման ծրագրերին
2) բարելավել նախադպրոցական ծառայությունների մատուցման նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքերը
3) մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիությունը հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար
4) բարձրացնել հանրակրթական հաստատությունների համակարգչային ապահովվածությունը
5) դպրոցների ինտերնետային կապի անխափան աշխատանքի ընդլայնում, ապահովում
6) բարելավել հանրակրթական հաստատություններում համակարգչային գրագիտության դասավանդման որակը
7) ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներն՝ որպես ուսուցման և դասավանդման կիրառում
8) անհրաժեշտ է մշակել լավագույն ուսուցիչների հայտնաբերման արդյունքահեն չափանիշներ, հրապարակայնացնել մանկավարժների լավագույն փորձը և նվաճումները
9) անհրաժեշտ է հստակեցնել կրթական հաստատությունների տեսակներն ու տարածքային բաշխվածության սկզբունքները, ապահովելով դրանց առավել արդյունավետ համապատասխանությունը մարզային սացիալ-տնտեսական զարգացման կարիքների և հասարակության կրթական պահանջմունքներին

10) պետական բյուջեի հաշվին ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների /խմբերի/ մասնակցությունը միջազգային ստուգատեսներին և մրցույթներին

11) մշակել և ներդնել արտադասարանական և արտադպրոցական դաստիարակության համակարգի զարգացման հայեցակարգ՝ աշակերտների կրթական, գեղագիտական, տեխնիկական, մարզական, ռազմական նախասիրությունների բավարարումը արդյունավետ դարձնելու նպատակով

12) առաջնահերթ համարել պատանի տեխնիկների կայանի ստեղծումը քաղաքային համայնքներում

13) համարել առաջնահերթ մարզի քաղաքային համայնքներում շախմատի և լողի դպրոցների, քաղաքային հրաձգարանների բացումը

14) ներդնել աշակերտների ստեղծագործական հետազոտական և նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, ուղղված ինչպես աշակերտներին, այնպես էլ նրանց մանկավարժներին և դպրոցներին

15) ընդլայնել ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցը

16) վերանայել և հստակեցնել հատուկ դպրոցների տիպերը, դրանց ենթակայության և տարածքային բաշխվածության չափանիշները

17) աջակցել ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզի առաջատար ձեռնարկատիրական կազմակերպություններում կազմակերպելու, շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու հարցերում:

Աղյուսակ 5.1.5. Կրթության ոլորտի արդյունքային ցուցանիշները 2015-2018թթ.

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ
Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արարատի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 2. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը	100% 11.5 68%
Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Բարեկարգված մարզադահիլճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը	9.6 %
Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը Ինտերնետ կապով ապահովված	112 112

կապով ապահովում)	դպրոցների թիվը	
Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվ Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ	1175 1950
Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան	<<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ուսուցչի հերթական ատեստավորումն անցկացվում է 5 տարի մեկ	20%

269. Ոլորտի 2015-2018թթ. տարիների ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է Հավելված 5.1 և 5.1.1:

5.2 ՄՇԱԿՈՒՅԹ

5.2.1 ØÃ³ Ï áõÃÇ áõÉáñï ÇÇñ³ í Ç×³ Ï Çí »ñÉáõÍ áõÄÁáõÝ

270. ՀՀ Արարատի մարզում մշակույթի հարցերի բնագավառի հիմնախնդիրները կապված են հիմնականում նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման, պատմամշակութային հուշարձանների, գրադարանների, թանգարանների, թատրոնների, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների պահպանման և զարգացման հետ:

271. Մշակույթն ի թիվս հասարակական զարգացման այլ գործոնների հասարակական գիտակցության ձև է, մարդու ստեղծագործ աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ, որը, համարվելով հոգևոր գիտություն, արտացոլվում է գեղագիտության, գեղարվեստական կերպարների միջոցով: Մշակույթի արտացոլման առարկան իրականության գեղագիտական արժեքներն են, հասարակական կյանքի տարբեր երևույթներում: Այն ձևավորում է մի միջավայր, որով հնարավորություն է ընձեռվում ստանալ ինչպես գեղագիտական ճաշակ, հանձինս հասարակության հիմքում ընկած ոչ նյութական և նյութական մշակութային ժառանգության արժեքների պահպանման և շարունակական զարգացման, այնպես էլ ձեռք բերել էթիկական կենսունակության հատկանիշներ, որը կարևոր է արդի հասարակության էթնիկական զարգացման համար:

272. «Համաձայն «ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ներառված են նաև մի շարք այլ ծրագրերում, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին, N 511 որոշման հավելվածի «2.4.5. Մշակույթ» կետի՝ ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը և համաչափության ապահովումը դիտարկվում է ծրագրի հիմնական ուղղություններից մեկն է» :

273. Հանրապետությունում տարածքային համաչափ զարգացումը նպատակ ունի իրականացնել նաև միասնական մշակութային քաղաքականություն՝ համամասնորեն զարգացնելու ազգային մշակույթն ու օգտագործելու ստեղծագործական ներուժը: Կարևորվում է ազգաբնակչության համար մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը:

274. ՀՀ Արարատի մարզում այս ոլորտի պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

1) միջմարզային մշակութային համագործակցության զարգացում և միասնական մշակութային դաշտի ձևավորում

2) մշակութային կյանքին բնակչության մասնակցության պայմանների, մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում, արդյունքում՝ մշակույթի ոլորտի շահառուների թվի ավելացում

3) մշակութային կազմակերպությունների համաչափ բաշխվածության բարելավում (օպտիմալացում)՝ մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովում՝ նյութատեխնիկական պայմանների բարելավման, շենքերի հիմնանորոգման ծրագրերի կազման և իրականացման միջոցով

4) մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման ծրագրերի իրականացում, մարզում մշակութային միջավայրի զարգացման միջոցով մշակույթի ոլորտի մասնագետների՝ մարզերից դեպի մայրաքաղաք և արտերկիր տեղի ունեցող արտահոսքի նվազեցում

5) մշակութային զբոսաշրջության զարգացում՝ պատմամշակութային հուշարձանների օգտագործման, մշակութային զբոսաշրջության նոր երթուղիների և ազգային արհեստագործական կենտրոնների ստեղծման միջոցով:

275. Մարզի տարածքում գործող մշակութային բոլոր օբյեկտները համայնքային ենթակայության են, բացառությամբ թանգարանների, որոնք մարզային ենթակայության են և Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի և մարզային գրադարանի, որոնք գործում են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության ներքո:

276. 2014թ. մարզի տարածքում գործում են 71 մշակույթի տուն, 10 երաժշտական, 5 արվեստի, 3 գեղարվեստի դպրոց, 93 համայնքային և 1 մարզային

գրադարան, 2 տուն-թանգարան, 1 պետական դրամատիկական, 3 տիկնիկային և 2 մանկական թատրոն:

277. **Մշակույթի տներ -** Պետական մշակութային քաղաքականության իրականացման հիմնական օղակը մշակույթի տներն են, որոնք կոչված են պահպանելու և սերունդներին փոխանցելու հայ մշակույթը, նրա արժեքներն ու ավանդույթները, որը պետական մշակութային քաղաքականության իմաստն է և պետք է դիտվի որպես աշխատանքները կազմակերպելու կարևորագույն ու հիմնական սկզբունք:

278. 2011-2013թթ. վերանորոգվել է 20 մշակույթի տուն ընդհանուր արժողությամբ, որից ՀՀ պետ. բյուջեից՝ 732.3 հազ. դրամ, դոնոր կազմակերպությունների միջոցներով 143.230 հազ. դրամ:

Աղյուսակ 5.7. 2011- 2013թթ. վերանորոգված մշակույթի տներ /մլն դրամ/

N	Մշակույթի տունը	Կառուցման տարեթիվ	Վերանորոգման տարեթիվը	Պետական բյուջե	Այլ միջոցներով
1	Քաղցրաշեն	1975թ	2011	83.0	106.0մլն
2	ք. Վեդու	1934թ.	2011	180.0	7 230.0 «Կամրջակ» ՀԿ
3	գ.Հովտաշեն	1967թ.	2011	1.0	
4	Այգեստան	1971թ.	2011	11.0	
5	Մխչյան	1957թ.	2011	10.0	
6	Վարդաշատ	1968թ.	2011	10.0	
7	Ուրծալանջ	1985թ.	2011	9.0	
8	ք. Արարատ	1959թ	2011	36.0	
9	Ավշար	1964թ.	2011	30.0	
10	Գ. Արարատ	1959թ.	2012	25.0	
11	Գ.Հովտաշեն	1967թ	2012	7.0	
12	գ.Փոքր Վեդի	1963թ.	2012		24.0 «Կամրջակ» Հ.Կ
13	ք.Վեդի	1934թ	2012	225.0	

14	Սիս	2014թ.	2012		6.0մլն «Փրկենք երեխաներին» կազմ.
15	գ. Բուրաստան	1972թ.	2012	10.0	
16	գ.Հնաբերդ	1960թ.	2012	19. 300	
17	Աբովյան	1946թ	2013	20.0	
18	Այգեստան	1968թ.	2013	30.0	
19	Դեղձուտ	1967թ.	2013	7.0	
20	ք. Վեդի	1934թ.	2013	19.0	

279. Հայաստանի սոցիալական ներդրումների Հիմնադրամի խոշոր ներդրմամբ՝ 194 մլն դրամ, իրականացվել է Ուրցաձորի համայնքային կետրոնի /մշակույթի տան/ հիմնանորոգման աշխատանքներ, ընդ որում համայնքի ներդրմամբ իրականացվել են ևս 15 մլն դրամի բարեկարգման աշխատանքներ:

280. Մշակույթի տները ձմեռային սեզոնին, հիմնականում՝ շուրջ 4-5 ամիս չեն գործում, քանի որ ունեն ջեռուցման խնդիր:

281. Մարզի մշակույթի տները հիմնականում անցյալ դարի 60-70 ական թթ. կառույցներ են, այդ իսկ պատճառով կարիք ունեն վերանորոգման: Համայնքը միայն իր սեփական միջոցներով չի կարող իրականացնել վերանորոգում:

282. Մշակութային գործունեություն կազմակերպելու համար առաջնային է նաև տեխնիկապես վերազինման խնդիրը: Գրեթե բոլոր մշակույթի տներում եղած, ինչ-որ չափով պահպանված տեխմիջոցները գտնվում են ոչ բարվոք վիճակում և համարյա անօգտագործելի են, սակայն շատ համայնքներում դրանք դուրս չեն գրված և որպես գույք հաշվառված են:

283. Վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեի միջոցներից տրամադրվում են գումարներ մարզի մշակութային տների տեխնիկական վերազինման և մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար: ՀՀ պետական բյուջեից 2011-2013թթ ընթացքում տրամադրվել է 73 մլն 780 հազ. դրամ գումար: 2014թ.-ին վերոնշյալ միջոցառումների, երաժշտական, արվեստի դպրոցներում ազգային, լարային նվագարանների գծով ուսուցման իրականացման նպատակով պետական բյուջեից կտրամադրվի 24 մլն 560.9 հազ. դրամ: Հարկ է նշել, որ մշակույթի և սպորտի ոլորտներում միջոցառումներ իրականացնելու նպատակով միջոցներ են տրամադրվում նաև համայնքային բյուջեներից և այլ դոնոր կազմակերպությունների կողմից:

284. Մշակութային քաղաքականություն իրականացնելու համար կարևորագույն խնդիր է համարվում մասնագետ կադրերով ապահովվելու խնդիրը: Մշակույթի

տների 161 աշխատողներից 66%-ը ոչ մասնագետներ են, 15%-ը խորհրդային ժամանակներում աշխատած թոշակառուներ՝ դրանից բխող հետևանքներով այն է ոչ մասնագիտական մոտեցում, հնացած մեթոդներ, մտածողություն:

285. Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին մարզի մշակութային կյանքը բազմաբնույթ և հագեցած է եղել. մշտապես Արտաշատ քաղաքի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպվել են մարզային և հանրապետական նշանակության միջոցառումներ:Մարզի մշակութային կյանքը հետաքրքիր դարձնելու գործում մեծ դեր է ունեցել մարզում գործող ավելի քան 31 ինքնագործ համույթների ակտիվ գործունեությունը:

286. Այդ ինքնագործ համույթները՝ ասմունքի, թատերական, ժողովրդական գործիքների, մանկական պարային, անհատ կատարողները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպված հանրապետական և մարզային փառատոներին:

287. Բոլոր մարզային միջոցառումների գեղարվեստական մասը կազմակերպվում է հիմնականում միայն մարզի մշակույթի տներում գործող ինքնագործ համույթների ուժերով:

Աղյուսակ 5.8. Մարզի մշակույթի տներում գործող ինքնագործ համույթներ

N	Մշակույթի տուն	Գործող ինքնագործ խմբեր
1	ք. Արտաշատ, Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն	Ժողովրդական պարերի մեծ. <<Հայք>> համույթ
2	ք. Արտաշատի <<Մանկան մոլորակ>> ՍՊԸ	Տիկնիկային թատրոն
3	ք. Արարատ	Մանկական տիկնիկային թատրոն
4	ք. Արարատ	Ժողովրդական պարերի համույթ
5	ք. Վեդի	Գեղարվեստի դպրոցի մանկական պարային համույթ
6	ք. Մասիս	Մշակույթի տան մանկական <<Աստղիկներ >> վոկալ ստուդիա
7	Նոյակերտ	Պարային մանկական համույթներ
8	Քաղցրաշեն	Մանկական թատրոն
9	Այգեզարդ	Վոկալ գործիքային համույթ
10	Արգավանդ	Մանկական պարային համույթ
11	Նոր Խարբերդ	Մանկական երգչախումբ

12	Մրգավան	Մանկական ժողովրդական պարի համույթ
13	Մխչյան	Մանկական պարային համույթ
14	Զանգակատուն	Մանկական ժամանակակից պարերի համույթ
15	Ջրաշեն	Մանկական ժողովրդական պարի համույթ
16	Շաղափ	Ազգագրական պարի համույթ
17	Նշավան	Շվիահարների մանկական համույթ
18	Մրգավետ	Մանկական պարի համույթ
19	Արևշատ	Մանկական երգչախումբ
20	Արալեզ	Էստրադային համույթ
21	Ոսկետափ	Ազգագրական պարերի համույթ
22	Բերդիկ	Մանկական ժողովրդական պարի համույթ
23	Եղեգնավան	Մանկական պարային համույթ
24	Գոռավան	Ազգագրական պարային համույթ
25	Տափերական	Հայկական ժողովրդական պարային համույթ
26	Փոքր Վեդի	Ժողովրդական գործիքների համույթ
27	Հովտաշեն	Մանկական պարային 2 ժողովրդական համույթներ
28	Վերին Արտաշատ	Ժողովրդական պարերի մանկական համույթ
29	Բուրաստան	Մանկական պարային համույթ
30	Վերին Դվին	Մանկական երգի-պարի խմբակ
31	Բյուրավան	Ասորական երգի- պարի համույթ
32	Սուրենավան	Ժողովրդական գործիքների համույթ <<Գուսան Մեխակ>>

288. Չնայած վերջին տարիներին մշակույթի բնագավառում կատարված մեծածավալ աշխատանքներին՝ մարզում դեռևս կան մասնագետ կադրերի, մշակույթի օջախների վերանորոգման և տեխնիկական վերազինման խնդիրներ:

289. **Գրադարաններ:** Մարզում առկա է 94 գրադարան, որոնցից 1-ը մարզային ենթակայության է, 93-ը՝ համայնքային, որից 7-ը՝ քաղաքային և 86-ը գյուղական: Մարզում գործում է 2 մանկական գրադարան՝ Վեդի և Արարատ քաղաքներում:

290. 01.01.2014թ.-ի դրությամբ գրադարանների աշխատողների թիվը կազմում է 151 մարդ ընդհանուր գրական ֆոնդը՝ 894817 միավոր գրականություն:

291. Տարվա կտրվածքով գրադարաններում պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ: Արտաշատի մարզային գրադարանում 2011-2013թթ. ընթացքում կազմակերպվել են ավելի քան 150 գրական միջոցառում՝ մասնավորապես գրքային շնորհանդեսներ, մեծարման ու գրական ցերեկույթներ, գրքերի մատենագիտական տեսություններ ու շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների, բանաստեղծների, գիտնականների, արվեստի, գրականության, կրթության ու մշակույթի անվանի գործիչների հետ, գրական ու պոեզիայի երեկոներ:

292. Մարզի բոլոր գրադարաններում պարտադիր կազմակերպվում են «Գրադարանավարի օրվան», «Թարգմանչաց տոնին», «Մայրենի լեզվի միջազգային օրվան», «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթվան», «Գիրք նվիրաբերելու օրվան», «Գիտելիքի և դպրության օրվան», «Հաղթանակի և խաղաղության տոնին», «Դպրոցական գրադարանների միջազգային օրվան» նվիրված միջոցառումներին:

293. Օ.Չուբարյանի անվան Արարատի մարզային գրադարանում 2008-2013թթ. ընթացքում իրականացվել է գրադարանային ֆոնդի 1/2-ի թվայնացում՝ էլեկտրոնային քարտադարանի օգնությամբ: Թվայնացման հայերեն տարբերակն ավարտվել է: Տարվում են աշխատանքներ թվայնացման ռուսերեն տարբերակի համար:

294. Վեդու քաղաքային գրադարանը 2013 թվականին ստացել է հանրայինի կարգավիճակ և «Նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով վերազինվել է համակարգիչներով, բազմաֆունկցիոնալ տպիչով, պատճենահանման սարքով, համապատասխան կահույքով (գրապահարաններ, սեղաններ, աթոռներ, գրադարակներ, համակարգչային և սպասարկման սեղաններ, ցուցափեղկեր), ինչպես նաև համալրվել է նոր գրականությամբ և ապահովվել ինտերնետային կապով:

295. Մարզում գործող գրադարանները հիմնականում գտնվում են մշակույթի տներում, այդ իսկ պատճառով գրադարանների շենքային պայմանները չեն համապատասխանում և անբարենպաստ են, գրապահոցներում բացակայում են հավաքածուների պահպանությունն ապահովող տեխնիկական սարքավորումները, որի հետևանքով տարիների ընթացքում պակասում է արժեքավոր գրական ֆոնդը, ինչը բացասական է անրադառնում մարզի ազգաբնակչության տեղեկույթի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացմանը:

296. Մարզում պարբերական հրատարակությունները գրեթե մատչելի չեն ազգաբնակչության մասսայական ընթերցմանը՝ մարզ է մուտք գործում ավելի քան 23 անում պարբերական, սակայն գրադարաններում առկա է դրանցից ամենաշատը 3-4 անուն:

297. Առանձնապես անմխիթար վիճակում են գտնվում մարզի համայնքային գրադարանները:Համայնքային գրադարանների նյութատեխնիկական անկատար

վիճակը խոչընդոտում է տնտեսական և կազմակերպչական խնդիրների արդյունավետ իրականացմանը. որի հետևանքով անբավարար է գիտության, կրթության և արտադրության վերաբերյալ նորարարությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովվումը:

298. Համայնքային գրադարանների ընթերցասրահները պատշաճ ձևով կահավորված չեն, չկան հարմարավետ պայմաններ, ինչը չի նպաստում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը:

299. Մարզի գրադարանային կադրերի պատրաստվածության որակը հետ է մնում ժամանակակից գրադարանների զարգացման դինամիկայից ու պահանջներից, ինչը բացասաբար է անրադառնում գրքային ֆոնդի լիակատար օգտագործմանը:

300. Մարզի գրադարաններում գործում է 27 ընթերցասրահ, որոնցից՝ 13-ը Արտաշատ, 10-ը Արարատ և 4-ը Մասիս քաղաքներում:

301. Բոլոր գրադարանների շենքային պայմանները անբավարար են և կարիք ունեն վերանորոգման: 2011թ.-ին ՀՀ պետ. բյուջեի միջոցներով Արարատի մարզային գրադարանը հիմնանորոգվել է, իրականացվե է 53մլն դրամի աշխատանքներ, իսկ 2012թ.-ին ՀՍՆՀ–ի միջոցներով՝ շուրջ 5.5 մլն դրամի, գրադարանը ապահովվել է ջեռուցման համակարգով:

302. Վերանորոգման կարիք ունեցող 60 գրադարաններից՝ առաջնահերթ է Արաքսավանի համայնքային գրադարանը:

303. Մարզում գործող գրադարանների գրքային ֆոնդը հնամաշ է, կարիք ունի նորացման: Վերջին 2010-2013 տարիներին այդ ուղղությամբ կատարվել է բավականին աշխատանքներ՝ 2011-2013թթ. մարզային գրադարանը ստացել է 3056 կտոր գրականություն, որից 495–ը ՀՀ պետ. բյուջեից և 2561- ը՝ նվիրատվություն:

304. 2010-2013թթ. Վեդու քաղաքային գրադարանը ստացել է 645 կտոր գրականություն, որից 466-ը՝ ՀՀ պետ բյուջեից, 179 - ը՝ նվիրատվություն:

305. Արարատի քաղաքային գրադարան՝ 200 կտոր գրականություն՝ համայնքային բյուջեի միջոցներով:

306. **Թանգարաններ -** Մարզի տարածքում գործում են 2 տուն-թանգարաններ.

1)Հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի

2) Սպարապետ Վազգեն Սարգսյանի:

3) Երկուսը միասին ունեն 950-ից ավելի մշակութային արժեքներ:

307. Պ.Սևակի տուն-թանգարանը հիմնադրվել է 1981թ. բանաստեղծի ծննդավայր Զանգակատուն (նախկին Չանախչի) համայնքում: Պ.Սևակի հիշատակի հավերժացման և ծննդյան 90 ամյակի կապակցությամբ ընթացքի մեջ է տուն-

թանգարանի գրապահոցի, ընդունելությունների սրահի վերանորոգման աշխատանքները: Ծրագրով նախատեսվում է իրականացնել նաև ֆոնդադարանի կառուցման աշխատանքներ և անցկացնել լոկալ ջեռուցում: Ծրագիրն իրականացվում է ՀՄՆՀ միջոցներով, ընդհանուր արժեքը կազմում է 35 մլն դրամ: Թանգարանը ունի ցուցասրահի կառուցման անհրաժեշտություն:

308. Վ. Սարգսյանի տուն-թանգարանը հիմնադրվել է 2000թ. և գտնվում է բարվոք վիճակում: 2012թ.- ին իրականացվել է թանգարանի ջեռուցման համակարգի կառուցում՝ 33 մլն դրամ արժողությամբ, տեղադրվել են ջերմախոնավային կայունությունը պահպանող համակարգեր:

309. Պետության կողմից մարզում գործող թանգարանների պահպանման նպատակով տրամադրվել է 2012թ.՝ 13 մլն 944 հազ. 800 դրամ, իսկ 20132թ.՝ 14 մլն 204,500 հազ. դրամ:

310. **Պատմամշակութային և բնության հուշարձաններ** - Արարատի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով:

311. ՀՀ Արարատի մարզում հաշվառված է պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա 808 հուշարձան: 2014 թվականից սկսվել են Արտաշատ քաղաքատեղիի պեղման և կոնսերվացման աշխատանքները, ինչպես նաև 2012 թվականին ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվել է Խոսրովի արգելոցի առավել վտանգված հուշարձանների տեխնիկական մոնիթորինգի ծրագիրը:

312. ՀՀ կառավարության 2002թ.

հունվարի 24-ի թիվ 65 որոշմամբ մարզի տարածքում հաշվառված են 906 հուշարձան՝ 224 պահպանական միավորով: Կան 200–ից ավելի հաշվառված, սակայն ցուցակում չընդգրկված հուշարձաններ: Նշված հուշարձաններից բոլորը չեն, որ ունեն պահպանական գոտիներ:

313. Պահպանական գոտիներ ունեն 112 հուշարձաններ, որից.

1) Արտաշատի տարածաշրջանում -- 52
2) Արարատի տարածաշրջանում -- 44
3) Մասիսի տարածաշրջանում -- 16:

314. Մարզի տարածքում են գտնվում «Խոր Վիրապ» վանքային համալիրը, պատմական Հայաստանի երկու մայրաքաղաքները՝ Արտաշատը և Դվինը, «Խոսրովի անտառ» արգելոցը, նշանավոր եկեղեցիներ, խաչքարեր, բնության հուշարձաններ, գյուղատեղիներ և այլ արժեքավոր հուշարձաններ:

315. Առանձնակի պատմական արժեք են ներկայացնում Խոսրովի արգելոցի տարածքում գտնվող 10-15-րդ դարերի հնություն ունեցող Մանկուքի խաչքարերը և տապանաքարերը:

316. Մարզում եղած պատմամշակութային հուշարձանները վերականգնվում և վերանորոգվում են և՛ պետական բյուջեի միջոցներով, և՛ այլ միջոցներով: 2013թ. –ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերակառուցվել է Խոսրովի արգելոցի Աղջոց վանքը /990 հազ. դրամ/: Ավարտվել են 2008թ. սկսած Գևորգ Մարզպետունի ամրոցի մասնակի վերականգնման և ամրակայման աշխատանքները, որի վրա ծախսվել է շուրջ 49 մլն 200 հազ. դրամ գումար: Ծրագրի իրականացման արդյունքում վերականգնվել է նաև ամրոցի ներսում գտնվող եկեղեցին:

317. Մայր աթոռի կողմից ընթանում են վերանորոգման աշխատանքներ «Խոր վիրապ» վանքային համալիրում: Հայ Առաքելական եկեղեցու և բարերարների միջոցներով վերակառուցվել և վերականգնվել են Կանաչուտ, Արևշատ, Վ.Արտաշատ, Շահումյան, Մխչյան, Բուրաստան, Բերքանուշ, Վ.Դվին, Վարդաշատ համայնքների եկեղեցիները: Մարզի մի շարք համայնքներում, անհատ բարերարների միջոցներով կառուցվել են նոր եկեղեցիներ: Դրանք են Արտաշատ և Վեդի քաղաքների, Ն.Դվինի, Մարմարաշենի, Մասիսի եկեղեցիները:

318. 2010թ. հրատարակվել է «Արարատի մարզի պատմական ակնարկ» գիրք-ալբոմը:

319. Արարատի մարզի տարածքը հարուստ է նաև բնության հուշարձաններով: Դրանք հիմնականում գտնվում են մարզի արևելյան՝ ավելի բարձրադիր հատվածում:

320. Արարատի մարզի բնության հուշարձաններն են.

1) «Անձավիկ» քարանձավ /Վեդի քաղաքից 50 կմ հյուսիս արևելք/,

2) ″Դաշտաքար″ քարանձավ /Դաշտաքար գյուղից 02 կմ հարավ/,

3) «Մեծ հոր» անձավային համակարգ /Շաղափ գյուղից 3կմ հյուսիս արևելք/,

4) ″Անանուն″ շերտավոր նստվածք /Տիգրանաշեն–Պ.Սևակ գյուղ տանող ճանապարհի 17կմ-ի վրա/,

5) ″Անանուն″ անտիկլինալ ծալք /Երևան- Մեղրի խճուղու 81կմ-ի վրա/,

6) ″Անանուն″ ծալքավոր ստրուկտուրա /Երևան- Մեղրի խճուղու 81կմ-ի վրա/,

7) ″Անանուն″ ծալքագոյացման մերկացում /Ուրցաձոր գյուղից 4.5կմ դեպի հյուսիս Վեդի գետի աջ ափին/,

8) ,,Հորթունի,, բրածո ֆլորա /Զանգակատուն գյուղից 8կմ հյուսիս արևելք/,

9) ″Ջերմանիսի բրածո ֆլորա″ /Ուրցաձոր գյուղից 20 կմ հոսանքով վեր/,

10) ,,Վեդի գետի ավազանի,, բրածո ֆաունա /Վեդի գետի ավազան Ուրցաձոր գյուղից 15 կմ հյուսիս արևելք/,

11) ″Ջրաերկրաբանական հուշարձան″ Արարատի հանքային ջուր /Վեդի քաղաքից 2.5 կմ հյուսիս արևելք Բորոտ աղբյուրի կիրճում/,

12) "Կենսաբանական հուշարձաններ" Աղակալած ճահճուտ /Արարատ քաղաք հանքային աղբյուրների մոտ ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա/: գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների հսկորության ներքո՝ նրանց կողմից պարբերաբար կատարվում են դիտարկումներ և ուսումնասիրություններ:

321. **Գեղարվեստական կրթություն** - 2014թ. ՀՀ Արարատի մարզում գործում է 18 գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 10 երաժշտական, 5 արվեստի, 3 գեղարվեստի դպրոց (2126 աշակերտ, 261 մանկավարժ): ՀՀ Արարատի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում դասավանդում են՝ դաշնամուր, ազգային, լարային և փողային նվագարաններ, կիթառ, ակորդեոն, երգեցողություն, պար, գեղանկարչություն, փորագրություն, դեկորատիվ-կիրառական արվեստ, դիզայն:

322. Մարզում գործում է 3 հենակետային դպրոց՝ Արտաշատ քաղաքի Ալ. Մելիք-Փաշաևի անվան երաժշտական, Մասիս քաղաքի Ա. Բաբաջանյանի անվան միջնակարգ մասնագիտական և Վեդի քաղաքի գեղարվեստի դպրոցները:

323. ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2012-2014 թթ. իրականացվել են մի շարք կրթական ծրագրեր, որոնց մասնակցել են մարզի գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները: 2012-2014թթ. ուսումնամեթոդական օժանդակություն, վարպետության դասեր է ստացել 1294 աշակերտ և 416 մանկավարժ, վերապատրաստման դասեր է ստացել 1294 աշակերտ և 416 մանկավարժ, վերապատրաստման դասալսումների է մասնակցել 224 մանկավարժ:

324. «ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում» ընդգրկված երեխաներից 2012-2013թթ. ՀՀ Արարատի մարզից համատեղ համերգ-ստուգատեսներին յուրաքանչյուր տարի մասնակցել է երկու տասնյակ շնոհալի սան:

325. «Երաժշտական, արվեստի և գեղարվեստական դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում» ծրագրի միջոցով մարզում գործող բուլոր ուսումնական հաստատություններին 2011-2013 թթ. համապատասխանաբար անվճար բաշխվել է 176, 270, 124 անուն երաժշտկան գրականություն և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների 10 ձայնասկավառակ:

326. 2012-2013 թվականներին շարունակվել է «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագիրը, որի շնորհիվ ուսման վարձավճարի փոխհատուցում են ստացել մարզի երաժշտական և արվեստի դպրոցների 112 աշակերտ, 2012 թվականին տրամադրվել է 10683.2 հազ. դրամ, 2013 թ.՝ 14051.5 հազ. դրամ:

327. Մարզի դպրոցներում առկա է պղնձյա-փողային գործիքների՝ (ֆլեյտա, շեփոր, տրոմբոն, գալարափող, տուբա) պահանջարկ: «Հայաստանի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու

հիմնադրամ» ծրագրի միջոցով 2013 թ. Արբատի, Մխչյանի, Մասիսի, Արարատի, Նոր-Խարբերդի և Վեդու երաժշտական դպրոցներին տրամադրվել է 2 ալտ, քանոն, քամանչա, թառ, ուդ (գործընթացը շարունակվում է):

328. 2011-2013թթ. հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոների դափնեկիրներ են եղել՝ Հասմիկ Շահբազյանը («Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն 1-ին մրցանակ), Արթուր Գրիգորյանը («Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն՝ Գրան Պրի), ք. Արարատի ՄՄԱԴ՝ ժող. նվագարանների համույթը («Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն՝ 3-րդ կարգի դափնեկիր), Գևորգ Մելիքյանը (Սայաթ- Նովային նվիրված մրցույթ-փառատոն), Հովհաննիսյան Ռիտան (Սանկտ Պետերբուրգ՝ միջազգային փառատոն՝ առաջին մրցանակ) , Միքայելյան Արման («Վերածնունդ»՝ 3-րդ մրցանակ), Նարեկ Ավագյանը («Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն), Մոնա Դանիելյանը (Ալ. Սպենդիարյանի անվ. պատանի երաժիշտ-կատարողների հանրապետական II մրցույթ-փառատոն), Էդվարդ Ղազարյան, Լիանա Գյուլնազարյան, Մանե Բադոյան (Մանկապատանեկան նկարչական ստեղծագործությունների հանրապետական մրցույթ), Արայիկ Ավանեսյան («Ես և տիեզերքը» հանրապետական մանկ. նկարչական ցուցահանդես), Նինա Գևորգյանը (Բեյրութի միջազգային մանկ. նկարչական ցուցահանդես) և այլն:

329. 2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծված «Մշակութային կրթության աջակցման հիմնադրամ»-ը, մարզի բոլոր դպրոցներում պարբերաբար կազմակերպում է «Վարպետաց դասեր», որի շրջանակներում ուսումնամեթոդական և գործնական օնություն է ցուցաբերում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներին: 2007-ից երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով իրականացվում է ուսման վարձավճարի փոխհատուցում, պետական բյուջեից տրամադրվել է 21մլն 365 հազ. դրամ: Այս ծրագրով մարզի 10 երաժշտական և արվեստի դպրոցի 112 աշակերտ անվճար ուսման հնարավորություն է ստանում, որն էլ մեծապես նպաստում է ազգային նվագարանների պահպանմանը, խթանում է դրանց տարածումն ու զարգացումը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում երաժշտական և արվեստի դպրոցներին, տնտեսումների առկայության դեպքում, ֆինանսական միջոցներ ուղղել ազգային նվագարանների ուսուցման ծախսերին՝ ներառյալ նվաարանների ձեռքբերմանը: Վերջին երկու տարում նկատվում է ազգային նվագարանների բաժիններում սովորողների թվի աճի միտում, սակայն փոխհատուցման չափը, աշակերտների քանակի առումով, անփոփոխ է, որն էլ անհավասար պայմաններ է ստեղծում սովորողների համար: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի ընդունումից հետո երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները անցան համայնքային ենթակայության: Անհրաժեշտ իրավական դաշտի բացակայությունը, համայնքների ոչ բավարար տնտեսական ներուժը և պատրաստվածությունը, առկա սոցիալ-տնտեսական պայմանները և գործունեության ընդհանուր չափորոշիչների բացակայությունը դպրոցների համար առաջացրեցին մի շարք խնդիրներ:

330. Գեղարվեստական կրթական հաստատությունների մեծ մասը վերանորոգման, գույքի համալրման, գործիքների ձեռքբերման կարիք ունեն: Սակայն, ելնելով սոցիալ-

տնտեսական իրավիճակից, համայնքների մեծ մասը չեն կարողանում համայնքային բյուջեներում նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ՝ դպրոցների պահպանման ծախսերը և աշխատավարձերը ապահովելու համար: Պետական բյուջեի միջոցներով կառուցվել և վերանորոգվել է Արևշատի երաժշտական դպրոցը/6մլն./, Վեդու գեղարվեստի դպրոցի ջեռուցման համակարգը և գազատարը /21.4 մլն դրամ/: <<Կամրջակ>> կազմակերպության միջոցներով ամբողջությամբ վերանորոգվել և լոկալ ջեռուցման համակարգ է անցկացվել փ.Վեդու արվեստի դպրոցում:

331. 6 դպրոց՝ Շահումյանի, Այգեզարդի և Վ.Արտաշատի արվեստի, Արևշատի և Վեդի քաղաքի երաժշտական, Արտաշատ քաղաքի գեղարվեստի դպրոցները գործում են հարմարեցված շենքերում: Համայնքների կողմից տրամադրվող սուղ ֆինանսական միջոցները առաջացնում են նաև սոցիալական խնդիրներ: Ուսուցիչների ցածր աշխատավարձի հետևանքով մեծ է դպրոցներից որակյալ կադրերի արտահոսքը: Ելնելով սոցիալական պայմաններից սահմանվում են ցածր ուսման վարձավճարներ, ինչը չի ապահովում դպրոցի պահպանման անհրաժեշտ ծախսերը, իսկ առանձին դեպքերում, սահմանված վարձավճարը բերում է սովորողների թվաքանակի նվազման:

332. Վերոնշյալ դպրոցները այժմ արդեն աշխատում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսումնական պլաններով:

333. **Արվեստ /թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ/-** բնագավառի հիմնական նպատակը պետք է համարել թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, մշակույթային օջախներում գործող համերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողստեղծագործությանը աջակցություն ցուցաբերելը:

334. Թատերական կյանքը մարզում ապահովում են մեկ պետական՝ Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական, Արտաշատ քաղաքի «Մանկան մոլորակ» տիկնիկային, Մասիս քաղաքի թիվ 1 դպրոցի մանկական, Արտադպրոցական աշխատանքների կենտրոնի մանկական, Այնթափի և Նոր Խարբերդի դպրոցների մանկական թատրոնները:

335. 2013 և 2014 թվականներին պետական դրամատիկական թատրոնում համապատասխանաբար բեմադրվել է 3-ական ներկայացում, խաղացվել է 69 և 67 ներկայացում, ներկա է եղել 14981 և 16221 հանդիսատես:

336. Այսօր թատրոնի առջև ծառացած է ժամանակակից լուսային սարքավորումներ չունենալու հարցը: Թատրոնում եղածը բավականին հին է, տեղադրվել է անցած դարի 60 - ականներին և չի բավարարում այսօրվա պահանջներին:

337. Ակտիվ գործում են Արտաշատ քաղաքի <<Մանկան մոլորակ>> մանկական- - տիկնիկային, ԱԱԿ–ի մանկական, Մասիս քաղաքի թիվ 1 դպրոցի մանկական թատրոնը, որոնք մշտապես ներկայացումներով հանդես են գալիս մարզի դպրոցներում և մանկապարտեզներում:

338. **Երաժշտարվեստի և պարարվեստի** բնագավառում տարվում է բավականին լուրջ աշխատանք: Մարզում գործում է ՀՀ պարարվեստի գործիչների միության մարզային մասնաճյուղը, որը կոորդինացնում է մարզի բոլոր պարային համույթների գործունեությունը: Պարբերաբար կազմակերպվում են պարուսույցների վերապատրաստման դասընթացներ:

339. 2013թ. ապրիլի 29–ին պարի միջազգային օրվա կապակցությամբ մարզի պարային համույթների մասնակցությամբ Արտաշատ քաղաքում կազմակերպվել է պարի փառատոն:

340. Յուրաքանչյուր տարի սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին կազմակերպվում է ժողովրդական պարերի մարզային փառատոն:

341. Մարզի պարային համույթները և անհատ կատարողները մշտապես մասնակցում են մարզկենտրոնում և մայրաքաղաքում կազմակերպվող միջոցառումներին:

342. **Մշակութային միջոցառումներ-**Մարզում մշակութային կյանքը հիմնականում ապահովում և զարգացնում են մասսայական և մշակութային միջոցառումները, որոնց կազմակերպման ողղությամբ պետական աջակցությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Դրանց նպատակն է աշխուժացնել մարզերում և համայնքներում մշակութային կյանքը, խթանել մշակութային փոխանակումները մայրաքաղաքի և մարզերի մշակութային կազմակերպությունների միջև: Մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար ամեն տարի ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացվում է 3 մլն 195 հազ. 400 դրամ գումար:

343. Մարզում նշվում են բոլոր պետական, ազգային և ծիսական տոները, այդ թվում՝ ՀՀ Անկախության, ՀՀ Սահմանադրության, ՀՀ Բանակի, Հաղթանակի և Շուշիի ազատագրման, Կանանց միջազգային, Երեխաների պաշտպանության տոները, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրը, <<Տեառնընդառաջի>>, <<Վարդավառի>>, <<սբ. Մարիամ Աստվածածնի վերափոխման>> տոները, Մայիսի 1-ը, 1-ին հանրապետության օրը, Երեխաների պաշտպանության օրը, Սահմանադրության օրը, Հայոց ցեղասպանության 98–րդ տարելիցը, Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձը, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 67-րդ և ՀՀ Սահմանադրության 17-րդ տարեդարձները:

344. Նշված մշակութային միջոցառումները ավանդույթի ուժ ունեն և շարունակական են, դրանք կազմակերպվել են մարզի տարբեր համայնքներում, եկեղեցիների հարակից բակերում՝ մասնակից դարձնելով համայնքների բնակիչների մեծամասնության:

345. ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում կազմակերպվել է սփյուռքահայ երիտասարդների հետ բազմաթիվ հանդիպումներ մարզկենտրոնում: Արարատի մարզի ընտանիքներում ամեն տարի հյուրընկալվում է 111-ից ավելի սփյուռքահայ երեխաներ: Հինգ տարիների

արդյունքներով մարզային երեսունից ավելի համայնքների շարքում հյուրընկալած սփյուռքահայերի թվով Տափերական համայնքը մտնում է լավագույն հնգյակի մեջ:

346. 2014թ.-ին <<Արի տուն>> ծրագրի շրջանակներում մարզը գրավեց պատվավոր առաջին մրցանակային տեղը:

347. Մարզը նաև մասնակից դարձավ <<Իմ Հայաստան>> համահայկական փառատոնին, որի շրջանակներում մարզ այցելեցին շուրջ 240 սփյուռքահայ երիտասարդներ:

348. Համերգային ծրագրով երիտասարդները հանդես եկան Արարատ և Արտաշատ քաղաքներում:

349. Մշակութային զարգացումը գլոբալ առումով ենթադրում է հիմնականում պետական մոտեցում մշակութային արժեքների պահպանման, զարգացման և տարածման համար: 2011-2014թթ. մարզում վերոնշյալ միջոցառումները կկրեն շարունակական բնույթ:

5.2.2 Մշակույթի ոլորտի ռազմավարություն

350. ՀՀ Արարատի մարզի մշակույթի բնագավառում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) Արարատի մարզի մշակույթային ոչ նյութական ժառանգության պահպանում. առանձնակի կարևորվում է ոլորտին առընչվող միջոցառումների իրականացում մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով նրա կրողների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծումը, ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացների և ոչ նյութական մշակութային ժառանգության ծեսերի ու տոնակատարությունների կազմակերպումը:

2) Մարզի մշակութային հաստատությունների ջեռուցում, դահլիճների կահավորում և տեխնիկական միջոցներով համալրում:

3) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում, հարկավոր է մարզային իշխանություններին տալ համայնքներում մշակույթի բնագավառում կադրային քաղաքականություն իրականացնելու լիազորություններ:

351. Գրադարաններին անհրաժեշտ է համալրել նոր գրականությամբ, ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով՝/ համակարգիչներ, վճարովի ինտերնետային կապ/ այն կնպաստի աշխատանքների որակի բարձրացմանը և բնակչության տեղեկատվական դաշտի ընդլայնմանը:

352. Մարզում տուրիզմի զարգացմանն ու գովազդային, նշանավոր մարդկանց ու հայրենագիտական աշխատանքների կազմակերպման առթիվ անհրաժեշտ է ստեղծել պայմաններ (հիմնականում ֆինանսական) հրատարակչական գործունեություն ծավալելու համար:

353. Թանգարանային ֆոնդի համալրման և պահպանման, ցուցահանդեսների կազմակերպման ու անցկացման, թանգարանային հավաքածուների հանրամատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ է պետ. բյուջեից տրամադրել 1մլն 350 հազ. դրամ:

354. Պարույր Սևակի անտիպ աշխատությունների ուսումնասիրության ու հրատարակման համար հարկավոր է պետական միջոցներից տրամադրել 500.000 դրամ: Ծրագիրը կնպաստի թանգարանային ֆոնդի համալրմանը, ցուցանմուշների տեսականու և քանակի ավելացմանը, մշակութային ժառանգության պահպանմանն ու տարածմանը:

355. Մարզի տարածքում են գտնվում պատմական Հայաստանի 2 մայրաքաղաքները՝ Արտաշատը և Դվինը: Մարզում զբոսաշրջության զարգացման համար կարևորվում է մարզկենտրոն Արտաշատում բացել հնագիտական թանգարան, որտեղ կզետեղվեն 2 մայրաքաղաքների պեղածո-գտածոները: Անհրաժեշտ է պետական աջակցություն թանգարանի շենքի ձեռք բերման և բարեկարգման համար: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է կառուցել համապատասխան շենք՝ 95 մլն դրամ ընդհանուր արժողությամբ:

356. Անհրաժեշտ է, որ բոլոր հուշարձանները ունենան պահպանական գոտիներ, որպեսզի ճիշտ կազմակերպվեն հուշարձանների պահպանման, օգտագործման և վերականգման աշխատանքները.

1) Հարկավոր է պետական բյուջեի միջոցներով առաջնահերթ վերանորոգել Ձնջուլու /Մոշ աղբյուր/ գյուղատեղի տարածքում գտնվող սուրբ Կարապետ վանքահամալիրը, որի համար անհրաժեշտ է 42 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Հուշարձանը պահպանելու նպատակով հարկավոր է վերանորոգել դեպի սուրբ Կարապետ վանքահամալիրը տանող ճանապարհը /2 կմ./:

2) Շտապ ամրակայման կարիք ունեն Արտաշատ և Դվին պատմական մայրաքաղաքների պեղված հատվածները՝ Արտաշատի միջնաբերդի պատերը, Դվինի պալատը, որի համար անհրաժեշտ է 63 մլն դրամ:

3) Հարկային քաղաքականություն վերանայում: Չի կարող մշակութային կազմակերպությունը կամ անհատ ստեղծագործողը իր հարկային պարտականությունների բեռի տակ լիարժեք զբաղվել իր մասնագիտական գործունեությամբ:

357. Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մոտեցում, ներդրումներ՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով:

358. Մարզի մշակույթի ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 5.2 հավելվածում:

5.3.ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

5.3.1 Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի իրավիճակի վերլուծություն

359. 2013թ. մարզի տարածքում գործում են համայնքային ենթակայության 5 և <<Սևան>> ԳՄԸ մանկապատանեկան 2 մարզադպրոց՝ 187 մարզական խմբերով, 1 մարզական ակումբ և շախմատի ակադեմիայի մասնաճյուղը:

360. Մարզում կա 106 մարզադահլիճ, 2 ստադիոն, 13 ֆուտբոլի խոտածածկ խաղադաշտ, 3 լողավազան, 2 հրաձգարան:

361. Նկատի ունենալով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերն ու նշանակությունը, որպես բնակչության առողջության կոփման, պատանիների և երիտասարդների ֆիզիկական և բարոյական դաստիարակության կարևորագույն գործոն, մարզպետարանի կողմից կարևորվել է ազգաբնակչության ֆիզիկական ակտիվության բարձրացումը: Այդ նպատակով համայնքային բյուջեների տարեսկզբյան հաստատման ժամանակ, մարզպետի անմիջական հսկողությամբ, համայնքների բյուջեներից տրամադրվել են ֆինանսական միջոցներ միջավայրի կանաչապատման, կանաչ գոտիների ստեղծման և ընդլայնման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, զբոսայգիների, հետիոտների (ոտքով և հեծանվով երթևեկողները կազմում են մարզի բնակչության 50%) համար: Համայնքների կողմից զգալի միջոցներ են տրամադրվում նաև ճանապարհների պահպանման և նորոգման համար (վերջին 5 տարիների ընթացքում ոտքով և հեծանվով երթևեկողների ճանապարհներին գրանցվել է 135 վրաերթի դեպք):

362. Իրականացվել են միջոցառումներ տեղաշարժման խնդիրներ ունեցող և սայլակ օգտագործող անձանց տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով (զբոսայգիներում՝ աստիճաններին կից, հարթեցված թեք հատվածներ և այլն): Կարևորվել է ֆիզիկական դաստիարակության դերը մատաղ սերնդի կրթության գործում՝ պետական ծրագրով մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրայի դասաժամերը ընդգրկված են բոլոր դասարանների ամենօրյա դասացուցակներում:

363. Նախադպրոցական բոլոր հիմնարկները ունեն համապատասխան աշխատանքային տարեկան ծրագիր, որով պարտադիր նախատեսված է դրսում ամենօրյա զվարճալի խաղերի անցկացում: Մարզի քաղաքների բոլոր դպրոցների

աշակերտների անվտանգ երթևեկությունը ապահովելու նպատակով դպրոցների ճանապարհներին կից հատվածներում սահմանված են ցածր արագություն և կազմակերպվում են հերթապահություններ պետավտոտեսչության աշխատակիցների կողմից՝ ապահովելու համար դպրոցականների անվտանգ անցումները: Դպրոցների տնօրենության կողմից վերահսկվում է փոքր տարիքի երեխաներին ծնողների կամ չափահաս հարազատների կողմից դպրոց ուղեկցելը՝ հիմնականում ոտքով և այդ սովորության ամրապնդման և զարգացման ուղղությամբ տարվում են համապատասխան քարոզչական աշխատանքներ:

364. ՀՀ Արարատի մարզպետի 31.03.2014 թվականի N 29 որոշմամբ ստեղծվել է ՀՀ Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ, և հաստատվել են խորհրդի անհատական կազմն ու կանոնադրությունը: Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նպատակը մարզում երիտասարդական քաղաքականության համակարգված ու նպատակային իրականացմանն աջակցելն է, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելը: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը յուրաքանչյուր տարի հայտարարում է «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը, որին մասնակցել կարող են Հայաստանի Հանրապետության մարզերի բոլոր քաղաքները: Եթե 2015-2018 թվականների ընթացքում ՀՀ Արարատի մարզի որևէ քաղաք հռչակվի տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաք, ապա ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ծրագրված երիտասարդական միջոցառումներն ու ծրագրերն այդ տարի կիրականացվեն տվյալ քաղաքում:

365. **Մարզադպրոցներ** - Մարզադպրոցները հիմնականում վերանորոգված են, գտնվում են բարվոք վիճակում, ունեն բավարար մարզագույք և համալրված են բարձրակարգ մարզիչներով: Նշված մարզադպրոցներից ջեռուցվում է ք.Արտաշատի Ռ.Գոլեցյանի անվան օլիմպիական հերթափոխի մարզադպրոցը:

366. Արտաշատի քաղաքի համալիր մարզադպրոցում հիմնականում խաղային ձևեր են /աթլետիկա, ֆուտբոլ/ և պարապմունքները անց են կացվում մարզադաշտում, որտեղ մարզիկների համար ապահովված են լավագույն պայմաններ, մյուս մարզաձևերի /սամբո, ձյուդո,/ պարապմունքները անց են կացվում օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի դահլիճում: Միջոցներ են ձեռնարկվել անհատ բարերարների միջոցները ներգրավելու՝ մարզի բնակչության ֆիզիկական ակտիվության զարգացման նպատակով միջոցառումների իրականացնելու համար:

367. Բոլոր 7 մարզադպրոցներում՝ զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, մարզական բոլոր խմբերում պարապում են անվճար հիմունքներով:

368. Մարզում կան մարզաձևեր, որոնք ավանդական են և համարվում են առաջնային: Դրանք են ազատ և դասական ոճերի ըմբշամարտերը, ատլետիկան, ծանրամարտը, ֆուտբոլը և բռնցքամարտը, այս պահին այդ մարզաձևերի քանակը

լրացնում է նաև շախմատը: Նշած մարզաձևերից մարզը 2013թ. ՀՀ և միջազգային մրցաշարերում և առաջնություններում ունեցել է հաջողություններ.՝

Հայկ Մարտիրոսյան - Շախմատ - 2011-2012թթ. եվրոպայի պատանիների չեմպիոն, 2013թ. Եվրոպայի պատանիների առաջնության կայծակնային շախմատի չեմպիոն, ՖԻԴԵ- ի վարպետ
Աննա Սարգսյան - Շախմատ - 2013թ. Ջերմուկում միջազգային պատանիների և աղջիկների մրցաշարի մինչև 12 տարեկանների չեմպիոն
Անուշ Գրիգորյան - Կանանց բռնցքամարտ - աշխարհի պատանիների առաջնության արծաթե մեդալակիր
Վլադիկ Կարապետյան -Ծանրամարտ –եվրոպայի երիտասարդների առաջնության բրոնզե մեդալակիր
Հովհաննես Վարդանյան - ազատ ոճի ըմբիշ - միջազգային մրցաշարի չեմպիոն 42կգ. քաշային կարգում
Դավիթ Գևորգյան - ազատ ոճի ըմբիշ - միջազգային մրցաշարի չեմպիոն 53կգ. քաշային կարգում
Գոռ Հակոբյան - ազատ ոճի ըմբիշ - միջազգային մրցաշարի չեմպիոն 47կգ. քաշային կարգում
Նարեկ Հովհաննիսյան -ազատ ոճի ըմբիշ - միջազգային մրցաշարի չեմպիոն 50կգ. քաշային կարգում
Արամ Դավթյան - աթլետիկա - Եվրոպայի մեծահասակների առաջնության բրոնզե մեդալակիր, վազք 400մ.

369. Մյուս 5 մարզադպրոցները՝ Արարատի, Վեդու, Մասիսի քաղաքապետարանների, Մասիսի և Տափերականի <<Սևան>> ԳՄԸ-երի մարզադպրոցները ջեռուցվում են միայն պարապմունքների օրերին՝ էլ. ջեռուցիչների կամ գազօջախների միջոցով. դա բնականաբար ազդում է մարզադպրոցի նորմալ աշխատանքային ընթացքի վրա:

370. Ստորև ներկայացված է Արարատի մարզի գործող մարզադահլիճները.

Աղյուսակ 5.9 Արարատի մարզի գործող մարզադահլիճները

	Մարզադպրոցի անվանումը	Մարզակառույցի անվանումը	Երկար.-լայն. գծմ	Ջեռուցման վիճակը	Երբ է կառուցվել
1	Արտաշատի քաղաքապետարանի	ստադիոն	104-69	-	1960
2	Արտաշատի քաղաքապետարանի	ըմբշամարտի դահլիճ	42.5 -- 24		1986

	Օլիմպիական հերթափախի մարզադպրոց	խաղային մարզադահլիճ	36 - 18	ջեռուցվող	1965
		մարզադահլիճ	18-12		
3	Ք.Արարատի մանկապատանեկան մ/ դ	մարզադահլիճ	-	-	-
	Զոդ-բանավանի մասնաճյուղ	հարմարեցված	30-10	-	2006
4	Վեդու քաղաքապետարանի մ / դ	մարզադահլիճ	36-18	-	1965
5	<<Սևան>> ԳՄԸ Տափերականի մանկապատանեկան մ / դ	հարմարեցված	-	-	-
6	<<Սևան>> ԳՄԸ Ք. Մասիսի մանկապատանեկան մ / դ	հարմարեցված	17--7	վառարան	-
7	Մասիսի քաղաքապետարանի մ / դ	մարզադահլիճ	17--9	էլ. ջեռ.	-

371. 2012թ.-ին հիմնանորոգվել է ք. Արտաշատի մարզադպրոցը /1մլն 700 հազ. դրամ «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի եկեղեցի» ԿԿ և գ. Լանջազատի մարզադահլիճը՝ 85 մլն դրամ - ՀՄՆՀ, 2011- 2013թ-ին կառուցվել է Մասիս քաղաքի մարզադպրոցը՝ 155 մլն դրամ - ՀՀ պետ բյուջե:

372. Մարզի Արտաշատ, Արարատ և Մասիս քաղաքներում գործում են ստադիոններ՝ 3000, 1000 և 500 նստատեղերով, 10 համայնքներում կան խոտածածկ, ստանդարտ չափերի մարզադաշտեր:

373. Մարզում գործող մարզադպրոցներից միայն ք.Արտաշատի համալիր մարզադպրոցն է, որն ունի լողավազան: Մնացած լողավազանները մասնավոր են: Չնայած եղած գործող լողավազաններին՝ լողը, որպես մարզաձև, չի ուսուցանվում, քանի որ լողավազանները բաց են և գործում են միայն ամառվա ամիսներին:

374. **Մարզական միջոցառումներ** - 2011-2013թթ. մարզի 23 համայնքներում վերականգնվել են ֆիզկուլտուրայի կազմակերպիչների հաստիքները, որոնք

մարզային «Սևան» գյուղական մարզային ընկերություն /ԳՄԸ/ հետ համատեղ համայնքներում կազմակերպում են իրենց աշխատանքները:

375. Տարեցտարի ավելանում են մարզում անցկացվող մարզական մրցումներ և միջոցառումների թիվը: 2013թ. մարզում անցկացվել է շուրջ 64 մարզական մրցում և միջոցառում, որոնց մասնակցել են շուրջ 5700 մարզիկ և 60 000 –80 000 մարդ: Մարզի 4 քաղաքներում և 6 գյուղերում կազմակերպվել են առողջարարական մասսայական միջոցառումներ՝ «Առողջ ապրելակերպ» կրոսավազք, «Մաշտոցյան խաղեր», «Ֆիզկուլտուրայի օր», «Օլիմպիական օր», մանկապարտեզի սաների համար առանձին ծրագրով հեծանվավազք և այլ միջոցառումներ:

376. 2013թ. մարզը գյուղական պատանեկան հանրապետական 8-րդ խաղերի ծրագրով 11 մարզաձևերից ընդհանուր թիմային հաշվարկով գրավել է 1-ին տեղը:

377. 2013թ. ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի հանրապետական փուլում մարզը գրավեց 6-րդ տեղը, իսկ 2014թ.ին ընդհանուր թիմային հաշվարկով 7-րդ տեղը: Մարզից 3 ընտանիք իրենց տարիքային խմբերում գրավեցին 1-ին, 2-րդ/առանձին մարզաձևում/, 3-րդ /հաշմանդամ ունեցող ընտանիք / տեղերը:

378. Ամեն տարի մեծ շուքով նշվում է ֆիզկուլտուրայի միջազգային օրը, որին մասնակցում են մարզադպրոցների սաներ, մանկապարտեզներ և դպրոցականներ, մոտավորապես 800 մարզիկ:

379. Մեծ շուքով նշվում են հուշամրցաշարեր տարբեր մարզաձևերից՝ նվիրված արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկներին՝ մասնավորապես Գառնիկ Ղուկասյանին նվիրված հուշամրցաշարը, որին է մասնակցություն են ունեցել միջազգային կարգի սպորտի վարպետներ:

380. Հանրապետական նշանակություն ունեցող մրցաշար է համարվում սպորտի վարպետ ըմբշամարտիկ Ռազմիկ Գոլեցյանի հիշատակին նվիրված ավանդական հուշամրցաշարը:

381. Մարզում մեծ ուշադրություն է հատկացվում շախմատ մարզաձևին, տարվա ընթացքում անց է կացվում երկու մարզային առաջնություն:

382. 2013թ. մարզի շախմատի հավաքականը Գյուղական պատանեկան հանրապետական 12-րդ խաղերի եզրափակիչ մրցափուլում գրավել է 2 -րդ տեղը:

383. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից իրականացվող մարզական միջոցառումներին մարզը մշտապես լավագույն մասնակցություն է ունեցել:

384. Մարզի մարզիկները ունեն նաև ակտիվ մասնակցություն միջազգային մրցաշարերին հիմնականում ազատ և հունահռոմեական ոճի ըմբշամարտեր, աթլետիկա, ծանրամարտ մարզաձևերից: Շոշափելի առաջընթաց է արձանագրվել

նաև բռնցքամարտ, կանանց ըմբշամարտ, ֆուտբոլ մարզաձևերում: Մարզում զարգացած է կանանց բասկետբոլը՝ ք.Արարատի «Ավարայր» ակումբ:

385. 2013թ. դեկտեմբերին ամփոփվել են սպորտի բնագավառի արդյունքները և մարզից ընտրվել են 10 լավագույն մարզիկներ, որոնցից 6–ը՝ Եվրոպայի և աշխարհի տարբեր առաջնությունների մեդալակիրներ, իսկ 4 –ը՝ ՀՀ չեմպիոններ:

386. Անվտանգ զբոսայգիների, ոտքով և հեծանվով երթևեկելու համար նախատեսված ճանապարհների, խաղահրապարակների, լողավազանների և ֆիզկուլտուրայով ու սպորտով զբաղվելու այլ հնարավորությունների, հովանավորչական միջոցներով իրականացվող ծրագրերի, մարզական միջոցառումների մասին տեղեկատվությունը լուսաբանվում է մարզպետարանի լրատվության բաժնի և մարզային հեռուստակենտրոնի միջոցով: Աշխատանքներ են տարվում դրանք մարզպետարանի կայք էջում տեղադրելու ուղղությամբ:

387. **Երիտասարդության հարցեր** - Երիտասարդական քաղաքականության նպատակը երիտասարդ մարդու ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է:

388. Արարատի մարզում ապրում են 18-30 տարեկան մոտ 63000 երիտասարդ, որոնցից 15000-ը ուսման կամ աշխատանքի բերումով ամենօրյա կապ ունեն մայրաքաղաքի հետ:

389. Մարզում կան 8 սպորտային միջն. մասնագիտական ուսումնական հաստատություն, որտեղ սովորում են մոտ 3600-ից ավել երիտասարդ:

390. Մարզի տարածքում գործում են 5 երիտասարդական հասարակական կազմակերպություն, ինչպես նաև Արարատի մարզի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնը, որն անմիջական կապ է ապահովում մարզի երիտասարդության և հասարակական կազմակերպությունների միջև: 2013թ. մարզի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի կողմից իրականացվել է 3 ծրագիր, որոնց նպատակը հիմնականում ուղղված է եղել երիտասարդների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը: Ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են ուխտագնացություններ, դասախոսություններ, հանդիպումներ, օտար լեզվի և համակարգչային դասընթացներ, ինչպես նաև սեմինարներ, թրեյնինգներ, հանդիպումներ գործատուների հետ: Կազմակերպվում է ամենամյա «Տարվա երիտասարդ» մրցանակաբաշխությունը, որը խթանում է երիտասարդության ակտիվացմանը:

391. Սպորտի և երիտասարդության հարցերի հիմնախնդիրներն են.

1) Նոր աշխատատեղերի բացակայություն, որոնց առկայությունը կնպաստի զբաղվածության բարձրացմանը:

2) Բնակարանների պակաս և դրանց ձեռք բերելու դժվարություններ, որոնք նվազեցնում են ամուսնությունների քանակը և երիտասարդ ընտանիքների ձևավորումը:

3) Նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին պետական հոգածություն ցուցաբերելու շրջանակներում որոշակի արտոնությունների բացակայություն՝ կոմունալ վարձավճարների զեղչեր, ամառային հանգստի անվճար ուղեգրերի տրամադրում:

4) Մարզում սպորտի զարգացմանը հիմնական խոչընդոտ է հանդիսանում՝

5) մարզադպրոցների ոչ մշտական գործելը /ձմռան սեզոնին ջեռուցման բացակայության պատճառով չեն աշխատում մարզի բոլոր մարզադպրոցները/,

6) մարզի լավագույն մարզիչները ցածր աշխատավարձի պատճառով խուսափում են մարզադպրոցներում հիմնական աշխատելուց

7) Երիտասարդական ժամանցային կենտրոնների բացակայությունը:

392. Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական սկզբունքներ, որոնք կարող են ընկած լինել երիտասարդական պետական քաղաքականության հիմքում.

1) Երիտասարդ անձի իրավունքների և շահերի համադրումը պետական քաղաքականության ձևավորման և իրականացման ործում՝ նրա անմիջական մասնակցությունը այդ ծրագրերի ձևավորման և իրականացման գործընթացին

2) Պետական աջակցություն երիտասարդ ընտանիքներին

3) Երիտասարդների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը

4) Երիտասարդների աշխատանքի, նրանց զբաղվածության, մասնավորապես գյուղական երիտասարդության, սահմանամերձ գյուղերի և բնակավայրերի երիտասարդության աշխատանքի, նրանց սեփականության երաշխիքների ապահովում:

5) Սերտ համագործակցություն միջազգային նույնատիպ կառույցների հետ:

6) Տեղեկատվական ցանցի զարգացում մարզերում, մարզային երիտասարդական կառույցների հետ:

5.3.2 Սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտի ռազմավարություն

393. Արարատի մարզի սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) Սպորտային հաստատությունների ջեռուցում, դահլիճների կահավորում
2) Մարզադաշտերի կառուցում և բարեկարգում
3) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերաորակավորում
4) ՀՀ մրցաշարերին, առաջնություններին մարզային հավաքական թիմերի և անհատ մարզիկների մասնակցությունը ապահովելու համար անհրաժեշտ է պետական բյուջեից հատկացնելել որոշակի ֆինանսական միջոցներ:

394. Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մոտեցում և ներդրումներ՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով:

395. Մարզի սպորտի ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 5.3 հավելվածում:

5.4 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

5.4.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

396. Կարևորելով առողջապահության ոլորտի դերը ՀՀ Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ ոլորտում 2015-2018թթ. ընթացքում առաջընթաց ձևավորելու համար հիմնական շեշտը պետք է դնել առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի համաչափ բարձրացման վրա: ՀԶԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բժշկական օգնության և սպասարկման ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանման, մանկական հիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունների արդիականացման, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղված միջոցառումները: Այդ նպատակների իրականացման հարցում նախատեսվում է առաջիկայում առողջապահության ոլորտում համակարգի կառավարմանն ուղղված բարեփոխումների իրականացում, ինչպես նաև պետական ծախսերի էական ավելացում, այնուհետև նաև դրանց ներոլորտային վերաբաշխում՝ ի օգուտ առաջնային բժշկական օգնության և սպասարկման օղակի:

397. **Արարատի մարզի առողջապահական համակարգի ընդհանուր ցուցանիշները** - Արարատի մարզում նախկինում՝ մինչև 2008թ., առողջապահական համակարգը գերկենտրոնացված էր, ամբողջ բնակչության համար երաշխավորված էր անվճար բժշկական օգնություն և սպասարկում անկախ սոցիալական կարգավիճակից: Մարզում գործում էին 4 կենտրոնական շրջանային հիվանդանոցներ(մարզի յուրաքանչյուր քաղաքում՝ մեկական), որոնց կազմում ընդգրկված էին պոլիկլինիկաները, գյուղական բժշկական ամբուլատորիաները և բուժամանկաբարձական կետերը: Համակարգն ամբողջովին ֆինանսավորվում էր պետական բյուջեի միջոցներից՝ համաձայն սահմանված չափորոշիչների:

398. Առողջապահական համակարգի ապակենտրոնացման արդյունքում 1996թ. Արարատի մարզի առողջապահական հաստատությունների կառավարման

իրավասությունները փոխանցվեցին մարզպետարանին: Կենտրոնական շրջանային հիվանդանոցները բաժանվեցին առանձին հիմնարկների, որոնց տրվեցին ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների կարգավիճակ:

399. Անցումային շրջանում և շուկայական մեխանիզմների ներդրման գործընթացի ներքո պարզ դարձավ, որ առողջապահության այդ համակարգի պահպանումը բյուջետային ֆինանսավորմամբ անարդյունավետ է և հետագայում՝ անհնար: Համակարգի և ֆինանսական ծախսերի օպտիմալացման և ինքնաֆինանսավորման բաղադրիչի ներդրման նպատակով սկիզբ դրվեց առողջապահության համակարգի կառուցվածքային բարեփոխումներին:

400. 2006թ. կառավարության թիվ 1911-Ն որոշմամբ՝ առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացի շրջանակներում, մարզում իրականացվել են հետևյալ փոփոխությունները.

Արտաշատի տարածաշրջան <<Արտաշատի հիվանդանոց>>, <<Արտաշատի պոլիկլինիկա>>, <<Արտաշատի ծննդատուն>> փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ստեղծելով <<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվեցին ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

401. Արտաշատի պոլիկլինիկայում ստեղծվեց տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ դիսպանսեր հսկողության գործառույթ իրականացնելու նպատակով: Արտաշատի պոլիկլինիկայից առանձնացան և վերակազմակերպվեցին <<Ազատավանի, Այգեստանի, Այգեզարդի, Արևշատի, Բուրաստանի, Գետազատի, Դալարի, Կանաչուտի, Դվինի, Նորաշենի, Նշավանի, Ջրաշենի, Քաղցրաշենի, Դիմիտրովի առողջության առաջնային պահպանման կենտրոններ>> փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում <<Արտաշատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի մահճակալային թիվը 275-ից կրճատվել է 130-ի:

1)Մասիսի տարածաշրջան <<Մասիսի պոլիկլինիկա>> ՓԲԸ-ն միաձուլվեց <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին, ստեղծելով <<Մասիսի բժշկական կենտրոն>>: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվեցին ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

2) Մասիսի պոլիկլինիկայում ստեղծվեց տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ վերապահելով նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Մասիսի պոլիկլինիկայից առանձնացման ձևով վերակազմակերպվեցին <<Նոր-Խարբերդի, Մարմարաշենի, Նորամարգի, Սայաթ-Նովայի, Դարակերտի, Դաշտավանի, Գեղանիստի, Արգավանդի, Հովտաշատի, Հայանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոններ>> փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 170-ից կրճատվել է 110-ի:

3) Արարատի տարածաշրջան <<Արարատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն առանձնացման ձևով վերակազմակերպվեց ստեղծելով <<Զանգակատան և ՈԿՖ բանավանի առողջության առաջնային պահպանման կենտրոններ>> փակ բաժնետիրական ընկերությունների: Օպտիմալացման արդյունքում <<Արարատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 80-ից կրճատվել է 50-ի:

4) <<Վեդու հիվանդանոց>> և <<Վեդու պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են ստեղծելով <<Վեդու բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն: Պոլիկլինիկայի նեղ մասնագիտական և ախտորոշիչ ծառայությունները ինտեգրվել են ստացիոնար ծառայություններին՝ պոլիկլինիկան ապագայում վերածելով ընտանեկան բժշկության կենտրոնի:

5) Վեդու պոլիկլինիկայում ստեղծվել է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ վերապահելով նրան դիսպանսեր հսկողության գործառույթ: Վեդու պոլիկլինիկայից առանձնացման ձևով վերակազմակերպվեցին <<Նոյակերտի, Փոքր Վեդու և Ուրցաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոններ>> փակ բաժնետիրական ընկերությունները: Օպտիմալացման արդյունքում <<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի մահճակալային ֆոնդը 80-ից կրճատվել է 40-ի:

6)<<Արմաշի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ում օպտիմալացման արդյունքում փակվել է սոմատիկ հիվանդների համար նախատեսված 25 մահճակալը: Առողջության կենտրոնը դարձել է 108 մահճակալանոց հոգեկան առողջության կենտրոն,որից 100 մահճակալ մեծահասակների համար, 8 մահճակալ երեխաների:

7) <<Վեդու ծննդատուն>> ՓԲԸ-ն 50 մահճակալով թողնվել է անկախ իրավաբանական անձի կարգավիճակով:

402. Օպտիմալացումից հետո ընդհանուր մահճակալային ֆոնդը մարզում 765-ից կրճատվել է 488-ի, Արարատի մարզի մարզային ենթակայության առողջապահական հիմնարկների քանակը կազմել է 55.

1) բժշկական կենտրոն - 4
2) ծննդատուն - 1
3) առողջության կենտրոն - 1
4) բժշկական ամբուլատորիա - 49, /որից 14-ը համայնքային ենթակայության են, 35-ը մարզային/, որոնց կազմի մեջ են 44 բուժակ-մանկաբարձական կետեր:

403. Վերջին տարիներին Արարատի մարզի տարածքում գործում են նաև տարբեր ուղղվածությամբ այլ առողջապահական հիմնարկներ.

1) Մասիսում - <<Մասիս>> օրթոպեդիկ հիվանդանոց ՓԲԸ, որն իրականացնում է հանրապետության 0-14 տարեկան երեխաների օրթոպեդիկ բժշկական օգնությունը և սպասարկումը:

2) Արտաշատում - <<<Հովակիմյաններ>> ՍՊԸ ակնաբուժական կենտրոնը, որն իրականացնում է ամբուլատոր և վիրահատական բժշկական օգնությունը և սպասարկումը:

3) Արտաշատում- «Արաբկիր բժշկական համալիր <<երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ>>, <<Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոն>> Արտաշատի մասնաճյուղ-աուտիզմով հիվան երեխաների վերականգնողական կենտրոն:

404. Հարկ է նշել, որ բուժհաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավվել է նրանց ֆինանսական վիճակը: Սակայն, համակարգի լիարժեք գործունեության համար վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները դեռևս բավարար չեն: Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց լուծումից այսօր կախված է ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը:

405. **Բժշկական կադրեր** – Մինչև 2012 թվականը հանրապետության այլ մարզերի համեմատ Արարատի մարզի բժիշկ/բնակչություն հարաբերակցության ցուցանիշը բարձր էր, որի հետևանքով որոշ բժշկական հաստատություններ ունեին ֆինանսական որոշակի դժվարություններ: Իրավիճակը շտկելու նպատակով բուժհաստատություններում կրճատվեց բժշկական անձնակազմի թվաքանակը, ինչպես նաև որոշ բժշկական հաստատություններում միավորվեցին բաժանմունքներ (<<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ում միավորվեցին հիվանդանոցային, պոլիկլինիկ ծառայության և մանակաբարձագինեկոլոգիական ծառայության լաբորատոր-ախտորոշիչ բաժանմունքները, <<Մասիսի ԲԿ>> ՓԲԸ-ում միավորվեցին երկու թերապևտիկ բաժանմունքները, շտապ օգնության ծառայությունը միավորվեց ընդունարանի հետ)՝ 2012-2013թթ.. ընթացքում մարզի բժշկական հաստատություններում կրճատվել է ավելի քան 90 աշխատակից: 2014թ. հուլիս ամսից ծանուցում են ստացել ևս 61-ը:

406. Չնայած կատարվածին՝ ներկայումս, մարզի հիվանդանոցային բժշկական հաստատություններում կա նեղ մասնագետների կարիք՝ 4 անեսթեզիոլոգի, 2 մանանկաբարձ-գինելոլոգի, 1 ուռոլոգի, 1 վնասվածքաբանի, 1 քիթ-կոկորդ-ականջաբանի, 1 նեոնատոլոգի և ամբուլատոր օղակում ունենք 7 ընտանեկան բժշկի պահանջարկ::

407. Ազգաբնակչությանը որակյալ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով մարզում բժշկական աշխատողների հետդիպլոմային կրթման գործընթացը շարունակական բնույթ է կրում: 2011-2013թթ. ՀՀ պետական բյուջեի և միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ վերապատրաստվել են ավելի քան 150 բժիշկ և 225 միջին բժշկական անձնակազմ, որի համար հատկացվել է շուրջ 96 մլն դրամ:

407. 2011-2013թթ. ընթացքում բժշկական հաստատություններում սպասարկման և ֆինանսատնտեսական գործունեության որակի բարձրացման նպատակով, 6 բժշկական հաստատություններում առաջացած տնօրենների՝ <<Արտաշատի ԲԿ>>,<<Վ.Արտաշատի ԲԱ>>, <<Նշավանի ԱԱՊԿ>>, <<Ռանչպարի ԲԱ>>,<<Սուրենավանի ԲԱ>>, <<Խաչփարի ԲԱ>>, ՓԲԸ-ների թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ: Հայտարարված 6 մրցույթներից 2-ին՝

<<Սուրենավանի ԲԱ>>,<<Խաչփարի ԲԱ>>, ՓԲԸ-ների դիմողներ չեն եղել:Մյուս բժշկական հաստատությունների մրցույթները կայացել են և հաղթողները համապատասխան ժամկետներում մարզպետի կարգադրությամբ նշանակվել են տնօրեններ:Տարվում են շարունակական աշխատանքներ տնօրենների հաստիքները համալրելու ուղղությամբ:

408. Ներկա վիճակում մարզի մի շարք առողջապահական հաստատություններ դեռևս գտնվում են բավականին բարդ ֆինանսատնտեսական վիճակում և ՀՀ Արարատի մարզպետարանը իրականացնում է բոլոր հնարավոր միջոցառումները նրանց ֆինանսատնտեսական վիճակի առողջացման գործընթացի կազմակերպումը իրականացնելու:

409. **Ընտանեկան բժշկության համակարգ** - Ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը մեծապես նպաստեց գյուղական համայնքների ազգաբնակչության բուժսպասարկման մատչելիության բարձրացմանը:Համակարգի արդյունավետ ներդրման նպատակով՝ ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 132 բժիշկ և 164 բուժքույր:

410. ՀՀ Առողջապահության նախարարության կողմից՝ առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագրի շրջանակներում մարզում ամբողջությամբ իրականացվում է բժշկի մոտ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգը:

411. Ամբուլատոր - պոլիկլինիկական հաստատություններում բնակչության մեկ շնչի տարեկան միջին հաճախումների դինամիկան 2011-2013 թթ.. Արարատի մարզում ներկայացված է աղյուսակ 5.10-ում:

Աղյուսակ 5.10 2011-2013 թթ.. հաճախումների դինամիկան

Մարզ	հազ մարդ.		
	2011թ	2012թ	2013թ
ԱՐԱՐԱՏ	3.1	3,2	3,4

412. **Արարատի մարզում հիվանդացության, մահացության և ծնելիության վիճակագրությունը -** ՀՀ մարզերի կտրվածքով Արարատի մարզում ծնելիության գործակիցը հանրապետական միջին մակարդակից բարձր է, վիճակագրությունը ցույց է տալիս, որ հիվանդացության ու մահացության ցուցանիշները Արարատի մարզում, ինչպես ամբողջ հանրապետությունում դեռևս բարձր են:

413. 2011-2013թթ. Արարատի մարզի ծնելիության,մահացության և բնական աճի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 5.11-ում

Աղյուսակ 5.11

Արարատի մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2011	բացարձակ թվով	2578	1124	1454
	ըստ 1000 բնակչի	9,14	3,9	
2012	բացարձակ թվով	2414	1171	1243
	ըստ 1000 բնակչի	8,56	4,15	
2013	բացարձակ թվով	2531	1259	1272
	ըստ 1000 բնակչի	9,6	4,8	

414. Հիվանդանոցային մահացության ցուցանիշը մարզում 3 տարիների ընթացքում նվազել է: Հիվանդանոցներում 3 տարիների ընթացքում բուժվել են 35233 հիվանդ՝ /2011թ.՝ - 11128, 2012թ.՝ - 11667, 2013թ՝ - 12046/, մահացել՝ 392-ը /2011թ.՝ - 142, 2012թ.՝ - 131, 2013թ՝ 119 /: Հիվանդանոցային մահացության ցուցանիշը կազմել է 2011թ.-ին 12,5 պրոմիլե, 2012թ.՝- 11,1 պրոմիլե, 2013թ.՝- 9,7 պրոմիլե:

415. Մարզում տարբեր հիվանդություններով հիվանդացությունը վերջին տարիներին ենթարկվել է էական ներկառուցվածքային և քանակական փոփոխությունների: Մարզի բնակչության առողջական վիճակի մասին կարելի է դատել՝ ելնելով հիվանդությունների տարածման միտումներից: Այսպես, հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները ցույց են տալիս, որ մարզում վերջին տարիներին մեծ տարածում ունեն դիաբետի (հատկապես ինսուլինաանկախ) բարդություններով հիվանդությունները, հոգեկան խանգարումները և նորագոյացություններով հիվանդությունները:

416. Դինամիկան ներկայացված է ստորև 5.12 աղյուսակում:

Աղյուսակ 5.12 Հիվանդությունների դինամիկա

Հիվանդություն	2011թ	2012թ.	2013թ.
Շաքարային դիաբետ ինսուլինակախյալ	747	838	986
Շաքարային դիաբետ ինսուլինաանկախ	3838	4146	4619
Հոգեկան խանգարումներ	3415	3609	3704

Նորագոյացություններ	1777	1932	2042

417. Վերոնշյալ աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Արարատի մարզում առկա է շաքարային դիաբետով, նորագոյացություններով, հոգեկան խանգարումներով հիվանդացության աճ: Բացի դրանից, մարզի համար լրջագույն խնդիր են սոցիալական հիվանդություններից տուբերկուլյոզը, իսկ մինչև 1 տարեկան երեխաների շրջանում ռոտավիրուսային հիվանդացությունը: Վերջին տարիներին տարածված ինֆեկցիոն հիվանդությունների շարքում առանձնանում են աղիքային ինֆեկցիաները, վիրուսային հեպատիտը, ջրծաղիկը, շնչական օրգանների տուբերկուլոզը, վերին շնչուղիների սուր ինֆեկցիաները, էնտերովիրուսները:Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ալկոհոլամոլությունը և թմրամոլությունը մարզում դասվում են հասարակության համար աղետ հանդիսացող առավել վտանգավոր երևույթների շարքում:

418. Մարզի համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում նաև այն փաստը, որ բնակչության մեծ զանգված են կազմում աշխատանքային միգրանտները, որոնք ժամանակավորապես մեկնում են բարձր ՁԻԱՀ-ի ցուցանիշ ունեցող երկրներ: Այս առումով կարևորվում է վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկման անհրաժեշտությունը:

419. Հաշվի առնելով, որ մարզում ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային համակարգի, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և քրոնիկական շնչառական հիվանդությունների, տարածվածությունը աճի միտում ունի և այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը: Կարևորելով նշված հիվանդությունների և ռիսկերի վերաբերյալ բնակչության առողջ ապրելակերպի,հիվանդությունների կանխարգելման, վաղ դիմելիության անհրաժեշտության հարցերի շուրջ ցածր տեղեկացվածությունը, առաջնահերթ խնդիր է դառնում այդ հիվանդությունների վաղ հայտնաբերման և հետևանքների նվազեցման ուղղված միջոցառումները:

420. Մարզի հիվանդացության կառուցվածքը 2011-2013թթ. ըստ դիմելիության հետևյալն է.

1) 2011 թվականին արտահիվանդանոցային օղակում գրանցվել են 52903 քաղաքացիներ, որոնցից տվյալ տարում առաջին անգամ գրանցվել են՝ 30069 հիվանդ: Ամբուլատոր պոլիկլինիկական օղակին դիմողների զգալի մասը՝ 12485 մարդ տառապել են շնչական համակարգի տարբեր ախտահարումներով, առաջնային օղակին են սիրտ-անոթային համակարգի ախտահարումներով դիմել 5631 մարդ: Ներզատական համակարգի ախտահարումներով պոլիկլինիկա են դիմել 13414 մարդ:

2) 2012 թվականին գրանցվել են որպես հիվանդ 55793 քաղաքացիներ, որոնցից տվյալ տարում առաջին անգամ գրանցվել են՝ 31254 հիվանդ: Ամբուլատոր պոլիկլինիկական օղակին դիմողների զգալի մասը՝ 11937 մարդ տառապել են շնչական համակարգի տարբեր ախտահարումներով, սիրտ-անոթային համակարգի

ախտահարումներով առաջնային օղակին են դիմել 5959 մարդ: Ներզատական համակարգի ախտահարումներով պոլիկլինիկա են դիմել 4669 մարդ:

3) 2013 թվականին գրանցվել են որպես հիվանդ 52459 քաղաքացիներ, որոնցից տվյալ տարում առաջին անգամ գրանցվել են՝ 29130 հիվանդ: Ամբուլատոր պոլիկլինիկական օղակին դիմողների զգալի մասը՝ 12275 մարդ տառապել են շնչական համակարգի տարբեր ախտահարումներով, սիրտ-անոթային համակարգի ախտահարումներով առաջնային օղակին են դիմել 5577 մարդ: Ներզատական համակարգի ախտահարումներով պոլիկլինիկա են դիմել 5095 մարդ:

421. Ինչպես տեսնում ենք արձանագրված տվյալներից հիվանդների զգալի մասը տառապում են հիմնականում շնչառական, սիրտ-անոթային, ներզատական համակարգի ախտահարումներով:

422. Մաշկավեներոլոգիական հիվանդների տեսակարար կշիռը կազմում է միջին հաշվով 2.7% /2011թ.՝ - 2.6%, 2012թ.՝- 2.7%,2013թ.՝-2,8):

423. 2011-2013թթ. ընթացքում պետական պատվերի շրջանակներում դիսպանսերային մասնագիտական բժշկական օգնություն և սպասարկում են ստացել 91934 հիվանդներ՝ 2011թ. 30292, 2012թ.–31031, 2013թ՝-32688: Դիտվում է մատուցված ծառայությունների աճ:

424. **Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում-** Արտահիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվել է 49 գյուղական առողջության առաջնային պահպանման կենտրոնների և 4 բժշկական կենտրոնների պոլիկլինիկական ծառայությունների և 1 առողջության կենտրոնի առողջության առաջնային պահպանման կենտրոնի միջոցով: Իրականացվել են պետական պատվերի շրջանակներում առողջության առաջնային պահպանման, նեղ մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև լաբորատոր-գործիքային հետազոտություններ: Մարզի ամբուլատոր օղակում ամբողջությամբ իրականացվում են բոլոր պետական նպատակային առողջապահական ծրագրերը՝ իմունոկանխարգելում, առողջության առաջնային պահպանման որակի ցուցանիշների ապահովվում, առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Աղյուսակ 5.13 Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության գործունեության հիմնական ցուցանիշները.

	2011թ.	2012թ.	2013թ.
Հաճախումների քանակը	567883	569338	582277
Դիսպանսեր հսկողության տակ գտնվող հիվանդների թիվը	24242	22856	23314

425. Պրոֆ. պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է՝ 97-98%, որը բարձր է միջին հանրապետականից (95-98%):

426. Պոլիկլինիկաներին, Արմաշի առողջության կենտրոնին և գյուղական բժշկական ամբուլատորիաներին կից գյուղական համայնքներում գործում են 44 բուժակմանկաբարձական կետեր: Անցած տարիներին մի շարք ԲՄԿ-ում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և վերջիններիս հագեցվածությունը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով բավարար է: Բոլոր ԲՄԿ-ում աշխատող բուժքույրերը անցել են վերապատրաստման դասընթացներ և ունեն ընտանեկան բուժքրոջ որակավորում: Ընդհանուր առմամբ ընտանեկան բժշկի ինստիտուտի ներդրման ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 132 բժիշկ և 164 բուժքույր:

427. **Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում -** 2011-2013թթ. մարզի 4 բժշկական կենտրոններում,1 ծննդատանը և 1 հոգեբուժական առողջության կենտրոնում, հիվանդանոցային ստացիոնար բժշկական օգնություն և սպասարկում են ստացել 35958 հիվանդներ /2011 թվականին 11377,2012թ.-12550, 2013թ.-11996/, որից 2918 հիվանդ բուժվել են վճարովի հիմունքներով, իսկ 3169 հիվանդ՝ համավճարի կիրառման սկզբունքով: Վճարովի և համավճարի ներդրման սկզբունքի կիրառումը բավականին բարելավեց բժշկական հաստատությունների ֆինանսական վիճակը:

428. 2011-2013թթ. վիրահատության են ենթարկվել 10835 /2011թ.՝-3686, 2012թ.-3499, 2013թ.-3650/ հիվանդներ, այդ թվում՝ նախապես պլանավորված 4312, իսկ անհետաձգելի վիճակներով պայմանավորված 6523 հիվանդ:

429. ՀՀ Արարատիի մարզի բժշկական կենտրոնների մահճակալային ֆոնդի զբաղվածությունը հիմնականում գտնվում է 61% մակարդակի վրա, բացառությամբ <<Արմաշի ԱԿ>> ՓԲԸ-ը, որտեղ մահճակալային ֆոնդի զբաղվածությունը կազմում է շուրջ 85%, որը պայմանավորված է հոգեբուժարաններում հիվանդների ավելի երկար գտվելու ժամանակահատվածով:

430. **Մոր և մանկան առողջություն -** Մոր և մանական առողջության պահպանումը միշտ եղել և մնում է պետության մշտական հովանավորության, հոգացության և հսկողության ներքո, որի վառ ապացույցն է հղիների պետական հավաստագրերի ներդրումը, 2011 թվականից՝ 0-7 տարեկան երեխաների անվճար բժշկական օգնության և սպասարկման պետական հավաստագրերի ներդրումը, որի համար 2011 թվականի ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտին հատկացվեց լրացուցիչ 3,13 մլրդ դրամ, ինչպես նաև 2011 թվականին իրականացվող ՀՀ-ում շտապ բուժօգնության բարեփոխումների ծրագիրը:

431. Մոր ու մանկան բժշկական օգնությունը և սպասարկումը, երեխաների խնամքը իրականացվում է մարզի 55 առողջապահակն հիմնարկների՝ բժշկական կենտրոնների մանկաբարձական բաժամնունքների,կանանց կոնսուլտացիաների, մանկական և ինֆեկցիոն բաժանմունքների, մանկական կոսուլտացիաների, Վեդու ծննդատան, Արմաշի առողջության կենտրոնի ամբուլատորիայի միջոցով:

432. Մինչև ծննդօգնության պետական հավաստագրերի հատկացումը հղիների վաղ հայտնաբերման տոկոսը ցածր էր և կազմում էր 50-60%, պետական հավաստագրերի հատկացումից հետո մինչև 12 շաբաթյա հղիների հայտնաբերման

ցուցանիշը կտրուկ բարձրացավ մինչև 97-98%: Հավաստագրերի ներդրումից հետո վերջին 3 տարիների ընթացքում մարզի 9664 հղիներին տրամադրվել են հավաստագրեր, մարզի ծննդատներում ծննդաբերել են 7523-ը,հանրապետության այլ վայրերում 2141-հղիներ: Հղիների արտահոսք ունեցել ենք Մասիսի և Արտաշատի տարածաշրջաններից, որը բացատրվում նյութատեխնիկական բազայի վատ հագեցվածությամբ և Երևան քաղաքին մոտ գտնվելու հանգամանքով: Ընդհանուր առմամբ հավաստագրերի ներդրումից հետո մարզից հղիների արտահոսքը հիմնականում Երևան քաղաքի տարբեր կլինիկաներ պակասել է:

433. Մարզի 0-18 տարեկան երեխաների ամբուլատոր – պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը իր մեջ ներառում է տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժիշկների կողմից 0-18 տարեկան երեխաների զարգացման և առողջության հսկողության և բժշկական օգնության և սպասարկման իրականացում, առողջ երեխայի հսկողություն՝ աճի և զարգացման գնահատմամբ, հիվանդությունների կանխարգելումը՝ ներառյալ պրոֆիլակտիկ պատվաստումների իրականացում, հիվանդությունների վաղ հայտնաբերում և հիվանդ երեխայի բուժօգնության կազմակերպում:Դրա վառ օրինակն է պրոֆիլակտիկ պատվաստումների բարձր ցուցանիշը՝ 97-98%, որը միջին հանրապետականից բարձր է (95-96%): Բարձր է նաև մինչև 1 տարեկան երեխայի կրծքով սնուցման ցուցանիշը,որը մարզում կազմում է մինչև 92,5%: Մանկաբույժների և ընտանեկան բժիշկների ամենօրյա հետևողական աշխատանքների շնորհիվ մանկական մահացությունը մարզում կազմել է 5,7 պրոմիլե:

434. 2011-2013թթ. թվականներին ՀՀ Արարատի մարզում ծնվել է 7523 երեխա: Մարզում ծնելիության գործակիցը բարձր է հանրապետական միջին մակարդակից՝ 2013 թվականին կազմել է 14 պրոմիլե հանրապետական միջին 13,8 պրոմիլի համեմատ, նույնը դիտվել է նաև 2012թ.: 0-5 տարեկան հասակում մահացել է 16 երեխա, որից 0-1 տարեկան մահացել է 5 երեխա, 11 երեխա 0-6 օրական հասակում: Մանկական մահացության ցուցանիշը կազմում է 5,7 պրոմիլե: Մեռելածին ծնվել են 43-ը, պերինատալ մահացության ցուցանիշը կազմում է 0,17 պրոմիլե: Վերջին 3 տարիների ընթացքում մարզում մայրական մահացության դեպք չի արձանագրվել:

435. **Շտապ օգնության ծառայությունը.** 2013 թվականի շտապ օգնության ծառայությունը իրականացրել է 25711 /2011թ.-23284-ի դիմաց և 2012թ.- 23583 / կանչ, ավելացել է գյուղական վայրերից ստացված և սպասարկված կանչերի թիվը /2011 թվականի համեմատ այն աճել է 17.2 %/, այս հանգամանքը խոսում է գյուղական բնակչության համար շտապ օգնության ծառայության մատչելիության բարձրացման մասին, ինչն անկասկած կապված է նաև շտապ օգնության ծառայության արդիականացման հետ՝ թարմացվել է ավտոպարկը, ծառայությունը հագեցվել է անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով, անձնակազմը ամբողջովին անցել է վերապատրաստման դասընթացներ:

436. **Պատանատոմիական ծառայությունը** - Պատանատոմիական ծառայությունը իրականացվում է մարզի տարածաշրջանային բժշկական կենտրոնների միջոցով: 2013 թվականին իրականացվել 1259 դիահերձում (2011

թվականին-1124, 2012 թվականին-1171): Դիահերձումների և հիվանդանոցային ախտորոշումների համընկնելիությունը 100% է կազմում:

437. **Ֆինանսական հոսքեր**. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորման հաստատված ծավալը 2013թ. կազմել է 2 մլրդ 502 մլն 098.641 հազ. դրամ (2012թ. - 2 մլրդ 301մլն 927.492 հազ. դրամ), այդ թվում հիվանդանոցային բուժօգնության գծով՝ 2013թ. - 1 մլրդ 042 մլն 989,765 հազ. դրամ (2012թ. - 946 մլն 793 հազ. դրամ), ամբուլատոր-պոլիկլինիկական բուժ.օգնության գծով 2013թ.՝ 1 մլրդ 459 մլն 108.876 հազ.դրամ(2012թ.- 1 մլրդ 355 մլն 134.422 հազ. դրամ)

438. 2011-2013թթ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում Արարատի մարզի առողջապահական համակարգի ֆինանսավորումն իրականացվել է 100% -ով:

439. 2013թ. վճարովի հիմունքներով ծառայություններից մուտքագրված միջոցներով իրականացվել է Վեդու հիվանդանոցի պատուհաների վերանորոգում և Վեդու ծննդատան մասնակի վերանորոգում:

Աղյուսակ 5.14 Արտահիվանդանոցային ծառայության դեղերի ծախսը.

N	Դեղի ձեռք բերման աղբյուրները	Գումար (մլն դրամ)		
		2011թ	2012թ	2013թ
1	Սեփական միջոցներով ձեռք բերված դեղ	99460,07	82822,13	66967,66
2	Կենտրանացված գնումներով և հումանիտար օգնությամբ ձեռք բերված դեղ	72129,75	127442,82	101749,23
	Ընդամենը	171589,82	210264,95	168716,89

440. **Իրականացված աշխատանքները -** Վերջին տարիներին Արարատի մարզում ՀՀ պետական բյուջեի, բարեգործական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվել են ծրագրեր մարզի առողջապահության ոլորտում ազգաբնակչության բժշկական օգնության և սպասարկման ծառայության որակի բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ 2011-2013թթ. ընթացքում տեխնիկական համագործակցության շրջանակներում կազմակերպվել են՝

1) վերապատրաստման դասընթացներ,
2) Բաց դռների օրեր, մասնավորապես մարզի 3 տարածաշրջաններում կազմակերպված <<Լույս հայի աչքերին>> անվճար ակնաբուժական օգնությունը

3) մարզի տարածաշրջանների բուժհաստատություններում ազգաբնակչության (այդ թվում նաև մանկական) բժշկախորհրդատվական անվճար ընդունելություններ,
4) հաշմանդամ երեխաների բժշկական սպասարկում,
5) շարժական բժշկական խմբերի կողմից այցելություններ տարածաշրջանների գյուղական համայնքներ:

441. Բոլոր իրականացված ծրագրերում ապահովվել է մարզի առաջատար և նեղ մասնագետների պարտադիր մասնակցությունը:

441. **Շինարարական աշխատանքներ -** Արարատի մարզի բնակչության առողջական վիճակի լավացումը պայմանավորված կախված է բուժհիմնարկների շենքային պամանների բարելավումից:Վերջին տարիների ընթացքում կատարվել են բավականի աշխատանքներ այդ ուղղությամբ:

442. 2011-2013թթ. մարզում իրականացվել են շուրջ 740 մլն դրամ արժողությամբ շինարարկան աշխատանքներ՝ մասնավորապես.

1)2011թ. <<ԱՄՔՈՐ>> կազմակերպության կողմից 4,3 մլն դրամ ներդրումով հիմնանորոգվել է <<Լուսառատի ԲԱ>> ՓԲԸ-ն, վճարովի ծառայության գումարներով մասնակի վերանորոգվել է ք. Վեդու հիվանդանոցը՝ 5 մլն դրամի, իսկ 2012թ.-ին Վեդու ծննդատունը՝ 3.4 մլն դրամի:

2) 2012թ ՀՀ պետական բյուջեի 38 մլն դրամի ներդրումով՝ իրականացվել է Արմաշի առողջության կենտրոնի ջրագծի կառուցում, միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով իրականացվել է 302.1 մլն դրամի աշխատանքներ՝ <<ԱՄՔՈՐ>> կազմակերպության կողմից 6 մլն 800 հազ. դրամի ներդրումով հիմնանորոգվել են <<Արալեզի ԲԱ>> և <<Փ,Վեդու ԱԱՊԿ>> ՓԲԸ-ները, <<ԼԻՈՆ>> ֆրանսիական բարեգործական կազմակերպության կողմից 181 մլն 300 հազ. դրամի իրականացվել է ք.Մասիսի հիվանդանոցի մասնակի վերանորոգումը, << ՑԵՍԿՈ >> -ի կողմից 98 մլն դրամի ներդրումով ավարտվել է Վեդու ծննդատան մասնակի վերանորոգումը, ԱՄՆ-ի դեսպանատան ֆինանսավորմամբ կառուցվել է Դարբնիկի բուժակմանկաբարձական կետը, <<Փրկեք երեխաներին>> ծրագրի շրջանակներում 16 մլն դրամի ներդրումով վերանորոգվել է << Խաչփարի ԲԱ>> ՓԲԸ-ն:

443. 2013թ. ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել է շուրջ 368 մլն 130 հազ. դրամի աշխատանքներ՝

1) կառուցվել են 3 բուժամբուլատորիայի շենքեր՝ <<Նորաբացի ԲԱ>> ՓԲԸ-– 46մլն 800 հազ.դրամ, << Սայաթ-Նովա ԱԱՊԿ>> ՓԲԸ - 48 մլն 900 հազ. դրամ, Նոր-Խարբեդի ՓԲԸ - 48 մլն 300 հազ.դրամ,

2)վերանորոգվել են 3 բուժհաստատություններ՝ ք.Մասիսի հիվանդանոցի հիմնական մասնաշենքի ամրացում և ճանապարհների և տարածքի բարեկարգում - 108.8 մլն դրամ, Նորաշեն համայնքի ամբուլատորիայի տանիքի վերանորոգում 10 մլն

դրամ, Արևշատի բուժ.ամբուլատորիայի նորոգում - 4 մլն 230 հազ. դրամ, ինչպես նաև իրականացվել են Ոսկետափի ամբուլատորիայի՝ 505.5 հազ. դրամի և Այգավանի ամբուլատորիայի – 505.5 հազ. դրամի, գազաֆիկացման աշխատանքներ:

444. 2013թ. ընթացքում միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով կառուցվել է Սիփանիկի ԲՄԿ-ի շենքը՝ ‹‹Մենսենքինդերեն›› և <<Վերջին օրերի սրբեր>> բարեգործական հիմնադրամների միջոցներով /14 մլն 400 հազ.դրամ/ և <<ԱՄՔՈՐ>> միջազգային կազմակերպություն կողմից վերանորոգվել է <<Նորամարգի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ն 4 մլն դրամի:

445. Չնայած մարզի առողջապահության ոլորտում կատարված մեծածավալ շինարարական աշխատանքներին, առողջապահական հիմնարկների շենքային պայմանները ունեն առաջնահերթ բարելավվման խնդիր՝ ներկայացված է աղյուսակ 5.15-ում:

Աղյուսակ 5.15 Արարատի մարզի առողջապահության ոլորտում շենքային պայմանների առաջնահերթ լուծում պահանջող բուժհաստատությունների ցանկը

1	<<Արտաշատի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի պոլիկլինիկա	Ենթակա է հիմնավերանորոգման
2	<<Մասիսի բժշկական կենտրոն>>ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
3	<<Վեդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
4	<<Վեդու ծննդատուն>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
5	<<Արմաշի առողջության կենտրոն>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
Արտաշատի տարածաշրջանի բուժամբուլատորիաներ		
6	<<Ազատավանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
7	<<Այգեստանի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
8	<<Արևշատի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
9	<<Գետազատի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
10	<<Դալարի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Շենքի կառուցում
11	<<Դիմիտրովի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Շենքի կառուցում
12	<<Մրգավանի ԲԱ>> ՓԲԸ	Շենքի կառուցում
13	<<Նշավանի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
16	<<Արբաթի ԲԱ>>ՓԲԸ	Շենքի կառուցում
17	<<Գեղանիստի ԱԱՊԿ>>ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման

20	<<Հայանիստի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
21	<<Հովտաշատի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
22	<<Մարմարաշենի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
24	<<Նորամարգի ԱԱՊԿ>> ՓԲԸ	Շենքի կառուցում
ՎԵԴՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
30	<<Նոր-Կյանքի ԲԱ>> ՓԲԸ	Ենթակա է հիմնավերանորոգման
31	<<Ոսկետափի ԲԱ>> ՓԲԸ	Շենքի կառուցում
ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ		
33	<<Զանգակատան ԱԱՊԿ>> ՓԲԸ	Շենքի կառուցում

446. **Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում -** 2011-2013թթ. ընթացքում իրականացվել է.

1) 2011 թվականի հունիսի 2-ի կառավարության N 21 արձանագրության որոշման պահանջով պոլիկլինիկաների կողմից տրամադրվող տեղեկանքները տրվել են անվճար, որի հետևանքով ավելացել են ազգաբնակչության հաճախումները՝ արդյունքում էականորեն բարելավվել է ազգաբնակչության բուժօգնության մակարդակը, մատչելիությունը:

2) Նվազել է անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի թիվը:

3) Բարելավվել է ԱԱՊ ոլորտի որակը՝ բարձրացել է ընտանեկան բժշկների որակյալ ծառայություններից օգտվող, սկրինինգային ծրագրերի մեջ ընդգրկված բնակչության տեսակարար կշիռը, ավելացել է նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածությունը, 100% ապահովվել է առողջ երեխայի վարման ծավալը:

4) Բարձրացել է դիսպանսերային և նեղ մասնագիտական արտահիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը՝ աճել է ներզատաբանական, ուռուցքաբանական, սրտաբանական և տարափոխիկ հիվանդությունների վաղ հայտնաբերված դեպքերի տեսակարար կշիռը, գյուղական ազգաբնակչության մասնագիտական բուժօգնության սպասարկման ընդգրկվածությունը, բարձրացել է հղիների վաղ ընդգրկումը նախածննդյան հսկողության մեջ:

5) Բարձրացել է արտագնա լաբորատոր-ախտորաշիչ այցելությունների թիվը:

447. **Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման գծով.**

1) Երեխայի հավաստագրի (0-7տ.) ներդրմամբ մեծացել է վստահությունը բժիշկների նկատմամբ, որի արդյունքում ավելացել է դիմելիությունը:

2) Իրականացվել է մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավում, որի արդյունքում բացառվել է տվյալ ժամանակահատվածում մայրական մահածությունը, իսկ պերինատալ մահացության ցուցանիշը նվազեցման միտում է ցուցաբերել:

3) Բարելավվել են հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի ցուցանիշները՝ կլինիկական և ախտաբանաանատոմիական ախտորոշումների բոլոր դեպքերում համնկնում են:

4) Համավճարի ներդրմամբ և վճարովի ծառայություններից ավելացել են ֆինանսական մուտքերը, որը նպաստում է բուժհաստությունների սպասարկման որակի բարձրացմանը:

5) << Աջակցություն շտապ բուժօգնության >> ԱՄՆ-ի ՄԶԾ դրամաշնորհային ծրագրի ներդրմամբ բարձրացել է <<շտապ օգնության բրիգադաների>> պատասխանատվությունը և փոխադարձ՝ ազգաբնակչության դրական վերաբերմունքը: 2014թ. ընթացքում այս ծրագրի շրջանակներում մարզի 4 բժշկկական կենտրոններին և 6 շտապ օգնության ծառայություն մատուցող բժշկական ամբուլատորիաներին տրամադրվել է համակարգիչներ, համակարգչային սարքավորումներ՝ մասնավորապես՝ պլանշետներ, հեռակառավարման կապի միջոցներ և այլն:

448. **Արարատի մարզում առողջապահության ոլորտում առկա հիմնախնդիրները -** ՀՀ Արարատի մարզի ազգաբնակչության բժշկական սպասարկման բարելավվումը առաջին հերթին պայմանավորված է ոլորտի զարգացմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Արարատի մարզի առողջապահական ոլորտում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

1) անբավարար շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազան
2) ծառայությունների զարգացման ֆինանսական խթանների բացակայություն և բժշկական աշխատողների ցածր վարձատրություն
3) ազգաբնակչության ցածր տեղեկացվածություն
4)առողջապահական ծառայությունների կառավարման և աջակցող վերահսկման մեխանիզմների թերություններ:

449. Մոր և մանկան առողջության բարելավումը բնակչության առողջության պահպանման կարևորագույն նախադրյալներից է: Չնայած վերջին տարիներին մանկական ծառայությունում արձանագրված որոշակի առաջընթացին (պատվաստումների գործընթացի, կրծքով սնուցման ցուցանիշի բարելավում և այլն), մանկական մահացության կառուցվածքում շարունակում է ավելի է մեծանալ շուրջծննդյան հիվանդություններից և զարգացման արատներից մահացության տեսակարար կշիռը, դա պայմանավորված է.

1) Առաջին անհրաժեշտության սարքավորումներով և պարագաներով ոչ լիարժեք հագեցվածությամբ
4) հղիության ախտաբանությունների վաղ հայտնաբերման և նորածնային պաթոլոգիաների ներարգանդային ախտորոշման թույլ համակարգի առկայությամբ:

5.4.2. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

450. ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀԶԾ-ի առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Արարատի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման, գյուղական բնակչության բժշկական օգնության և սպասարկման բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, վարակիչ, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների կանխարգելման, հիվանդացության ու մահացության իջեցմանն ուղղված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով իրականացնելու, հասցեական լրացնելու և հետևաբար ուժեղացնելու համար անհրաժեշտ է՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին, իրականացնել համապատասխան առողջապահության համակարգի զարգացմանն ուղված միջոցառումներ:

451. Մատուցվող բժշկական ծառայությունների որակը էապես կախված է ֆինանսական հատկացումներից և չնայած վերջին տարիներին նկատվում է ֆինանսական հատկացումների աճ՝ 2013թ.-ին 2010 թվականի համեմատ գրեթե կրկնակի ավելացել է մարզի առողջապահությանը ուղղված պետական ֆինանսական հատկացումները, մասնավորապես ՀՀ պետական բյուջեից հատկացումները 2013թ.-ին 2012թ.-ի համեմատ ավել է եղել 200 մլն դրամով ընդ որում էականորեն աճել են առաջնային բուժօգնությանն ուղղված ֆինանսական հատկացումները, սակայն դա դեռևս բավարար չէ իրական պահանջարկը ամբողջովին բավարարելու:

451. ՀՀ Արարատի մարզի բնակչության ներկա առողջական վիճակի բարելավմանն ուղղված առողջապահության ոլորտի զարգացման գերակա նպատակ է համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Հաշվի առնելով մարզի առանձնահատկությունները՝ մինչհամայնքային հեռավորությունները, մարզի բնակչության ծերացում և այլ ցուցանիշները, ռազմավարությունը ներառում է 3 հիմնական ուղղվածություն՝ արտահիվանդանոցային, շտապ օգնության և մասնագիտական հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավում, մասնավորապես՝ վերջինս իր մեջ ներառում է գերակա նպատակ՝ համաչափ հասանելիության ապահովում ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական

համայնքների, առավել ևս՝ հեռավոր, սահմանամերձ և լեռնային համայնքներում բնակվող ազգաբնակչության համար:

452. ՀՀ Արարատի մարզում, ինչպես ամբողջ հանրապետությունում արդիական է տարեցտարի աճող ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և դրանցից մահացության խնդիրը, ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը դիտարկվում է որպես առողջության առաջնային պահպանման ոլորտում իրականացվելիք կարևորագույն միջոցառումներից մեկը. Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերջին տարիներին աճել է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության տեսակարար կշիռը՝ նույն հիվանդությունների տարածվածության համեմատությամբ:

453. 2015-2018թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել միջոցառումներ ուղղված՝ համակարգի առաջնային բժշկական օգնության և սպասարկման մակարդակում չափահաս (18-ից բարձր) բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (արյան շրջանառության համակարգի հիվանդությունների, շաքարային դիաբետի, թոքի և կրծքագեղձի չարորակ նորագոյացությունների) առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելմանն ուղղված գործողությունների հստակ մեխանիզմների ներդմանը և դրանց միջոցով տարեցտարի առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից մահացության ցուցանիշների կրճատմանը:

454. ՀՀ Արարատի մարզում 2015-2018թթ շարունակվելու է ներդվել կառավարության կողմից իրականացվող բոլոր ծրագրերը.

Մարզի առողջապահական համակարգում ներդնել.

1) Արյան շրջանառության համակարգի հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, վարման և վերականգնման ծրագիրը:

2) Շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման, վարման և կանխարգելման ծրագիրը:

3) Չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման, վարման և կանխարգելման ծրագիրը:

4) Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկի ֆակտորների վերաբերյալ /ծխելու, ավելորդ քաշի, ֆիզիկական թերակտիվության, առողջ սննդակարգի, արյան շրջանառության համակարգի հիվանդությունների և շաքարային դիաբետի ժամանակ սննդակարգի/ բնակչության բժշկահիգիենիկ կրթման ուղեցույցներ:

5) Առաջնային օղակի մասնագետների համար մշակված առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, կանխարգելմանը և բուժմանն ուղղված չափորոշիչները ներառել վերջինների /որպես ընտանեկան բժիշկների/ մասնագիտացման ու շարունակական կրթական ծրագրերում և սահմանել պարբերական մոնիթորինգ դրանց գործնական կիրառման նկատմամբ:

6) Առաջնային օղակի մասնագետների մասնագիտացման և շարունակական կրթության մոդուլներում ներառել վերոհիշյալ կլինիկական ուղեցույցները:

7) Առաջնային օղակի մասնագետների գործունեության հիմքում դնել առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններով տառապող անձանց շարունակական հսկողությունը, հետագայում դրա իրականացման որակի ցուցանիշների կատարողականի հետ կապելով վերջինների խրախուսող վարձատրման սկզբունքի կիրառումը:

8) Օգտագործել հասարակական կազմակերպությունների հնարավորությունները հատկապես գյուղական բնակավայրերում հանրության առողջապահական կրթման իրականացման խնդրում:

455. Ստորև գծապատկերում ներկայացված է մարզի բնակչության առողջական վիճակի բարելավման գործընթացը:



456. **Արտահիվանդանոցային ծառայություններ -** Բժշկական օգնության և սպասարկման ու որակի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով արտահիվանդանոցային ծառայությունը ենթադրում է առողջության առաջնային պահպանման որակի ցուցանիշների բարելավում, լաբորատոր-գործիքային և նեղ մասնագիտական բուժօգնության ծառայությունների կատարելագործում, որոնք հասանելի կլինեն բուժակ-մանկաբարձական կետերի մակարդակում: Այս բնագավառում կարևորագույն նպատակ է համարվում նաև սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված արտոնյալ պայմաններով անձանց անվճար ավել լայն անվանացակի որակյալ դեղորայքով ապահովումը:

457. Հարկ է նշել, որ մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունը որակյալ կադրային և տեխնիկական

ներուժով հագեցման կարիք ունի, մասնավորապես՝ անհրաժեշտ է կազմակերպել ընտանեկան բժիշկների և մանկաբարձգինեկոլոգների միաժամանակյա - համատեղ վերապատրաստման դասընթացներ, բարելավել բուժակմանկաբարձական կետերի նյութատեխնիկական բազան, այն է՝ բարելավել բուժակմանկաբարձական կետերի շենքային պայմանները, ապահովել հոսող ջրով, հագեցնել ժամանակակից և անհրաժեշտ սարքավորումներով:

458. Անհրաժեշտ է ամուլատոր օղակի կադրերի շարունակական կրթում իրականացնել, ինչը կնպաստի առողջության առաջնային պահպանման մակարդակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացմանը և որակի ցուցանիշների ապահովմանը:Կարևորվում է առաջնային բուժօգնության և ծառայությունների վերաբերյալ բնակչության լայն իրազեկումը և առողջ ապրելակերպի խթանմանը ու հիվանդությունների կանխարգելման նպատակով հանրության բժշկա-հիգիենիկ կրթության գործընթացի ապահովումը: Կարևորվում է առողջության առաջնային պահպանման օղակում սքրինինգային ծրագրերի արդյունավետ ներդրումը, այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել բշկական աշխատողներին շարունակական մասնագիտական աջակցության ցուցաբերում տեղերում, սքրինինգային ծրագրերի պարբերական վերանայում և գնահատում՝ դրանց ներդրման գործընթացներն առավել սահուն կազմակերպելու նպատակով:

459. 2015-2018թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում, մասնավորապես նախատեսվում է, ՀՀ մարզերի բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը: Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է կանանց և տղամարդկանց 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը: Վերոնշյալ սքրինինգների իրականացման կատարողականը պետք է լինի առնվազն 50-60 տոկոս:

460. Արարատի մարզից նախատեսվում է հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկել շուրջ 56 հազար մարդ, իսկ արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով շուրջ 26 հազար կին: Սքրինինգային հետազոտությունները նախատեսվում է սկսել 2014թ. սեպտեմբեր ամսից և շարունակել մինչև 2018 թվականը:

461. Անհրաժեշտ է իրականացնել համակարգի կառավարման շարունակական բարելավում, այն է՝

1) կատարողականի հիման վրա հիմնված ֆինանսավորում և աշխատանքի խրախուսական վարձատրության կիրառում,

2) ընտանեկան բժիշկների համար՝ ստացած մասնագիտական գիտելիքների կիրառման համար անհրաժեշտ, բարենպաստ պայմանների ապահովում,

3) ընտանեկան բժշկության անկախ պրակտիկաների համար անհրաժեշտ նախապայմանների ապահովում և անկախ պրակտիկա հիմնող ընտանեկան բժշկներին աջակցության ցուցաբերում:

462. **Շտապ օգնության ծառայության որակի և հասանելիության ապահովում –** Վերջին տարիներին Արարատի մարզի 4 բժշկական կենտրոնների շտապ օգնության ծառայություններին տրամադրվել է տեխնիկական օգնություն յուրաքանչյուր շտապ օգնության ծառայությանը 1-ական ավտոմեքենաներ, իսկ Արտաշատի ԲԿ-ին նաև 1 ռեանիմոբիլ, այնուհետև նաև իրականացվել է շտապ օգնության խմբերի համար մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, սակայն դա դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է լրացուցիչ մեքենաներ, բուժսարքավորումներ և համապատասխան շենքային պայմաններ: Ոլորտում էական բարելավվումներ ապահովելու, շտապ բուժօգնության և սպասարկման որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

1) Մարզի տարածաշրջանային 4 շտապ բուժօգնության ժառայությունները (ք Արտաշատ Մասիս, Վեդի և ք. Արարատ), ներառել 1 միասնական շտապ հաղորդման կապի համակարգում: Տարածաշրջանների շտապ բուժօգնության ենթակայանների վերազինում անհրաժեշտ ժամանակակից բժշկական սարքավորումներով և ևս 8 ավտոմեքենաներով ապահովվել

2) Բոլոր գյուղական առողջության պահպանման կենտրոնների հագեցում սանիտարական տրանսպորտային միջոցներով

3) Գյուղական առողջության կենտրոնների բժշկների և բուժակմանկաբարձական կետերի բուժքույրերի կրթում /շտապ օգնության ցուցաբերման հիմունքներ/

4) Շտապ օգնության ծառայության կառավարման բարելավում, ծառայության նոր ֆինանսավորման մեխանիզմների ներդրում՝ գործակցի կիրառմամբ /հաշվի առնելով միջհամայնքային հեռավորությունը և ճանապարհների վիճակը/:

5) Շտապ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններում բարձրորակ բժշկական կադրերի ապահովում՝ պարբերաբար, շարունակական վերապատրաստման դասընթացերի կազմակերպում (ընդգրկել հիմնականոեում առաջնային օղակի նեղ մասնագետներին): Վերապատրաստման դասընթացները կազմակերպել ՀՀ պետական բյուջեի միջոցնել:ով:

463. **Հիվանդանոցային և մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման որակի ու հասանելիության ապահովում -** Մարզի տարածքում գործող հիվանդանոցները, բացի Արարատ քաղաքի հիվանդանոցի, խիստ կարիք ունեն նյութատեխնիկական բազայի վերազինման, այդ առումով առանձնապես վատ վիճակում են գտնվում հիվանդանոցների կազմում գործող թերապևտիկ, վիրաբուժական և մանկական բաժանմունքները:

464. 2015-2018թթ. մարզի առողջապահության ոլորտում, մասնավորապես հիվանդանոցային և մասնագիտացված բուժօգնության ծառայության մասով անհրաժեշտ է.

1) Բարելավվել հիվանդանոցային և դիսպանսերային բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերող ընկերությունների նյութատեխնիկական բազան, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի <<Մարզային առողջապահական համակարգի արդիականացում>> վարկային ծրագրում չընդգրկված <<Արտաշատի ԲԿ>>, <<Մասիսի ԲԿ>>, <<Վեդու ԲԿ>>, <<Վեդու ծննդատան>>, <<Արմաշի ԱԿ>> ՓԲԸ-ների շենքերի հիմնանորոգման խնդիր), Հիվանդանոցային ծառայությունները ծախսատար են և միայն պետական բյուջեի հաշվին վերջինիս արդիականացումը անհնարին է, ուստի այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ներգրավել ինչպես միջազգային կազմակերպությունների միջոցները, այնպես էլ մարզի առկա ֆինանսական ներուժը:

2) Հիվանդանոցային ծառայության ոլորտում արդյունավետ կադրային քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրեր՝ կարճաժամկետ ծրագրերի շրջանակներում բժշկական կադրերի ուսուցումը պետք է ուղղված լինի հրատապ պահանջարկ ունեցող մասնագետների համալրմանը, իսկ երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում պետք է մասնագիտացվեն այն երիտասարդ բժշկները, որոնք կնպաստեն մարզում նոր բժշկական տեխնոլոգիաներով ծառայությունների ներդրման գործընթացին:

3) Հիվանդանոցային բժշկական օգնությունն և սպասարկումն որակյալ և մատչելի դարձնելու գործընթացում խիստ կարևոր է համակարգի կառավարման բարելավմանն ուղղված բարեփոխումների դերը: Անհրաժեշտ է ժամանակին համահունչ և մարզում պահանջարկ ունեցող բուժ ծառայությունների ներդրում, ոլորտի աշխատողների վարձատրության կարգի վերանայում, վարձատրության նոր մոդելի ներդրում, որը հիմնված կլինի մասնագետների որակավորման և կատարողական ցուցանիշների վրա:

4) Մարզում հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ միջոցառումների, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման գործընթացի արդիականացում, մասնավորապես՝ իմունոկանխարգելման գործընթացի խթանում (նյութատեխնիկական կադրային ռեսուրսներով ապահովվածության բարելավում):

5) Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման համակարգերի ներքին ցանցի հրատապ վերանորոգում, ինչպես նաև խմելու ջրի վարակազերծման գործընթացի նկատմամբ մոնիտորինգային գործընթացի արդիականացում: Այս առումով աղիքային վարակիչ հիվանդությունների առաջացումն ու տարածումը կանխելու նպատակով անհարժեշտ է բարելավել խմելու ջրի գործոնով պայմանավորված գյուղական բնակավայրերի ներքին ցանցերի քայքայված վիճակը:

6) Առողջապահական համակարգի ֆինանասական հոսքերի նպատակաուղղված և ռացիոնալ օգտագործում: Անցած տարիների ընթացքում միշտ էլ ոլորտն առանձնացել է ինչպես ֆինանսական միջոցների սղությամբ՝ հատկապես հիվանդանոցային ծառայությունը, այնպես էլ բնագավառում ստվերային երևույթների և կոռուպցիոն ռիսկերի առկայությամբ, հետևաբար այս գործոնը բնագավառի արդյունավետ կառավարման գործընթացում մեծ դեր է կատարում: Ֆինանասական միջոցների նպատակաուղղված և ռացիոնալ օգտագործման համար անհրաժեշտ է.

ա) ապահովել հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մատուցված ծառայությունների ֆինանսավորման ծավալների ավելացումը, որը հիմնված կլինի ֆինանսական հոսքերի բազմաձևության սկզբունքի շարունակական ներդրման վրա և կուղղվի հիմնականում բուժանձնակազմի խրախուսմամբ վարձատրման գործընթացի իրականացմանը,

բ) իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումներ,

գ) իրականացնել առողջապահության բնագավառի արդյունքների գնահատում (մոնիթորինգ), այն է՝ քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներգրավել բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների մշտադիտարկման, ծառայությունների գնահատման արդյունքների վերլուծության և հրապարակման գործառույթներում:

465. Արարատի մարզի առողջապահության ոլորտի 2015-2018թթ. ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 5.4-ում, իսկ առողջապահական հիմնարկների անհրաժեշտ սարքավորումները՝ հավելված 5.4.1-ում:

5.5 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5.5.1Սոցիալական պաշտպանության ոլորտի իրավիճակի վերլուծություն

466. Արարատի մարզում գործում են.

1)Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ՝ (մարզպետարանի աշխատակազմում ՝ 3 և Արարատում՝ քաղաքապետարանի բաժին) - 4

2)Սոցիալական ապահովության պետական ծառայության (տարածքային բաժիններ - 3

3) ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության՝ գործակալության Արարատի մարզային բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովներ (ԲՍՓՀ) - 2

4)Հայաստանի Հանրապետության զբաղվածության պետական գործակալության՝ մարզային և տարածքային կենտրոններ - 4

5)ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործող Նոր-Խարբերդի մասնագիտացված մանկատուն - 1

6)Հաշմանդամ երեխաների առողջավերականգնողական կենտրոն - 1

7)<<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպություն - 1

467. Սոցիալական ոլորտում պետական քաղաքականության նպատակը հասարակության անդամների բարեկեցության բարձրացումն է արդյունավետ կենսապայմանների շարունակական բարելավման, մարդու իրավունքների և ազատությունների տնտեսական, սոցիալական, իրավական պաշտպանության միջոցով: Հասարակական կյանքում սոցիալական բնագավառը էական դեր ունի մարդկանց կենսագործունեության պայմանների ապահովման, կենսական պահանջմունքների գնահատման և բավարարման գործում: Վերջին տարիներին սոցիալական ապահովության բնագավառի զարգացումը Հայաստանի համար կարևորվել է նաև աղքատության հաղթահարման տեսանկյունից: Աղքատությունը որպես բազմաչափ երևույթ, պայմանավորվում է ոչ միայն բնակչության եկամուտների, այլև սպառման և ծախսերի ցածր մակարդակով: Աղքատության մակարդակի վրա էական ազդեցու¬թյուն ունեն բազմաթիվ գործոններ (մասնավորապես՝ բնակչության կրթություն ստանալու, առողջության բավարար մակարդակ ապահովելու, երկրի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու սահմանափակ հնարավորությունները, տարբեր սոցիալական և այլ ռիսկերի նկատմամբ պաշտպանվածության ցածր աստիճանը և այլն): Հեռանկարայինյ զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀԶԾ) փաստում է, որ մեր երկրում աղքատության հաղթահարումը հնարավոր է մարդկանց ոչ միայն կենսաբանական (սնունդ, բնակարանի առկայություն, ջրի, էլեկտրաէներգիայի սպառում և այլն), սոցիալական (առողջություն, կրթություն, աշխատանք, նվազագույն տեղեկացվածություն և այլն) այլև հոգևոր (կարդալու, մշակութային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորություն) պահանջմունքների համակցված բավարարման ճանապարհով:

468. Ծրագրի հիմքում դրված են մի շարք գաղափարական հիմնադրույթներ (մասնավորապես՝ հավատարիմ լինելը ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին, եկամուտների արդար վերաբաշխման ապահովումը և աղքատության հաղթահարումը, աշխատունակ աղքատներին սեփական գործ հիմնելուն, եկամուտների ավելացմանը և սեփական աշխատանքով աղքատությունը հաղթահարելու հնարավորությունների ընդլայնումը, բնակչությանը՝ հատկապես աղքատ ընտանիքների և խոցելի խմբերի սոցիալական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը նվազագույն կենսական պայմանների երաշխավորությամբ և աղքատանալու վտանգից ապահովագրման միջոցով և այլն), որոնք երաշխիք են հանդիսանում մինչև 2025թ. վերացնել աղքատությունը:

469. Հիմնվելով այդ տրամաբանության վրա, նշենք, որ Արարատի մարզի բնակչության աղքատության հաղթահարման և բարեկեցության բարելավման կարևոր պայմաններից է եղել մարզի սոցիալական բնագավառների՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունն ու զարգացումը:

470. Վերջին տարիների ուսումնասիրությունները և աղքատության վերլուծության տվյալները փաստում են, որ աղքատ են բնակչության հետևյալ սոցիալական խմբերը.

1) Բազմանդամ, հատկապես բազմազավակ ընտանիքների անդամները
2) Գործազուրկները և ցածր աշխատավարձով աշխատողները (ներառյալ

մշակույթի և արվեստի աշխատողները)

3) Փախստականները և հետբախումային խմբերը, հատկապես հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողները
4) Միայնակ կենսաթոշակառուների և հաշմանդամների այն մասը, որոնք բացի կենսաթոշակային ապահովումից, եկամտի այլ աղբյուրներ չունեն
5) Չաշխատող երիտասարդ ընտանիքները (այդ թվում՝ ամուսնալուծված, միայնակ մայրերի և ծնողազուրկ):

471. Աղքատությունը իր անմիջական ազդեցություն է ունենում բնակչության ոչ միայն ավանդաբար կարիքավոր խմբերի (ծերեր, հաշմանդամներ, երեխաներ), այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես բյուջետային հիմնարկներում (կրթության և մշակույթի ոլորտներում զբաղված) և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:

472. **Աղքատության պատկերը տարբեր է նաև ըստ բնակավայրերի -** 2008-2012թթ.-ին աղքատության մակարդակի աճը քաղաքային բնակավայրերում մի փոքր ավելի արագ էր ընթանում, քան գյուղական բնակավայրերում (4.9 տոկոսային կետ՝ 4.6 տոկոսային կետի դիմաց) (Աղյուսակ 5.4.1): Մայրաքաղաք Երևանում աղքատության մակարդակն համեմատաբար ցածր է երկրում (25.6%) ըստ տարածաշրջանների և այն 1.6 անգամ ցածր է, քան Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում: 2008թ.-ի համեմատ աղքատության աճը 2012թ.-ին Երևանում կազմել է 5.5 տոկոսային կետ, Երևանից դուրս, այլ քաղաքային բնակավայրերում՝4.4 տոկոսային կետ: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (64.6%) քաղաքաբնակներ են:

473. 2012թ.-ին Երևանում գրանցվել են շատ աղքատների մակարդակի ամենացածր, իսկ Երևանից դուրս այլ քաղաքներում՝ ամենաբարձր ցուցանիշները (10.5% և 18.3%, համապատասխանաբար):

474. Երբ բնակչության ծայրահեղ աղքատությունը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, ծայրահեղ աղքատների մեծ մասը (73%) քաղաքաբնակներ են: Նման ցուցանիշները ցույց են տալիս, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Սակայն, հարկ է նշել, որ գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված են գյուղատնտեսական գործունեությամբ, իսկ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված է նրանց միայն շատ չնչին մասը: Մինչդեռ, զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական հատվածում, ըստ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված մի շարք ուսումնասիրությունների հիման վրա ստացված փաստացի տվյալների (Ալամ և ուրիշներ, 2005թ.), միջին հաշվով առավել եկամտաբեր է, քան ցանկացած տեսակի գյուղատնտեսական գործունեություն և կարող է լինել գյուղաբնակ աղքատների համար եկամուտների ավելացման, և հետևաբար, գյուղական աղքատության կրճատումը պայմանավորող հիմնական գործոն:

475. **Աղքատությունը ՀՀ մարզերում և ք. Երևանում:** Հայաստանն ըստ վարչական բաժանման ներառում է 10 մարզ և ք.Երևանը: Աղյուսակ 3.4-ում ներկայացված են

աղքատության հիմնական ցուցանիշները 2012թ. և աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2012թթ.՝ ըստ մարզերի և ք.Երևանի: 2008-2012թթ. ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններն ապահովում են մարզային և ք.Երևանի կտրվածքով նվազագույն ներկայացուցչականություն: Քանի որ աղքատության մակարդակի ցուցանիշներն ունեն նվազագույն ներկայացուցչականություն, ապա դրանք պետք է դիտարկվեն հաշվի առնելով ստանդարտ սխալները և վստահության միջակայքը:

476. 2012թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի և ք.Երևանի՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ տատանվում է: Միջին հանրապետականից բարձր են ՀՀ Շիրակի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, և Արմավիրի մարզերի ցուցանիշները: ՀՀ Շիրակի մարզը իր բարձր աշխարհագրական դիրքով և 1988թ. ավերիչ երկրաշարժից առավել տուժած բնակավայրերով, շարունակում է մնալ ՀՀ ամենաաղքատ տարածաշրջանը, որտեղ աղքատության գծից ցածր է բնակչության 46.0%-ը:

477. 2008-2012թթ. աղքատության մակարդակի ցուցանիշներն աճել են բոլոր մարզերում և ք.Երևանում, բացի Վայոց Ձոր մարզի, այդուհանդերձ, ավելի արագ տեմպերով այդ ցուցանիշի աճ գրանցվել է Արմավիրի մարզում՝ 1.4 անգամ, Սյունիքում և ք. Երևանում՝ 1.3 անգամ, Տավուշում՝ 1.2 անգամ:

478. Միևնույն ժամանակաշրջանում աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը ք. Երևանում և բոլոր մարզերում՝ բացի Սյունիք և Վայոց Ձոր մարզերի, սակայն այն առավել նկատելի է Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում և ք.Երևանում:

Աղյուսակ 5.16.Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2012թթ. {95% վստահության միջակայք ձևավոր փակագծերով}

(տոկոսներով)

	2008		2012			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր առկա բնակչության մեջ
ք.Երևան	1.1 {0.3;1.9}	20.1 {17.3;22.9}	2.2 {0.1;4.3}	25.6 {22.4;28.7}	26.8	33.9
Արագածոտն	0.5 {-0.3;1.3}	20.3 {13.9;26.7}	0.9 {-0.4;2.1}	21.2 {14.4;28.0}	2.2	3.4
Արարատ	**1.6 {0.2;3.0}**	**31.3 {25.5;37.1}**	**2.1 {-0.2;4.3}**	**34.6 {28.5;40.7**	**8.8**	**8.2**
Արմավիր	0.7 {0.1;1.3}	24.5 {19.7;29.3}	3.4 {0.4;6.3}	34.3 {29.1;39.5}	9.4	8.9
Գեղարքունիք	0.4 {0.2;0.6}	32 {25.8;38.2}	1.4 {-0.8;3.5}	35.5 {31.0;40.1}	7.8	7.1
Լոռի	2.8 {1.2;4.4}	34.2 {29.2;39.2}	3.4 {1.9;4.9}	38.7 {33.0;44.5}	11.6	9.7

Կոտայք	2.1 {0.7;3.5}	39.5 {34.7;44.3}	5.7 {1.1;10.4}	42.5 {35.9;49.0}	13.1	10.0
Շիրակ	4.6 {2.0;7.2}	42.4 {37.2;47.6}	5.5 {2.6; 8.4}	46.0 {42.7;49.3}	12.2	8.5
Սյունիք	1.3 {0.5;2.1}	20.3 {14.3;26.3}	0.7 {-0.4;1.7}	25.6 {20.8;30.3}	3.2	4.1
Վայոց Ձոր	1.9 {0.1;3.7}	21.1 {14.9;27.3}	0.5 {-0.3; 1.3}	20.7 {13.3;28.1}	1.2	1.8
Տավուշ	1.7 {0.3;3.1}	23.2 {18.0;28.4}	1.9 {-0.5;4.2}	27.5 {21.4;33.6}	3.7	4.4
Ընդամենը	**1.6** **{1.2;2.0}**	**27.6** **{26.0;29.2}**	**2.8** **{1.6;4.1}**	**32.4** **{30.3;34.4}**	**100**	**100**

Աղբյուրը. *2008 և 2012թ. ՏՏԿԱՀ*

479. Աղքատությունը անմիջական ազդեցություն է ունեցել բնակչության ոչ միայն ավանդաբար կարիքավոր խմբերի (ծերեր, հաշմանդամներ, երեխաներ), այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես բյուջետային հիմնարկներում (կրթության և մշակույթի ոլորտներում զբաղված) և արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:

480. ՀԶԾ-ի համաձայն առաջիկա տարիներին կշարունակվեն սոցիալական ապահովության բնագավառի հետագա կատարելագործման և դրամական փոխատվությունների բարձրացման միջոցառումները:

481. Այս առումով Արարատի մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1)հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,

2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տնային պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,

3) փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,

4) խնամատար ինստիտուտի կայացումը,

5) սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա ընտանեկան կենտրոնների հիմնում (որոնք կզբաղվեն կյանքի դժվարին պայմաններում հայտնված անապահով, բազմազավակ, միայնակ մոր կարգավիճակով ընտանիքների, որբ և մուրացիկ երեխաների խնդիրներով, նաև ծնողական հմտությունների ուսուցմամբ),

6) գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը

7) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

482. Սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա

նպատակն համարվել է սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը, որի համար իրականացվել են՝

1) Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում, որի համար մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է հրատարակվել և տարածվել բնակչության լայն շերտերի մեջ:

2) Կազմակերպվել է սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումներ: Ծրագրերի իրականացման արդյունավետության հիմնական գործոնը եղել է կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացումը: Կարևորվվել է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը, հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

3) սոցիալական աշխատանքի ծառայությունների հիմքի վրա, հիմնվել է ընտանեկան կենտրոններ՝ Մասիս քաղաքում 2014 թ. հիմնվել է շուրջ 70 ծերերի խնամքի կենտրոն, բացի այդ 12 ծերերի խնամքը իրականացվում է տնային պայմաններում:

4) ՍԾՏՄ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով բարելավվել և արդիականացվել մարզի բոլոր՝ 4 ինտեգրված է սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների նյութատեխնիկական պայմանները, ինչպես նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան

5) Բարելավվել է սոցիալական ծառայությունների համակարգի կառավարմումը՝ կարևորվվել են՝ ՀԿ-ների, ՏԻՄ-երի և ՍԾՏՄ-ների միջև տեղեկատվության փոխանակումը, հստակեցվել է մարզում իրականացվող սոցիալական ծրա•ների համակարգման մեխանիզմները: Աշխատանքների արդյունավետ իարականացման համար կարևորվում է պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը, սոցիալապես խոցելի բնակչության տվյալների շտեմարանի ստեղծումը:

483. Համաձայն ՀԶԾ-ի սոցիալական պաշտպանությունը, ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման, պետական և ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունն է, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը: Ըստ մեթոդաբանության դասակարգվում են հետևյալ սոցիալական ռիսկի խմբերը.

1) վատառողջություն (ընդգրկում է ժամանակավոր անաշխատունակության) հիվանդության հետ կապված դրամական օժանդակությունը՝ բացի հաշմանդամությունից),

2) հաշմանդամություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված հաշմանդամների՝ տնտեսական և սոցիալական կյանքում ներգրավվելու դժվարությունների հետ),

3) ծերություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական ոչ առողջապահական օժանդակությունը՝ կապված ծերության հետ),

4) վերապրում /հարազատին կորցրածներ (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված ընտանիքի անդամի մահվան հետ),

5) ընտանիք /երեխաներ (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական, առողջապահական օժանդակությունը՝ կապված հղիության, ծննդաբերության, որդեգրման, երեխաներին մեծացնելու և ընտանիքների ու երեխաների սոցիալական օժանդակության և պաշտպանության հետ),

6) գործազրկություն (ընդգրկում է դրամական ու ոչ դրամական օժանդակությունը՝ կապված գործազրկության հետ),

7) բնակարանային ապահովություն (ընդգրկում է պետական հոգածության տարբեր մեխանիզմներ՝ ուղղված տնային տնտեսությունների կամ անհատների կողմից բնակարանային խնդիրների լուծման օժանդակությանը),

484. Հիշյալ բոլոր խմբերի համար սոցիալական ապահովության պետական համակարգի գործառույթները հստակորեն սահմանված են: Այսպես՝

1) Պետական սոցիալական աջակցության ծրագրերը, ներառյալ՝ ընտանեկան և սոցիալական նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները և դրամական օգնությունները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները:

2) Սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնողական ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրա•ների տվյալներից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր:

3) Պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստներից:

4) Զբաղվածության ծրագրեր՝ գործազուրկների վերապատրաստման, զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրեր:

5) Բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:

485. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և

նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ:

486. Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստումը մասնավորապես կարևորում է սոցիալական ծառայությունների մասնագետների կողմից կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար խնամողների վերապատրաստումը:

487. Մարզի ՍԾՏՄ-ների աշխատանքների շարունակական բարելավմանն են միտված՝

1) ՍԾՏՄ-ների նյութատեխնիկական պայմանների բարելավումը.

2) սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը, որտեղ կարևորվում է՝ ՍԾՏՄ-ների, ՏԻՄ-երի և ՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը,

3) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը.

4) մասնագետ կադրերի վերապատրաստումը:

488. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող պետական միջոցառումները ունեն համապետական բնույթ և իրականացվում են Հայաստանի Հանրապետության հավասարապես բոլոր մարզերում: 2015-2018թթ ընթացքում սոցիալական ոլորտում իրականացվելու են

1)«Կենսաթոշակային ապահովության ծրագիր»

2)«Ժամանակավոր անաշխատունակության (մայրության) դեպքում աջակցության ծրագիր»

3)«Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճարների տրամադրման ծրագիր»

4)«Զբաղվածության ծրագիր»

5)«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման ծրագիր»

6)«Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագիր»

7)«Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիր»

8)«Պատերազմների մասնակիցներին և նրանց ընտանիքներին աջակցության ծրագիր»

9)«Ընտանիքին, կանանցևերեխաներին աջակցության ծրագիր»

10)«Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց սոցիալականսպասարկմանևխնամքիծառայություններ»

11) «Հաշմանդամներին աջակցության ծրագիր»:

489. Հարկ է նշել, որ մարզերի տնտեսական զարգացման անհամաչափությունների զսպման և հետ մնացող տարածքների առաջանցիկ զարգացման նպատակներից ելնելով, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող զբաղվածության կարգավորման 2014թ. ամենամյա ծրագրում նախատեսվել են կոնկրետ ծրագրեր, ներառյալ Հայաստանում առաջին անգամ փորձարկվող ծրագրեր: 2014թ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց <<Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի տեղաբաշխման կարգն ու չափանիշներն՝ ըստ մարզերի, Երևան քաղաքի և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի>>: Այս որոշմամբ, ինչպես նաև չափանիշների կշիռները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից հաստատվելուց հետո, կկատարվի 2015թ. Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի բաշխումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի աշխատաշուկայի իրավիճակը:

490. Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» N 442-Ն որոշումը, ստորև ներկայացվում է տեղեկատվություն Արարատի մարզում 2015-2018թթ. ժամակահատվածում «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» շրջանակում իրականացվելիք միջոցառումների շահառուների թվաքանակի և նախատեսվող ֆինանսական միջոցների վերաբերյալ՝ աղյուսակ 5.17

Աղյուսակ 5.17

	2015թ.		2016թ.		2017թ.		2018թ.	
	Ընտանիք	գումար	Ընտանիք	գումար	Ընտանիք	գումար	Ընտանիք	գումար
Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված պաստներ՝ միջին ամսականթիվը	8335	3,133,704,0	8335	3,133,704,0	8335	3,133,704,0	8335	3,133,704,0
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ՝ միջին ամսականթիվը	720		720		720		720	

491. **Զբաղվածության ոլորտի իրավիճակի վերլուծություն**: Գործազրկությունը աղքատության ամենակարևոր պատճառներից է: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, երեք գործազուրկներից երկուսը ենթակա են աղքատության ռիսկի: Սակայն, նույնիսկ զարգացած երկրների համար միայն զբաղվածության ապահովումը դեռ հիմնախնդիրների լուծումը չէ: Զբաղվածության և աղքատության մակարդակների համեմատությունը վկայում է, որ աղքատությունը կարող է տարածված լինել նույնիսկ զբաղվածության բարձր մակարդակի դեպքում: Այս

առումով կարևորվում է նաև ակտիվ սոցիալական այն միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են աշխատուժի վերարտադրմանը, նրա որակավորման բարձրացմանը և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխանող պայմանների ստեղծմանը:

492. Վերջին տարիներին շարունակվել են զբաղվածության ոլորտի ակտիվ քաղաքականության իրականացումը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի իրականացում՝ հիմքում դնելով տարբեր նպատակային հետազոտությունների արդյունքները, արդյունավետ իրականացված աշխատանքների փորձը: Օրենսդրական փոփոխությունների հետևանքով շարունակվել են աշխատաշուկայի կառուցվածքի որակական և քանակական փոփոխությունները, գործազրկության կառուցվածքը, արդյունքու փաստացի հաշվառման մեջ մնացին հիմնականում ակտիվ աշխատանք փնտրողները:

493. Զբաղվածության ոլորտի գերակայություններ են.

1) աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացում,
2) աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմում,
3) երիտասարդների (այդ թվում գյուղական երիտասարդության) զբաղվածության ապահովման աջակցություն,
4) աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապեսէ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի ծավալների մեծացում,
5) սոցիալական գործընկերության ամրապնդում և զարգացում:

494. Աշխատանքի շուկան՝ դա առաջարկի և պահանջարկի հասարակական հարաբերությունների համակարգն է, որի միջոցով կարգավորվում են գործատուների և վարձու աշխատողների հարաբերությունները, այդ թվում, աշխատանքի գինը և աշխատանքային պայմանները, աշխատուժի և աշխատատեղերի թվաքանակի հարաբերությունը: Աշխատանքի շուկայի ձևավորման վրա Արարատի մարզում ազդեցություն են գործել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ վատթարացող ժողովրդագրական իրավիճակը, պատերազմի, շրջափակման հետևանքով բնակչության միգրացիան, այդ թվում, փախստականների ներգաղթը և այնուհետև, Հայաստանից բնակչության արտագաղթը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև զանգվածային սեփականաշնորհումը, որոնք հանգեցրին զբաղվածության ճյուղային կառուցվածքի թվացյալ արդիականացման, որի արդյունքում, մի կողմից, ավելացավ զբաղվածությունը ծառայությունների մատուցման ոլորտում, իսկ մյուս կողմից, աշխատուժը վերաբաշխվեց արդյունաբերության և շինարարության ոլորտներից դեպի գյուղատնտեսություն:

495. Սեփականաշնորհված ձեռնարկությունների ցածր տեխնոլոգիական վերազինման պայմաններում դրանց զգալի մասը անգործության մատնվեց՝ առաջացնելով աշխատանքի թաքնված շուկա: Շուկայական նոր պայմաններին համապատասխանող աշխատանքային օրենսդրության բացակայությունը, մասնավորապես, գործատուների, գործազուրկների և հիմնականում, մասնավոր

հատվածում զբաղվածների իրավական հարաբերությունները կարգավորված չեն, ներառյալ աշտանքի պաշտպանության, աշխատավարձի և այլ հարցեր:

496. Զբաղվածության պետական քաղաքականության նպատակը.

1) կայուն զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է, որն իրականացվում է տնտեսության պետական կարգավորման և բնակչության սոցիալական պաշտպանության միջոցով.

2) Որպեստնտեսական քաղաքականության բաղադրիչի, անհրաժեշտ քանակով և որակո վաշխատուժի պահանջարկի բավարարման և առկաաշխատուժի առաջարկի արդյունավետ իրացմանապահովումն է, որը պետք է դիտվի տնտեսական կայուն զարգացման հիմնական պայմաններից մեկը.

3) որպես սոցիալական պաշտպանության քաղաքականության բաղադրիչի, արժանապատիվ աշխատանքի միջազգայնորեն ընդունված չափանիշների երաշխավորումն ու պայմանների հետեւողական ապահովումն է, ինչպես նաեւ աշխատանք փնտրող անձի աշխատաշուկայում անմրցունակության որոշարկումն ու արդյունավետ ներառման ապահովումն է, որը պետք է դիտարկվի երկրում սոցիալական լարվածության թուլացման հիմնական պայմաններից մեկը.

4) միտված է ամրապնդելու սոցիալական համերաշխությունը, զարգացնելու զբաղվածության ոլորտում սոցիալական գործընկերությունը՝ նոր աշխատատեղերի ստեղծման, թափուր աշխատատեղերի համալրման, աշխատանքայի նպայմանների բարելավման եւ աշխատանքի վարձատրության համակարգերի կատարելագործման միջոցով:

497. Զբաղվածության պետական քաղաքականությունն իրականացվում է ակտիվ քաղաքականության միջոցով:

498. Զբաղվածության տարածքային կենտրոնների հիմնական խնդիրն աշխատանք փնտրող անձի կայուն զբաղվածության ապահովմանը միտված զբաղվածության պետական ծրագրեր իիրականացման և աշխատուժ իպահանջարկի բավարարման և առկաաշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման ապահովումն է:

499. Հանրապետության բոլոր մարզերում (այդ թվում Արարատի մարզում) զբաղվածության տարածքային կենտրոնների միջոցով իրականացվում են հետևյալ ծրագրերը.

1) «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում».

2) «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում».

3) «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում».

4)«Ձեռքբերածմասնագիտությամբմասնագիտականաշխատանքայինփորձձեռքբերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում».

5) «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում».

6) «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում».

7) «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում».

8) «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում»:

500. Համաձայն վիճակագրական տվյալների կարող ենք փաստել թե ինչպիսի հարաբերակցություն կա չզբաղված աշխատանք փնտրող քաղաքացիների և գործազուրկների թվաքանակների միջև.

501. Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է գործազրկության մակարդակը և զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների թվաքանակը:.

502. Արարատի մարզում 01.01.2014թ. դրությամբ

1) Աշխատանք փնտրողների թիվը կազմում է 3092 մարդ,
այդ թվում՝
2) Չզբաղված անձինք 2669 մարդ
3) Գործազուրկներ 2570 մարդ

503. Մարզի տարածքում գրանցված գործազուրկների ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակներ և միջին տարիք (30-50 տարեկան) ունեցողներն են: Գործազրկությունը սերտորեն կապված է աղքատության հետ: Թվական տվյալներով այսօր շատ աղքատ է յուրաքանչյուր հինգերորդը: Աղքատ է զբաղված բնակչության գրեթե չորսից մեկը, որը հետևանք է ցածր վարձատրության (հատկապես մշակույթի և արվեստի բնագավառների):

504. Գործազրկությունը լրջագույն խնդիր է Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես նաև Արարատի մարզում. Այն խիստ արտահայտված է հատկապես՝ կանանց շրջանում և իր բացասական ազդեցությունն է ունենում բնակչության

կենսագործունեության վրա: Ակնառու տնտեսական հետևանքներից (անհատի, ընտանիքի եկամտի կորուստ) բացի, այն այսօր ունի մի շարք սոցիալական հետևանքներ, մանավանդ եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին:

505. Այսպես.

1) մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի,

2) եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում,

3) աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների տարբեր ձևերի դրսևորման (հարբեցողություն և այլն) պատճառ են դառնում:

506. Ուրախությամբ կարելի է նշել, որ 2011-2013 թվականների ընթացքում տարիներին աշխատանքի տեղավորման ցուցանիշների ավելացման շնորհիվ նկատելի է գործազուրկների թվաքանակի նվազում:

507. Վերջին տարիներին մարզի ազգաբնակչության զբաղվածության ապահովման խնդրի լուծմանն էր ուղղված պետական բյուջեի միջոցներով իրականացվող <<Վարձատրվող հասարակաակն աշխատանքներ>> ծրագրերը: Ծրագրերի իրականացման համար ՀՀ կառավարությունը մարզին 2011թ. համար հատկացրել էր 58մլն 300հազ. դրամ: Մարզի 12 համայնքներում իրականացվել են <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրեր, ընդգրկվել են շուրջ 240 մարդ: Նշված ծրագրերի իրականացման նպատակն է եղել հնարավորինս բարձրացնել զբաղվածության արդյունավետությունը, մեծացնել գործազուրկների համար աշխատանքի հնարավորությունները:

508. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բնագավառը կատարելագործելու նպատակով մարզի 4 սոցիալական ծառայությունների տարածքային մարմինները ստացել են համակարգիչներ և ինտերնետ կապից օգտվելու հնարավորություն:

509. 2013թ. ընթացքում մարզում հիմավորապես ներդրվել է << Մեկ պատուհանի սկզբունքով>> ծառայությունների մատուցման համակարգը, որը հնարավոր եղավ իրականացնել մարզի բոլոր սոցիալական ծառայությունները համապատասխան շենքային պայմաններով և անհրաժեշտ սարքավորումներով ապահովված լինելու պարագայում:

510. Մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից իրականացվում են գործազրկության մակարդակի նվազեցմանն ուղղված և զբաղվածության խթանմանը նպաստող ծրագրեր: Աշխատանք փնտրողների մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպումը, տնտեսության տարբեր ոլորտների գործատուների հետ համագործակցությունը և զբաղվածությանը խթանող մի շարք ակտիվ ծրագրերը հնարավորություն են տալիս հասնել որոշակի արդյունքների:

511. Հաշխարհային տնտեսական ճգնաժամը ազդեց ոչ միայն ավանդաբար ռիսկային համարվող խմբերի, այլև աշխատունակ զանգվածի վրա, մասնավորապես արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների վրա:

512. Գործազուրկների և աշխատանք փնտրողների հարաբերակցությունը հետևյալն է.

Աղյուսակ 5.18. Աշխատանք փնտրողներ, աշխատանք փնտրող չզբաղվածներ և գործազուրկներ

Ցուցանիշներ	2011թ. դեկտեմբերի 31 ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31 ի դրությամբ	2013թ դեկտեմբրի 31-ի դրությամբ
Աշխատանք փնտրողներ	3821	3489	3092
Աշխատանք փնտրող չզբաղված	3169	2972	2669
Գործազուրկներ	3112	2881	2570
Գ/մակարդակը	3.27	3.0	2.82

Աղբյուրը՝ Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն Արտաշատի զբաղվածության տարածքային կենտրոն

513. Աշխատանք փնտրողների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 397–ով, աշխատանք փնտրող չզբաղված քաղաքացիների թիվը նվազել է 303-ով, գործազուրկների թիվը նվազել է 311-ով, իսկ գործազրկության մակարդակը 0.18%-ով, որը բացատրվում է օրենսդրական դաշտի փոփոխությամբ:

Աղյուսակ 5.19. Գործազրկության կառուցվածքը

	Ցուցանիշներ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ըստ կրթական ցենզի			
1	հետբուհական	0	0	1
2	բարձրագույն	234	262	283
3	թերի բարձրագույն	2	2	0
4	միջին մասնագիտական	643	537	495
5	նախնական մասնագիտական (արհեստակագործական)	308	259	230
6	Ընդ. միջնակարգ	1684	1587	1371
7	հատուկ ընդհանուր	0	0	0
8	հիմնական ընդհանուր	226	226	186

9	տարրական	15	8	4
	Ըստ փարիքի			
1	16-18	24	20	9
2	19-24	250	277	275
3	25-30	403	378	357
4	31-34	326	332	315
5	35-45	783	734	652
6	46-54	863	695	554
7	55 եւ բարձր	463	445	408
	Ըստ գործազրկության տևողության			
1	մինչեւ 1 ամիս	103	94	205
2	1-3 ամիս	276	232	205
3	3-6 ամիս	285	312	223
4	7-12 ամիս	717	600	488
5	1-3 տարի	1178	1023	875
6	3 տարի եւ ավելի	553	620	574

Աղբյուրը՝ Զբաղվածության պետական գործակալություն Արտաշատի զբաղվածության տարածքային կենտրոն

514. Աղյուսակ 5.19 տվյալների վերլուծությունը վկայում է, որ մարզում.

1)Ըստ կրթական ցենզի մեծամասնություն է կազմում միջին մասնագիտական կրթությունը

2)Ըստ տարիքայինի մեծ է միջին տարիքի գործազուրկների մասնաբաժինը

3)Ըստ գործազրկության տևողության գերակշռող մասը կազմում է երեք տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողները

515. Ակնառու տնտեսական հետևանքներից բացի, գործազրկությունն ունի մի շարք սոցիալական հետևանքներ, հատկապես եթե խոսքը գնում է երկարատև գործազրկության մասին: Այսպես օրինակ.

1) Մեկից ավելի տարով աշխատանքային գործունեության դադարեցումը հանգեցնում է մասնագիտական հմտությունների կորստի

2) Եկամուտների, գոյության միջոցների բացակայությունը հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնագնահատականի ձևավորման, մեկուսացման և բարոյազրկման պատճառ է դառնում

3) Աշխատանք փնտրելու անհաջող փորձերը սթրեսների, վարքագծի շեղումների և շեղվող վարքի տարբեր ձևերի դրսևորման պատճառ են դառնում:

516. Արարատի մարզի զբաղվածության գործակալության տարածքային կենտրոնները.

1.ԱՐՏԱՇԱՏԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ք. Արտաշատ, Իսակով 47բ, հեռ.0235 24 006

2.ՄԱՍԻՍԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ք.Մասիս,Կենտրոնական հրապարակ, հեռ.0236 42 480

3.ՎԵԴԻԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ք. Վեդի,Արարատյան 55, հեռ. 0234 22 706

4.ԱՐԱՐԱՏԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. 0234 44 168



517. **Փախստականներ:** Որպես առանձնահատկություն ունեցող սոցիալապես անապահով առանձին խումբ փախստականները սոցիալական օժանդակության խնդիր ունեն: ՀՀ Արարատի մարզը մեծաթիվ փախստականներ է ընդունել, որոնցից մեծ մասը կրկնակի արտագաղթի են ենթարկվել: Այսպես, նախորդ դարի 90-ական թվականներին փաստված ավելի քան 62 հազար փախստականներից այսօր մարզում

բնակվում են դրանց սոսկ մեկ երրորդը: Նվազումը մասամբ բացատրվում է նաև ինտենսիվ արտագաղթով: Հատկանշական է, որ տարվա ընթացքում փախստականների թիվը փոփոխվում է նաև կապված նրանց սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու փաստի հետ:

518. Փախստականաբնակ են մարզի բոլոր տարածաշրջանները հատկապես Մասիսի տարածաշրջանը:

519. Բռնագաղթին հաջորդող տարիներին մարզում բնակվում էին շուրջ 62000 փախստականներ: Հետագայում ինտեգրման և արտագաղթի արդյունքում մարզում ներկայում բնակվում են փախստական և նախկին փախստականի կարգավիճակ ունցող շուրջ 11160 անձիք:

520. Ներկա իրավիճակը - մարզում փաստացի բնակվում է

1) փախստական՝ 843,
2) քաղաքացիություն ստացած նախկին փախստականներ՝ 10230,
3) բնակարանի կարիքավոր են փախստականի 626 ընտանիքներ:

521. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արարատի մարզում բնակվող փախստականների սոցիալ-տնտեսական վիճակին հատուկ հիմնախնդիրների առանձնահատկությունները կարելի է բմութագրել հետևյալ կերպ՝

1) Բնական վերարտադրության խաթարումներով ու ինտենսիվ <<ծերացող>> համակցություն՝ մարզում փախստականների մոտ տեղաբնակների համեմատ 3-4 անգամ շատ են միայնակ ընտանիքները, հատկապես միայնակ ծերերը, 1.5 անգամ պակաս են երիտասարդ տղամարդիկ, 2-3 անգամ պակաս են 5-14 տարեկան երեխաները:

2) Միգրացիոն մեծ ակտիվությամբ՝ փախստականների միգրացիան 2-3 անգամ բարձր է տեղաբնակներից, որով և բացատրվում է նրանց թվաքանակի նվազումը:

3) Փախստականների ամենաբնութագրական հատկանիշներից մեկը ժամանակավոր կացարաններում ապրող ընտանիքների մեծ տոկոսն է: Մարզում այս պահին բնակարանի կարիք ունեցող հաշվառված փախստական ընտանիքների 54.1%-ը բնակվում է ժամանակավոր կացարաններում, 45.9%-ը վարձով կամ ազգականների մոտ:

4) Տնային գույքի աղքատիկությունը կամ բացակայությունը:

5) Զբաղվածության ցածր մակարդակը: Փախստականների մեջ տեղաբնակների համեմատ 1.7 անգամ քիչ են գործատուները, 2 անգամ քիչ են արտադրության մեջ զբաղվածները, 3 անգամ պակաս են մշտական աշխատանք ունեցողները:

6) Աղքատության ավելի մեծ խորություն: Մարդկային աղքատության (ուսում, առողջություն, ջուր) ցուցանիշը 1.7 անգամ բարձր է, ծայրահեղ աղքատությունը 1.4 անգամ ավելի տարածված:

7) Կանանց առանձնահատուկ վիճակը: Յուրաքանչյուր 10 երիտասարդ կանանցից 2-3-ի պոտենցիալ փեսացուն կամ ամուսինը բացակայում է, այսինքն մեծ թիվ են կազմում կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները:

8) Քաղաքային կենսաձև կրողների բնակություն գյուղական վայրերում:

9) Բարեկամականազգակցական թույլ կապեր:
10) Լեզվական տարբերություններ:
11) Աշխարհընկալման և ծիսասովորութային տարբերություններ:

522. Հայաստանի Հանրապետությունում բնակվող փախստականների և տեղացիների խոցելի խմբերի շրջանում կատարված հատուկ հետազոտությունը՝ ինչպես արձանագրված է ՀԶԾ-ում, փաստել է, որ աղքատության առնավազն երեք տիպերի գծով փախստականներին բնութագրող ցուցանիշները զգալիորեն ավելի վատթար են, քան տեղացիներինը:

523. Փախստականների համար ամենահրատապ լուծում պահանջող խնդիրը բնակարանային հիմնահարցն է, քանի որ այսօր հարյուրավոր փախստական ընտանիքներ բնակվում են անբարեկարգ ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում:

524. Մարզպետարանը լուրջ աշխատանքներ է իրականացրել մարզի ժամանակավոր կացարաններում /հանրակացարան, հյուրանոց և ադմինիստրատիվ շենքեր/ բնակվող փախստականների բնակարանների հարցերը լուծելու ուղղությամբ:

525. 2001-2007թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների միջոցներով փախստական ընտանիքների համար կառուցվել են 147 քոթեջներ և վերակառուցվել 4 բազմաբնակարան շենքեր (103 բնակարանով):

526. ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի «Բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրի տրամադրման միջոցով» ծրագրի շրջանակներում՝ բնակարանի գնման վկայագրեր ստացած շուրջ 200 փախստական ընտանիքներից տրամադրված վկայագրերի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռքբերած ընտանիքների թիվը կազմում է 94:

527. Բնակարանային խնդիրը ամենահրատապ լուծում պահանջող հիմնախնդիր է նաև մարզի զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամների և զինծառայության հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների համար:

528. 2011-2013 թվականների ընթացքում Արարատի մարզպետարան կողմից բավականին լուրջ աշխատանքներ է իրականացրել այդ ուղղությամբ:

529. ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով մարզի համայնքներից պարբերաբար (ամեն տարի) հավաքագրվել է մարզի զոհված (մահացած) կամ հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային հիմնախնդիր ունեցող ընտանիքների փաստաթղթերը: ՀՀ պաշտպանության նախարարության հատուկ հանձնախմբի հետ համատեղ ուսումնասիրվել է հիշյալ բնակարանի կարիքավոր ընտանիքների փաստաթղթերը, կատարվել տնայցեր:

530. 2013 թվականի ընթացքում վերոնշյալ կատեգորիայից բնակարան ձեռք բերելու համար գումար են ստացել 33 ընտանիքներ:

531. **Կենսաթոշակային ապահովություն -** Կենսաթոշակային օրենսդրության միասնական քաղաքականության վերջնական նպատակներն են.

1) կատարած ներդրումներին համապատասխան կենսաթոշակի նշանակումը,

2) սոցիալական ապահովության ոլորտում լարվածության մեղմացումը:

532. Ոլորտում իրականացվող աշխատանքները երկու ուղղություն են նախանշել՝ սերունդների համերաշխության սկզբունքով գործող կենսաթոշակային համակարգի շարունակական կատարելագործում և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում՝ կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրում:

533. Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» N 442-Ն որոշումը, հատկապես կարևորվում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման բազան մեծացնելուն ուղղված ներկայիս գործընթացը: Այս համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել ապահովագրվածների իրավունքների հստակ հաշվառում (յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի չափը, գործատուի և վարձու աշխատողի կողմից կատարված սոցիալական վճարների չափը, ապահովագրական ստաժի տևողությունը և այլն) և կենսաթոշակ նշանակել անհատական հաշվում պահպանվող անհատական հաշվառման տվյալների հիման վրա, ելնելով կենսաթոշակային օրենսդրությունից: Քաղաքացիների անձնական ապահովագրական հաշիվների ներդրման միջոցով ապահովում է կենսաթոշակների նշանակման ապահովագրական սկզբունքների իրականացումը, ապահովագրական բյուջեի հաշվեկշռվածությունը, կարգավորվում է ապահովագրական վճարների հավաքագրման բազայի ընդլայնման հիմնահարցերը, կատարելագործվել է կենսաթոշակների նշանակման գործընթացը, միաժամանակ բացառելով ապահովագրողի և ապահովագրվածի միջամտությունը կենսաթոշակի չափի հաշվարկմանը:

534. Աստիճանաբար որպես կենսաթոշակների հաշվարկման սկզբունք ամրագրվում է աշխատանքային տարիքից կախված տարիքային կենսաթոշակների տարբերակումը, «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով» նախատեսված պահանջներից է՝ որքան շատ աշխատանքային ստաժ, այնքան ավելի բարձր կենսաթոշակ: Ծրագրի վերլուծականը փաստում է, որ 2011-2013թթ. տնտեսական աճի արդյունքներից թերևս ամենաքիչը օգտվել են կենսաթոշակառուները: Կենսաթոշակների բացարձակ ավելացումները, որոնք հիմնականում համընկել են ՀՀ կառավարության ռազմավարությանը, զգալիորեն հետ են մնացել հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերից, որոնք իրենց հերթին զգալիորեն գերազանցել են կանխատեսումները:

535. Կենսաթոշակները Հայաստանում շատ ցածր են և ԱՊՀ երկրների շարքում այս ցուցանիշը ամենացածրերից է: Կենսաթոշակառուների, հատկապես կենսաթոշակառուներից բաղկացած տնային տնտեսությունների թիվը մեծ է ինչպես մարզի գյուղական՝ այնպես էլ քաղաքային համայնքներում և պատահական չէ, որ մարզի ամենացավոտ ժողովրդագրական խնդիրը բնակչության «ծերացումն» է, երբ

մարզի առկա բնակչության 16 տոկոսից ավելին կենսաթոշակառուներ են: Ինչպես Հայաստանի Հանրապետության մյուս մարզերում, այնպես էլ Արարատի մարզում կենսաթոշակառուների թիվը տարեցտարի նվազում է (Աղյուսակ 5.20):

Աղյուսակ 5.20.Կենսաթոշակառուների թիվը ՀՀ Արարատի մարզում

h/h	Տարածաշրջան	2011թ.	2012 թ.	2013թ.
1	Արտաշատ	15.165	15.262	15.465
2	Արարատ	13.786	13.821	14.079
3	Մասիս	11.797	11.792	12.112
	Ընդամենը	40.748	40.875	41.656

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

536. Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին թոշակառուների ընդհանուր թվաքանակի կրճատումը պայմանավորված է նաև կենսաթոշակային տարիքի փուլ առ փուլ բարձրացմամբ՝ տարին 6 ամսով, որի ազդեցությունը զգացվել է մինչև 2011թ., երբ կանայք հասել են 63 տարվա կենսաթոշակային տարիքի:Դրան հակառակ Արարատի մարզում ըստ աղյուսակ 5.4.4-ի կենսաթոշակառուների թվաքանակը աճել է՝2.3 տոկոսով:

537. Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես նաև Արարատի մարզում կենսաթոշակառուների թիվը տարեցտարի նվազում է, սակայն դեռևս շատ ցածր է ցածր կենսաթոշակները, այս պայմաններում, բնականաբար, պահպանվում է վերջիններիս աղքատության ռիսկային վտանգը:

538. Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած Հեռագնա զարգացման ռազմավարական ծրագրի (ՀՌԾ) կանխատեսվում է, որ կենսաթոշակառուների քանակի կրճատման միտումը հնարավորություն կտա պահպանել կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը և հիմնական կենսաթոշակը հասցնել՝

1) առնվազն աղքատության գծին՝ սկսած 2015 թվականից

2) առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի 100 տոկոսին՝ սկսած 2018 թվականից:

539. Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները ընթանալու են ինչպես ներկայիս բաշխողական համակարգի բարեփոխումների, այնպես և նոր կուտակային համակարգի ներդրման ճանապարհով:

540. **Տարեցներ** - Ինչպես ամբողջ աշխարում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ծերությունը՝ միջագայնորեն ընդունված հոգածության և սոցիալական պաշտպանության առարկա է: Այն իր մեջ ընդգրկում է դրամական ու ոչ դրամական՝ առողջապահական, օժանդակություն կապված ծերության հետ: Տարեցների թվի հիմնախնդիրը դիտարկելով կենսաթոշակառուների թվակազմում կարելի է փաստել, որ առկա է ծերացման միտումը: Այս հանգամանքը

պայմանավորված է նաև կենսաթոշակային տարիքի բարձրացմամբ, որոշ տեսակներով կենսաթոշակի անցման դժվարացմամբ, երիտասարդ ընտանիքների արտագաղթով, ծնելիության կտրուկ անկմամբ և այն, որը և հանգեցրեց ամբողջի մեջ տարեց բնակչության չափաբաժնի ավելացմանը:

541. Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ Արարատի մարզում մեծ ուշադրություն է դարձվում տարեցներին: Ուշադրության կենտրոնում են կարիքավոր տարեց քաղաքացիները՝ մարզպետասրանի կողմից մեծ հոգատարությամբ և պատասխանատվությամբ իրականացվում են կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքից զուրկ տարեցներին տուն ինտերնատներում տեղավորվելու հետ կապված աշխատանքները:

542. Տարեցներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների տրամադրմանը: Վերջին տարիներին այս բնագավառում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է տարեցների, և հատկապես միայնակ և հաշմանդամ տարեցների կյանքի պայմանների բարելավմանը:

543. ՀՀ Արարատի մարզում 2011-2013 թվականների ընթացքում ավելացել է <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների ծավալները՝ ավելացվել է տարեցներին մատուցվող ծառայությունների քանակը՝ կենցաղային, սոցիալ-հոգեբանական, բուժծառայություն ինչպես նաև ուսուցումներ և հումանիտար օգնություն:Ամեն տարի բարեգործական կազմակերպության կողմից իրականացվում են ավելի քան 13 մլն դրամի աշխատանքներ.

1) 2011թ. ընթացքում <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ Մասիս քաղաքում գործող բարեգործական ճաշարանից օգտվել են 73 անձ՝ որոնք օրական մեկ անգամ ստացել են տաք սնունդ:

2) 2012թ.-ին <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ մարզի Մասիս քաղաքում գործող բարեգործական ճաշարանում 85 անձ օրական մեկ անգամ ստացել են տաք սնունդ: Նույն ծրագրի միջոցներով տնային պայմաններում սպասարկվել են Արտաշատում 133 անձ, Մասիսում 9, իսկ Արարատում 21 անձ: <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության կողմից մատուցվող ծառայու թյուններից տարվա ընթացքում օգտվել են շուրջ 380 շահառուներ:

3) 2013թ.ընթացքում <<Առաքելություն Հայաստան>> հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ Մասիս քաղաքի բարեգործական ճաշարանից օգտվել են 60 անձ: Տնային պայմաններում սպասարկվել են Արտաշատում 140 անձ, Մասիսում 9, իսկ Արարատում 16 անձ:

544. 2014թ. ընթացքում «Առաքելություն Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպության ֆինանսավորմամբ Մասիս քաղաքում գործող տարեցների սպասարկման կենտրոնում խնամվում են 70 տարեցներ:

545. Արտաշատ քաղաքում գործում է տարեցների և անապահով խավի համար Հայաստանի Ավետարանական մկրտական քրիստոնիաների եկեղեցու միջոցներով 2012թ-ից. բացված բարեգործական ճաշարան, որի շահառուների թիվը 50 հոգի է: Տարեկան ծրագրի իրականացման համար ներդրվում է շուրջ 10 մլն դրամ:

546. Այս բնագավառում առկա են լուծման կարիք ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնցից են կարելի է առանձնացնել՝

1) տարեցների սոցիալական պաշտպանության բնագավառի օրենսդրության կատարելագործումը (ռազմավարական ծրագրի մշակում)
2) տարեցների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների բարելավումը:

547. **Հաշմանդամություն ունեցող անձ** - ՀՀ Արարատի մարզում մեծ թիվ են կազմում նաև հաշմանդամները:

548. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերը մասամբ լուծվում են << ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին >> ՀՀ օրենքով: Այս օրենքին համապատասխան, հաշմանդամները անվճար օգտվում են հիմնականում պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման իրավունքից:

549. Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաօրթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և « Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարության» պահանջներից է:

550. Այնուամենայնիվ, ներկայիս գործող սոցիալական պաշտպանության համակարգը դեռևս չի կարողանում լիարժեք բավարարել հաշմանդամների յուրահատուկ պահանջմունքները, որի պատճառով հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը դանդաղ է ընթանում:

551. Առաջնորդվելով ՀՀ վարչապետի 2008թ փետրվարի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին» N98-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով ՀՀ Արարատի մարզպետի 2008թ մարտի 27-ի N27«Ա» որոշմամբ ստեղծվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողով: Մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ծրագրային առաջարկներ տարեկան ծրագրերում ընդգրկելու նպատակով:

552. Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզավորումը և վերականգնողական պարագաներով ապահովումը նպաստում է նրանց հասարակություն ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության ռազմավարության պահանջներից է: Հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման գործընթացը՝ թեկուզ մասամբ, ապահովվելու նպատակով Արարատի մարզային հանձնաժողովի կողմից պարբերաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել առաջարկություններ հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերյալ համապատասխան գործընթացներ կազմակերպելու և իրականացնելու համար:

553. Արարատի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացած խոչընդոտները հաղթահարելու նպատակով 2012 թվականի մայիս ամսից մեկնարկել է <<Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով>> ծրագրի շրջանակներում իրականացվող <<LIFE>> (Կենսամակարդակի բարելավում, զբաղվածության խթանման միջոցով) ծրագիրը (2012-2015 թվականների համար): Այն նպատակ ունի խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հավասար պայմանները և աշխատանքի մատչելիությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք: LIFE ծրագիրը իրականացվում է Save the children (Փրկեք երեխաներին) կազմակերպության կողմից՝ ԱՄՆ-Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ՝ (USAID): Ծրագրի գործընկերներն են <<Ակտիվա>> միջազգային հիմնադրամը, <<Ունիսոն>> հասարակական կազմակերպությունը, <<Էյջ-ԴԻ-Փի>> հիմնադրամը և <<Լիարժեք կյանք>>հասարակական կազմակերպությունը: Ծրագիրը սերտորեն համագործակցում է <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության Արտաշատի զբաղվածության մարզային կենտրոնի և Արարատի մարզպետարանի հետ: Արտաշատի զբաղվածության մարզային կենտրոնի 2 մասնագետներ ծրագրի մասնագիտական ներդրման նպատակով ստացել են համապատասխան վերապատրաստում և Արարատի մարզում ներդրվելու է Նիդեռլանդական փորձը:

554. Ստորև ներկայացվում է Արարատի մարզի հաշմանդամների վիճակագրությունը ըստ տարածաշրջանների (Աղյուսակ 5.21)

Աղյուսակ 5.21. ՀՀ Արարատի մարզի հաշմանդամների վիճակագրությունը՝ ըստ տարածաշրջանների

	Տարածաշրջան	2011թ.				2012թ.				2013թ.			
		1 խումբ	2 խումբ	3 խումբ	Հաշմանդ. երեխա	1 խումբ	2 խումբ	3 խումբ	Հաշմանդ. երեխա	1 խումբ	2 խումբ	3 խումբ	Հաշմանդ. երեխա

1	Արտաշատ	303	2623	2489	308	306	2681	2740	301	313	2746	2997	289
2	Ք.Արարատ	84	704	961	77	79	714	1015	77	79	706	1101	72
3	Մասիս	382	2261	1826	343	406	2287	2024	323	427	2335	2170	313
4	Վեդի	213	1682	2237	225	199	1709	2493	214	200	1746	2699	204
	Ընդամենը	982	7270	7513	953	990	7391	8272	915	1019	7533	8967	878

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության

555. Ինչպես վկայում են աղյուսակում առկա տվյալները, վերջին տարիներին մարզում զգալի պակասել է հաշմանդամ երեխաների թիվը:

556. Մարզում մեծ թիվ են կազմում նաև 1988-1994թթ ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ազատամարտիկները և հաշմանդամ դարձած զինծառայողները: (Աղյուսակ 5.22)

Աղյուսակ 5.22 ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախյան պատերազմի ժամանակ հաշմանդամ դարձած ազատամարտիկները և հաշմանդամ դարձած զինծառայողները ՀՀ Արարատի մարզում

Սոց. խումբ	Արտաշատ	Արարատ	Մասիս	Վեդի	Մարզ
1988-1994թթ ՀՀ սահմանների պաշտպանելս հաշմանդամ դարձած զինծառայողներ	103	29	131	99	362
Զինծառայություններ պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձածներ	51	16	52	54	173
Զինծառայության ընթացքում հաշմանդամ դարձածներ	136	26	103	109	374

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

557. ՀՀ Արարատի մարզում պետական բյուջեի միջոցների հաշվին 2011-2013թթ. ընթացքում իրականացվել են ծրագրեր հանրապետության մարզերում բնակվող հաշմանդամների համար, թեպետ, այդ ծառայությունները կենտրոնացված են Երևանում. մասնավորապես

1) պրոթեզաօրթոպեդիկ օգնության, վերականգնողական պարագաների, սայլակների և լսողական սարքերի տրամադրում,

2) աչքի պրոթեզավորում,

3) ձայնաստեղծ սարքերի տրամադրում,

4) տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց ‘Արև’ համակարգով ուսուցանում և համակարգչային տեխնիկայով ապահովվում,

5) դպրոցն ավարտած, ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում,

6) հոգեկան առողջության վերականգնում ‘Սթրես’ կենտրոնում,

7) բժշկասոցիալական վերականգնում և հիվանդանոցային բուժում ‘Արթմեդ’ բժշկական կենտրոնում:

558. **Սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը** - Սոցիալական պաշտպանության պետական համակարգի գործառույթները Հայաստանում պետականորեն կարգավորվում են սոցիալական պաշտպանության համակարգի՝ խոցելի բնակչությանն ուղղված հետևյալ ծրագրերի միջոցով.

1) պետական սոցիալական աջակցության ծրագրեր, ներառյալ՝ ընտանեկան նպաստները, երեխայի ծնվելու հետ կապված միանվագ նպաստները, երեխային խնամելու նպաստները, ինչպես նաև այլ դրամական և ոչ դրամական սոցիալական ծառայությունները

2) սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնման ծրագրեր՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների տեսակից, հաշմանդամների, վետերանների և երեխաների տնային պայմաններում և համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրեր

3) պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր, որոնք բաղկացած են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատականության և հղիության հետ կապված նպաստներից

4) զբաղվածության կարգավորման պետական ծրագրեր՝ ներառյալ մասնագիտական ուսուցման, ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրման, գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրման, սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման և աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման ծրագրերը բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների համակարգ:

559. Պետական նպաստների տրամադրման բնագավառը կանոնակարգվում է «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև օրենքների կիրառությունն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Ելնելով ՀԶԾ-ի ընդհանուր գերակայություններից, սոցիալական աջակցության բնագավառի առաջնահերթությունները լինելու են.

1) ընտանեկան նպաստի համակարգը
2) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիր

3) երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի ծրագիր:

560. Ընտանեկան նպաստի համակարգը գործում է 1999 թվականից և կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Իրականացվող ծրագիրն այս տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, ինչպես ընտանիքների անապահովության գնահատման, ընտանեկան նպաստի չափի որոշման բանաձևերի փոփոխությունների, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման առումով:

561. Սոցիալական օգնության պետական ծրագրերից ամենածավալունը աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրն է: Ընտանեկան նպաստի համակարգում կիրառվում է տարբերակված մոտեցում, որպես հիմք ընդունելով ընտանիքի կարիքավորության աստիճանը՝ որքան աղքատ է ընտանիքը, այդքան բարձր է աղքատության ընտանեկան նպաստի չափը: Վերջին տարիներին ընտանեկան նպաստների հաշվարկման մոտեցումներում իրականացվել են բարեփոխումներ՝ հավելում նախատեսելով նպաստառու ընտանիքների մինչև 18 տարեկան անդամների համար: Դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ բազմազավակ ընտանիքները հանդիսանում են ամենախոցելի խմբերից մեկը:

562. ՀՀ Արարատի մարզում այդ ծրագրի շահառուների թիվը մինչև 2013թ. նախորդ տարիների համեմատ աճել է (Աղյուսակ 5.23):

Աղյուսակ 5.23. ՀՀ Արարատի մարզի ընտանեկան նպաստառուների թվաքանակը 2011-2013թթ.

Տարածաշրջան	2011թ	2012թ.	2013թ.
Արտաշատ	2136	2406	2707
Մասիս	2300	2524	2480
Վեդի	1906	2181	2305
Ք.Արարատ	486	499	488
Ընդամենը	6828	7610	7980

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն

563. Մարզի կարիքավոր ընտանիքներին աջակցելու, սոցիալական օգնության տրամադրելուն, մարզում աղքատության մակարդակը նվազեցման էր նպատակաուղղված <<Հայ օգնության ֆոնդ >> հասսրակական կազմակերպության միջոցներով Արարատի մարզում մեկնարկած՝ մարզի աղքատ ընտանիքներին աջակցելու բարեգործական ծրագիրը: Հայ օգնության ֆոնդի երևանյան <<Երեխաների աջակցություն կենտրոնի>> միջոցով, մարզում 2013թ. ապրիլ ամսից գործում է << Աջակցություն աղքատության մեջ գտնվող երեխաներին և ընտանիքներին>> ծրագիրը: Ծրագրի տևողությունն է 2013 - 2016թթ.: Այն իրականացվում է Արտաշատ և Մասիս քաղաքներում, ծրագրի շրջանակներում ընդգրկված են 58 ընտանիք, նպատակն է՝ ֆինանսական օգնություն ցուցաբերելլ կարիքի մեջ հայտնված երեխաներին և ընտանիքներին, դրանով իսկ մատուցելով

աջակցություն երեխայի պաշտպանության համակարգի կայունացմանն ու ամրապնդմանը: Ծրագրի նպատակն է մշտապես զարգացնել և ներդնել երեխաների պաշտպանության նոր մոդելներ:

564. Ընտանեկան նպաստների և այլ սոցիալական օգնության ծրագրերի արդյունավետ իրականացման պատասխանատուները առաջին հերթին սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններն են:

565. Վերջին տարիներին ՀՀ ԱՍՀՆ-ի և ՀԲ-ի համագործակցության շրջանակներում սոցիալական հետազոտությունների Ազգային ինստիտուտում պարբերաբար իրականացվում են սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացներ: Մարզի ՍԾՏՄ-ների բոլոր աշխատակիցները պարտադիր վերապատրաստում են անցնում այդ դասընթացներում:

5.5.2 Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

566. Այս ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակն է համարվում սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

567. Հաշվի առնելով վերոնշյալը՝ մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1) Հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների տեղեկատվական բանկի և հանրապետական ցանցի ստեղծումը

2.)Հաշմանդամություն ունեցող անձանց համար շրջակա միջավայրի մատչելիության ապահովումը

3)Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծումը

4)Տարեցների ցերեկային և խնամքի ծառայությունների ստեղծումը

5)Հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալ-հոգեբանական վերականգնողական ցերեկային կենտրոնների ստեղծումը

6)Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը

7)Ներառական կրթություն իրականացնող դպրոցների թվի ավելացումը

8)խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովումը

9)փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը

10)Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը

11)Մեկ հարկի տակ Ինտեգրացված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը

12)ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը

13)Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը:

568. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման նպատակով նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերի մեջ

569. Սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման նպատակով անհրաժեշտ է հիմնվել այն մոտեցումների վրա, որ կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը շարունակում է հանդիսանալ ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնը: Այս պայմաններում ՄԺԾԾ բոլոր երեք տարիների ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն (2014-2017թթ.ª սոցիալական ապահովության բնագավառում կադրերի վերապատրաստման և գիտահետազոտական աշխատանքների իրականացման խթանման հարցում): Մասնավորապես, կարևորվում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը հաշմանդամներին, ծերերին խնամելու, այդ թվում տան պայմաններում խնամք կազմակերպելու համար:

570. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային/ընտանեկան կենտրոնների ստեղծումը, ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական (սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում) աջակցության ցուցաբերում:

571. ՍԾՏԳ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է շարունակական բարելավել և արդիականացնել նաև այդ կենտրոնների նյութատեխնիկական բազան:

572. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավման գործընթացներում կարևորվում է.

1) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման,

մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը,

2) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը, սոցիալապես խոցելի բնակչության տվյալների բազայի ստեղծումը:

573. Մարզի բնակչության ներկա սոցիալական վատ վիճակի պայմաններում առավել կարևոր խնդիր է համարվում սոցիալական ոլորտի ծրագրերի իրականացումը ուշադրության կենտրոնում պահելը, այդ ծրագրերը արդյունավետ և հասցեական իրականացնելը, քանի որ կտրուկ կարող է ավելանալ խոցելի խմբերի աղքատության մակարդակը:

574. Մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է Հավելված 5.5-ում:

5.5.3. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

575. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխաների իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի, 2010թ. մարտի 18-ի «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» N269-Ն, 2003թ. օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N1000-Ն, 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի համաձայն:

576. ՀՀ Արարատի մարզում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներն են՝

1) ընտանիքի, կանանց և երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի զարգացումը,

2) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելումը/բեռնաթափումը/,

3) հատուկ հանրակրթական հաստատություններում/ներառական կրթություն/ հատուկ կարիքներով երեխաների ընդգրկվածությունը,
4) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սոցիալական պաշտպանության ապահովումը,
5) մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության մեջ մեղադրվող երեխաների պաշտպանության ապահովումը,
6) գենդերային հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացումը»:

577. Այս գործառույթներն իրականացվում են մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից:

578. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը կարևորելով երեխային մատուցվող ծառայությունների հասանելիությունը մասնավորապես առանձնացնում է առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Կարևորվում է նաև համայնքների ներգրավվման սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով, քանի որ մարզում քիչ չեն սոցիալական տարբեր հիմնախնդիրներ ունեցող երեխաները:

579. Հանրապետությունում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ոլորտում՝ նպատակային և հասցեական սոցիալական քաղաքականություն իրականացնելու արդյունքում էականորեն կբարելավվի իրավիճակը և կլուծվեն բազմաթիվ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների հիմնախնդիրներ: Այս առումով ՀՀ Արարատի մարզը գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում:

580. ՀՀ Արարատի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 5.24-ում /2011-2013թթ./

Աղյուսակ 5.24 Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը

h/h	Խումբ	2011թ.	2012թ.	2013թ.
1	Միակողմանի ծնողազուրկ	22	32	25
2	Երկկողմանի ծնողազուրկ	2	2	3
3	Օրինազանց երեխաներ	30	38	26
4	Հաշմանդամ երեխաներ	30	41	22

581. 2010 թվականից Արտաշատ քաղաքում գործում է երեխաների զարգացման և վերականգնողական կենտրոն, որտեղ վերականգնողական բուժում են ստանում տարեկան 50-100 հաշմանդամ երեխաներ:

582. Մարզում գործում է Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ խնամվում են 286 երեխա: 2011-2013 թվականների ընթացքում մարզից մասնագիտացված մանկատներ են ուղարկվել ընդամենը 11 հաշմանդամ երեխա: Մարզում ներառական կրթություն են իրականացվում 3 հանրակրթական դպրոցներում, որտեղ 2011-2013թթ.. հաճախել են 50 երեխաներ:

583. Վերջին տարիների ընթացքում էական բարեփոխումներ են նկատվում այս ոլորտում՝ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը համագործակցելով մարզի խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի,հասարակական կազմակերպությունների հետ իրականացրել է բազմաբնույթ՝ մեծ ծավալի աշխատանքներ.

1) խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկության հիման վրա ձևավորվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների, իսկ համայնքներից և մարզի երեք տարածաշրջանների սոցիալական ծառայություններից ստացված տվյալների հիման վրա կազմվել է 4 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների տարածքային շտեմարաններ /հաշվառված են երկկողմանի ծնողազուրկ 41 երեխա, խնամակալության և հոգաբարձության հանձնված՝ 36 երեխա/,

2) 2011-2013 թվականների ընթացքում մարզում չի հայտնաբերվել մուրացիկ, թափառաշրջիկ երեխաներ: Սոցիալապես անապահով ընտանիքների 25 երեխաներ տեղավորվել են երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններ:

3) ընդհանուր տիպի մանկատներում 2011-2013թթ. ընթացքում մարզից ուղղորդվել են 6 երեխաներ, որոնց ծնողները հրաժարվել են երեխաների հետագա խնամքից և դաստիարակությունից:

4) որպես որդեգրողի թեկնածուներ տարածքային հաշվառման են վերցվել 12 հոգի, որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառվել է 7- ը:

584. Զգալի աշխատանքներ են իրականացվել երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելման ուղղությամբ՝ մանկատներից դուրս են գրվել 3, իսկ երեխայի խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից 18 երեխա վերադարձել են ընտանիք:

585. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով տարածքային բաժանմունքների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում տարեցտարի նվազել է մարզի օրինազանց երեխաների թիվը՝ 2011թ.-ին հաշվառվել է 30 երեխա, 2012թ.՝- 38, 2013թ.՝ - 26:

586. Ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի 2015-2018 թթ ռազմավարության հիմնական ուղղություններն են ՝

1) Երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելում,բեռնաթափում,
2) Աջակցել 2008թ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման>> ծրագրի իրականացմանը ՀՀ Արարատի մարզում,

3) Մարզում իրականացվում են նաև կանանց հիմնախնդիրներին վերաբերող նպատակային ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելումասին» N19 արձանագրային որոշումը, իսկ 2011թ. հունիսի 17-ի նիստում՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 23 արձանագրայի նորոշումը, որոնց շրջանակներ ումյուրաքանչյուր տարիհաստատվող տարեկան ծրագրերում ներառվումեն նաև մարզի ծրագրերը: Վերջիններս նպաստում են մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ուհնարավորությունների ապահովմանը, օժանդակում կանանց սոցիալտնտեսական հարցերի կարգավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

6.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծություն

587. Արարատի մարզի տարածքն ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիների: Տարվա ընթացքում տեղումները տատանվում են 200-300մմ –ի սահմաններում, իսկ օդի ջերմաստիճանը՝ -30°C-ից մինչև +40 °C:

588. Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիներն՝ անասնապահության զարգացման համար:

589. ՀՀ Արարատի մարզի ազգաբնակչության 70 % -ից ավելին բնակվում է գյուղական վայրերում և վերջիններիս տնտեսական կենսունակությունը պայմանավորվում է գյուղատնտեսական գործունեությամբ:

590. Արարատի մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է 52500 գյուղացիական տնտեսությունների, 8 առևտրային կազմակերպությունների միջոցով, որոնցից 3-ը՝ բուսաբուծությամբ և 5-ը՝ անասնապահությամբ զբաղվող: Մարզում գործում է գյուղատնտեսական մթերքների վաճառքի 4 շուկաներ: Մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկություններից առանձնանում են 17 գինու-կոնյակի արտադրության, 4 պահածոների՝ /Արտաշատի "Արտֆուդ", Արարատի "Բորոդինո", Մասիսի "Ալիշան", Ավշարի "Ավշարպրուդ"/ և ծխախոտի արտադրության "Մասիս Տոբակո" գործարանները:

591. Արարատի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը/ /164696հա/՝ ներառյալ տնամերձ հողամասերը, կազմում են մարզի ընդհանուր տարածքի մոտ 78.8%-ը:

592. Աղյուսակ 6.1-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական հողատեսքերը և ցուցանիշները:

Աղյուսակ 6.1 ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը

Արարատի մարզ	Գյուղատնտեսական հողատեսքեր /հա/	Այդ թվում				
		Վարելահողեր /հա/	Բազմամյա տնկարկներ /հա/	Խոտհարքեր /հա/	Արոտավայրեր /հա/	Այլ հողատեսքեր /հա/
2014թ հողատեսքերը /ներառյալ տնամերձեր/	164696	29729	12537	2889	78129	41412
Հողատեսքերի տեսակարար կշիռը 2014թ %	100	18.1	7.6	1.8	47.4	25.1
Մարզի տեսակարար կշիռը հանրապետության մեջ %	7.66	6.6	21.7	2.37	7.4	10.6

593. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ հատկապես մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 47.4%: Վարելահողերը կազմում են հողատեսքերի 18.1% իսկ բազմամյա տնկարկները՝ 7.6%:

594. Արարատի մարզը համարվում է գյուղատնտեսականն մարզ և որոշիչ դեր ունի հանրապետության գյուղատնտեսության տարեկան համախառն արտադրանքի ընդհանուր արդյունքում: Վերջին տարիներին էական առաջընթաց է գրանցվել մարզի գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալների մեջ, մասնավորապես՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2013 թվականին կազմել է 136.4 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 10%-ով և կազմել է հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի 14.8% - ը:

595. Մարզի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են բուսաբուծությունը և անասնապահությունը:

596. **Բուսաբուծություն -** Արարատի մարզի 2011-2013թթ. գյուղատնտեսական հողատարածքների և գյուղարտադրանքի արդյունքային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ 2012թ-ին՝ 2011թ համեմատ, չնայած հացահատիկի տարածքների ավելացմանը 443 հա-ով, հացահատիկի միջին բերքատվությունը՝ 1 հա-ից/եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով/ պակասել է, որի

հետևանքով հացահատիկի հիմնական բերքը 2012թ պակասել է 510 տոննայով: 2012թ բանջարեղենի և բոստանի տարածքները պակասել են համապատասխանաբար 409 հա-ով և 102 հա-ով, սակայն հետևողական մշակման արդյունքում համախառն բերքը ավելացել է նախորդ տարվա համեմատությամբ, համապատասխանաբար, 19631 տոննայով և 6025 տոննայով: Նույն տարում կարտոֆիլի, պտղի և խաղողի տարածքներն ավելացել են համապատասխանաբար 94 հա-ով, 327 հա-ով և 239 հա-ով, համապատասխանաբար ավելացել են նաև նշված մշակաբույսերի համախառն բերքը՝ 2981 տոննայով, 10743 տոննայով և 5588 տոննայով:

597. 2013 թվականի վերլուծությունից երևում է որ, կարտոֆիլի տարածքները նախորդ տարվա համեմատությամբ պակասել են 115 հա-ով /կարտոֆիլի ցեց վնասատուի պատճառով/, որի արդյունքում պակասել է համախառն բերքը 3314 տոննայով, հացահատիկի տարածքը և համախառն բերքը ավելացել են համապատասխանաբար 10 հա-ով և 3492 տոննայով: Բանջարի տարածքը պակասել 77 հա-ով, իսկ համախառն բերքը՝ շնորհիվ ներմուծված լավագույն սերմերի, մշակության առաջավոր տեխնոլոգիաների, ավելացել է 1210 տոնայով: Բոստանի պտղի և խաղողի պարագաներում տարածքների ավելացումը հանգեցրել է համախառն բերքի ավելացման:

598. 2014թ. փաստացի ցանքատարածքներն ավելացել են 1457 հա-ով: Կանխատեսվում է համախառն բերքի 5-10% աճ:

599. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզի մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները զգալիորեն բարձր են հանրապետության միջին ցուցանիշներից:

600. Մարզի 2011-13թթ գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքների, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2 ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը

ՀԱՑԱՀԱՏԻԿ									
	Ցանքատարածությունը /հա/			**Բերքատվությունը /գ/հա/**			**Համախառն բերքը /հազ. տոննա/**		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	**157812**	**172206**	**178367**	**27.9**	**26.5**	**30.8**	**440.7**	**456.1**	**548.8**
Մարզ	5073	5516	5526	39.9	35.8	42.0	20.2	19.7	23.2

Տեսակարար կշիռը, %	3.2	3.2	3.1	143.0	135.1	136.4	4.6	4.3	4.2
ԿԱՐՏՈՖԻԼ									
	Ցանքատարածությունը /հա/			**Բերքատվությունը /g/հա/**			**Համախառն բերքը /հազ. տոննա/**		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	28675	31243	30680	194.3	206.7	214.3	557.3	647.2	660.5
Մարզ	802	896	781	305.5	306.8	309.5	24.5	27.5	24.2
Տեսակարար կշիռը, %	2.8	2.9	2.5	157.2	148.4	144.4	4.4	4.2	3.7
ԲԱՆՋԱՐԵՂԵՆ									
	Ցանքատարածությունը /հա/			**Բերքատվությունը /g/հա/**			**Համախառն բերքը /հազ. տոննա/**		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	25010	25211	25403	306.7	325.0	333.7	787.1	849.0	876.0
Մարզ	6826	6406	6330	412.2	453.1	471.0	285.3	305.0	306.2
Տեսակարար կշիռը, %	27.3	25.4	24.9	134.4	139.4	141.1	36.2	35.9	35.0
ԲՈՍՏԱՆ									
	Ցանքատարածությունը /հա/			**Բերքատվությունը /g/հա/**			**Համախառն բերքը /հազ. տոննա/**		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	5764	5128	5356	313.8	399.9	388.5	180.9	205.1	208.1
Մարզ	1482	1380	1515	394.5	467.3	431.5	58.5	64.5	65.4
Տեսակարար կշիռը, %	25.7	26.9	28.3	125.7	116.9	111.1	32.3	31.4	31.4
ՊՏՈՒՂ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂ									
	Տարածությունը /հա/			**Բերքատվությունը**			**Համախառն բերքը**		

				/g/հա/			/հազ. տոննա/		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	37149	39285	40229	73.5	97.0	95.0	239.4	331.7	338.1
Մարզ	6972	7299	7394	116.4	130.8	135.3	75.7	86.5	91.8
Տեսակարար կշիռը, %	18.8	18.6	18.4	158.4	134.8	142.4	31.6	26.1	27.2
ԽԱՂՈՂ									
	Տարածությունը /հա/			**Բերքատվությունը /g/հա/**			**Համախառն բերքը /հազ. տոննա/**		
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**	**2011թ**	**2012թ**	**2013թ**
ՀՀ	16288	17415	17465	158.0	151.3	149.8	229.6	241.4	240.8
Մարզ	4881	5120	5143	204.2	199.4	211.3	94.7	100.3	104.3
Տեսակարար կշիռը, %	30.0	29.4	29.4	129.2	131.8	141.1	41.2	41.5	43.3

601. Մարզում գյուղատնտեսության բնագավառում ոռոգման նոր եղանակների՝ կաթիլային, անձրևացման, ինչպես նաև բարձր բերքատվությամբ սերմերի, որակյալ պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառումը էականորեն կբարձրացնի մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները:

602. Մարզում 2011, 2012 և 2013 թվականներին արտադրվել է համապատասխանաբար 75710 տ, 86453 տ, և 91805 տ պտուղ, որից ծիրան 2011թ-ին՝ 25982.3 տոննա, 2012թ.-ին՝ 32039 տոննա և 2013թ-ին՝ 40 000 տոննա: Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված ծիրանի բերքը իրացվել է անհատ ձեռներեցների և <<Սպայկա>> ՍՊԸ-ի միջոցով, որոնք բերքը արտահանում են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն և Վրաստան:

603. Մարզում արտադրվում է տարեկան 306 000 տոննայից ավել բանջարեղեն: Դժվարություններ են առաջանում գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված բանջարեղենի արտադրանքի իրացման հարցում՝ արտադրանքի ընդամենը 10-15 % է մթերվում պահածոների գործարանների կողմից, արդյունքում դա բացասաբար է անրադառնում մարզում բանջարաբուծության զարգացմանը:

604. Մարզում տարեկան արտադրվում է 100 հազար տոննայից ավել խաղող, որից մոտ 80 հազար տոննան մթերվում է մարզի 17 գինու-կոնյակի գործարանների կողմից, 15-20 հազար տոննան պահպանվում է սառնարաններում՝ հետագայում վաճառելու համար, իսկ մնացած բերքը իրացվում է տեղական շուկաներում:

605. Չնայած վերջին տարիներին ոլորտում արձանագրված դրական փոփոխություններին, 2013թ մարզում չի մշակվել մոտ 6530 հա /ներառյալ տնամերձ հողամասերը/ հողատարածքներ՝ ոռոգման ջրի բացակայության, գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության և հողերի գերխոնավ, աղակալված լինելու պատճառով:

606. Արարատի մարզում խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարեղենի մշակությունը 2011-2013թթ. ընթացքում. առավելապես զարգացած է եղել Արարատի և Արտաշատի տարածաշրջաններում: Մասիսի տարածաշրջանում համեմատաբար բարվոք է վիճակը բանջարեղենի մշակությամբ՝ մյուս տարածաշրջանների համեմատ հետ է մնում կիսով չափով, իսկ խաղողագործության և պտղաբուծության ուղղություններով 8-9 անգամ հետ է մնում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններից: Կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ առաջատար է Մասիսի տարածաշրջանը: Մարզի բոստանի տարածքների 84 %-ը և հացահատիկի տարածքների 65%-ը գտնվում են Արարատի տարածաշրջանում:

607. Աղյուսակ 6.3-ում ներկայացված է մարզի հիմնական մշակաբույսերի 2013թ ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների:

Աղյուսակ 6.3. Մարզի հիմնական մշակաբույսերի 2011-2013թթ ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների

Մշակաբույսի անվանումը	Արարատի տարածաշրջան /հա/			Արտաշատի տարածաշրջան /հա/			Մասիսի տարածաշրջան /հա/		
	2011թ	2012թ	2013թ	2011թ	2012թ	2013թ	2011թ	2012թ	2013թ
Հացահատիկ	2839.6	3248	3347	581	674	621.1	963.4	1035.1	1050
Բանջարեղեն	2659.9	2337	2269.2	2373	2219	2210.7	1792.7	1818.9	1815.5
Կարտոֆիլ	80.2	94	100.8	200	206	206.6	522	594	463.8
Բոստան	1338	1117	1266.9	32.4	28.5	54.2	110	233.5	193.7
Պտուղ	2807.9	3111.3	3166.8	3259.6	3792.7	3755.7	354.4	394	472.67
Կերային մշակաբույսեր	959	1138	1289	1960.8	2054	2297	3465.2	3220	3267.6

Խաղող	2054	2407.3	2397.4	2265	2468.4	2454.8	273.5	244.2	291.01
Ծխախոտ	108.7	96	90.5	73.4	64.3	49.8	15.9	14	17

608. **Սերմնաբուծություն և տնկարանային տնտեսություն -** Մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է՝ բարձրորակ սերմերի և տնկանյութերի արտադրությունը՝ պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

609. Մարզի Դարակերտ համայնքում դեռևս խորհրդային տարիներից, գործում է բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը, որը տարեկան ապահովվում է մարզի սերմերի և սածիլների պահանջարկի մինչև 15 տոկոսը, սակայն սերմնաբուծական տնտեսության ստացած սերմերը չեն ապահովում բարձր բերքատվություն և դուրս են մրցունակությունից: Այդ պատճառով գյուղացիական տնտեսությունները դեռևս գերադասում են ներկրված սերմերը:

610. Արարատի մարզի գյուղատնտեսությունը գտնվում է ռիսկային գոտում, որտեղ գրեթե ամեն տարի անպակաս են տարերային աղետները՝ ցրտահարություն, կարկտահարություն, տևական երաշտ, հեղեղումներ: Գյուղացիական տնտեսություններին՝ տարերային աղետներից վնասները, փոխհատուցելու և նվազեցնելու միջոցներ են.

1) Ապահովագրական համակարգի աստիճանական ձևավորումը, որն ունի ռացմավարական նշանակություն մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար:

2) Հակակարկտային կայանքների քանակի ավելացումն այնքան, որպեսզի ծածկվի մարզի ամբողջ տարածքը: Այժմ մարզում առկա են 67 հակակարկտային կայանքներ, որոնց կառավարումն իրականացվում է ՀՀ արտակագ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնից:

611. Մինչև 2011թ. մարզում դործել են 48 հակակարտային կայանքներ: 2011-2013թթ. կայանքների թիվը կազմել է 49 հատ: 2013թ կառուցվել է 1 հատ կայանք՝ հովանավորի միջոցներով: 2014թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում կառուցվել են 18 հակակարկտային կայանքներ:

612. 2012թ-ից ՀՀ կառավարությունը ամեն տարի մարզի գյուղացիական տնտեսություններին, շուկայականից ցածր գներով հատկացնում է պարարտանյութեր և դիզելային վառելիք: 2012-2013թթ մարզին հատկացվել է 9355տ՝ 1 մլն 122600դրամ արժողությամբ ազոտական պարարտանյութ և 3620371լ՝ 1 մլրդ 267 մլն 129850 դրամ արժողությամբ դիզելային վառելիք: 2012-2013թթ կառավարության կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին հատկացվել է աշնանացան

ցորենի 322 տ 1-ին վերարտադրության սերմացու՝ 1 կիլոգրամը 160 դրամով հետ վերադարձնելու պայմանով և 13.67 տ էլիտային վերարտադրության սերմացու՝ 1:2 փոխհարաբերությամբ 1-ին վերարտադրության սերմացու վերադարձնելու պայմանով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ գյուղացիական տնտեսությունները իրենց ցածր վճարունակության պատճառով չեն կարողանում բավարար քանակությամբ պարարտանյութ, դիզվառելիք, սերմացու ձեռք բերել: Այդ պատճառով՝ բերքատվության ցուցանիշներին կարող էին ավելի բարձր լինել, չնայած դրան մարզի բուսաբուծական մթերքների բերքատվության ցուցանիշները բարձր են հանրապետության միջինից:

613. Բերքատվության ցուցանիշների վրա մեծ ազդեցություն ունի նաև մարզում գյուղմթերքների իրացման մեծածախ շուկաների բացակայությունը՝ չի իրացվում արտադրված ամբողջ բերքը:

614. **Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը -** Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար շատ կարևոր է գյուղատնտեսական մեքենաներով և գյուղատնտեսական գործիքներով ապահովածության մակարդակը, նրանց տեխնիկական վիճակը: Ընդհանուր առմամբ տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը գերազանցում է 20 տարին:

615. Առկա տեխնիկան իր հզորությամբ չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

616. Չնայած 2011-2013 թվականների ընթացքում՝ գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված գյուղտեխնիկայի շնորհիվ, մարզում ավելացել է տրակտորների քանակը 16 միավորով. իսկ կերհավաք կոմբայները 13 միավորով, սակայն դա դեռևս շատ քիչ է ոլորտում պահանջարկը բավարարելու համար:

617. Գյուղտեխնիկայի օգտագործման վիճակի ուսումնասիրությունից երևում է հողօգտագործողների գերակշիռ մասը համայնքների գերակշիռ մասն ունի տրակտորների, վարող, ցանող, բուժումներ կատարող, հնձող և այլ գյուղատնտեսական գործիքների կարիք:

618. Գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական մեքենաների և սարքինության վերաբերյալ 2010-2013 թվականների համեմատական տվյալները ներկայացված են աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4 2011-2013թթ առկա գյուղտեխնիկայի համեմատական տվյալները

№		**2011թ հունվարի 1-ի դրությամբ**			**2014թ հունվարի 1-ի դրությամբ**		
		Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/	100 տնտեսության հաշվով ապահովվածու	Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/	100 տնտեսության հաշվով ապահովվածու

				թյունը %			թյունը %
1	Բեռնատար ավտոմեքենա	1101	76.9	2.1	1101	76.9	2.1
2	Կոմբայն	39	88.2	0.074	35	88.6	0.07
3	Շարքացան	169	89.3	0.32	169	89.3	0.32
4	Կցասայլակ	572	87.4	1.09	572	87.4	1.09
5	Կուլտիվատոր	280	91.8	0.53	280	91.8	0.53
6	Հավաքիչ-մամլիչ	97	90.7	0.18	97	90.7	0.18
7	Տրակտոր-գութան	384	93.0	0.73	384	93.0	0.73
8	Խոտհնձիչ	111	89.2	0.21	111	88.3	0.21
9	Տրակտոր	1256	80.8	2.39	1272	80.8	2.42
10	Կերհավաք կոմբայն	7	85.7	0.01	20	85.0	0.04
11	Հատիկազտիչ մեքենա	32	84.4	0.06	32	84.4	0.06

619. Աղյուսակից երևում է, որ ընդհանուր առմամբ տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը գերազանցում է 20 տարին: Առկա տեխնիկան իր հզորությամբ չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

620. **Ոռոգման համակարգ -** Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգի անխափան աշխատանքն է:

621. Համաձայն 1998թ ՀՀ կառավարության որոշման՝ Արարատի մարզում ոռոգելի հողերի տարածքը կազմել է 37828 հա: Այժմ ոռոգվող հողատարածքը կազմում է 34764 հա, պակասել է 3064 հեկտարով, որը խիստ ազդել է համախառն բերքի մարզային ցուցանիշի վրա:

622. Մարզի ոռոգվող հողատարածքի պակասելու պատճառներից է նաև այն,որ մարզում դեռևս գործում են բավականին շատ են հողային հունով և կիսաքանդ խողովակներով ջրատարներ՝ որոշ համայնքներում ոռոգման ջրի կորուստը կազմում է մինչև 50 տոկոս:

623. Մարզում ոռոգման աշխատանքները կազմակերպվում են 5 ջրօգտագործող ընկերությունների /<<Արտաշատի>>, <<Արարատի>>, <<Մասիսի>>, <<Վեդու>> և <<Ազատի>>/ միջոցով, որոնք տարեկան միջին հաշվով մատակարարում են մոտ 110 մլն խորանարդ մետր ջուր:

624. 2011-2013թթ ընթացքում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը կազմել է 90.5%-93.1%: Աշխատանքներ են տարվում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը 100 %-ի հասցնելու ուղղությամբ:

625. ՀՀ պետական բյուջեի և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով 2011-2013թթ. մարզի 41 համայնքներում վերանորոգվել է 110.5 կմ երկարությամբ ոռոգման ցանցեր, իրականացվել է շուրջ 27 մլրդ դրամի աշխատանքներ սակայն այն դեռևս չի բավարարում ներկայիս պահանջները և ջրատարների մեծ մասում ջրի կորուստները շատ մեծ են:

626. Չնայած 2011-2013թթ մարզում ոռոգման համակարգում կատարված աշխատանքներին, դեռևս կան շատ անելիքներ: Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1) Ոռոգման համակարգերի պահպանում, շահագործում և գույքագրում

2) Ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:

3) Ջրամբարների կառուցում, համայնքներում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

627. **Անասնապահություն -** Արարատի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնա- մսային արտադրական ուղղությունն է:

628. 2011-2013թթ-ին մարզում աճել է խոշոր եղջերավորների, խոզերի ինչպես նաև ոչխարների և այծերի քանակը:

629. Աղյուսակ 6.5-ում ներկայացված են մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը /աղյուսակում նշված տարեթվերը հունվարի 1-ի դրությամբ են/:

Աղյուսակ 6.5**.** 2014թ հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակը

/հազար գլուխ/

	Խոշոր եղջերավորներ			Այդ թվում՝ կովեր			Խոզեր			Ոչխարներ և այծեր		
	2012թ	2013թ	2014թ	2012թ	2013թ	2014թ	2012թ	2013թ	2014թ	2012թ	2013թ	2014թ
Արարատ	41.4	44.2	46.4	16.5	17.3	17.7	12.0	18.1	19.4	70.5	81.4	92.5
ՀՀ	599.2	661.0	677.6	283.3	303.3	309.6	108.1	145.0	139.8	590.2	674.7	717.6
Մարզի տեսակարար կշիռը (%)	6.9	6.7	6.8	5.8	5.7	5.7	11.1	12.5	13.9	11.9	12.1	12.9

630. Արարատի մարզում 2011-2013թթ. ընթացքում աճել է մսի, ձվի և կաթի արտադրությունը**:**

631. Մարզում մսի մթերման կետեր և սպանդանոց չլինելու պատճառով գյուղացիական տնտեսություններն իրենց արտադրանքն իրացնում են տեղական

շուկաներում: 2014թ. ընթացքում Մասիս քաղաքում կառուցվում է նոր ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով ապահովված սպանդանոց: Սպանդանոցի հզորությունը օրվա կտրվածքով կազմում է 1000 մանր եղջրավոր և 360 խոշոր եղջրավոր:

632. Մարզում գործում են կաթ վերամշակող 3 կազմակերպություններ՝ Նարեկի <<ԽԱՔ>>, <<Արարատ-պանիր>> և Դալարի <<Լուլա>>, սակայն այդ գործարանների մթերման հնարավորությունները դեռևս շատ քիչ է մարզի ամբողջ կաթի արտադրանքը մթերելու համար:

633. Աղյուսակ 6.6-ում ներկայացված է անասնապահական մթերքի արտադրության 2011-2013թթ ծավալները:

Աղյուսակ 6.6 ՀՀ Արարատի մարզում 2011-2013թթ. անասնապահական մթերքների արտադրության ծավալները /հազար տոննա/

	Իրացվել է միս կենդանի քաշով			**Կաթ**			**Ձու /մլն հատ/**		
	2011թ	2012թ	2013թ	2011թ	2012թ	2013թ	2011թ	2012թ	2013թ
Արարատ	8.3	8.7	9.8	36.5	38.2	40.1	55	55	55
ՀՀ	127.9	130.3	146.8	601.5	618.2	657.0	633.6	658.1	615.2
Մարզի տեսակարար կշիռը (%)	6.5	6.7	6.7	6.1	6.2	6.1	8.7	8.4	8.9

634. **Մեղվապահություն**

- Վերջին տարիներին զարգանում է նաև մեղվաբուծությունը: Մեղվաընտանիքների քանակը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 19511 հատ, որը 2011 թվականի /10964 հատ/ համեմատ ավելացել է 2547 հատով:

635. **Ձկնաբուծություն -** Վերջին տարիներին մարզում զարգանում է ձկնաբուծությունը: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 161 ձկնաբուծական տնտեսություն, որից գործել է 132 տնտեսություն: Գործող ձկնաբուծական տնտեսությունները 2011 թվականի համեմատ ավելացել է 34-ով:

636. Մարզի հատկապես Մասիսի տարածաշրջանում վերջին տարիներին արագ ընթացքով զարգացել են լճակային տնտեսությունները, որոնք արտադրում են իշխան և թառափ ձկնատեսակներ: Տարեկան մարզում արտադրվում է շուրջ 6000 տոննա ձուկ, որը հիմնականում արտահանվում է: Ձկնաբուծական տնտեսությունների անկանխատեսելի զարգացումը առաջ է բերում մի շարք դժվարություններ ոռոգման աշխատանքները կազմակերպելու հարցում:

Ձկնաբուծության նպատակով ինքնաշատրվանող հորերի ավելացումը բերել է նախկինում ոռոգման նպատակով հորատված խորքային հորերի ցամաքելուն /Խաչփառ, Հայանիստ, Հովտաշատ/, իսկ լճակներից արտահոսող ջրերի աննախադեպ ավելացումը բերում է գերխոնավ հողատարածքների ավելացմանը /Սիփանիկ, Հայանիստ, Հովտաշատ/:

637. ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվում է միջոցառումներ ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվող ջուրը կրկին շրջանառության մեջ դնելու, տիրազուրկ կամ ապօրինի խորքային հորերը լուծարելու և կոնսերվացնելու համար:

638. **Ապրանքայնության մակարդակ -** Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որով և բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակը:

639. Աղյուսակ 6.7-ում ներկայացված է մարզում վերջին տարիներին գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը:

Աղյուսակ 6.7 Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը

Գյուղ մթերքների անվանումը	**Ապրանքայնության մակարդակը %**			
	Արարատի մարզում			**ՀՀ-ում**
	2011թ	**2012թ**	**2013թ**	**2013թ**
Հացահատիկ	323.9	32.4	34.3	33.1
Կարտոֆիլ	76.1	79.7	77.6	45.9
Բանջարեղեն	86.2	85.6	87.0	78.2
Պտուղ	80.9	82.5	83.5	67.4
Խաղող	83.8	85.1	87.0	80.3
Բոստան	81.2	89.2	80.7	89.5
Միս	87.8	83.9	76.6	84.1
Կաթ	54.0	58.6	63.1	54.6
Ձու	40.0	46.3	48.0	47.3
Բուրդ	58.7	58.9	78.6	40.7
Մեղր	58.3	44.2	61.0	56.8

640. Աղյուսակից երևում է, որ մարզի գրեթե բոլոր գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բարձր է հանրապետության միջինի համեմատ:

641. **Անասնաբուժություն -** Մարզում շարունակվում է պետպատվերի շրջանակներում ընդգրկված անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումները: Դրա շնորհիվ համայնքներում պետ պատվերի մեջ ընդգրկված ինֆեկցիոն հիվանդությունների դեպքեր չեն արձանագրվել: Կանխարգելիչ միջոցառումները բոլոր տարածաշրջաններում ցանկալի արդյունք են տվել:

642. Մարզում անասնակերերի բազայի ապահովման հետ կապված խնդիրներ չկան: Տարեկան կուտակվում է մոտ 200 հազար տոննա չոր խոտ: Որոշ տնտեսությունների կողմից ուշադրություն է դարձվում նաև կերի արմատապտուղների և կերի համար եգիպտացորենի արտադրությանը:

643. Մարզը ունենում է նաև չոր խոտի ավելցուկ, որը վաճառվում է ՀՀ տարբեր մարզերին:

644. Մարզում ներկայումս գործում է <<Անասնաբուժա-սանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնը, որն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքների և իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխան վերահսկողություն:

645. **Խորհրդատվական ծառայություն -** Արարատի մարզն ապահոված է անհրաժեշտ հմտություններ ունեցող աշխատուժով: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող աշխատող /16-62 տարեկան/ անդամների թիվը կազմում է 2.5: Սակայն համայնքներում առկա աշխատուժը գյուղատնտեսության ոլորտում լիարժեք չի օգտագործվում:

646. Մարզի գյուղատնտեսության զարգացման գործում իր համեստ տեղն ունի <<Արարատի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> ՓԲԸ-ն: Վերջինիս կողմից նախատեսվում է մարզում կազմակերպել և իրականացնել տարեկան մոտ 125 սեմինար և մոտ 100 դաշտային ուսուցումներ, կտպագրվի և կտարածվի 21 անուն խոհրդատվական թերթիկ և գրքույկ շուրջ 10800 ընդհանուր տպաքանակով:

647. Ընկերությունն իրականացնում է նաև մարզում տիրող իրավիճակի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքագրում, ԳԱՄԿ-ում ստեղծված «Շտապ գյուղատնտեսական օգնություն» մարզային շտաբերի կողմից ահազանգերի ընդունում և դրանց ընթացքի նկատմամբ վերահսկողություն, Երևան քաղաքում գործող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառներին գյուղացիական տնտեսությունների մասնակցության ապահովման գործում աջակցություն: ԳԱՄԿ-ի կողմից ուսուցման և խորհրդատվությունների մատուցման գործընթացում պարբերաբար քննարկվում են գյուղացիական տնտեսությունների խոշորացմանն ուղղված հարցերը: Ընկերությունների կողմից կոոպերատիվների ստեղծման թեմայով

անցկացվում են սեմինարներ, խորհրդատվություններ, տպագրվում և տարածվում են տեղեկատվական թերթիկներ, իրականացվում են խորհրդատվական միջոցառումներ

648. **Գյուղատնտեսության վարկավորում -** Գյուղատնտեսական ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսություններն արտադրական գործընթացում ունեն խոշոր ներդրումների և շրջանառու միջոցների անհրաժեշտություն, որն ապահովելու հիմնական ձևը վարկավորումն է առևտրային բանկերի կողմից:

649. Մարզում 2013 և 2014 թվականների <<գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման>> ծրագրի շրջանակներում տարեկան տրվել է 3.07 մլրդ դրամ վարկեր, ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված տոկոսադրույքով:

650. **Գյուղատնտեսության ուժեղ և թույլ կողմերը -** Մարզի գյուղատնտեսության ճյուղում ներկա իրավիճակի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը հնարավորություն է տվել իրականացնելու տվյալ բնագավառում ուժեղ, թույլ կողմերի հնարավորությունների և խոչընդոտների վերլուծություն:

651. **Գյուղատնտեսության ոլորտի ուժեղ կողմերն են -**

1) Գյուղատնտեսական հողային մեծ ռեսուրսների առկայությունը

2) Գյուղատնտեսության մասնագիտացումը պայմանավորող բնական պայմանների բազմազանությունը.

3) Խաղողագործության, պտղաբուծության և բանջար-բոստանային կուլտուրաների մշակության զարգացման հնարավորությունների առկայությունը.

4) Մսակաթնային անասնապահության և ձկնաբուծության զարգացման հնարավորությունը.

5) Թռչնի մսի և ձվի արտադրության հնարավորությունը /հաշվի առնելով Բարձրաշենի և Քաղցրաշենի թռչնաբուծական ֆաբրիկաների վերագործարկումը/.

6) Մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրության ծավալների ընդլայնման և արտադրության արդյունավետության բարձրացման ապահովումը:

652. **Գյուղատնտեսության ոլորտի թույլ կողմերն են**

1) Հողային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը

2) Գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների անկատարությունը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:

3) Արտադրության մասնատվածությունը /գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը/:

4) Գյուղատնտեսության մեջ օգտագործվող գյուղտեխնիկայի ռեսուրսների սակավության հետևանքով ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների ոչ լիարժեք կատարումը:

5) Ոռոգման միջտնտեսային և ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակը, դրանց անհամապատասխանությունը հողօգտագործման չափերին, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայությունը, դեռևս մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը, ջուր մատակարարող և օգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների անկատարությունը:

6) Տոհմային գործի կազմակերպման անբավարար վիճակը, տոհմային տնտեսությունների բացակայությունը, արհեստական սերմնավորման տակ գտնվող անասնագլխաքանակի չափազանց ցածր տեսակարար կշիռը:

7) Գյուղատնտեսության սպասարկման ոլորտում կորպորացիաների բացակայությունը:

8) Գյուղատնտեսական մեծածախ շուկաների բացակայությունը տարածաշրջաններում:

9) Գյուղատնտեսական վարկավորման ծավալների անբավարարության և վարկային տոկոսադրույքների, ժամկետների և գրավադրման անբարենպաստ պայմանների առկայությունը;

10) Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

11) Մարզում սահմանամերձ գյուղատնտեսական հողերի առկայությունը:

653. **Հնարավորությունները.**

1) Տնկարանային տնտեսության զարգացման, բազմամյա տնկարքների ընլայման, բարձրարժեք մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման, բերքատվության համախառն արտադրանքի բարձրացման:

2) Տոհմային գործի և անասնաբուժական ծառայությունների վիճակի բարելավման միջոցով գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացումը և անասնապահական մթերքների որակի և արտադրության արդյունավետության աճը:

3) Նպատակային վարկերի միջոցով գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր կարողությունների ձևավորում:

4) Գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության և խորհրդատվության մատչելիության բարձրացումը և համակարգի կատարելագործումը:

5) Գյուղատնտեսությունում իրականացվող վարկային ծրագրեր:

654. **Խոչընդոտները.**

1) Գյուղացիական տնտեսությունների սեփական դրամական միջոցների բացակայությունը
2) Տնտեսությունների համար վարկերի սղությունը և անմատչելիությունը:
3) Արտադրանքի արտահանման համար տնտեսությունների սակավ հնարավորությունները և դրա իրականացմամբ ղբաղվող կառույցների գրեթե բացակայությունը:
4) Գյուղատնտեսության արտադրության բարձր ռիսկայնության և ապահովագրական համակարգի բացակայությունը:

6.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները, ռազմավարությունը և ֆինանսավորումը

655. Ծրագրի հիմնական նպատակն է Արարատի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

656. Խորհրդատվական ծառայությունների բնագավառում Արարատի մարզի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է այդ ծառայությունների մատչելիության բարձրացումը, նրանց առավել նպատակային, հասցեական օգտագործումը:

657. **Ծրագրի ռազմավարությունը -** Ծրագրի ռազմավարությունը ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.

1) Մարզային ուսուցողական-խորհրդատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղմթերքների արտադրության և վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ
2) Անցկացնել սեմինար դասընթացներ տնտեսվարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի արմատավորման ուղղությամբ
3) Ֆերմերներին տրամադրել խորհրդատվություն նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ
4) Մշակել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսությանը վերաբերող մասնագիտական աշխատանքների մասին

658. Գյուղատնտեսական հումքի վերամշակող կարողությունների ձևավորումը և գոյություն ունեցող արտադրական ծավալների ընդլայնումը հնարավոր է դրամաշնորհների, նպատակային վարկերի միջոցով

659. Ծրագրի իրագործման դեպքում կունենանք հետևյալ վերջնական արդյունքները՝

1) Մարզի հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովում բուսաբուծական մթերքների՝ հատկապես տարբեր պտղատեսակների, խաղողի բանջարեղենի արտադրության ծավալների ավելացում արդյունավետության բարձրացում, մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում, հատկապես պտղի և դրանց վերամշակումից ստացված արտադրատեսակների արտահանման ծավալների էական ավելացում,

2) Բույսերի պաշտպանության /հատկապես պտղատու այգիներում/ պայքարի կենտրոնացված միջոցառումների իրականացում,

3) Մարզում տոհմային տնտեսությունների ձևավորում, արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայման միջոցով կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում և կատարելագործում, տոհմաբուծական ծառայությունների ձևավորում,

4) Խոշոր ապրանքային ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորում,

5) Մարզում ապահովագրական համակարգի ձևավորման համար նախադրյալների ստեղծում,

6) Զարգացած համայնքային ենթակառուցվածքների առկայություն, մասնավորապես ներհամայնքային և միջհամայնքային բարեկարգ ճանապարհների, հուսալի գործող կապի և հաղորդակցության ապահովում,

7) Հետևողական և արդյունավետ կերպով կօգտագործվի մարզի հողային և մարդկային ռեսուրսները ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի ցանքերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով,

8) Կավելանա բուսաբուծական մթերքների, հատկապես խաղողի պտղի և բանջար-բոստանային կուլտուրաների արտադրության ծավալները, կբարձրանա ապրանքայնության մակարդակը կընդլայնվի խաղողի և պտղատու այգիների տարածքները և բանջար-բոստանային կուլտուրաների ցանքատարածությունները, որը հնարավորություն կտա ամեն տարի ավելացնել գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ բուսաբուծության և անասնապահության արտադրության ցուցանիշները տարեկան համապատասխանաբար 10% և 5%-ով,

9) Կավելանա անասնապահական մթերքների, հատկապես մսի, կաթի արտադրության ծավալները, բարձրացնել անասնապահական մթերքների ապրանքայնությունը և արտադրության արդյունավետությունը

10) Կընդլայնվի կերային բազան, կավելացնա բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալները, որը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել խոտհարքները և արոտները,

11) Կբարելավվի ոռոգման համակարգը, մասնավորապես կկառուցվի նոր և կվերանորոգվի առկա ջրագծերը, պոմպակայանները, ջրանցքները, կբարելավվի ոռոգման ներտնտեսային համակարգը և կվերանա ջրօգտագործման ասպարեզում առկա թերություններն ու բացթողումները,

12) Անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով կբարձրացնա գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը և ապրանքայնության

մակարդակը,

13) Յուրաքանչյուր տարածաշրջանում կստեղծվի գյուղատնտեսական մթերքների իրացման մեծածախ շուկա, դրանք կահավորելով պահպանման համար անհրաժեշտ սարքավորումներով,

14) Կիրականանա մասնագիտացված սերմնաբուծական տնտեսությունների ձևավորումը՝ մարզի գյուղացիական տնտեսությունների պահանջը բարձրորակ սերմացուների նկատմամբ բավարարելու նպատակով,

15) Կապահովվի գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական ձեռնարկությունների համար,

16) Հնարավորություն կստեղծվի նպատակային օգտագործել մարզում առկա գյուղատնտեսության գիտակ մասնագետների ուժերը, խորհրդատվությունը, կբարելավվի նյութատեխնիկական սպասարկումը, մատչելիությունը,

17) Կաջակցվի մարզում հողերի խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման գործընթացին,

18) Մարզի բնակչությանը սիստեմատիկաբար կիրազեկվի գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին

19) Ագրոտեխնիկական, զոոտեխնիկական, անասնաբուժական պահանջների կատարման ապահովում,

20) Գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացում,

21) Իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովում,

22) Օրենսդրական դաշտի կատարելագործում:

660. Մարզի գյուղատնտեսության ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 6-ում:

7.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Ոլորտի իրավիճակի վերլուծություն /օրենսդրական դաշտ, ինստիտուցիոնալ համակարգ/

661. Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտում քաղաքականությունն ու օրենսդրությունը հիմնականում ձևավորվել և կատարելագործվել են վերջին 20 տարիների ընթացքում:

662. ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

663. Միջազգային համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները, չվերականգնվող բնական ռեսուրսների բնական և արդյունավետ օգտագործումը:

664. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները առկա են նաև Արարատի մարզում: Դրանք են հանքային ռեսուրսների արդյունավետ և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը, բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և վերարտադրության բարելավումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման ինչպես նաև շրջակա միջավայրի վրա կազմակերպությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցության կանխարգելման կամ նվազեցման խնդիրները, մասնավորապես՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների և ջրային ռեսուրսներն աղտոտող նյութերի արտահոսքերի նվազեցման ուղղությամբ խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի, անապատացման կանխումը, անապատացմանը նպաստող գործոնների նվազեցումը, կանաչ տարածքների ավելացումը:

665. Վերջին տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված խնդիրների լուծման համար, ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր, իրականացվել ծրագրեր: Դրանցից են ՀՀ անտառային օրենսգիրքը /2005թ/ և Հայաստանի անտառների ազգային ծրագիրը /2005թ/ <<Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին>> ՀՀ օրենքը /2005թ/, <<Թափոնների մասին>> ՀՀ օրենքը /2004թ/, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենք /2006թ/, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը /2005թ/, <<Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին>> ՀՀ օրենքը /2006թ/, <<ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին>> ՀՀ օրենքը /2006թ/, <<Որսի և որսորդական տնտեսության վարման մասին>> ՀՀ օրենքը /2007թ/, <<Բուսական աշխարհի

մասին>> ՀՀ օրենքը /1999 թ./, <<Կենդանական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը /2000թ./ և այլն:

666. <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՀՀ նախագահի 1997թ մայիսի 6-ի 728 հրամանագրի 1.20 կետի համաձայն, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Արարատի մարզպետը՝

1) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում,

2) մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին,

3) աջակցում է պետական արգելոցների, պետական արգելավայրերի, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը,

4) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

667. Բնագավառի խնդիրներով զբաղվելու իրավասություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի

1) 32-րդ հոդված՝ համայնքի ղեկավարը օրենքով կամ կառավարության որոշմամբ սահմանված կարգով վարում է համայնքի բնապահպանական կադաստրը,

2)45-րդ հոդված

ա. հսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքներ ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման պահպանման միջոցառումները:

բ. ապահովում է հողերի պահպանությունը հողօտարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

668. Մարզում բնապահպանության ոլորտին հիմնականում առնչվում են հետևյալ կառուցվածքային միավորումները՝

1) ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը,

2) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Արարատի տարածքային բաժինը,
3) ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժինը,
4) Արարատի բնապահպանական տեղեկատվության հասարակական "ՕՐՀՈՒՍ" կենտրոնը,
5) Բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ /<<Էկոմշակույթ>>, <<ՏԱՐԵ>>/:

669. **Հողեր, կենսաբազմազանություն, բնատարածքներ -** Հողերի պահպանման հիմնախնդիրները խիստ արդիական են և պահանջում են նորարական մոտեցումներ: Տարիներ շարունակ արոտավայրերում հողատարածք տրամադրելու ժամանակ հաշվի չի առնվում անասունների արածեցման սահմանված նորմերը, մեծ թեքությամբ լանջերը և ժամկետները, որի հետևանքով չի կանխվում հողերի դեգրեդացիոն երևույթները, որը իր անմիջական ազդեցությունն է ունենում տարածքի կենսաբազմազանության վրա: Հողերի դեգրեդացիայի և կենսաբազմազանության կորստին նպաստում է նաև մարզի տարածքում արոտավայրերի չարաշահումը: Մարզում հողերի պահպանությանը, դեգրեդացիայի խախտումները նվազագույնի հասցնելու նպատակով իրականացվել է հողերի եռամսյակային մոնիթորինգ-դիտարկումներ և առաջարկվել է.

1) վաղ գարնանը անասուններին լեռնային արոտներ չբարձրացնելը,
2) արածեցման նորմերի պահպանում,
3) հեղեղավտանգ, ջրածածկման ենթակա հողատարածքներում շինարարական աշխատանքների կատարում,
4) որգելել ոռոգման սխալ կազմակերպումը, որի հետևանքով կկանխվի հողերի դեգրեդացիոն երևույթները:

670. 2011-2013թթ մարզի 70000 հա հեռագնա արոտավայրերում իրականացված բնապահպանական միջոցառումների շնորհիվ 18100 հա-ի վրա էռոզիոն երևույթները նվազել են:

671. Չնայած մարզում իրականացվում է հողի բերրի շերտի հանման, պահպանման և տեղափոխման աշխատանքները, սակայն դա դեռևս անբավարար է հողը որպես բնականոն էկոհամակարգի բաղադրիչ պահպանելու համար:

672. Հանքավայրերի շահագործումից հետո իրականացվող ռեկուլտիվացիոն /հողի վերականգնում/ աշխատանքները, ևս մեծ ազդեցություն են ունենում հողի պահպանման վրա:

673. Զոդի կորզիչ ֆաբրիկայում մոնիթորինգի անցկացումը, նոր սարքավորումների տեղադրումը, սահմանային թույլատրելի նորմերը

չգերազանցելու նպատակով հողի նմուշարկումը, հնարավորություն են տվել զգալիորեն՝ շուրջ 30 %-ով, նվազեցնելու շրջակա միջավայրի ախտոտվածությունը:

674. Մարզի հողերի պահպանման հիմնախնդիրներից մնում է Արաքս գետի ողողատները՝ պարբերաբար, գետավազի արդյունահանման հետևանքներով վտանգվում է հողատարածքների պահպանումը հեղեղումներից:

675. **<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց -** տարածքը կազմում է 23095.5 հա, ֆլորան պարունակում է 1686 բուսատեսակ՝ Հայաստանի Հանրապետության բուսատեսակների մոտ 50%-ը: Այդ բուսատեսակներից 146 գրանցված են եղել նախկին ԽՍՀՄ-ի և Հայաստանի Հանրապետության կարմիր գրքերում: Պահպանված են մշակաբույսերի վայրի ցեղակիցները, պտղատուներից վայրի տանձենին, խնձորենին, սալորենին, բալենին, արոսենին, սզնին, նշենին հացազգիներից՝ <<Վավիլովի>> աշորան: Արգելոցում պահպանվում են գիհու և կաղնու նոսր անտառները, լեռնային քսերոֆիտները, լեռնատափաստանային և օշինդրային կիսաանապատային ֆորմացիաները: Վերջիններս կարող են հետագայում հարուստ բազա դառնալ կլիմայի փոփոխության դեպքում նոր չորադիմացկուն սորտեր ստանալու համար:

676. Պետական արգելոցի տարածքում ապրում են 55 տեսակի կաթնասուններ, որոնցից են անդրկովկասյան գորշ արջը, վարազը, լայնականջ ոզնին, հայկական մուֆլոնը, բեզուարյան այծը, լուսանը, գայլը, աղվեսը: Կան թռչունների՝ 142 տեսակներ, սողունների՝ 33 և ձկների 5 տեսակներ:

677. 2011-2013թթ <<Խոսրովի Անտառ պետարգելոցի>> պահպանման համար իրականացվել են մի շարք բնապահպանական ծարագրեր՝ մասնավորապես պետբյուջեով ամեն տարի կատարվել են շուրջ 75 մլն դրամի աշխատանքներ, <<Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամ>>-ի /ԿՊՏՀ/ կողմից 2011-2013թթ ընթացքում իրականացվել է 107 մլն դրամի աշխատանքներ:

678. Իրականացված աշխատանքների շնորհիվ բարելավվել է արդյունավետությունը <<Խոսրովի անտառ>> պետարգելոցի անտառ պահպանության ուղությամբ, գիտական աշխատանքների որակը, ավելի սերտ են եղել համագործակցությունը ազգային ակադեմիայի բուսաբուծության և կենդանաբանության ինստիտուտների հետ: Էկոտուրիզմի զարգացման նպատակով ստեղծվել են ենթակառուցվածքներ՝ այցելուների համար հանգստի գոտիների կառուցում, երթուղիների բարեկարգում, գույքի և սարքավորումների ձեռքբերում և այլն: <<Խոսրովի անտառ պետարգելոց>>-ում վերջին 3 տարիների ընթացքում էականորեն նվազել է ապօրինի որսը, անասունների արածեցման դեպքերը:Խոտհնձի, ծառահատումների և այլ խախտման դեպքեր չեն գրանցվել:

679. **«Խոր Վիրապ» պետական արգելավայր -** տարածքը՝ 50.28 հա է գտնվում է Խոր Վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ <<Խոսրովի Անտառ>> պետական արգելոցի կազմում:

680. Արգելավայրում ամապատասխան միջոցառումների արդյունքում բարելավել է արգելավայրի ջրային տարածքում գտնվող բուսական և կենդանական աշխարհը, նպաստելով ջրաճահճային բույսերին և թռչունների զարգացման գործընթացին: 2013թ. «Խոր Վիրապ» պետական արգելավայրի հարևանությամբ անցնող դրենաժը լցված էր բնակավայրերի կոյուղաջրերով և արտադրական ձեռնարկությունների վտանգավոր թափոններով, որոնք չէին վնասազերծվել: Մարզպետարանի և այլ շահագռգիռ կազմակերպությունների ահազանգերի շնորհիվ արգելվեց այդ տարածքում էր բնակավայրերի կոյուղաջրերի և արտադրական ձեռնարկությունների վտանգավոր թափոնների արտանետումները:

681. **«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր -** տարածքը կազմում է 95.99 հա, գտնվում է Վեդի գետի ձախ ափում Ուրցասարի տեղամասի ստոին մասում՝ Գոռավան համայնքի սահմանագծում: Պահպանության օբյեկտներն են ավազային անապատին բնորոշ կենսաբանական աշխարհը և տիպիկ պսամոֆիլ բուսականությունը: Կարմիր գրքում են գրանցված տեղանքին հատուկ պարսկական կլորագլուխ մողեսը, միջերկրածքվային կրիան, բզեզների տարբեր տեսակները, բուսականությունից ուշինդրը, սապնարմատը, գազը իրեն տարատեսակներով և այլն: Էկոհամակարգի խախտմանը նպաստում են արգելավայրի տարածքում գարնանը և աշնանը անասունների արածեցումը, շարունակական բնույթ կրող ավազի արդյունահանումը, որը խիստ վատ է անրադառնում արգելավայրի էկոհամակարգի վրա:

682. **Բնության հուշարձաններ** - մարզում կան բնության 11 հուշարձաններ, որոնք ներառված են 2008թ. օգոստոսի 14-ի <<Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին>> N 967-Ն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում՝

1) «Անձավիկ» քարանձավ /Վեդի քաղաքից 50կմ հյուսիս արևելք/,

2) ″Դաշտաքար″ քարանձավ /Դաշտաքար գյուղից 02 կմ հարավ/,

3) «Մեծ հոր» անձավային համակարգ /Շաղափ գյուղից 3կմ հյուսիս արևելք/,

4) ″Անանուն″ շերտավոր նստվածք /Տիգրանաշեն – Պ.Սևակ գյուղ տանող ճանապարհի 17կմ-ի վրա/,

5) ″Անանուն″ անտիկլինալ ծալք /Երևան- Մեղրի խճուղու 81կմ-ի վրա/,

6) ″Անանուն″ ծալքավոր ստրուկտուրա /Երևան- Մեղրի խճուղու 81կմ-ի վրա/,

7) ″Անանուն″ ծալքագոյացման մերկացում /Ուրցաձոր գյուղից 4.5կմ դեպի հյուսիս Վեդի գետի աջ ափին/,

8) ,,Հորթունի,, բրածո ֆլորա /Զանգակատուն գյուղից 8կմ հյուսիս արևելք/,

9) ″Ջերմանիսի բրածո ֆլորա″ /Ուրցաձոր գյուղից 20 կմ հոսանքով վեր/,

10) ,,Վեդի գետի ավազանի,, բրածո ֆաունա /Վեդի գետի ավազան Ուրցաձոր գյուղից 15 կմ հյուսիս արևելք/,

11) <<Ջրաերկրաբանական հուշարձան>> Արարատի հանքային ջուր /Վեդի քաղաքից 2.5 կմ հյուսիս արևելք Բորոտ աղբյուրի կիրճում/,

12) <<Կենսաբանական հուշարձաններ>> աղակալած ճահճուտ /Արարատ քաղաք հանքային աղբյուրների մոտ ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա/ գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների հսկորության ներքո՝ նրանց կողմից պարբերաբար կատարվում են դիտարկումներ և ուսումնասիրություններ:

683. 2014թ. օգոստոսի 1-ի դրությամբ Արարատի մարզում գործում են Խոսրովի անտառ պետական արգելոցը, Խոր վիրապի, Գոռավանի ավազուտներ արգելավայրերը (Հավելված 7.1):

684. ՀՀ Արարատի մարզի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967 որոշմամբ (հետագա փոփոխություններով ու լրացումներով) (Հավելված 7.2):

685. **Ջրային ավազան -** Մարզի ջրային ռեսուրսները հիմնականում ձևավորվում են մարզի տարածքով հոսող 4 գետերով, 2 ջրամբարներով: մարզում ջրային ռեսուրսները օգտագործվում են հիմնականում որպես ոռոգման, հիդրոէներգիայի և ջրամատակարարման աղբյուր: Այդ պատճառով կլիմայի հնարավոր փոփոխության դեպքում նրանց խոցելիության գնահատումը և անհրաժեշտ հարմարվողական միջոցառումների իրականացումը ունի կենսական, կարևոր նշանակություն: Մարզի գետերի համար բնորոշ է տարեկան և բազմամյա հոսք, բաշխման անհավասարաչափություն, որը պայմանավորված է հիմնականում խառը՝ ձյունա-անձրևա-գրունտային սնուցմամբ:

686. Մարզի տարածքում սկիզբ են առնում երկու գետեր .

1)Վեդի գետը , որի երկարությունը՝ 58կմ է, ջրհավաք տարածքը՝ 998կմ^2, հոսքը՝ տարեկան 64 մլն մ^3:

2) Ազատ գետի երկարությունը՝ 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952 կմ^2, հոսքը՝ 217 մլն մ^3 /տարեկան/, որի վրա կառուցված է ,,Ազատ,, ջրամբարը 70 մլն մ^3 տարողությամբ:

687. Մարզի սահմանով է հոսում Արաքս գետը, նրա մեջ թափվող Հրազդան և Սև ջուրը գետերը: Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր: Եթե մարզի բարձրադիր վայրերում առաջանում է ջրի խնդիր՝ հիմնականում ոռոգման պատճառով, ապա արաքսամերձ հատվածում կա ջրի ավելցուկ, որը զգալի վնաս է հասցնում տնտեսություններին: Ազատ գետի ջրի օ.գ.գ.-ն մեծացնում է Ազատի ջրամբարը: Վեդի գետի օ.գ.գ.-ն շատ ցածր է՝ ջրի մեծ մասը ձմռանը և գարնանը տեղափոխվում է Արաքս գետ, իսկ ամռանը չի բավարարում նույնիսկ մոտիկ համայնքների հողերը ոռոգելուն:

688. Մարզում՝ հաշվի առնելով խմելու ջրի սակավությունը, կարելի է օգտագործել Ազատ գետի ջուրը՝ նկատի ունենալով ջրի բաղադրությունը և դիրքը, սակայն այդ ջուրը հնարավորություն չէ օգտագործել, քանի որ չի վնասազերծվում: Այդ պատճառով առաջնահերթ հիմնախնդիր է հանդիսանում ինֆիլտրացիոն կայանի կառուվումը:

689. Ոլորտի առաջնահերթ հիմնախնդիրներից է համարվում նաև Վեդի գետի վրա ջրամբարի կառուցումը:

690. Բավականին վատ իրավիճակում է գտնվում հատկապես Մասիսի տարածաշրջանի ջրային ավազանը: Երևանից և հարակից համայնքներից հոսող կեղտաջրերը իրենց հետ բերելով վտանգավոր նյութեր՝ սոլարայուղ, տեխնիկական յուղ, կիր, լցվում են դրենաժները՝ աղտոտելով շրջապատը, որի հետևանքով բարձրանում են ջրի մակարդակը և դանդաղացնելով նրա հոսքը, առաջանում են ճահճուտներ, որոնք խախտելով հողի կառուցվածքը առաջացնում են երկրորդական աղակալում: Վերջին տարիների ընթացքում դրա հետևանքով վնասվել է շուրջ 8000 հա տարածք:

691. Շրջակա միջավայրին և ջրային ավազանին մեծ վնաս են հասցնում օրեցօր ավելացող ձկնաբուծական տնտեսությունները, եթե 2009 թվականին մարզում ձկնաբուծական տնտեսությունների թիվը 138 էր, 2013թ. վերջում դրանց թիվը հասել է 162-ի:

692. Ձկնաբուծության նպատակով հորատված հորերի պատճառով մինչև 60 %-ով պակասել են խորքային հորերի ջրաելքերը, մի մասն էլ չի գործում հորատանցքի բացասական ճնշման արդյունքում: Փաստացի ջրօգտագործման ծավալը զգալիորեն գերազանցում է Արարատյան արտեզյան ավազանի վերականգնող պաշարներին:

693. Հետագա բացասական երևույթները կանխելու նպատակով ներկայումս չեն երկարացվում խորքային հորերի հորատման համար ջրօգտագործման թույլտվություն ստացած, սակայն հորատումը չիրականացրած տնտեսությունների ժամկետանց ջրօգտագործման թույլտվությունների գործունեության ժամկետները: Ջրերի ռացիոնալ օգտագործման և շրջակա միջավայրը գերխոնավությունից պահպանելու համար արգելվել է հետագայում նոր խորքային հորերի հորատումը՝ նոր ՋԹ-ների տրամադրումը:

694. 2013 թվականի վերջում մարզի 57 համայնքներում հաշվառվել է համայնքային պատկանելիության 599 խորքային հոր: Համայնքների ղեկավարների կողմից առաջարկվել է դրանցից լուծարել 75- ը և կոնսերվացնել 81 - ը:

695. Շահագործման համար ոչ պիտանի հորերի չլուծարելը և շահագործման համար պիտանի հորերի չկոնսերվացնելը նպաստում են ստորերկրյա ջրերի ռեսուրսների հյուծմանը, խոչընդոտներ է առաջացնում ջրային ռեսուրսների

քանակական բաղադրիչների, այդ թվում վերականգնվող ռեսուրսների գնահատման և ճշգրտման:

696. Մարզումի ջրային ավազանը բարվոք վիճակում պահպանելու համար կարևորվում է դրենաժային ցանցի վերականգնումը և մաքրումը: Մարզի 39 համայնքներում 2011-2013թթ. մաքրվել և վերականգնվել է 220 կմ երկարությամբ կոլեկտորային դրենաժային ցանց՝ իրականացվել է շուրջ 290.5 մլն դրամ արժողությամբ աշխատանքներ:

697. Դրենաժային ցանցի վերականգման և մաքրման հետևանքով էականորեն բարելավվել է գրունտային ջրերի մակարդակը, մեծամասամբ կանխվել է հողատարածքների գերխոնավացումը, աղակալումը և ճահճակալումը, բարելավվել է այդ տարածքներում հողի որակական հատկանիշները: Կատարված աշխատանքների շնորհիվ այդ տարածքներում բարձրացել է գյուղմթերքների արտադրությունը:

698. 2011-2013 թվականներին աշխատանքներ են կատարվել հեղեղատարների և գետերի մաքրման և ափամերձ հատվածների ամրացման ուղղությամբ, մասնավորապես՝ 2011թ. ընթացքում Արաքս գետի վթարված արգելաթմբի վերականգնում՝ 76 մլն 243,51 հազ. դրամ արժողությամբ. աշխատանքները իրականացվել են 4/4, 11/3 և 10 սահմանային նշանների հատվածներում, 2012թ Եղեգնավան և Լուսառատ գյուղական համայնքների տարածքներում կատարվել են Արաքս գետի ափապաշտպան կառույցի վերականգման աշխատանքներ 60մլն 82,299 հազ. դրամ արժողությամբ, 2013թ. Ազատ գետի կամուրջի վերակառուցման աշխատանքներ՝ 48 մլն 114,533 հազ. դրամ արժողությամբ, աշխատանքները իրականացվել են Ազատավան գյուղական համայնքի տարածքում:

699. **Օդային ավազան -** Մարզի օդային ավազանը կեղտոտվում է մարզին մոտ գտնվող՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2014թ. հունվարի 8-ի թիվ 2-Ա հրամանով հաստատված մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող ցանկում ընդգրկված է Արմավիրում գործող 156 կազմակերպությունների արտանետումնրից, որից 59-ն ունեն նաև մթնոլորտ արտանետումների չափաքանակներ/թույլտվություններ, ինչպես նաև մարզի տարածքում տարեցտարի ավելացող տրանսպորտային միջոցների արտանետումներից, կենցաղային և արտադրական կեղտաջրերից: Տարիներ շարունակ շրջակա միջավայրի համար հատկապես վտանգավոր են եղել Արարատի ցեմենտի գործարանի ցեմենտի և ազբոշիֆերի արտադրությունից մթնոլորտ արտանետվող, ինչպես նաև Զոդի ոսկու կորզման ֆաբրիկայի արտանետվող նյութերը:

700. 2011-2013թթ. ընթացում Արարատի ցեմենտի գործարանում տեղադրված ժամանակակից ֆիլտրերը, ցեմենտի աղացման և հավելանյութերի արտադրամասում նոր փոշեորսման սարքավորումները, ինչպես նաև Զոդի կորզման ֆաբրիկայի պոչամբարի կառուցվածքի վիճակը վերահսկելու համար տեղադրված ստուգիչ և

չափիչ սարքերը, պոչամբարի պատի բարձրացումը և խողովակաշարի վերականգնումը, զգալորեն շուրջ 50%-ով նվազեցրել են մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը: Արդյունքում էականորեն բարելավվել է շրջակա միջավայրի վիճակը:

701. Մթնոլորտային օդի ախտոտմանը նպաստում են նաև մարզի համայնքների աղբավայրերում կուտակված մարդկանց առողջությանը վտանգող պոլիէթիլենային թաղանթների այրումից առջացած թունավոր նյութերը:

702. Վերջին տարիներին աղբավայրերում՝ շահագոգիռ կազմակերպությաունների կողմից իրականացված հսկողության արդյունքում էականորեն նվազել է օդի ախտոտվածությունը: Պարբերաբար ֆերմերների հետ բացատրական աշխատանքներ են տարվել տերևների այրումից առաջացած ցորենի բերքահավաքից հետո դաշտում մնացած ծղոտի և խոզանի այրման բացսական հետևանքների մասին:

7.2 Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

703. ՀՀ Արարատի մարզում ներկայումս շահագործվում են պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի 63 հանքավայրեր: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրվել են երկրաբանական ուսումնասիրության 9 թույլտվություն: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո, օգտակար հանածոների պաշարների հաստատման արդյունքներով, կտրվեն օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություններ, ինչն էլ իր հերթին կնպաստի մարզում ֆինանսական ներդրումների ներգրավմանը, արդյունաբերական արտադրանքի աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

704. Հաշվի առնելով Արարատի մարզի բնապահպանության ոլորտում առկա հիմնախնդիրները Արարատի մարզում 2015-2018թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում՝ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում, մասնավորապես՝ Արարատի Ցեմենտի գործարանում և Զոդի ոսկու կորզիչ ֆաբրիկայում:

2) Տնտեսագիտորեն հիմնավորված բնօգտագործման վճարների համակարգի կիրառում և հավաքված գումարների օգտագործում բնապահպանական նպատակով,

3) “Խոսրովի Անտառ” պետական արգելոցում որսագողությունը արգելելու, անասնատերերին և ապօրինի տարածք մուտք գործելուն խոչընդոտելու համար, իրականացնել միջոցառումներ՝ հողատարածքների սեպաձևության վերացնելու նօպատակով,

4) Բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղված աշխատանքներում համայնքների մասնակցության ուժեղացում, այդ հիմնախնդիրների լուծման ուղիների վերաբերյալ անհրաժեշտ է .

ա) տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում,

բ) համայնքներում շրջակա միջավայրի պահպանության հասարակական խմբերի ստեղծում,

գ) դաշտապաշտպան անտառաշերտերի վերականգնում,

դ) բոլոր ճանապարհների երկայնքով անտառաշերտերի հիմնում:

5) Արոտավայրերի կառավարման պլանների մշակում /վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ/:

6) Մարզում կանաչ գոտիների ընդլայնում /անտառի հիմնում, որը կունենա ճանաչողական, ուսուցողական և դաստիարակչական նշանակություն, հետագայում ռեկրեցիոն գոտի ստեղծելու նպատակով/:

7) Արտեզյան ջրերի օգտագործման և շահագործման տնտեսապես հիմնավորված չափաբաժինների և ռեժիմների մշակում և ներդրում:

8) Աղակալման, ճահճակալման, անապատացման դեմ պայքարելու և կրկին գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու նպատակով դրենաժների մաքրման աշխատանքների ընդլայնում:

9) Մարզի քաղաքներում կառուցել կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայաններ:

10) Համայնքներում կազմակերպել արդյունաբերական և կենցաղային թափոնների առանձնացված հավաքում:

11) Ազատի ջրամբարի վրա ինֆիլտրացիոն կայանի կառուցում:

12) Վեդի գետի վրա ջրամբարի կառուցում:

13) Հողերի էրոզիոն պրոցեսների նվազեցման նպատակով համայնքների ամառային արոտավայրերում անասունների արածեցման սահմանված նորմերի և ժամկետների պահպանում:

14) Հեղեղատարային հոսքերով ջրածածկվող և ողողումներ սպասվող տարածքներում շինարարական աշխատանքների կատարում:

15) Աղբի վերամշակման գործարանի ստեղծում:

16) ոռոգման նոր մեթոդների՝ ստորգետնյա ոռոգման ցանցի անցկացման, կաթիլային և անձրևացման եղանակների ներդրման մեխանիզմների մշակում.

17) ոռոգման համակարգերի վերականգնման, հոսակորուստների նվազեցման մեխանիզմների մշակում.

18) ստորգետնյա քաղցրահամ ջրերի ձկնաբուծության մեջ օգտագործելու արգելման մեխանիզմների մշակում.

19) ձկնաբուծության նպատակով հորատված հորերի արդյունահանված ջրերի կրկնակի օգտագործման մեթոդների և մեխանիզմների մշակում.

20) ջրային ռեսուրսների պաշարների կառավարում և օգտագործում՝ Արարատյան դաշտի ջրավազանային կառավարման պլանի պահանջներին համապատասխան.

21) աղտոտված, դեգրադացված հողերի վերականգնում և մոնիթորինգի ծրագրերի իրականացում միջոցառումները, որոնք հիմք կհանդիսանան մարզում դեգրադացիայի ենթարկված հողատարածքների ուսումնասիրության, կենսաբանական վերակուլտիվացման ուղղությունների մշակման և մոնիթորինգային ցանցի ստեղծման համար:

705. Մարզի տարածքում բնապահպանության ոլորտի 2015-2018թթ. ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է (Հավելված 7.3 ում):

8. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

8.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

706. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը:

707. Զբոսաշրջությունը նաև Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: Համաձայն պաշտոնական տեղեկատվության՝

2012 թվականի հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 843330 զբոսաշրջիկներ կամ 2011 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 11.3%: 2012 թվականի հունվար-դեկտեմբերին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 806555 մարդ կամ 2011 թվականի համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 12.8%:

708. 2013 թվականի հունվար-մարտին հանրապետություն են ժամանել 128237 զբոսաշրջիկներ 2012 թվականի նույն ժամանակաշրջանի 104374 զբոսաշրջիկի փոխարեն կամ ցուցանիշը աճել է 22.9%: 2013 թվականի հունվար-մարտին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 137128 մարդ 2012թ. համապատասխան ժամանակաշրջանի 120050 զբոսաշրջիկի փոխարեն կամ ցուցանիշն աճել է 14.2%:

709. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի զարգացման տեմպերը ներկայացված է աղյուսակ 8.1 –ում:

Աղյուսակ 8.1. Զբոսաշրջության ոլորտի զարգացումը 2011-2025 թթ.

	2011	2017	2021	2025
Ներգնա տուրիզմը, հազար մարդ	757.9	1351.2	1907.3	2692.3
% 2011 նկատմամբ	100.0	178.3	251.6	355.2
Արտագնա տուրիզմը, հազար մարդ	715.0	1232.9	1677.3	2282.0
% 2011 նկատմամբ	100.0	172.4	234.6	319.2
Ներգնա տուրիզմի ծախսերը, միլիոն ԱՄՆ դոլար	513.0	1030.0	1573.7	2404.5
% արտահանման	21.6	25.5	24.9	24.1
Արտագնա տուրիզմի ծախսերը, միլիոն ԱՄՆ դոլար	513.5	1130.2	1869.0	3090.7
% ներմուծման	10.7	18.9	22.8	27.4
Զբաղվածությունը տուրիզմի ոլորտում, հազար	20.6	23.9	26.0	28.3
% ոչ գյուղատնտեսական զբաղվածության	2.9	3.0	3.0	3.0

Աղբյուրը՝ Հաշվարկված է ԱՎԾ, Էկոնոմիկայի նախարարության, Համաշխարհային բանկի World Development Indicators 2010, 2011, 2012 տարեգրքերի տվյալների հիման վրա, ՀԶԾ կանխատեսումներ:

710. Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը: Հայաստանում մոտ 20 հազար մարդ ուղղակիորեն աշխատում է զբոսաշրջության ոլորտում (ընդհանուր աշխատուժի 1.7%-ը): Ներկայումս զբոսաշրջությունն ապահովում է Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 4.7%-ը, ըստ 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի, մինչև 2030 թվականը նախատեսվում է այն հասցնել մինչև 12 տոկոսի: Ակնալվում է, որ մինչև 2020 թվականը Հայաստան կայցելեն 1.5 մլն զբոսաշրջիկ, իսկ մինչև 2030 թվականը՝ մինչև 3 մլն: Այս առումով զբոսաշրջության բերած եկամուտները կավելանան:

711. ՀՀ կառավարության կողմից 2013 թվականի հոկտեմբերի 23-ին ընդունվեց Հայաստանում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները, որով Հայաստանը հռչակեց ավիացիայի ոլորտում ազատականացման և բաց երկնքի քաղաքականության որդեգրման մասին: Նոր քաղաքականության իրականացման արդյունքում ակնկալվում է ՀՆԱ և զբաղվածության վրա դրական ազդեցություն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի հավելյալ զբոսաշրջիկների կողմից իրականացվող լրացուցիչ ծախսերով: Բաց երկնքի քաղաքականության ներդրումը դրականորեն կանդրադառնա շահառուների մեծամասնության տնտեսական շահերի վրա: Մասնավորապես, զբոսաշրջության ոլորտում նոր քաղաքականությունը կնպաստի ներգնա զբոսաշրջիկների թվի աճին և աշխարհագրության ընդլայնմանը: Այդ թվում, հայկական սփյուռքը առավել մեծ հնարավորություններ կունենա հայրենիքի հետ կապերը խորացնելու համար՝ ինչպես մասնավոր այցերի, այնպես էլ՝ բիզնեսի վարման տեսանկյունից: Օդանավակայանը կունենա ավիափոխադրումների ավելի մեծ շրջանառություն և կարող է ներգրավել առավել բարձր հաճախականությամբ ավիափոխադրողների՝ տրամադրելով իջեցված վճարներ, ինչպես նաև աջակցելով նոր ուղղությունների շուկայական ուսումնասիրությանը: Գործարար շրջանակները կունենան գործարար հաղորդակցության համար առավել հարմարավետ (ժամկետներ, ծախսեր) պայմաններ և ընդլայնված հնարավորություններ:

712. Այս ամենին զուգահեռ Արարատի մարզում ոլորտի զարգացման դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի Հանրապետության զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը զուգընթաց կարևորվում է Արարատի մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման կայուն և դինամիկ աճի ապահովվումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա, այսօրվա շուկայական հարաբերությունները լայն հնարավորություններ են տրամադրում զբոսաշրջության զարգացման շնորհիվ հարստացնելու պետական և տեղական բյուջեները ու նկատելի բարելավելու մարզի սոցիալ-տնտեսական վիճակը:

713. <<Համաշխարհային բանկի>> միջոցներով իրականավող միջպետական “Հյուսիս- զբոսաշջության հարավ ավտոճանապարհի”-ի գործարկումը մեծ խթան կհաղորդի Արարատի մարզում ոլորտի զարգացմանը:

714. Մարզի զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է հուշանվերների շուկայի առկայությունը և զարգացումը: Մարզում կան շնորհալի վարպետներ, որոնք այսօրվա դրությամբ կատարում են սակավաթիվ պատվերներ կամ էլ իրացնում են իրենց արտադրանքը մայրաքաղաքում և Հանրապետության սահմաններից դուրս: Այս պահի դրությամբ միայն Խոր Վիրապ վանք տանող ճանապարհի երկարությամբ է տեղադրված մարզի տեսարժան վայրերի նկարները, իրականացվում է հուշանվերների վաճառք շատ չնչին քանակությամբ, ոչ միշտ գործում են փոքրիկ սրճարաններ Պահանջարկի առկայության դեպքում հուշանվերների շուկան մարզում շատ արագ կարող է վերականգնվել այս վարպետների և առևտրական կազմակերպությունների միջոցով:

715. Մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել մարզում արտադրվող Արարատյան դաշտի չկրկնվող, անուշահամ մրգերի բազմատեսակ շուկան:

716. Արարատյան դաշտի բնապատկերը՝ Բիբլիական Արարատ լեռով, մշտապես հանդիսացել է զբոսաշրջային գրավչության տարր, մանավանդ սփյուռքահայերի համար:

717. **ՀՀ Արարատի մարզի զբոսաշրջային ներուժի նկարագրությունը:** Մարզի տարածքով անցնում է Վրաստան – Հայաստան - Իրան միջպետական տուրիստական երթուղին, որը ներկայումս մեծ հետաքրքրություն է առաջացնում Եվրոպական տուրիստական շուկայում: Արարատի մարզը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի հայտնվել է այդ երթուղում և այն նպաստավոր է միջպետական և միջմարզային տուրիզմ կազմակերպելու համար:

718. Արարատի մարզը՝ 2.1 հազար քառ. կմ տարածքով, ունի հետաքրքիր ռելիեֆային մակերևույթ, այն բաժանված է 2 հավասար մասերի՝ լեռնային և հարթավայրային: Հարթավայրային մասը կազմված է Արաքս, Ազատ և Վեդի գետի գետաբերուկներից: Մարզի տարածքի 60 %-ը գտնվում է 1000մ-ից 2000մ բարձրությունների վրա: Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների հարավ և հարավ - արևմտյան լեռնաբազուկները: Գեղամա լեռներին միակցված է մեկ այլ բազուկ Երանոսը, որը ձգվում է Ազատ գետի ձախ ափով: Երանոսի, Ուրծի, Դահնակի և Գեղամա լեռնաշղթաները հարմար են լեռնագնացության, ձիերով արշավների և բնական տուրիզմի համար:

719. Արարատի մարզը գտնվում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան հայոց, Ուրծ և Արած գավառների տարածքում և ունի հարուստ պատմական անցյալ: Այստեղ են գտնվում հին Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքների ավերակները: Մարզի տարածքում պահպանվել են ամրոցներ, եկեղեցիներ, մատուռներ, դամբարանադաշտեր, քարայր-կացարաններ հազարավոր խաչքարեր: Մարզի տարածքում են գտնվում պետական գործիչ Վազգեն Սարգսյանի և մեծանուն գրող Պարույր Սևակի տուն թանգարանները, որոնք սակայն ներկայումս հետաքրքրություն են ներկայացնում հիմնականում ներքին զբոսաշրջության համար:

720. Պատմահուշարձանների առատությունը, որն ունի տուրիստներին հետաքրքրելու որոշակի ներուժ, կարիք ունի վերանորոգման և ամենակարևորը գովազդի:

721. Մարզում կազմակերպվում են մի շարք ազգային տոնակատարություններ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում տուրիզմի տեսանկյունից՝ գարնանը տոնում են Տերն Ընդ Առաջ և Զատիկ տոնակատարությունները, ամռանը՝ <<Ծաղկի տոն>>-ը և <<Վարդավառ>>-ը, աշնանը՝ <<Խաղողօրհնեք>>-ի և <<Բերքի տոն>> տոնակատարությունները, որոնք կարող են հետաքրքրել արտերկրյա տուրիստներին, հատկապես հայկական սփյուռքի այն ներկայացուցիչներին, որոնք այցելում են Հայաստան՝ իրենց պատմական հայրենիքի պատմությանը և մշակույթին ծանոթանալու համար:

722. Արարատի մարզում բնական տեսարժան վայրերի և պատմամշակութային հուշարձանների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն ‘Խոր Վիրապ’

պատմաճարտարապետական համալիրը, <<Խոսրովի անտառ>> արգելոցը, Արաքս գետին հարող ջրաճահճային տարածքները, <<Գոռավանի ավազներ>> արգելավայրը, ինչպես նաև ՀՀ Արարատի մարզում գտնվող բնության հուշարձաններ՝ դրանց անձնագրերի կազմումից հետո:

723. <<Խոր Վիրապ>> վանական համալիր Խոր Վիրապ' պատմաճարտարապետական համալիրը 17-րդ դարի վանք - ամրոցային համալիր է, որը գտնվում է Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի մոտակայքում՝ բլրի վրա: Այստեղ է գտնվել հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկը՝ կապված Ս. Գրիգոր Լուսավորիչի անվան հետ: Այս տարածքում է գտնվել Արտաշատ քաղաքը, իսկ Խոր Վիրապի բլուրների վրա՝ միջնաբերդը: Վիրապն օձերով, թունավոր միջատներով լի մի խոր փոս էր, ուր գցում էին դատապարտյալին: Ըստ Ագաթանգեղոսի և մյուս պատմիչների՝ Գրիգոր Լուսավորիչը 13 տարի Խոր Վիրապում է կրել իր չարչարանքները: V-րդ դարում այս վայրում հիմնվել է վանք և հաստատվել միաբանություն, իսկ Ներսես Շինարար կաթողիկոսը Ս.Վիրապի վրա նոր եկեղեցի է հիմնել: Խոր Վիրապ եկեղեցին XIII դ. եղել է դպրության կենտրոն, ունեցել է վարպետատուն՝ մոտ 40 աշակերտով, ուսուցչապետեր են եղել Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին, Ներսես Մշեցին:

724. <<Խոր Վիրապ>> պատմաճարտարապետական համալիրի հարակից ջրաճահճային տարածքը տուրիզմի պլանավորման համար առաջնակարգ լանդշաֆտային օբյեկտ է և հարմար է էկոտուրիզմի զարգացման համար:

725. <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցը ձևավորվել է 1958թ.՝ իր յուրահատուկ ֆլորայի և ֆաունայի պահպանության նպատակով: Զբաղեցնում է շուրջ 29 հազ. հա տարածք: Այստեղ է գտնվում Արարատի մարզի ամենաբարձր գագաթը:

726. Արգելոցի տարածքում հաշվառված են 1800 տեսակի բարձրակարգ բույսեր, ձկների՝ 7, փափկամորթների՝ 60, սողունների՝ 30, թռչունների՝ 130, կաթնասունների՝ 40 տեսակներ: Այստեղ բուսական շատ համակեցություններ եզակի են աշխարհում: Տարածքի 18%-ը անտառածածկ է: Կենդանական աշխարհի բնորոշ ներկայացուցիչներն են բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, անդրկովկասյան գորշ արջը, հովազը: Արգելոցը ունի հարուստ թռչնաշխարհ՝ կասպիական ուլար, սպիտակագլուխ և սև անգղ, բերկուտ, կաքավ: Գետերում կա կարմրախայտ: Նախալեռնային մասում տարածված են օշինդրը, ուխտափուշը, կապառը, անթառամ ծաղիկները, աճում են կաղնի, բոխի: Լեռնային տարածքներում լայն տարածում ունեն գիհու նոսր անտառները, որպես յուրօրինակ լանդշաֆտներ, դրանք ունեն բնապահպանական մեծ նշանակություն: Վեդի գետի վտակներից Խոսրովը հոսում է <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցի տարածքով և ունի գեղատեսիլ հովիտ: <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցում են գտնվում Աղջոց և Հավուց թառ վանական համալիրները:

727. <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցը համարվում է արևելյան փոքր Կովկասի առաջնահերթ պահպանվող տարածքներից մեկը:

728. Ազատ և Վեդի գետերի կիրճերում կարելի է առանձին բարձրունքներից իրականացնել թռչունների դիտարկումներ, կենսաբազմազանության ուսումնասիրության շրջանակներում գիտական տուրիզմ:

729. Արաքս գետին հարող ջրաճահճային տարածքներ Արաքսի ողողատների ճահճուտները ներկայացված են ջրասեր և ջրաաղասեր բույսերով՝ վայրի անանուխ, որնախոտ, լայն տարածում ունեն եղեգնուտները: Ջրաճահճային այս տարածքները համարվում են Ռամսար տարածքներ/ <<Ռամսարի խոնավ տարածքների մասին >> կոնվենցիա/ և ունեն բարձր արժեք, որպես էկոհամակարգեր, որոնք համապատասխան ամբողջական փաթեթի առաջարկման դեպքում կարող են հանդիսանալ բարձրարժեք տուրիստական ռեսուրսներ՝ էկոտուրիզմի կազմակերպման և զարգացման համար:

730. Արարատի մարզում առկա բնական տեսարժան վայրերը և պատմամշակութային հուշարձանների առկայությունը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու տուրիզմի հետևյալ ձևերը

1)էկոտուրիզմ /Խոր Վիրապ – ջրաճահճային տարածքներ, <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց/,

2)գիտական տուրիզմ /ջրաճահճային տարածքներ, <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց/,

3)բնական տուրիզմ /Գեղամա, Ուրծ, Դահնակ և Երանոս լեռներ/,

4)պատմամշակութային /Խոր Վիրապ, Արտաշատ և Դվին քաղաքատեղիներ, Աղջոց և Հավուց թառ վանական համալիրներ, պատմական այլ հուշարձաններ/,

5)գյուղատնտեսական:

731. Մարզում զբոսաշրջության զարգացմանհիմնախնդիրներն են .

1) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը,
2) գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը,
3) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը,
4) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը:

732. Մարզում տուրիզմը թերևս թույլ է զարգացած, պատճառը տուրիզմի հիմնական ենթակառուցվածքների բացակայությունն է և մարզի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրությունը: Անհրաժեշտ է մշակել մարզի տուրիստական պոտենցիալը ներկայացնող տուր-փաթեթներ և դրանք առաջադրել տուրիստական միջազգային կազմակերպություններին:

733. Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը հետաքրքիր առավելություն է ներկայացնում գյուղական տուրիզմի զարգացման համար: Էկոլոգիապես մաքուր և համային բարձր արժեքներով օժտված գյուղատնտեսական մթերքները առանձնակի նշանակություն ունեն տուրիզմի տեսանկյունից, որը կարող է դառնալ տուրիստների սպասարկման կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը:

734. Տուրիզմի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ինչպես համապատասխան տարածքներում հյուրանոցային հարմարությունների և

հյուրընկալական տների սակավությունը /մարզում գործում են ընդամենը 4 հյուրանոցներ/ կենցաղային ոչ բավարար պայմաններով, այնպես էլ ճանապարհների անբարեկարգ վիճակն ու տրանսպորտի բացակայությունը: Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ ճանապարհների վիճակը վատ է հատկապես նախալեռնային և լեռնային համայնքներում, որտեղ կենտրոնացած են պատմամշակութային հուշարձանների մեծ մասը:

735. Մարզում չկան տուրիզմի հիմնական ենթակառուցվածքներ՝ տուր-օպերատորներ և տուր-գործակալություններ: Վեդի քաղաքում գործում է մարզում միակ տուրիստական <<Ասս-կլուբ-սերվիս>> կազմակերպությունը, որն իրականացնում է ձիավարության համար ձիերի վարձույթ, լեռնային ուղեկցողների ծառայությունների մատուցում:

736. **Մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են.**

1) Արարատի մարզի հեռավորությունը Երևանից /միջազգային օդանավակայանից /մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության մայրուղին միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, Երևան-Մեղրի երկաթուղագծի առկայության և զբոսաշրջության զարգացման համար ենթակառուցվածքներ ստեղծվելու դեպքում, այդ հեռավորությունը կարող է վերածվել զբոսաշրջության զարգացման համար կարևոր գործոնի, քանի որ զբոսաշրջային տեսանկյունից պատմամշակութային և բնության հուշարձանների առումով այն հետաքրքրություն է ներկայացնում և կարող է դառնալ Հայաստանի կարևոր զբոսաշրջային երթուղիներից մեկը/
2) մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դեռևս ոչ բավարար մակարդակը
3) զբոսաշրջային տնտեսության բացակայությունը
4) գործող զբոսաշրջային կազմակերպությունների սակավությունը
5) զբոսաշրջության կտրվածքով մարզի վերաբերյալ գովազդային նյութերի սակավությունը
6) մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների անկատարությունը
7) հստակ վիճակագրական տվյալների բազայի բացակայությունը, ֆինանսական միջոցների սղության պատճառով պատմամշակութային հուշարձանների և այլ գրավչությունների ոչ պատշաճ պահպանությունը
8) միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական և որակական վիճակների անբավարար լինելը
9) Արարատի մարզում երկաթուղային տրանսպորտի բացակայությունը
10) զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի սակավությունը:

8.2 Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

737. Միջպետական “Հյուսիս-հարավ ավտոճանապարհի”-ի կառուցումը և շահագործումը կարևոր խթան կհանդիսանա ՀՀ Արարատի մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը՝ զգալիորեն կավելացնի զբոսաշրջիկների այցելությունը Արարատի մարզ: Մի քանի անգամ կավելանա արտասահմանցի զբոսաշրջիկների թիվը:

738. Վերջին տարիների Արարատի մարզում սկսել են կառուցել «հացուկաց» տեսակի կացարանները՝ մոթելներ, որտեղ օրվա կեցության արժեքը կազմում է շուրջ 12-20 հազ. դրամ, ներառյալ՝ նախաճաշը: Զբոսաշրջության ակտիվ սեզոնին որոշ հյուրանոցներում գները կարող են 10-15%-ով բարձր լինել, քան աշնանը կամ գարնանը, այս զարգացման դեպքում, նմանատպ հյուրնոցների շատացման դեպքում ,այն իր անմիջական ազդեցությունը կունենա զբոսաշրջության ոլորտի ակտիվացման և զարգացման վրա Արարատի մարզում և որի արդյունքում կլուծվեն նաև մի շարք սոցիալական հիմնախնդիրներ (աշխատատեղերի ստեղծում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, շուկայի ընդլայնում և այլն):

739. Հաշվի առնելով վերոնշյալը ՀՀ Արարատի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

1) Արարատի մարզային զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել արդյունաբերության և գյուղատնտեսության կողքին՝ նպաստելով մարզի տնտեսության զարգացման գործընթացին: Մարզի զբոսաշրջության զարգացման ծրագիրը համաձայնեցնել մարզի սոցիալ-տնտեսական ծրագրի և ազգային անվտանգության էկոլոգիական գործոնների հետ

2) Համագործակցություն ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների միջև, որի իրականացումը հնարավորություն կընձեռի վեր հանել ՓՄՁ զարգացման այլ կարիքներ, որոնք կհոգան ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնը և այլ դոնոր կազմակերպություններ՝ նման կլաստերների ստեղծման և զարգացման հետագա ընթացքում

3) Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգում, վերակառուցում, կառուցում, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրում, մարզում գործող վանական համալիրների վերանորոգման վերջնական ավարտում, առանձին համալիրների վերանորոգում, վերակառուցում կամ մասնակի նորոգում, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգում

4) Մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում, մասնավորապես արտասահմանյան ներդրողների ներգրավման արդյունքում

5) Երկաթուղային տրանսպորտով կապի ապահովում Երևանի և արտաքին աշխարհի հետ: /Իրան-Հայաստան երկաթգծի շինարարության մեկնարկ/

6) Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Արարատի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ տարածքի նկարագրի ձևավորումը և միջազգային շուկայում ներկայացումն ու ամրապնդումը, մարզի ինտերնետային կայքում զբոսաշրջության վերաբերյալ վեբ էջի ստեղծում և էջի արհեստավարժ կառավարում

7) Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում բարձրացնել Արարատի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար

8) Զբոսաշրջության զարգացման առաջնային ձևերի կիրառում:

740. Զբոսաշրջության բոլոր տեսակների ուսումնասիրությունը, ինչպես նաև Արարատի տարածաշրջանում զբոսաշրջության ներուժի և նախադրյալների առկայությունը հուշում են, որ տարածաշրջանում գիտաճանաչողական, տարանցիկ, հետիոտն, գիտական, սպորտային, հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական տեսակների զբոսաշրջության զարգացման անհրաժեշտության մասին: Ընդ որում, եթե բուժաճանաչողական և հանգստի կազմակերպման զբոսաշրջության տեսակների զարգացման համար տեղավորման հարմարավետությունը, սպասարկման մակարդակը կարևոր գործոններ են, ապա տարանցիկ, հետիոտն, սպորտային (ալպինիզմ) տեսակները պակաս պահանջկոտ են վերը նշված գործոնների նկատմամբ և բացի այդ, տարանցիկ զբոսաշրջությունը յուրահատուկ կայունացնող դեր կարող է խաղալ: Այսպես՝ մեծ քանակությամբ արտասահմանյան զբոսաշրջիկների անցուդարձը տարածաշրջանում կարող է մեծ կայունացնող նշանակություն ունենալ Արարատի մարզի աշխարհաքաղաքական իրավիճակի վրա: Տարանցիկ զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է մարզի տարածքում զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին կամ դրանց կառուցումը նպատակահարմար կետերում: Այս խնդիրը հնարավոր է լուծել պետություն-մասնավոր հատված կապի արդյունավետ օգտագործմամբ:

741. Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից է զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը, որի հեռանկարում Հայաստանը մասնավորապես Արարատի մարզը հետաքրքրություն կառաջացնի միջազգային կազմակերպությունների կողմից մարզում ներդրումներ իրականացնելու համար, որը իր անմիջական դրական ներգործությունը կունենա մարզի տնտեսական զարգացման վրա:Հատուկ ուշադրության են արժանի գիտական և գիտաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման հեռանկարները: Անհրաժեշտ է իրականացնել պեղումներ և նմանատիպ այլ աշխատանքներ, որոնց նպատակահարմարությունը մարզի տարածքում կասկած չի հարուցում:

742. Ինչ վերաբերվում է հետիոտն սպորտային /ուխտագնացություն/ զբոսաշրջության տեսակներին, ապա այն կարելի է ոչ մեծ ներդրումների շնորհիվ է իրականացնել և հետագայում զարգացնել:

743. Մարզում զբոսաշրջության առաջնահերթ ձևերի (տարանցիկ սպորտային, հետիոտն) զարգացմանը զուգընթաց կստեղծվի նպաստավոր դաշտ հանգստի

կազմակերպման և բուժաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման համար.

1) Արարատի մարզի գլխավոր զբոսաշրջային գրավչության՝ Խոր Վիրապի վանքի վերանորոգումը նախորդ տարիներին արդյունավետ իրականացվել է, որը իր մեծ ազդեցությունն ունեցավ մարզ հաճախող զբոսաշրջիկների քանակի ավելացման վրա: Վանքի մոտակայքում տուրիստական համալիրի ստեղծումը Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության զարգացման խթան կհանդիսանա, քանի որ Երևանից մինչև Տաթև զբոսաշրջիկները հնարավորություն կստանան մեկ երթուղու վրա այցելել Խոր Վիրապ, Նորավանք, Ձորաց քարերի աստղադիտարան, Տաթև և այլն
2) Հյուրատների և հյուրասիրության ծառայությունների համակարգի զարգացում
3) Համայնքահեն տուրիզմի (զարգացման խթանում: Այս բնագավառը չափազանց կարևոր է Արարատի մարզի համար, քանզի այն իրենից ներկայացնում է տնտեսական գործունեության մի ձև, որի վրա զգալի թվով ներգրավված տեղական բնակչությունն ունի լուրջ վերահսկողություն, ներգրավվածություն և կառավարում, ինչպես նաև եկամուտների հիմնական մասն էլ մնում է տեղական տնտեսության մեջ: Համայնքի անդամները, անգամ նրանք, ովքեր ուղղակի ներգրավված չեն տուրիստական ձեռնարկություններում, ևս որոշակիորեն օգտվում են (հարկերի տեսքով ընդհանուր համայնքի եկամուտներ, բազմապատկիչ էֆեկտ և այլն.):

744. **Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը -** Մարզում զբոսաշրջության կենտրոնի ստեղծում՝ ստեղծել այցելուների կենտրոն, որը այցելուներին կտրամադրի տեղեկություններ Արարատի մարզի զբոսաշրջային հնարավորությունների վերաբերյալ, կհամագործակցի Հայաստանի և արտերկրի տուր-օպերատորների հետ՝ գործունեությունը կազմակերպելով պրոակտիվ հիմունքներով: Կենտրոնի կողմից կկազմակերպվեն փառատոններ և միջոցառումներ, գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառներ, կիրականացվեն ուսումնական ծրագրեր: Կենտրոնը կիրականացնի նաև ինտերնետային կայքի վարում, քարտեզների, գրքույկների, տեղեկատվական բուկլետների հրատարակում, կհանդիսանա մարզում զբոսաշրջության խթանման առաջնային պատասխանատուն:

1) Առանձնացնել հենակետային զբոսաշրջային կենտրոններ և դրանց շուրջ ստեղծել ենթակառուցվածքներ (ավտոկանգնատեղիներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ):

2) Ջրաճահճային արգելոցի տարածքում տեղադրել դիտակետեր, կառուցել անցուղիներ, կազմել թռչունների տեսակների ցանկը:

3) Ընդլայնել ամենամյա կազմակերպվող Բերքի, Խաղողօրհնեքի, Տերն Ընդ Առաջի և Ձատկի տոնակատարությունները:

4) Կազմակերպել ուսուցում գիդերի, տուր-օպերատորների, ուղեկցողների, <<Մահճակալ և նախաճաշ>> հյուրընկալական տների տերերի, սպասարկման ոլորտի աշխատողների համար:

5) Կազմակերպել լեռնային հեծանվավազքի, ձկնորսության և կանյոնինգի միջոցառումներ:

6) Որոշել տուրիստական սահմանային թույլատրելի նորմեր <<Խոսրովի անտառ>> արգելոցի համար:

7) Կազմել և հրատարակել քարտեզներ՝ ըստ թեմատիկ երթուղիների:

8) Ստեղծել Արարատի մարզի տուրիստական ինտերնետային կայք:

9) Խոր Վիրապ տանող ճանապարհի երկարությամբ տեղադրել մարզի տեսարժան վայրերի նկարները, տեղադրել հուշանվերների կրպակներ, կառուցել փոքրիկ սրճարաններ:

10) Կազմակերպել մարզի գովազդը արտաքին և ներքին զբոսաշրջային շուկաներում:

745. Մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման 2015-2018թթ. ֆինանսավորումը ներկայացված է Հավելված 8 ում:

9. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

746. Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

9.1. Բնակավայրերի տարածական պլանավորում

747. Մարզի համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների հաշվարկի հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբեր 3–ի նիստի թիվ 36 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթները:

748. Համաձայն համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի հիմնադրույթների 8-րդ կետի 38 ենթակետի՝ մարզի գյուղական համայնքների գերակշիռ մասի համար կարելի է կիրառել պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման օպտիմալացման սկզբունքը, որի արդյունքում գլխավոր հատակագծերի մշակման արժեքը զգալիորեն նվազում է:

749. Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 34-րդ կետով սահմանված է, որ պետության կողմից համայնքներին որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից առաջացած ֆինանսական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների և գոտևորման այլ փաստաթղթերի մշակմանը:

750. Մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայր ստեղծելու համար, նախատեսվում է կազմել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքների գլխավոր հատակագծերը: Կազմվել և արդեն կիրառության մեջ են Արարատ, Արտաշատ, Վեդի և Մասիս քաղաքային համայնքների գլխավոր հատակագծերը, մյուս 93 համայնքները չունեն գլխավոր հատակագծեր, որոնց համար ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է 325.5 մլն դրամ: Երկու համայնքների՝ Ղուկասավան և Այգեպատի համար կազվել է գոտևորման նախագծեր: 11 գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի կազմումը ընթացքի մեջ է, որոնց կատարման առաջադրանքները հաստատվել են համայնքների ավագանու կողմից:

751. Այդ համայնքներն են՝ Մրգավան, Նորաշեն, Հովտաշատ, Բերքանուշ, Արբաթ, Շահումյան, Նորաբաց, Վ. Դվին, Սայաթ- Նովա, Ջրաշեն, Ավշար /հավելված 9.1/:

9.2. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

752. Մարզի համայնքներում գործում են 112 հանրակրթական դպրոցներ:

753. ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում դպրոցաշինությունը և դպրոցների հիմնանորոգման խնդիրները:

754. 2010թ. մինչև 2013թ. մարզի հանրակրթական դպրոցների մասնաշենքերում իրականացվել են շուրջ 5.3 միլիարդ դրամի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին:

755. Դպրոցների մեծ մասում իրականացվել են ինչպես հիմնանորոգման, այնպես էլ ընթացիկ նորոգման աշխատանքներ՝

1) մարզի 112 դպրոցներից ազբոհերձաքարե ծածկով տանիքներ մնացել է ընդամենը 11 դպրոցներում, մնացածը փոխարինվել են ցինկապատ պրոֆիլավոր թիթեղե ծածկերով,

2) մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից 71-ում կառուցվել են լոկալ ջեռուցման համակարգեր, որը շարունակական է, քանի որ դպրոցների ջեռուցման գործընթացը համարվում է առաջնահերթ խնդիր: Մնացած 36 դպրոցները ջեռուցվում են էլեկտրական սալիկներով և նախատեսվում է այդ դպրոցներում ևս անցկացնել ջեռուցման համակարգ:

3) գ. Վարդաշեն, գ. Սիփանիկ համայնքներում կառուցվել են նոր դպրոցական շենքեր, որոնցից Սիփանիկի դպրոցը հանձնվել է շահագործման 2012թ-ին, իսկ Վարդաշենի դպրոցը շահագործման կհանձնվի 2014թ-ի սեպտեմբերի 1-ին:

756. Մարզի թվով 25 դպրոցներում ամբողջությամբ ավարտվել են շենքերի հիմնանորոգման աշխատանքները:

757./ Մարզի թվով 27 դպրոցներում, որտեղ տարիներ շարունակ հիմնանորոգման աշխատանքներ ընդհանրապես չեն իրականացվել, հրատապ խնդիրների լուծման ծրագրերով կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ:

1	Լանջազատ	15	Ազատաշեն
2	Լուսաշող	16	Խաչփար
3	Շաղափ	17	Նոր Խարբերդ № 2
4	Տիգրանաշեն	18	ք.Մասիս № 3
5	Դեղձուտ	19	Ջրահովիտ
6	Բյուրավան	20	Ռանչպար
7	Դիտակ	21	Սիս
8	ք.Մասիս № 2	22	Սայաթ-Նովա
9	գ.Արգավանդ	23	Զորակ
10	Ջրաշեն	24	Բարձրաշեն
11	Վ.Դվին	25	ք.Արարատ № 1
12	Ն.Դվին	26	ք.Արարատ № 4
13	Նոր Ուղի	27	ք.Մասիս № 4
14	Սիսավան		

758. Սակայն հրատապ ծրագրերով միայն լուծվել է հրատապ խնդիրների քիչ մասը, առջևում կան հիմնանորոգման աշխատանքների անհրաժեշտություն:

759. Մարզի 7 դպրոցների շինության կրող կոնստրուկցիաներում առկա են ճաքեր և դասվում են վթարային դպրոցների ցանկում /Լանջառ, Շաղափ, ք.Արտաշատ թիվ 4, Լուսառատ, Հովտաշատ, Վանաշեն, Նոր Ուղի, որոնց համար

<<<Հայսեյսմշին>> ՓԲԸ-ի կողմից կատարվել են հետազոտություններ և տրվել եզրակացություններ, որպես 3-րդ աստիճանի վնասվածության շենքեր:

760. Բացի պետական բյուջեից մարզում հանրակրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ իրականացրել են դոնոր կազմակերպություններ: Այդ բարեգործական կազմակերպություններից են Ճապոնիայի կառավարությունը և ՀՀ Կարմիր Խաչը, որոնց միջոցներով 2014թ-ին իրականացվել է 37 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ Լուսառատի դպրոցում

761. 2010թ. ՀՍՆՀ_ի կողմից իրականացվել է Ուրծաձոր համայնքի կենտրոնի շենքի վերանորոգումը, 2011թ-ին Քաղցրաշեն համայնքի կենտրոնի շենքի վերակառուցումը, Այգեստան և Վանաշեն համայնքների մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրերը:

762. Հաշվի առնելով հիմնանորոգման աշխատանքների համար իրականացվող ֆինանսական ներդրումների չափը, երևում է, որ նման տեմպերով շարունակելու դեպքում անհրաժեշտ է ևս 18-20 տարի մարզի հանրակրթական բոլոր օբյեկտները հիմնանորոգելու համար:

9.3. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում

763. Մարզի կրթական ոլորտի կարևոր խնդիր է նախակրթական ուսուցումը, որի համար պետք է մեծ ուշադրություն դարձնել այդ հաստատությունների հիմնանորոգմանը:

764. Մարզի նախադպրոցական հաստատությունների մեծ մասը երկար տարիներ չեն նորոգվել, որի հետևանքով առաջացել են շահագործման համար անբավարար պայմաններ:

765. 2010-2013թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի թվով 28 մանկապարտեզներում կատարվել են 1 միլիարդ 269 մլն 243 հազար դրամի նորոգման աշխատանքներ, մի քանի մանկապարտեզներում համայնքի բյուջեների և բարեգործական կազմակերպությունների ներդրումները եղել են փոքր չափերի, որոնք բավականացրել են մասնակի նորոգման աշխատանքներ կատարելու համար:

766. Շենքային պայմաններ չունենալու պատճառով մանկապարտեզների մեծ մասում օգտագործվում են տարածքների մի մասը՝ մեկ կամ երկու խմբերի համար, որոնք համայնքի բյուջեների սուղ միջոցներով մասնակիորեն նորոգվում են, իսկ չօգտագործվող տարածքները գտնվում են անմխիթար վիճակում: Մանկապարտեզների մեծ մասում տարիներ շարունակ չի կատարվել հիմնանորոգման կապիտալ ներդրումներ, այդ պատճառով շարքից դուրս են եկել ներքին էլեկտրական սնուցման, ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգերը:

767. Շենքերի ջեռուցման համար լուրջ խնդիր է առաջացնում պատուհանների և արտաքին դռների խարխուլ վիճակը, որը նպաստում է վատ ջերմամեկուսացմանը:

768. Ներկայումս մարզի 82 մանկապարտեզներից գործում է 74 -ը: Գործող մանկապարտեզներից 35-ն ունի լոկալ ջեռուցում, 13-ը՝ ջեռուցվում է վառարաններով: Մնացած գործող 26 մանկապարտեզները չեն ջեռուցվում, որի պատճառով նրանց գործունեությունը սեզոնային բնույթ է կրում:

769. Նախադպրոցական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի ամբողջականացման համար առաջնահերթ պետք է կատարվի՝

1) շենքային պայմանների ապահովում այն համայնքներում, որտեղ մանկապարտեզ չի գործում,
2) տանիքների հիմնանորոգում,
3) շենքերի ներքին և արտաքին կոմունիկացիաների նորոգում,
4) ջեռուցման աշխատանքներ, որի հետ համատեղ պետք է կատարվի պատուհանների և դռների նորոգում,
5) ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ ,
6) մարզահրապարակների կառուցում և բարեկարգման աշխատանքներ:

770. 2010-2012 թթ.-ին պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվեց Մարմարաշենի մանկապարտեզը՝ 290 մլն դրամ, իսկ 2011-2013 թթ –ին պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցներով կառուցվեց Այնթապի մանկապարտեզը՝ 404 մլն դրամով: Ներկայումս անհրաժեշտություն կա ևս 4 համայնքներում կառուցել մանկապարտեզներ:

771. 75 մանկապարտեզներում պետք է իրականացվի հիմնանորոգման աշխատանքներ, որոնց համար անհրաժեշտ է շուրջ 870 մլն դրամ:

9.4. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում

772. Մարզի մշակութային օբյեկտները գտնվում են համայնքների հաշվեկշռում, իսկ տեղական բյուջեի միջոցներով հնարավոր չի լինում իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ: 2010-2013թթ. ՀՀ պետական բյուջեից հրատապ խնդիրներ լուծելու նպատակով 15 մշակույթային օբյեկտների տրամադրվել է գումար՝ հիմնանորոգման նպատակով:

773. Մարզի մշակութային օբյեկտների մեծ մասը գտնվում են անբավարար տեխնիկական վիճակում և չեն շահագործվում:

774. 3 մշակույթի տներ դարձել են վթարային /Վանաշեն, Գետազատ, Շահումյան/:

775. 2010-2013թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներից մարզի առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող 20 մշակույթի օբյեկտների հատկացվել է շուրջ 875 մլն 530 հազար դրամ, որի սահմաններում իրականացվել են հիմնականում տանիքների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, սակայն դա բավարար չէ գոյություն ունեցող շինությունները պահպանելու և շահագործելու համար:

776. Նախատեսվում է կառուցել նոր մշակույթի տներ ք.Մասիսում և գ.Այնթապում:

777. Մարզի թվով 79 մշակութային օբյեկտների հիմնանորոգման և 2 մշակույթի տների կառուցման ծրագիրը ամբողջությամբ ավարտելու համար անհրաժեշտ է 10 մլրդ 532 մլն 767 հազար դրամ գումար:

9.5. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

778. 2011-2013թթ. Արարատի մարզում իրականացվել են 740 մլն դրամի աշխատանքներ, որի շրջանակներում հիմնանորոգել է Արտաշատ քաղաքի

հիվանդանոցը՝ 260 մլն դրամ և Մասիս քաղաքի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքը՝ 289մլն 300 հազ. դրամ, ք.Վեդու հիվանդանոցը՝ 37 մլն.դրամ, ք.Վեդու ծննդատունը՝ 101 մլն 400 հազ.դրամ, Արմաշի ԱԱՊԿ՝ 38մլն դրամ և այլն:

779. Կառուցվել է 4 նոր առողջապահական ամբուլատորիաներ՝ գ.Նորաբացում՝ 46 մլն 800 հազ.դրամ արժողությամբ, գ. Նոր Խարբերդում՝ 48 մլն 300 հազ դրամ արժողությամբ, գ.Սայաթ –Նովայում՝ 48 մլն 900 հազ.դրամ արժողությամբ և գ.Սիփանիկում՝ 14 մլն 400 հազ. դրամ արժողությամբ:

780. Մարզի 2015-2018թթ. զարգացման ծրագրով նախատեսվում է իրականացնել թվով 59 առողջապահական օբյեկտներում 2 մլրդ 655 մլն 591 հազ. դրամի կառուցման, հիմնանորոգման և նորոգման աշխատանքներ, որից նոր բժշկական ամբուլատորիաների կառուցում՝ Դիմիտրով համայնք – 47.5 մլն դրամ, Մրգավան - 48.6 մլն դրամ, Արալեզ - 48 մլն դրամ, Լուսառատ – 47 մլն դրամ, Նորամարգ - 45 մլն դրամ, Ռանչպար – 48 մլն դրամ: Լուսառատի և Նորամարգի ԱԱՊԿ-ները առայժմ տեղավորվել և գործում են հարմարեցված շենքերում, որոնց համար պետք է կառուցվի նոր շենքեր:

9.6. Մարզական օբյեկտների հիմնանորոգում

781. 2012թ.-ին իրականացվել է Արարատի մարզի Արտաշատ քաղաքի մարզադպրոցի հիմնանորոգման աշխատանքներ բարեգործական ծրագրերով՝ 1,7 մլն դրամ:

782. Մասիս քաղաքում սկսվել է նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքները, որի սկզբնական նախահաշվային գումարը 534 մլն 972 հազար դրամ է, որից 311 մլն 17,4 հազ. դրամի աշխատանքները արդեն իրականացվել են: 20 մլն դրամի աշխատանքներ կատարվում է 2014 թվականի ընթացքում:

783. Մարզի զարգացման ծրագրով նախատեսվել և 2011թ-ին կառուցվել է Ուրծաձոր համայնքում մարզադաշտ, որի սկզբնական նախահաշվային արժեքը կազմում է 20 մլն դրամ:2012թ-ին Լանջազատ համայնքում գոյություն ունեցող շենքի վերակառուցման և կցակառույցի կառուցման միջոցով գործում է մարզադահլիճ, որի համար ծախսվել է 85 մլն դրամ:

784. 2015-2018թթ. պետք է իրականացվի մարզադաշտերի նորոգման և կառուցման աշխատանքներ, որպեսզի բնակչության շրջանում սպորտի զարգացման և մասսայականացման համար ստեղծվի նպաստավոր պայմաններ, որի համար պահանջվում է շուրջ 226 մլն 455 հազ. դրամ կապիտալ ներդրում:

9.7. Բազմաբնակարան բնակելի շենքեր և բնակելի տներ, բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ

785. Բազմաբնակարան շենքերի թիվը Արարատի մարզում կազմում է 453՝ ք. Արտաշատում՝ 126, ք. Վեդիում՝ 38, ք. Արարատում՝ 176, ք. Մասիսում՝ 79 և գյուղական համայնքներում՝ 34:

786. Մարզում առկա է 57.893 բնակարան, որից 795-ը՝ համայնքային, 57.098-ը՝ մասնավոր:

787. Բնակարանային ֆոնդը կազմում է 5 մլն. 649.7 հազ. ք.մ., որից 5 մլն. 617.1 հազ. ք.մ.՝ մասնավոր, 38.2 հազ. ք.մ.՝ համայնքային:

788. Մարզում առկա են մի քանի կիսակառույց բազմաբնակարան շենքեր, որոնք ավարտին հասցնելու համար պահանջվում է 2 միլիարդ 962 մլն 600 հազ. դրամի կապիտալ ներդրում:

789. Մարզի քաղաքային և գյուղական համայնքներում առկա բազմաբնակարան բնակելի տները գտնվում են խիստ անմխիթար վիճակում, հատկապես տանիքները, նկուղները և աստիճանավանդակները /բազմաբնակարան բազմահարկ բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները/: Մարզում առաջնահերթ նորոգման կարիք ունի 90 բազմաբնակարան շենքերի տանիքներ՝ ընդհանուր 63.621 քմ մակերեսով, որոնց հիմնանորոգման համար անհրաժեշտ է 954 մլն 315 հազար դրամ: 2010-2013թթ-ին պետական բյուջեից ներդրվել է 316196 հազ.դրամ գումար շենքերի տանիքների նորոգման համար: 826 փախստական կարիքավոր ընտանիքներ ունեն բնակարանի կարիք, սակայն պետական բյուջեով այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսված Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից նույնպես՝ բնակարանաշինություն չի իրականացվում:

790. Բազմաբնակարան շենքի կամ շենքերի, շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով ձևավորվող համատիրությունների գործընթացը գտնվում է վատ վիճակում /ընդամենը մարզում, քաղաք Արտաշատում գործում է մեկ համատիրություն/, իսկ Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի քաղաքներում գործող մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանային-կոմունալ կազմակերպությունների միջոցները չեն բավարարում անգամ ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

791. Եվս մի քանի տարի և բազմաբնակարան բնակելի ֆոնդը կհայտնվի վթարային վիճակում, որի համար հետագայում կպահանջվեն անհամեմատ ավելի մեծ ներդրումներ:

792. Անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ միջոցառումներ բազմաբնակարան բնակելի տների ընդհանուր օգտագործման տարածքները և բակերը հիմնանորոգելու, ինչպես նաև խաղահրապարակներ, կանաչ և հանգստի գոտիներ ստեղծելու համար:

793. Մարզի առկա բնակֆոնդը պահպանելու համար անհրաժեշտ է տարեկան շուրջ 200.0 մլն դրամ գումար:

794. Բազմաբնակարան շենքերի կառավարման պետական աջակցություն ապահովելու համար անհրաժեշտ է իրավական բարենպաստ դաշտի ստեղծում, ֆինանսական և ներդրումային աջակցություն, բազմաբնակարան շենքերը սպասարկող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելու համար:

795. Երիտասարդ ընտանիքների ձևավորման, բնակչության աղքատության հաղթահարման, անօթևան մարդկանց հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք լուծելու մեծ բաժինը ընկնում է բնակչության բնակարանային

ապահովման, բնակչության համար նորմալ կենսապայմանների ապահովման խնդիրներին:

796. Անհրաժեշտ է մարզում տարեցտարի ավելացնել բնակարանաշինության համար նախատեսվող ներդրումները:

797. Մարզում առկա են 3-րդ աստիճանի վնասվածության թվով 20 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցում անհրաժեշտ է հրատապ իրականացնել ամրացման աշխատանքներ, որի համար ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է 1 մլրդ 91 մլն դրամ գումար:

798. Մարզի մի շարք համայնքներում առկա են սողանքային երևույթներ, որոնց կանխարգելման, վերացման համար մշակվել է միջոցառումների ծրագիր՝ 172.0 մլն դրամի:

799. ՀՀ Արարատի մարզի բազմաբնակարան շենքերի, բնակելի տների, բնակարանաշինության 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է հավելված 9.2 - ում:

9.8. Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում

800. Նախատեսում է իրականացնել՝

1) Մարզային պահեստային կառավարման կետերի հիմնանորոգում, տեխնիկական զինվածությամբ և գույքով ապահովում:

2) Առկա քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերանորոգում, անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով կահավորում:

3) Բնակչության պատսպարման համար անհրաժեշտ պաշտպանական կառույցների նախագծում և կառուցում:

9.9. Հրշեջ փրկարարական ջոկատների կառույցների հիմնանորոգում

801. Ժամանակակից հրշեջ տեխնիկական միջոցներով հրշեջ փրկարարական ջոկատները վերազինելու նպատակով՝ գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի վերակառուցում և նորերի կառուցում՝

1) Արտաշատ, Մասիս, Վեդի քաղաքների հրշեջ փրկարարական ջոկատների տեղակայման շենքերի վերանորոգում,

2) Արարատ քաղաքում ժամանակակից հրշեջ փրկարարական ջոկատի հիմնում /ավտոմեքենաների 3 կայանատեղով/:

10. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

10.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

802. Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես ՀԶԾ, այնպես էլ Արարատի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի բարելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների (հատկապես գյուղական բնակավայրերի), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես գերակա են սահմանամերձ, ինչպես նաև մեծ թվով բնակչություն ունեցող համայնքների համար:

10.2 Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ

803. **Ճանապարհաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն -** ՀՀ Արարատի մարզի միջպետական ու մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները գտնվում են համեմատաբար բարվոք, իսկ համայնքային ու մարզային նշանակության ճանապարհները անմխիթար վիճակում:Տարիների ընթացքում մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը քանդվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի, իսկ որոշ հատվածներում նույնիսկ անանցանելի: Կախված ճանապարհների անմխիթար վիճակից՝ համայնքների ֆիզիկական մեկուսացվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ռեսուրսներն ուղղել համայնքային նշանակության ճանապարհների շինարարությանը՝ հաշվի առնելով նաև աղքատության վրա վերջիններիս առավել մեծ ազդեցության աստիճանը:

804. ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի թիվ 265-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկը, համաձայն որի Արարատի մարզով են անցնում 2 միջպետական /Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման, Մ-15 Բալահովիտ-Մասիս/՝ 103.6 կմ, 8 հանրապետական՝ 151.5 կմ և 57 մարզային /տեղական/ նշանակության՝ 354.8 կմ ավտոճանապարհներ:

805. Մարզային նշանակության ավտոճանապարհներին առկա են 102 կամուրջներ և 308 երկաթբետոնյա ջրահեռացման խողովակներ:

806. Մարզային նշանակության ավտոճանապարհների 214.1 կմ-ը ասֆալտբետոնե, 27.4 կմ-ը սև խճային և կոպճային, 84.8կմ-ը կոպճային և 28.5կմ-ը բնահողային ծածկույթով է :

807. <<Համաշխարհային բանկի>> վարկային ծրագրով իրականացվող <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1>>-ի շրջանակներում 2012 թվականից սկսվել և ընթացքի մեջ է Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Երևան-

Արարատ ճանապարհահատվածի վերակառուցումը, որի արդյունքում կունենանք ժամանակի պահանջներին բավարարող բարձրակարգ ավտոճանապարհ:

808. Ստորև ներկայացվում է մարզի ճանապարհաշինության ոլորտում 2011-2013թթ. իրականացված աշխատանքները և նրանց ֆինանսավորման աղբյուրները:

մլն դրամ

ֆինանսավորման աղբյուրը	2011թ.	2012թ.	2013թ.
ՀՀ պետական բյուջե	1196.129	1269.962	420.136
Համայնքային բյուջեներ	465.0	284.324	184.2
Համաշխարհային բանկի միջոցներով	401.0	820.0	3878.0
Ընդամենը	2062.129	2374.286	4482.336

809. 2011թ. ընթացքում մարզում կատարվել է ընդհանուր առմամբ 2 մլրդ. 62.129 մլն.դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ՝ միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհներին և կամուջների վրա, մասնավորապես.

810. ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 1 մլրդ. 196.129 մլն դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ, որից՝

811. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացված միջոցներով.

1) միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում՝ 304.386մլն դրամ,

2) հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 396.34 մլն դրամ,

3) տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 10 մլն դրամ,

4) համայնքային ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 438 մլն դրամ,

5)կամուրջների վերանորոգում՝ 11.784 մլն դրամ:

812. ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներով. մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման համար 35.619 մլն դրամ,

813. <<Համաշխարհային բանկի>> միջոցներով - հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 401.0 մլն դրամ:

814. Համայնքային բյուջեների միջոցներով համայնքային նշանակության ավտոճանապարհներին կատարվել է 465.0 մլն դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:

815. 2012թ. ընթացքում մարզում կատարվել է ընդհանուր առմամբ 2 մլրդ 374.286 մլն դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ՝ միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհներին և կամուջների վրա, մասնավորապես.

816. ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 1մլրդ. 269.962 մլն. դրամի պահապանման, շահագործման և նորոգման աշխատանքներ, որից՝

1) տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 90.5 մլն. դրամ,

2) համայնքային ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 816.343 մլն դրամ,

3) միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում՝ 322.7 մլն դրամ,

817. ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված 35.619 մլն. դրամով կատարվել է մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

818. <<Համաշխարհային բանկի>> միջոցներով՝ 820.0 մլն. դրամ, այդ թվում.

1)Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1-ի Երևան-Արտաշատ ճանապարհահատվածի վերակառուցում-820.0 մլն. դրամ

2) Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 284.324 մլն. դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:

819. 2013թ. ընթացքում մարզում կատարվել է ընդհանուր առմամբ 5 մլրդ 302.336 մլն դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ՝ միջպետական, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհներին և կամուջների վրա, մասնավորապես.

820. 2013թ. ընթացքում մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների և կամուրջների նորոգման, պահպանման և շահագործման գծով կատարվել են աշխատանքներ:

821. ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 420.136 մլն. դրամ, այդ թվում՝

1) հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 4.63 մլն դրամ,

2) համայնքային ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 87.384 մլն. դրամ,

3)միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ 293.175 մլն. դրամ,

4) մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում՝ 34.947 մլն. դրամ,

822. <<Համաշխարհային բանկի>> միջոցներով՝ 3մլրդ. 878 մլն. դրամ, այդ թվում. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1-ի Երևան-Արտաշատ ճանապարհահատվածի վերակառուցում-3մլրդ. 878 մլն դրամ

823. Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 184.2մլն դրամի պահպանման, շահագործման և նորոգման աշխատանքներ:

824. 2014թ. ընթացքում Արարատի մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվելու է.

1)միջպետական նշանակության 1 ավտոճանապարհի հիմնանորոգում՝ 25.0 մլն.դրամ

2)մարզային նշանակության 3 ավտոճանապարհի հիմնանորոգում՝ 103.0 մլն.դրամ,

3) համայնքային ավտոճանապարհների հիմնանորոգում՝ 224.5 մլն. դրամ,

4) միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ 293.175 մլն. դրամ,

5) մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ 35.619 մլն. դրամ:

6) <<Համաշխարհային բանկի>> միջոցներով՝ 14մլրդ. 53 մլն. դրամ, այդ թվում.

ա.Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 1 Երևան-Արարատ ճանապարհահատվածի վերակառուցում -14 մլրդ. 53 մլն. դրամ

825. Ընհանուր առմամբ 2011-2013թթ. ընթացքում մարզում վերանորոգվել է 4,15 կմ հանրապետական, 2 կմ մարզային նշանակության ավտոճանապարհ, հանրապետական նշանակության ճանապարհի վրա գտնվող 1 կամուրջ և 1 ջրահավաք հոր, մարզային նշանակության 3 ճանապարհներին կատարվել է փոսային նորոգման աշխատանքներ, 22 համայնքներում կատարվել է փողոցների հիմնանորոգման աշխատանքներ:

826. Չնայած վերջին տարիներին կատարված ճանապարհաշինական աշխատանքներին դեռևս մարզային նշանակության ճանապարհների զգալի մասը տասնյակ տարիներ նորոգման չեն ենթարկվել, որի արդյունքում դրանք քայքայվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի: Առաջնահերթ անհրաժեշտ է՝ առկա ռեսուրսները ուղղել մարզային նշանակության ճանապարհների վերանորոգմանը:

827. ՀՀ Արարատի մարզի ճանապարհաշինության ոլորտում 2015-2018թթ. նախատեսված ծրագրերի իրականացումը կապահովի տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակեցությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը, ինչպես

նաև կկանխի այդ պատճառով հեռավոր գյուղական համայնքների բնակչության մոտ նկատվող արտահոսքի միտումը:

828. 2015-2018թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է իրականացնել 19 մլրդ 317.2 մլն դրամի ճանապարհաշինական աշխատանքներ, որը ներկայացված է հավելված 10.2-ում:

10.3. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

829. Մարզի ջրամատակարարման համակարգը կազմված է՝

1) մայրուղի ջրատար – 870 կմ,
2) ներքին ցանց – 4010 կմ,
3) ջրամբարներ – 32 հատ, տարողությունը 60000 մ$^{3:}$

830. Ջրամատակարարումը մարզում իրականացվում է <<Հայջրմուղկոյուղի>> , <<Երևան Ջուր>> կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, մասնավորապես.

1) <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ - 75 համայնք,
2) <<Երևան Ջուր>> ՓԲԸ – 5 համայնք,
3) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից – 17 համայնք:

831. Մարզի ջրամատակարարման ընթացիկ իրավիճակը հստակ ներկայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ցուցանիշները.

1) տեխնիկական և տնտեսական տվյալները,
2) հիդրո - տեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ /ծավալ, հզորություններ և այլն/,
3) ջրագծի վերաբերյալ տվյալներ /երկարություն, ինժեներական պարամետրեր/,
4) կարիքներ /օրական ծավալներ խմելու ջրի համար,/
5) սակագներ,
6) որակ,
7) ջրահեռացման ծավալներ:

832. Ջրամատակարարման բարձր մակարդակի ապահովումը հիմնականում կապված է մատակարար – սպառող և ներդնող - շահառու ճիշտ համագործակցության հետ: Փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու և հետագայում ճիշտ իրականացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և նրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ <<ծախսերի և օգուտների>> վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար:

833. Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչության հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Այդ պատճառով գերակա է համարվել և զգայիորեն ավելացել են ներդրումներ այս ոլորտում, մասնավորապես՝ տարեց տարի մարզում ավելանում է ներդրումները Ասիական Զարգացման Բանկի միջոցներով՝ 2011-2013թթ ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 1 մլրդ 796 մլն դրամի աշխատանքներ:

824. Ներդրումները անհրաժեշտ է հատկացնել ջրամատակարարման առկա համակարգի պահպանմանը և վերականգնմանը, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ջրամատակարարման համակարգի բարելավմանը և արդիականացմանը ուղղված աշխատանքներին:

835. Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից: Կապիտալ ծախսերը պետ է իրականացվեն այլ միջոցներով, մասնավորապես պետական բյուջեի վարկային ծրագրերի կամ միջազգային դոնոր կազմակերությունների միջոցներով:

836. Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը որոշակիորեն նպաստել է մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ այն ուղղակիորեն նվազեցրել է ջրի կորստի մակարդակը: Հարկ է նշել, որ ջրի կորստի մակարդակը հիմնականում պայմանավորված է եղել ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակով՝ 2011-2013թթ. մարզում կառուցվել և վերակառուցվել են շուրջ 507 կմ խմելու ջրագիծ:

837. Իրականացված աշխատանքների արդյունքում տարեցտարի բարելավվել է նաև խմելու ջրի վարձավճարների գանձման վիճակը:

838. Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

839. Մարզի բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարում ապահովելուն խաչընդոտում են հետևյալ հանգամանքները.

1) ջրամատակարարման համակարգի հնամաշության և քայքայվածության պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը,
2) համայնքների կողմից ուշադրության պակասը,
3) արտահոսքը և կորուստը,
4) գանձումների մակարդակը,

5) որակի խնդիրները,
6) ջրամբարների ոչ բավարար տեխնիկական վիճակը /մարզում կա 32 ջրամբար 60 հազ. խմ տարողությամբ/,
7) ըստ տարածաշրջանների շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը /տատանվում է՝ 4-24 ժամ/,
8) ջրաղբյուրների ջրաքանակության ոչ ռացիոնալ օգտագործումը:

840. Չնայած կատարված մեծ ծավալի աշխատանքներին մարզում ջրամատակարարման ոլորտում դեռևս չլուծված հիմնախնդիրներ են՝

1) Եղեգնավան, Նոյակերտ, Արմաշ համայնքները չունեն խմելու ջրի մատակարարման ներքին ցանց,

2) Ռանչպար, Նորամարգ, Սիս, Սիփանիկ, Նիզամի, Սայաթ-Նովա, Հովտաշատ համայնքներում ջրամատակարարումը իրականացվում է համայնքների տարածքում գտնվող ոռոգման նպատակով նախատեսված բազմաթիվ խորքային հորատանցքերից, որոնց ջուրը ներքին ցանցով տրվում է բնակչությանը,

3) Զանգակատուն, Նարեկ, Լանջանիստ, Լանջառ, Լուսաշող, Պարույր Սևակ, Շաղափ, Վարդաշատ համայնքների ջրամատակարարման համակարգերը շահագործվում են գյուղապետարանների կողմից, ջուրը առանց վարակազերծման տրվում է բնակչությանը,

4) Ուրցալանջ, Տիգրանաշեն համայնքներում չկա կենտրոնացված ջրամատակարարում՝ օգտվում են մոտակա լեռնային աղբյուրներց անցկացված գյուղի կենտրոնում գտնվող ջրի ծորակներից:

841. ՀԶԾ-ում կարևորում է խմելու ջրի մատչելիության և հասանելիության, ինչպես նաև ջրի որակի խնդիրները, որոնք էապես ազդում են բնակչության կենսամակարդակի վրա: Մարզի 4 քաղաքային և 93 գյուղական համայնքներից միայն 4 քաղաքային (Արտաշատ,Արարատ,Վեդի,Մասիս) և 71 գյուղական համայնքներն են խմելու ջուրը ստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգերից, որտեղ սահմանված կարգով կատարվում է ջրի վարակազերծում: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում: Արարատի մարզի գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների 3.5%-ը չունեն ջրի ծորակ տանը կամ տան բակում և օգտվում են ընդհանուր ծորակից: Մարզի 22 համայնքներ կարիք ունեն խմելու ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման և օրվա կարգավորիչ ջրամբարների կառուցման:

842. 2011թ. Արարատի մարզում Ասիական զարգացման բանկի վարկային միջոցներով ջրամատակարարման ոլորտում իրականացվել է 348 մլն դրամի աշխատանքներ, 2012 թվականին՝ 32 մլն դրամի:

843. Ավելի էական է եղել Ասիական զարգացման բանկի վարկային միջոցների ներդրումները մարզում 2013 թվականին՝ ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Արտաշատի տարարածաշրջանում՝ 235.0 մլն դրամի, Մասիսի տարածաշրջանում շուրջ 800 մլն դրամի, որից միայն Մասիս քաղաքում 324 մլն դրամի և Արարատի տարածաշրջանում 379 մլն դրամի:

844. Ջրամատակարարման ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներից է մնում նաև.

1) մարզի ջրմուղկոյուղու կառույցների՝ սանիտարական պահպանությունը, գոտու պարիսպապատումը, արհեստական լուսավորությունը, պահակային հսկողությունը,

2) ազգաբնակչությանը տրվող խմելու ջրի ինչպես նաև այն խմելու ջրի որը անցնում է ոռոգման առվակներով, արոտավայրերով վարակազերծումը:

845. Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի 3 քաղաքներում՝ Արտաշատ, Արարատ, Մասիս քաղաքներում չմաքրված կեղտաջրերը էկոլոգիական վնաս են հասցնում շրջապատին:

846. Ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների արդյունքում կնվազի շրջակա միջավայրի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև կբարձրանա մարզի ազգաբնալկչության առողջության ցուցանիշները՝ կիրառելով կետաջրերի աէրիացիայի և մաքրման մեխանիկական եղանակներ մարզի բոլոր համայնքներում:

847. Մարզի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացման առաջնահերթ հիմնախնդիրներն են՝

1) քաղաքներում և 14 գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի տեղադրում, այդ թվում ջրահեռացման համակարգի մաքրման կայանների հիմնում,

2) ջրային ցանցի կառավարման համակարգի բարեփոխումները, այդ թվում ֆինանսական կայունության /վճարների հավաքագրման արդյունավետության բարձրացում/ և ջրային ընկերությունների գործունեության կանոնակարգմանն ուղղված միջոցառումները,

3) նոր կառուցվող ջրագծերում ըստ գործող նորմերի անհրաժեշտ է կառուցել հրշեջ հիդրատներ և ջրամբարներ, ինչպես նաև վերականգնել ջրագծերում եղած հրշեջ հիդրատները և հրշեջ ջրավազանները:

848. Ստորև ներկայացվում է Արարատի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման միջոցառումները ըստ առաջնահերթությունների՝

Աղյուսակ 10.3. Արարատի մարզում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման միջոցառումները

Հ/Հ	***Միջոցառման անվանումը***	***Երկարություն կմ***	***Խողովակի տրամագիծ մմ 0 կմ ծավալը մ³***	***Պահանջվող ֆինանսական միջոցները /մլն դրամ/***
1	Ջրաշենի ներքին ցանցի կառուցում	10	50-100	70
2	ք. Արտաշատ կոյուղու մաքրման կայանի կառուցում			200
3	ք. Մասիս կոյուղու մաքրման կայանի վերակառուցում			80
4	Հովտաշատ մայր ջրատարի կառուցում	4	50-100	28
5	Սայաթ-Նովա մայր ջրատարի կառուցում	3	50-100	21
6	Սիս մայր ջրատարի կառուցում	5	50-100	35
7	Սիփանիկ մայր ջրատարի կառուցում	2.5	50-10	17
8	Այգավանի ներքին ցանցի վերանորոգում, նոր ջրատարի կառուցում	6	100-150	32
9	Ավշարի ներքին ցանցի վերանորոգում	2	50-100	20
10	Զանգակատան ներքին ցանցի կառուցում	25	25-100	60
11	Շաղափի ներքին ցանցի կառուցում	8	100-150	56
12	Պ. Սևակ ներքին ցացի, մայր ջրատարի կառուցում	5.8	25-300	8.8
13	Վարդաշատի ներքին ցանցի կառուցում	8	50-100	35
14	Նոր Կյուրինի ներքին ցանցի վերակառուցում	3	50-100	21
15	Նոր Խարբերդի ներքին ցանցի վերակառուցում	11.5	50-300	80

16	Նիզամի համայնքի ներքին ցանցի վերակառուցում	7.5	50-100	23
17	Ռանչպարի մայր ջրատարի կառուցում	60	50-300	170
18	Սիս ներքին ցանցի վերակառուցում	7.8	50-200	35
19	Ուրցալանջի մայր ջրատարի կառուցում	2	300	20
20	Արմաշի ներքին ցանցի կառուցում	10	100-200	70
21	Լուսաշողի ներքին ցանցի կառուցում	3	50-100	21
22	Լանջառ մայր ջրատարի կառուցում	4	100-120	28

849. Արարատի մարզի ջրամատակարարման ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 10.3 հավելվածում:

850. Մարզի բնակավայրերի և հիմնականում գյուղական բնակավայրերի խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի կառուցման կամ հիմնանորոգման համար կպահանջվի 6431.35 մլն դրամ:

10.4. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

851. Արարատի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 97 համայնքներից գազաֆիկացված են 84-ը: Մարզի տարածքում կառուցվել է 349.4 կմ միջին ճնշման և 903.76 կմ ցածր ճնշման գազատար: Բաժանորդների թիվը մարզում 2013թ. հասել է՝ 44195, 2012թ. համեմատությամբ այն աճել է 10%-ով:

852. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը մասնավորապես մարզի չգազաֆիկացված մնացած 12 համայնքներում:

853. <<Գազպրոմ Արմենիա>>-ի ներդրումները բավարար չեն ապահովելու համար գազամատակարարումը նույնիսկ հիմնական գազատարերին կից համայնքներում, իսկ նման միջոցառումները փոքր համայնքներում տնտեսապես

ձեռնատու չեն: Սակայն կապույտ վառելիքի առկայությունը էապես կնպաստի սահմանամերձ համայքների զարգացմանը:

854. Բնական գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է շուրջ 8-10 խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին, նշանակում է հանրապետության էկոհամակարգի բարելավում: Այն բնակավայրերում, որտեղ չկա գազ ջեռուցման համար օգտագործվում է վառելափայտ, որն ունի ակնհայտ անբարենպաստ բնապահպանական հետևանքներ: Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով գազաամատակարարման լոկալ համակարգի ներդրման վրա:

855. Բազմաբնակարան շենքերի արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների հասանելիության և արդյունավետության մակարդակը բարձրացնելու համար:

856. Անկախ պատճառներից, պետական գազամատակարարման ընկերության կողմից ծառայությունների կրճատումը համայնքներում հանգեցրել է սպասարկվող բաժանորդների թվի կրճատմանը /այժմ գազ ունի խորհրդային շրջանի քաղաքային բազմաբնակարան շենքերի միայն 74%/:

857. ՀՀ նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆՀ-128-Ա կարգադրության հանձնարարականով՝ Արարատի մարզում իրականացվել են գազամատակարարման հետևյալ աշխատանքները.

1) Նորամարգ և Սիս համայնքների միջին ճնշման գազատարի կառուցման աշխատանքներն իրականացրել է <<Գյուղականտարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ>> պետական հիմնարկը՝ <<Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին>> ծրագրի շրջանակներում: Ներքին ցանցի կառուցման համար անհրաժեշտ է ևս համապատասխանաբար 120 մլն և 61 մլն դրամ:
2) Ռանչպար և Արբաթ բնակավայրերի գազատարերի կառուցման համար մարզպետարանը ծրագրի հայտ է ներկայացրել համապատասխան կազմակերպությանը՝ նշված բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքները 2015-2018թթ. ծրագրերում ընդգրկելու համար:
3) Ջրաշեն համայքնի միջին ճնշման գազատարը կառուցվել է 2008թ. <<<Հայռուսգազարդ> ՓԲԸ-ի կողմից /35.8 մլն դրամ/: Ներքին ցանցի կառուցման համար անհրաժեշտ է ևս 112 մլն դրամ: 2014թ. Ջրաշեն համայնքի գազաֆիկացման աշխատանքների ավարտման համար անհրաժեշտ գումարից 32.0 մլն դրամը համայնքը տրամադրելու է իր միջոցներով:
4) 2009թ. <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծության և կառավարման գրասենյակ>> -ի և համայնքի միջոցներով ավարտվել են Սիփանիկ համայնքի գազաֆիկացման աշխատանքները շուրջ 80 մլն դրամի:

858. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար:

859.Ներկայումս, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն, մարզում մոտ 3520 կՎտ ընդհանուր հզորությամբ տարեկան 5.7 մլն կվտժ էլեկտրական էներգիա են արտադրում 2 փոքր հիդրոէլեկտրակայաններ:

860. Աղյուսակ 10.4 2014 թվակնի ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն արարատի մարզում էլեկտրական էներգիա արտադրող փոքր հիդրոէլեկտրակայանների հիմնական ցուցանիշները ըստ շահագործող ընկերությունների

	Շահագործող ընկերության Անվանումը	Լիցենզիայի համարը համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը	ՓՀԷԿ-ի անվանում	Հզորությունը	Էլեկտրական էներգիայի փաստացի օգտագործ	ՓՀԷԿ-ի տիպը	հաշվարկային ելքը
						կՎտ	մլն.կվտժ		մ3/ վրկ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«Զովաշեն ՀԷԿ» ՍՊԸ	90	7/31/2002	7/31/2017	Զովաշեն	1,520	2.6	բնական ջրահոսք	9.0
2	«Բիթլիս Մեն» ՍՊԸ	208	6/27/2006	6/27/2021	Այգեզարդ	2,000	3.1	ոռոգման համալիր	7.0
	Ընդամենը					**3,520**	**5.7**		

861. Բացի այդ, ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի թիվ 3 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում նաև Արարատի մարզում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման: Մարզում նախատեսվում է կատուցել ևս 4 փոքր ՀԷԿ-եր՝ 3513 ՄՎտ տեղակայված հզորությամբ և տարեկան 11.52 մլն կվտ/ժ տարեկան գումարային արտադրանքով:

Աղյուսակ 10.5 ՀՀ Արարատի մարզում նախատեսվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրաէներգետիկական ցուցանիշները

ՓՀԷԿ-ի անվանումը		Վերին բյեֆի նիշը	Ներքի ն բյեֆի նիշը	Դերիվաց իայի երկարութ յունը	Դերիվաց իայի տրամագի ծը	Հաշվարկայ ին ճնշում	Հաշվարկ ային ելք	Դրվածքայի ն հզորություն ը	Էլ. էներգ. տարեկան արտադրա նքը
		մ	մ	մ	մ	մ	$մ^3$ /վրկ	կՎտ	մլն. կՎտժ
	Ազատ գետի ավազան								
1	Գիլանլար ՓՀԷԿ	1650.0	1385.0	2350.0	0.53	244.9	0.40	784	2.68
2	Սևջուր ՓՀԷԿ	1800.0	1550.0	1150.0	0.53	235.4	0.50	941	2.68
3	Ուխտակունք ՓՀԷԿ	1965.0	1750.0	3400.0	0.72	200.4	0.70	1122	3.84
	Վեդի գետի ավազան								
4	Վեդի ՓՀԷԿ	1460.	1380.0	3150.0	0.92	69.4	1.2	666	2.32
	Ընդամենը Արարատի մարզ							**3513**	**11.52**

862. Փոքր ՀԷԿ-երի կառուցումը մարզում նոր աշխատատեղերի բացման հնարավորություն կստեղծի:

863. 2015-2018 թվականների ընթացքում մարզի էլեկտրամատակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով նախատեսվում է շուրջ 1200.0 մլն դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման/վերակառուցման, վերանորոգման, ենթակայանների նորոգման, հին տրանսֆորմատորները նորերով փոխարինելու աշխատանքներին, ինչպես նաև նոր բաժանորդների ցանցին միանալուն ուղղված աշխատանքներին:

864. <Բարձրավոլտ էլեկտական ցանցեր> ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող և գործող 220կՎ <Արարատ-2> ենթակայանի և 220/110կՎ ՕԳ-երի վրա կատարվող աշխատանքների համար սեփական միջոցների հաշվին կիրականացվեն 4.4 մլն դրամի աշխատանքներ: Ըստ տարիների ներդրումները կլինեն՝

2015թ. 1000.0 հազ. դրամ
2016թ. 1000.0 հազ. դրամ

2017թ. 1200.0 հազ. դրամ
2018թ. 1200.0 հազ. դրամ:

865. 2017թ-ին նախատեսվում է <Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագրի> շրջանակներում ՎԶԵԲ-ի կողմից ստանալ 30.0 մլն ԱՄՆ դոլար վարկ, որից 15264,3 հազ. դոլարը կուղղվի <Արարատ -2> 220/110/6 կվ ենթակայանի վերակառուցմանը:

866. **Բնական պաշարներ** ՀՀ Արարատի մարզում ներկայումս շահագործվում են պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի 63 հանքավայրեր: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրվել են երկրաբանական ուսումնասիրության 9 թույլտվություն: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո, օգտակար հանածոների պաշարների հաստատման արդյունքներով, կտրվեն օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություններ, ինչն էլ իր հերթին կնպաստի մարզում ֆինանսական ներդրումների ներգրավմանը, արդյունաբերական արտադրանքի աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը:

867. Ստորև ներկայացվում է ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման ոլորտներում 2015-2018թթ. իրականացվելիք միջոցառումները և պահանջվող ֆինանսավորումները:

Աղյուսակ 10.6.

Միջոցառում	**Գնահատված արժեքը մլն դրամ**
1. Ջրամատակարարում - ջրահեռացում	1129.0
- Խմելու ջրի մատակարարում	649.0
- Ջրահեռացում	480.0
2. Գազամատակարարում	3298.2
Ընդամենը	**5556.2**

867. Արարատի մարզի գազամատակարարման ոլորտի 2015-2018թթ. զարգացման ռազմավարության ֆինանսավորումը ներկայացված է 10.4 հավելվածում:

11. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

11.1. Տարածքային կառավարում

11.1.1. Վարչատարածքային բաժանում

869. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ներկա համակարգը սահմանվել է 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված և 2005 թվականի նոյեմբերի 27-ին որոշակի փոփոխությունների ենթարկված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 11.1-րդ հոդվածի՝ ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները: Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է Հանրապետության վարչատարածքային բաժանումը, իսկ 83.5-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորները և դրանց սահմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով: Սահմանադրության համաձայն, 1995թ. նոյեմբերի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը: Արտաշատի ,Արարատի, Մասիսի նախկին վարչական 4 շրջանների միավորումից ձևավորվեց ցամաքային տարածքով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը, որը ընդգրկում է 97 համայնք, որից 4-ը՝ քաղաքային և 93-ը՝ գյուղական (Հավելված 11.1)**:**

870. Մարզպետները՝ ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն, նշանակվում և ազատվում են ՀՀ Նախագահի կողմից վավերացված ՀՀ կառավարության որոշմամբ, իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ տարածքային կառավարման գործող համակարգի մեջ, մարզի կտրվածքով, մարզպետից և մարզպետարանից բացի, մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները: Վերջինները մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, մյուս կողմից՝ հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են մարզպետի համակարգման ոլորտում:

11.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

871. Տարածքային կառավարման հարաբերություններն առանձին կարգավորող օրենք չկա: Արարատի մարզում, ինչպես Հայաստանի Հանրապետության մարզերում, տարածքային կառավարման ներկա համակարգի օրենսդրական հիմքը հանդիսանում է մի շարք առանցքային իրավական ակտերի ամբողջությունը, որի միջոցով կարգավորվում է այդ հարաբերությունները:

872. Մարզպետարանների իրավասությունների հստակ սահմանումը մնում է բնագավառում դեռևս չլուծված կարևոր խնդիրներից մեկը: Մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորվում է ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրով, որի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահվում տնտեսական և

հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, սակայն դրանց իրականացմանը առընչվող իրավական դրույթներում դրանք հստակեցված չեն: Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտություն է առաջանում առաջնահերթորեն իրականացնել մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը: Անհրաժեշտություն է զգացվում տարածքային կառավարման բնագավառի հարաբերությունների կարգավորումն իրականացնել առանձին օրենքի միջոցով, որը հնարավորություն կտա կարգավորելու և ամրապնդելու տարածքային կառավարման իրավական հիմքերը, ևս մեկ անգամ տարանջատելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխումը,որի արդյունքում հնարավոր կլինի խուսափել կրկնվող գործառույթներից: Հստակ օրենսդրական դաշտի առկայությունը կապահովի մարզերում սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը:

873. Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզի խորհրդի դերի բարձրացումը: Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմնախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները իրականացման արդյունքները քննարկող ու հաստատող մարմինը հանդիսանում է մարզի խորհուրդը, որը և միաժամակ կարևոր խորհրդակցական մարմին է: Մարզի խորհրդի լիազորությունները կարգավորվում է նաև ՀՀ Նախագահի հրամանագրով, վերջին տարիներին կարևորելով մարզի խորհրդի դերը և հաշվի առնելով նրա մասնակցության անհրաժեշտությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում 2013թ. սեպտեմբերի 30-ի ՀՀ Նախագահի N ՆՀ-245-Ն հրամանագրով իրակացվել է փոփոխություններ ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարման մասին» հրամանագրում՝ ընդգրկելով դրույթներ, որոնք անմիջապես ուղղված են մարզի խորհրդի գործունեության ակտիվացմանը:

874. Տարածքային կառավարման բնագավառում 2015-2018թթ. գործունեության կարևորագույն ուղղություններն են.

1) **Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի** փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքի փոփոխություններ, ստորաբաժանումների գործառույթների, առանձին պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում կամ նոր ստորաբաժանումների ստեղծում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը: Քաղաքացիական կամ համայնքային ծառայության անալոգիայով անհրաժեշտ է ունենալ նաև մարզպետի, մարզպետի տեղակալների և այլ հայեցողական պաշտոնների հաստատված անձնագրեր: Իրականում այս պաշտոնների՝ օրենսդրությամբ

նախատեսված լիազորությունների, իրավասությունների թվարկումը հենց այդ պաշտոնների անձնագրերի տվյալներն են: Անհրաժեշտ է համակարգել դրանք մեկ փաստաթղթի մեջ: 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը որոշակի օրենսդրական կարգավորումներ իրականացվեցին այս խնդրի լուծման հետ կապված հարցերում, սակայն առջևում դեռևս շատ անելիքներ կան:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանմանը
3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից
4) Մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթների, պարտականությունների ու իրավասությունների հստակեցում
5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնորոշել «Տարածքային կառավարման մարմին» հասկացությունը: Այս բնորոշումը չի հստակեցված: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նշված է, որ տարածքային կառավարման մարմիններ են մարզպետները
6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բանկ, որը կհանդիսանա մարզային կյանքի բոլոր բնագավառների համար պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը
7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, դրա տրամադրման մեխանիզմը
8) Մարզի խորհրդի դերը էլ ավելի բարձրացնելու նպատակով լրացուցիչ օրենսդրական հիմքեր ապահովելու անհրաժեշտության դեպքում, ուսումնասիրել Արարատի մարզի խորհրդի գործող իրավասությունների շրջանակը մարզային զարգացման գործընթացներում և առաջադրել հստակ առաջարկություններ, քանի որ Արարատի մարզպետարանում կուտակվել է մեծ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար
9) Մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման և օգտագործման, մարզի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն չհանդիսացող հողամասերի

նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների, մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպություններում պետության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորությունների արդյունավերտ իրականացում:

11.1.3 . Մարզպետարանի կառավարում

875. ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ հաստատված ՀՀ Արարատի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը ՀՀ կառավարության հետագա որոշումներով դինամիկ կերպով ենթարկվեց փոփոխությունների: Վերջին անգամ այն փոփոխության է ենթարկվել ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 29-ի N365-Ն որոշմամբ, երբ մարզպետարանի աշխատակազմում ստեղծվեց ներքին աուդիտի բաժին: Մարզպետարանի կառավարման նոր կազմակերպական կառուցվածքը հնարավորություն է տալիս հիմնականում լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Ինչպես ենթադրվել էր՝ փոփոխությունների դինամիկան շարունակվեց: Համաձայն վերջին փոփոխությունների՝ մարզպետարանի կազմակերպչական կառուցվածքն ունի Հավելված 11.2-ում ներկայացված տեսքը:

876. Հետագայում այս փոփոխությունների դինամիկան կարող է էլի շարունակվել, քանի որ համակարգը պետք է հարմարեցվի գոյություն ունեցող զարգացումներին: Կառուցվածքային փոփոխությունները պետք է դիտարկել օպտիմալության, ընդհանուր մոտեցումների պահպանման և աշխատանքների ռացիոնալ կազմակերպման տեսանկյունից: Այս առումով արդեն անհրաժեշտություն է առաջացել մարզպետարանի աշխատակազմում ունենալ համակարգչային բաժին՝ համապատասխան մասնագետներով: Քանի որ արդեն մարզպետարանում էլեկտրոնային կառավարման բնագավառում առաջընթացը շոշափելի է, Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արարատի մարզպետարանն ինտերնետում ներկայացված է պաշտոնական նոր կայքով (http://ararat.gov.am), որն պարբերաբար կատարելագործվում է, Mulberry համակարգը 2009 թվականի դեկտեմբերից վերջնականապես ներդրվել է մարզպետարանում և մարզպետարանի փաստաթղթաշարժն ամբողջությամբ իրականացվում է այս համակարգով:

877. Մարզի զարգացման ծրագրի իրականացումը դիտարկելու և հսկելու համար մարզպետարանում ձևավորվում է մոնիտորինգի և գնահատման համակարգ: ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի «Մոնիտորինգի և գնահատման համակարգ» բաժնում:

878. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային

ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջներ մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ, ինչի համար քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում նաև լրացուցիչ ուսուցման:

11.1.4 . Քաղաքացիական ծառայություն

879. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել, որ այն հիմնականում կայացել է: 2001 թվականից տարածքային կառավարման համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական ծառայողներից, որպես բարձրագույն քաղաքացիական ծառայող ճանաչելով աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական քաղաքացիական ծառայության կայացման ճանապարհին:

880. Ծառայության մյուս տեսակների համար համապատասխան օրենսդրության ստեղծումը և այդ համակարգերի կայացումը խնդիր էր առաջադրում վերանայելու քաղաքացիական, համայնքային և ընդհանրապես հանրային ծառայության հայեցակարգը: Անհրաժեշտ էր ապահովել այդ ծառայությունների միջև ներդաշնակեցումը, ձևավորել կապ՝ ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու համար: Այս իրավիճակը պահանջեց հանրային ծառայության մասին օրենսդրության ստեղծում՝ որը կապահովեր հանրային ծառայության միասնական սկզբունքներ: Այս ենթատեքստում անհրաժեշտություն էր առաջացել ունենալ նաև պետական ծառայության համակարգի ամբողջական նկարագիրը, որտեղ կսահմանվեին քաղաքական և հայեցողական պաշտոններին ներկայացվող պահանջները: Արդյունքում՝ 2011 թվականին ընդունվեց «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն այս ոլորտում որոշակիորեն ամբողջականացրեց իրավական դաշտը: Այս օրենսդրական դաշտի կարգավորումը հնարավորություն տվեց նաև ունենալու հստակ դասակարգված պաշտոնների ցանկ՝ ըստ ծառայության տեսակների և խմբերի, համապատասխան պաշտոնների անվանումներով:

881. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու

միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

11.1.5. Էլեկտրոնային կառավարում

882. Մարզպետարանում իրականացվել են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքներ: Ներկայումս մարզպետարանն ունի էլեկտրոնային կառավարման համակարգ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արարատի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական կայքով (http:/ararat/.gov.am), մարզպետարանի փաստաթղթաշարժի գերակշիռ մասն իրականացվում է Mulberry էլեկտրոնային համակարգի միջոցով: Դա հնարավորություն է տալիս որոշակիորեն հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն:

883. Համակարգի ներդրմանը զուգընթաց սկսեց որոշակիորեն բարձրանալ մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային գիտելիքների մակարդակը և այսօր արդյունքները գոհացուցիչ են: Ընդհանուր առմամբ 2010-2013 թվականներին մարզպետարանը համալրվեց համակարգչային սարքավորումներով, սակայն անհրաժեշտ է վերջնականապես լուծել մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով լիարժեք հագեցվածության հարցը, ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բնագավառում արհեստավարժ թիմ: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման մշակման և փոխանցման անհրաժեշտությունն էլ ավելի է ուժեղանում: Պետական կառավարման ոլորտում ներկայումս տեղեկատվությունը դարձել է հզոր ռեսուրս, որն անհրաժեշտ է ճիշտ կառավարել:

884. 2015-2018 թվականների ընթացքում անհրաժեշտ է.

1) Ստեղծել ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգչային սպասարկման բաժին
2) Մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ
3) Քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում կիրառել «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել հատկապես բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները

4) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց Արարատի մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

11.2. Տեղական ինքնակառավարում

11.2.1. Համայնքային խնդիրներ

885. Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի /հետագա փոփոխություններով ու լրացումներով /Արարատի մարզն ունի 97 բնակավայր, որոնք ընդգրկված են 97 համայնքների կազմում/: Մարզի 97 համայնքներից 4-ը քաղաքային համայնքներ են, 93-ը՝ գյուղական: Արարատի մարզում համայնքներն առավելապես կազմավորվել են «մեկ բնակավայր-մեկ համայնք» սկզբունքով: Մարզի 97 համայնքներ ընդգրկում են մեկական բնակավայր: Համայնքներն ըստ բնակչության թվի ներկայացված են Աղյուսակ 12.1-ում:

Աղյուսակ 12.1. Արարատի մարզի համայնքներն ըստ մշտական բնակչության թվի 2014թ. հունվարի 1-ի դրությամբ

Հ.Հ.	Դասակարգում ըստ բնակչության թվաքանակի	Համայնքների թիվը	Տոկոս մարզի համայնքների թվի նկատմամբ	Բնակչության ընդհանուր թիվը տվյալ համայնքներում /մարդ/	Տոկոս մարզի բնակչության թվի նկատմամբ
1	2	3	4	5	6
1	201-500 բնակիչ	4	4.1	911	0,3
2	501-1000 բնակիչ	14	14.4	11039	4,2
3	1001-3000 բնակիչ	58	59.8	96136	36,8
4	3001-5000 բնակիչ	12	11.3	33575	12,8

5	5001-10000 բնակիչ	6	6.2	36715	14,1
6	10 000-ից ավելի բնակիչ	4	4.2	83124	31,8
	Ընդամենը	**97**	**100.0**	**261500**	**100.00**

Աղբյուրը՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն

886. Ներկայացված աղյուսակի վերլուծությունից երևում է, որ մարզի 97 համայնքներից 18-ը, կամ շուրջ 18.5%-ն ունեն մինչև 1000 բնակիչ, 1001-3000 բնակիչ ունեն 58 համայնքներ կամ մարզի համայնքների 59.8%-ը, 3000-ից ավելի բնակիչ ունեն 22 համայնքներ կամ ընդհանուրի 21.7%-ը:

887. Արարատի մարզի համայնքները օրենսդրության շրջանակներում ենթարկվել են նաև որոշակի դասակարգման:

888. Այսպես՝ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N713 որոշմամբ /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ հաստատված սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկում Արարատի մարզից ընդգրկված է): ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերն ըստ բարձունքային նիշերի դասակարգելու մասին» N756 որոշման /հետագա փոփոխություններով ու լրացումներով/ համաձայն մարզում կա 9 սահմանամերձ և 6 լեռնային բնակավայր: Արարատի մարզի համայնքների վերաբերյալ բոլոր տվյալները ներկայացված են հետևյալ հավելվածներում՝ Հավելված 11.2, Հավելված 11.3, Հավելված 11.4,

889. Մարզի համայնքներում կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների բարձրացումը: Չնայած համայնքները իրավական հարթության վրա գոյություն ունեցող սուբյեկտներ են. բայց նրանց կարողությունները դեռևս թույլ են և ենթակա են հզորացման:

890. Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Էական դրական առաջընթաց է գրանցվել նաև համայնքների համար կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովման գործընթացներում:

891. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պարբերաբար անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները: Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական

մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը:

892. Երկրորդ կարևոր հանգամանքը համայնքային մակարդակներում բավարար կարողությունների ապահովումն է կադրերի հարցում, որը թույլ կտա առավել արդյունավետ կառավարել տեղերում և ստանձնել նոր լիազորություններ: Կարողությունների զարգացման մեթոդներներից են ուսուցողական դասընթացները, որոնք պետք է շարունակվեն կազմակերպվել տեղական և կենտրոնական մակարդակով կառավարության կամ դոնորների կողմից:

893. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու քարտեզագրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

894. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2015-2018 թվականների գերակայություններն են.

1) արունակել ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
2) Նպաստել միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը
3) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

895. Արարատի մարզի զարգացումը անքակտելիորեն կապված է մարզի համայնքների զարգացման հետ: Մարզում առկա հիմնախնդիրների լուծումը դրանք մարզի համայնքային բազմաթիվ հիմնախնդիրների լուծումներ են: Համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում մարզի զարգացումն էլ ավելի է կարևորվում:

896. Համաձայն ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման՝ օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

897. Հայաստանում ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում պայմանավորված է տարածքային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորությունների և իրավասությունների փոխանցմամբ: Այս գործընթացում կարևոր է հետևյալ սկզբունքի կիրառումը՝ եթե խնդիրն ավելի արդյունավետ կարող է լուծվել համայնքներում, ապա լիազորությունների փոխանցումը նպատակահարմար է, իսկ եթե լիազորությունների փոխանցումից հետո արդյունքը

բացասական է այսինքն դրանք չեն կատարվում,, ապա այդպիսի ապակենտրոնացումը աննպատակ է և կարող է միայն վնաս բերել հանրությանը: Խնդիրն այն է, որ ապակենտրոնացումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ ապահովի արդյունավետություն: Ապակենտրոնացման քաղաքականությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է համայնքների որոշակի ներուժի առկայությունը, որը սակայն փոքր համայնքներում բացակայում է: Այդ առումով նպատակահարմար է իրականացնել համայնքների խոշորացում՝ միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ, կրճատել դրանց թիվը: ՀՀ կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումը կարելի է համարել ապակենտրոնացման իրականացման արդյունավետ որոշակի քայլ: Միջհամայնքային միավորումների ստեղծելու և ն աջակցելու նպատակն ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Այն նախատեսված է նաև ՀԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել նաև միջազգային կազմակերպություններին օգտագործելով նրանց խրախուսանքը, ջանքերն ու կարողությունները:

11.2.2. Համայնքային ծառայություն

898. 2001 թվականից սկսած ՀՀ պետական կառավարման ոլորտներում սկսեցին ներդրվել այդ բնագավառներում ծառայությունները կարգավորող օրենքներ: Կադրային քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն էր զգացվում նաև համայնքներում և իշխանությունները ձեռնամուխ եղան համայնքներում միասնականացված կադրային քաղաքականության ապահովմանը: 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. փետրվարի 26-ից:

899. Օրենքով ամրագրված են ՀՀ-ում համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորված են համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, պաշտոնների նշանակման, ատեստավորման, նրանց իրավական վիճակի, կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Համայնքային ծառայության ներդրման գործընթացը ենթադրում էր որոշակի ժամկետներում որոշակի քայլերի հերթականությամբ իրականացում: Այդ ամենը սահմանված է օրենքով: Օրենքի եզրափակիչ և անցումային դրույթներում համայնքային ծառայության ներդրման գործընթացի համար սահմանված են նաև որոշակի հստակ ժամկետներ և ըստ այդ ժամկետների ինչպես ամբողջ Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արարատի մարզի 97 քաղաքային և գյուղական համայնքներում ներդրվեց համայնքային ծառայությունը: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, որի ներդրումն իրականացվեց Հանրապետության մասշտաբով ստեղծված մեկ մարմնի՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի միջոցով, համայնքային ծառայության

համար այդպիսի միավոր չի ստեղծվել, այլ օրենքով նախատեսվել է, որ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, ընդհանուր նկարագիրը սահմանելը և մի շարք այլ գործառույթներ իրականացնում է ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը: Այդպիսի մարմին ճանաչվեց ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի համապատասխան հրամաններով հաստատվեցին համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, խմբերում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու և մրցույթ ու ատեստավորում անցկացնելու կարգերը և մի շարք այլ իրավական ակտեր, որոնք հանդիսանում են օրենքից բխող, բնագավառի իրավական կարգավորումը շարունակող փաստաթղթեր:

900. Այդ տարիներին Արարատի մարզպետարանի առաջին քայլն եղավ բոլոր համայնքների ղեկավարների հետ «Համայնքային ծառայության մասին» օրենքի քննարկումը և յուրաքանչյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի պաշտոնների անվանացանկի կազմումը: Գործընթացի արդյունքում՝ 2007 թվականին մարզի 97 համայնքներում կար 561 համայնքային ծառայության պաշտոն: 2007թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում մարզի բոլոր համայնքներում կազմվել և համայնքների ղեկավարների կողմից հաստատվել է 561 պաշտոնի անձնագիր: Այդ գործընթացների իրականացման ողջ ընթացքում մարզպետարանը մարզի բոլոր 3 տարածաշրջանների համայնքների ղեկավարներին ցույց է տվել մեթոդական և խորհրդատվական օգնություն, աջակցել համայնքային ծառայության համակարգի ձևավորմանը: Համայնքներում պաշտոնների անձնագրերը հաստատելուց հետո սկսվեց դրանց համալրելու գործընթացը: Համաձայն օրենքի՝ պաշտոններում հաստիքացուցակի փոփոխումից հետո երկամսյա ժամկետում կարող են նշանակվել տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահաջները բավարարող միայն այդ մարմինների անժամկետ աշխատանքային պայմանագրերով աշխատողները՝ այսինքն առանց մրցույթի: Սկզբում մարզի համայնքներում այդ եղանակով համալրվել է 507 պաշտոն: Համայնքային ծառայողների համալրումը ըստ համայնքների 100 տոկոսով իրականացվեց մարզի միայն 57 համայնքներում: 40 համայնքներում մինչ համայնքային ծառայության ներդրումն աշխատող շատ աշխատակիցներ նոր պաշտոնների անձնագրերին չհամապատասխանելու պատճառով պաշտոնի չնշանակվեցին և այդ համայնքներում առաջացան 54 թափուր պաշտոններ, որոնցից միայն 12-ում՝ աշխատակազմի քարտուղարի պաշտոններ: Ընդհանուր առմամբ, մարզում 2007 թվականին, օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց մրցույթների համալրվեց համայնքային ծառայության պաշտոնների 91 տոկոսը:

901. Այնուհետև իրականացվեց օրենքի ներդրման երկրորդ և շարունակական փուլը, որն ընդգրկում է համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների բանկի ստեղծմանև, մրցույթների անցկացման, վերապատրաստման, ատեստավորման և այլ գործընթացներ:

902. Պրակտիկան ցույց է տվել, որ ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք պետք է լուծում ստանան ժամանակի ընթացքում: Համայնքների մի զգալի մասը պատրաստ չէ համայնքային ծառայության գործընթացին: Ներկայումս բնակչության փոքր թվաքանակ ունեցող գյուղական համայնքներում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի պահանջներին բավարարող կադրերի խիստ պակաս կա, դրա վկայությունն է վերը նշված այն փաստը, որ 2007 թվականին համայնքային ծառայության ներդրման առաջին փուլում համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 12 պաշտոններ, պաշտոնի անձնագրի բարձրագույն կրթության և աշխատանքային որոշակի ստաժի պահանջների ներկայացման հետևանքով մնացին թափուր: Հետագայում համայնքների ղեկավարների առաջարկությամբ և մարզպետարանի միջնորդությամբ մինչև 1000 բնակիչ ունեցող մի շարք համայնքներում աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերի չափանիշները օրենքով սահմանված կարգով մինչև 2015 թվականի հունվարի 1-ն ընկած ժամկետի համար իջեցվեցին և համալրվեցին: Ներկայումս այդպիսի համայնքների թիվը 9 է: 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Արարատի մարզի քաղաքապետարանների ու գյուղապետարանների աշխատակազմերում առկա է համայնքային ծառայության 565 պաշտոն:

903. 2007 թվականից սկսած Արարատի մարզի համայնքներում համայնքային ծառայությունը կայացման որոշակի դժվար փուլ անցավ: Արձանագրված բացթողումները շտկելուն և զարգացումներն ապահովելուն օգնության եկան «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում ըստ անհրաժեշտության կատարվող փոփոխություններն ու լրացումները, որոնք թույլ տվեցին ավելի արդյունավետ ներդնելու համայնքային ծառայության համակարգը:

904. Ծրագրավորվող 2015-2018 թվականներին, համաձայն օրենսդրության պահանջների, կշարունակվի կազմակերպվել համայնքային ծառայողների շարունակական վերապատրաստումը և ատեստավորումը: Դրա համար համայնքային ատեստավորման և մրցութային հանձնաժողովները հիմնականում ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, համակարգչային ծրագրերով, ատեստավորման կազմակերպման համար անհրաժեշտ հարցաշարերով, տեղեկատվական նյութերով և փաստաթղթերով:

905. Համայնքային ծառայության համակարգի արդյունավետ ներդրման ապահովման համար անհրաժեշտ է շարունակել իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Համայնքային ծառայողների տվյալների շտեմարանի, քաղաքացիական ծառայողների վերաբերյալ ունեցած տվյալների հիման վրա, ստեղծել մարզի միասնական կադրային ուղղվածությամբ տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի պաշտոնների և համապատասխան կադրերի վերաբերյալ, թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով
2) Խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց

համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ

3) Համայնքային ծառայության գործընթացի ներդրման ընթացքում առաջացած խնդիրների պարբերաբար քննարկում և ահնրաժեշության դեպքում, օրենսդրական նոր փոփոխությունների նախագծերի մշակում և դրանց սահմանված կարգով ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը
4) Մարզում համայնքային ծառայության ներդրման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացվող տեղեկատվության տրամադրման մեխանիզմների հստակեցում, տեղեկատվության առանձին ձևերի պարզեցում, մասնավորապես, համայնքային ծառայողների վերաբերյալ տեղեկատվության ամփոփ և ավելի կոմպակտ ձևերի սահմանում
5) Համայնքային, քաղաքացիական և մի շարք այլ ծառայությունների ներդաշնակեցում, ծառայության մեկ տեսակից մյուսին անցնելու կապի ստեղծում: Սա որոշակիորեն սկսվել է ապահովվել նաև 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի միջոցով:

12.2.3. Տեխնիկական ապահովվածություն

906. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: Համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

907. Մարզի համայնքների ճնշող մեծամասնությունը ներկայումս ապահովված է ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով: Սակայն ահրաժեշտ է անընդհատ արդիականացնել համակարգչային տեխնիկան, ինչպես նաև կատարելագործել համայնքային ծառայողների համակարգչային հմտությունները:

908. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Պաշտոնական տեղեկագրերի ոչ մատչելի գները հնարավորություն չեն տալիս համայնքներին կազմակերպել բաժանորդագրություն և տեղեկանալ իրականացվող զարգացումներին ու փոփոխություններին: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակումը նույնպես արդյունավետ չի կարող լինել: Խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական

էլեկտրոնային հրապարակումից օգտվելն է՝ ինտերնետային կայքի միջոցով: Ներկայում գործում է www.arlis.am կայքը: Համակարգը մշակվել է Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ, «Դատաիրավական բարեփոխումների ծրագրի» շրջանակներում: Շահագործումն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը: Համակարգի բաց տեղադրումը ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

11.2.4. Համայնքների զարգացում

909. 2000 թվականից սկսած տարածքային զարգացման անհամաչափությունները Հայաստանում սկսել են խորանալ տնտեսական աճի արագացմանը զուգընթաց և հիմնականում արտահայտվում են Երևանի տնտեսական դերի և նշանակության աճով, որի արդյունքում կենսամակարդակի տարբերությունը Երևանի և Հայաստանի մարզերի, այդ թվում նաև Արարատի միջև անընդհատ աճել է՝ վերջին տարիներին հասնելով անցանկալի չափերի: Տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա չվերահսկվող աճը խիստ անցանկալի է: Մասնավորապես, անհամաչափ տարածքային զարգացումը խնդիրներ է առաջ բերում ինչպես երկրի ներքին կայունության առումով, այնպես էլ նպաստում է տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններից բնակչության արտահոսքին ու մայրաքաղաքում անվերահսկելի կենտրոնացմանը: Արարատի մարզի զարգացումը պետք է նպաստի այս հանրապետական նշանակության խնդրի լուծմանը, որի լուծման ուղիները նախանշվել են ՀՀ կառավարության կողմից:

910. Մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է մարզի և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը: Ոլորտային կտրվածքով մարզի զարգացման ծրագիրը բաժանված է ոլորտների և յուրաքանչյուր ոլորտի ծրագրերի շահառուները բնակվում են կոնկրետ համայնքներում: Մյուս կողմից, մարզի զարգացման ծրագիրը կարելի է բնորոշել որպես մարզի կազմում ընդգրկված համայնքների զարգացման ծրագրերի հանրագումար: Ուստի մարզի և համայնքների ծրագրերի ներդաշնակությունը խիստ կարևոր գործոն է:

911. Այս ներդաշնակությանը կօգնի մարզի համայնքների վերաբերյալ ներկայումս ձևավորվող տվյալների բազան, որը կազմվում է ՀՀ տարածքային կառավարման **և** արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի 54-Ա հրամանի համաձայն: Բազայում հավաքագրվում են բազմաբնույթ տվյալներ համայնքների վերաբերյալ՝ ժողովրդագրական, ֆինանսական, քաղաքաշինական, հողաշինական և այլն, որոնք կօգնեն ավելի հստակ պատկերացնել կոնկրետ համայնքի սոցիալ-տնտեսական իրադրությունը և համայնքի համար զարգացման իրատեսական ծրագրեր մշակել:

912. Մարզի զարգացման ծրագրում համայնքները պետք է դիտարկվեն որպես շահառուներ, իսկ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման

մարմինները կատարողներ: Այս առումով նպատակահարմար է հնարավորինս կոնկրետացնել համայնքների ՏԻՄ-երի, պետական և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները և պատասխանատվությունը մարզի զարգացման ծրագրում:

913. Մարզի և համայնքների զարգացման ծրագրերի ներդաշնակության ու արդյունավետության ապահովման հաջորդ գրավականն այն է, որ առաջիկա տարիներին մարզի համայնքները, տեղական իշխանությունները համայնքային զարգացման քառամյա ծրագրերի, ինչպես նաև ոլորտային ծրագրերի մշակման ընթացքում հիմք ընդունեն և կողմնորոշվեն մարզի զարգացման ծրագրով:

914. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի կազմման վրա մարզպետարանի կողմից պատշաճ ուշադրություն է դարձվել: Չնայած նրան, որ տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանել, այնուամենայնիվ, մարզպետարանը համայնքների ծրագրերի կազմման միասնական մեթոդաբանական ուղեցույցներ է պատրաստել և տրամադրել համայնքներին: Դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը որոշակիորեն համապատասխանեցվել են միասնական կառուցվածքային չափանիշներին, ինչի հետևանքով որոշ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը իրատեսական որոշակի հիմնավորումներ ունեն:

915. Մարզի բոլոր 97 համայնքների 2014-2017թթ. քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ոլորտային կապիտալ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև համայնքների մի շարք հիմնախնդիրների լուծման ուղված միջոցառումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատվել են առավել առաջնահերթ, դրանց լուծման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 17.9 մլրդ դրամ (Հավելված 11.5):

916. Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2015-2018 թվականներին անհրաժեշտ է իրավական հարթության վրա ունենալ համայնքների զարգացման ծրագրերի մշակման, իրագործման միասնական մեթոդաբանություն, որը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել սուղ միջոցների օգտագործման արդյունավետությունը:

917. 2015-2018թթ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի իրականացման վրա: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն, ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման

առաջնահերթությունները, հետագայում ծրագրերում նկատված բացթողումներն ուղղելու, ծրագրերի դինամիկան ապահովելու և խնդիրների լուծման հնարավորություններն ավելի իրատեսական դարձնելու համար:

918. Արարատի մարզպետարանը պարբերաբար ձեռնամուխ է լինում մարզի համայնքների հիմնախնդիրների ուսումնասիրությանը, քննարկմանը և դրանց լուծման ուղիների որոշմանը: Աշխատանքային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի մարզպետարանի կողմից իրականացվում են այցելություններ մարզի տարբեր համայնքներ, որտեղ բարձրացվում են ամենատարբեր բնույթի հարցեր և խնդիրներ: Հիմք ընդունելով այցերի ընթացքում բարձրացված այդ խնդիրները և համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, համայնքների ղեկավարների հետ համատեղ կազմվում է յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ հիմնախնդիրների կտրվածքով տվյալների բանկ, որոշվում է ավելի առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող խնդիրների խումբը և այդ հիմքով կազմվում է փաստաթուղթ ՀՀ Արարատի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների մասին, որի հիման վրա էլ հետագայում կազմվում են համայնքների զարգացման ծրագրերը:

919. Արդյունքում կարևորվում է նաև համայնքային զարգացման հիմնական ուղղություններն ըստ առաջնահերթության դասակարգելու անհրաժեշտությունը:

920. Համայնքների զարգացման կարևոր նախապայմաններ են.

1) Համայնքային ենթակառուցվածքների վիճակի բավարար լինելը. (ճանապարհներ, ջրամատակարարման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ)
2) Համայնքի բնակիչների ներուժը՝ սեփական հմտությունները և գիտելիքները, ընդհանուր նպատակի համար գործելու իրենց ընկալումը, փոխադարձ հանդուրժողականությունը
3) Քաղաքացիական հասարակության և հանրային կազմակերպությունների ցանցի առկայությունը, համայնքի պաշտոնական և ոչ պաշտոնական ինստիտուցիոնալ կազմը
4) Համայնքի բոլոր բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացումը, որը հնարավորություն կտա իրականացնել, երաշխավորել և պաշտպանել տեղական կառավարման որոշումներ ընդունելու և այդ գործընթացին մասնակցելու իրավունքները (արդարադատության հասանելիության, տեղեկատվության և կրթության, առողջապահության և լիարժեք կյանքով ապրելու համար նմանատիպ այլ ասպեկտներ)
5) Համայնքի բնակիչների և դրսի սուբյեկտների միջև կառուցողական համագործակցության հարաբերությունների հաստատումը:

921. Համայնքների զարգացման խնդիրների լուծմանն օգնում է նաև համայնքների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գործողություններ իրականացնել թույլ կողմերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

922. Արարատի մարզի համայնքների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները վերլուծվել են Աղյուսակ 12.2-ում:.

Աղյուսակ 12.2. ՀՀ Արարատի մարզի համայնքների ուժեղ, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Ուժեղ կողմերը	**Թույլ կողմերը**
❖ **Մարզի տարբեր ոլորտներում մասնագետների առկայությունը** ❖ **Բարձրագույն կրթությամբ մարդկանց առկայությունը** ❖ **Բնակչության աշխատասիրությունը** ❖ **Բնատարածքային հայրենասիրության գաղափարի առկայությունը** ❖ **Քաղաքացիական որոշակի ակտիվությունը** ❖ **Գործող հասարակական կազմակերպությունների առկայությունը մարզում** ❖ **Հասարակական կազմակերպությունների որոշակի ազդեցությունը** ❖ **Աշխատանքային փորձի առկայությունը** ❖ **Հասարակական նախաձեռնությունները** ❖ **Պետական և տեղական իշխանությունների համագործակցության, գործընկերության առկայությունը** ❖ **Միջհամայնքային որոշակի համագործակցության առկայությունը** ❖ **Միջազգային որոշ կազմակերպությունների առկայությունը մարզում** ❖ **Տվյալ համայնքի նախկին բնակիչ համարվող, Սփյուռքի բարերարների կողմից համայնքում որոշակի ներդրումներ կատարելը կամ ներդրումներ կատարելու**	❖ **Փոքր ու միջին ձեռնարկատիրության դանդաղ զարգացումը** ❖ **Արտագաղթելու միտումը, միգրացիան** ❖ **Որակյալ կադրերի թույլ ընդգրկվածությունը** ❖ **Տեղեկացվածության և գիտելիքների պակասը** ❖ **Անտարբերությունը** ❖ **Համագործակցության պակասը** ❖ **Արտաքին աղբյուրներից կախվածությունը** ❖ **Համայնքի կառավարմանը մասնակցելուն շահագրգռվածության պակասը** ❖ **Հասարակության բևեռացվածությունը և սոցիալական խմբերի միջև կապերի բացակայությունը** ❖ **Վնասակար ավանդույթները** ❖ **Ոչ-ֆորմալ կապերի գերակայությունը** ❖ **Առաջարկությունների և նախաձեռնությունների նկատմամբ որոշ պաշտոնյաների բացասական տրամադրվածությունը** ❖ **Դեպքերի հետևից գնալու որոշ միջին ղեկավարների սովորույթը** ❖ **Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին օրենքների անկատարությունը**

պատրաստակամությունը	❖ **Անբավարար պետական աջակցությունը**
Հնարավորությունները	**Վտանգները**
➢ **Առկա արտադրական ձեռնարկությունների վերագործարկումը** ➢ **Մարզում ուսումնական բազայի առկայությունը (հանրակրթական)** ➢ **Մարզում միջազգային կազմակերպությունների առկայությունը** ➢ **Մարդկանց մոտ շահագրգռվածության և մոտիվացիայի առկայությունը** ➢ **Բիզնեսի կազմակերպման հնարավորությունները** ➢ **Աշխատանքային արտագաղթի արդյունքում նյութական ռեսուրսների կուտակումը և արտաքին միջավայրի հետ փոխգործակցումը** ➢ **Պետական ռազմավարական ծրագրերը** ➢ **Պետական կառավարման ապակենտրոնացումը** ➢ **Դրական փորձերի ստեղծումը և տարածումը** ➢ **ԶԼՄ-ների զարգացումը** ➢ **Մասնագիտական բավարար ռեսուրսները** ➢ **Ճանապարհների օգտագործումը**	✓ **Արտագաղթը, աշխատուժի արտահոսքը** ✓ **Ժողովրդագրական փոփոխությունները** ✓ **Ուսումնական համակարգի վատթարացումը** ✓ **Տեղեկատվության պակասը** ✓ **Երիտասարդ կադրերի և երիտասարդության արտահոսքը** ✓ **Կոռուպցիայի առկայությունը** ✓ **Անտարբերությունը** ✓ **Բնական և տեխնածին աղետների վտանգը:**

923. **Համայնքների զարգացման ռազմավարությունը** - Արարատի մարզի համայնքների զարգացման ռազմավարության առաջնահերթություններն են.

1) Տարածքային կառավարման բարելավում, տարածքային կառավարման մարմինների գործառույթների, կարողությունների բարելավում, կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, թափանցիկության բարձրացում
2) Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացում, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, միջհամայնքային համագործակցության խթանում
3) Տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում, հանրային ծառայությունների տեղեկատվական կենտրոնների ստեղծում

4) Սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային և փախստաբնակ համայնքներում ծրագրերի իրականացում
5) Քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում:
6) Մեկից ավելի բնակավայր ընդգրկող համայնքներում յուրաքանչյուր բնակավայրի զարգացման ծրագրի՝ առանձին մասով համայնքի զարգացման ծրագրի մեջ սահմանում
7) Նպաստել համայնքների ավագանիների կայացմանը և դրանց աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության բարձրացմանը
8) Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը: Կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները
9) Իրականացնել աշխատանքներ՝ տարածքային անհամամասնությունների նվազեցման և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացման համար
10) Մարզի համայնքների համար տեղեկատվական միացյալ բանկի ստեղծում
11) Աջակցություն համայնքերին՝ միջհամայնքային միավորումների ստեղծման գործում
12) Մարզի համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում, գազամատակարարում) զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացում
13) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու նպատակով պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, նորմատիվների և չափորոշիչների սահմանում
14) Բարձր լեռնային և սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթի կանխման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում: /«Հայաստանի /Հանրապետության սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում/:

11.3. Քաղաքացիական հասարակություն

924. Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները և պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական բնութագրիչներով:

925. Ըստ արևմտյան մասնագետների կարծիքի՝ քաղաքացիական հասարակության երեք կարևոր բաղադրիչներն են պետության տնտեսական համակարգը, գաղափարախոսությունը և քաղաքական կառուցվածքը:

926. Արարատի մարզում, ինչպես ամբողջ հանրապետությունում այս երեք տարրերի օպտիմալ համադրումը կարող է ապահովել քաղաքացիական հասարակության կայացման համար արդյունավետ ճանապարհ:

927. Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը պասիվ և սպասողական

դիրքորոշում ունի մարզում ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ պասիվ դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը և մասնակցությունը մարզային զարգացման գործընթացներին: Արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը հենց ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն գործոններից մեկը:

928. Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երը պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացներն արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

929. 2015-2018 թվականների ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

930. Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

931. Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանում այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այցելությունները համայնքներ, որոնք պետք է անցկացվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և

բացատրություններ:

932. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ ավելի մասնակից դարձնել մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

933. Մարզպետարանի, մարզում գործող պետական մարմինների գործունեությունը հնարավորինս հրապարակային, թափանցիկ և պատասխանատու դարձնելու նպատակով, անհրաժեշտ է ներդնել պատասխանատու մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվության նոր համակարգ: Այս համակարգի ձևավորումը նույնպես պետք է իրականացվի մարզում գործող ոչ-պետական կազմակերպությունների գործուն մասնակցությամբ:

934. Մարզում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունը պետք է լինի մարզպետարանի, պետական մարմինների գործառույթների հստակեցումը և կառավարման համակարգի կատարելագործումը:

935. ՀՀ կառավարության կողմից իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի շրջանակներում մարզում անհրաժեշտ է սկզբունքային և օպերատիվ աջակցություն ցուցաբերել այն բոլոր միջոցառումների իրականացմանը, որոնք նպատակաուղղված կլինեն.

1) առավելագույնս կատարելագործել և հստակեցնել պետական ծառայության հիմքերը
2) թափանցիկ և մատչելի դարձնել պետական տնտեսական քաղաքականության իրագործման մեխանիզմները, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը պետական հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում
3) հետևողականորեն բարձրացնել զանգվածային լրատվական միջոցների և հասարակական միավորումների դերը պետական հակակոռուպցիոն ռազմավարության քարոզչության խնդրում:

936. Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է լինի առավելագույնս հրապարակային հասարակության իրազեկման և նրա կողմից վերահսկման պայմաններում: Դա պետք է արտահայտվի ինչպես կոռուպցիայի հետևանքների, այնպես էլ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ իրազեկմամբ, ինչը կօգնի վերականգնել հասարակության վստահությունն ու հավատն արդարացի և անաչառ պետական ծառայության նկատմամբ:Անհրաժեշտ է այդ մասին տեղեկատվությունը սեղմ ժամկետներում տեղադրել արդեն գոյություն ունեցողլ քաղաքային և գյուղական համայնքների պաշտոնական ինտերնետային էջերում:

937. Արդեն իսկ իրականացվում են մարզի համարյա բոլոր համայնքներում՝ համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

938. Անհրաժեշտ է համայնքի ավագանու նիստերին ապահովել հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի

ներկայացուցիչների և հասարակայնության լայն շերտերի մասնակցությունը :

939. Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում:

940. Հրապարակել այն բոլոր որոշումները, որոնք վերաբերում են գյուղացիական տնտեսությոըններին պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող օգնություններին, մասնավորապես՝ սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը: Նույնը իրականացնել նաև սոցաջակցության վերաբերյալ գործընթացներին:

941. Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանն իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

942. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, ջրօգտագործողների ընկերություններ, համայնքների միություններ, ՓՄՁ զարգազման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ և այլն):

943. Մարզպետարանում կազմակերպել նախնական մրցույթ, մարզի կողմից լավագույն համայնքների մասնակցությունն ամենամյա «Տարվա համայնք» պաշտոնական մրցանակաբաշխությանը ապահովելու համար, որը համար նախատեսվող որոշակի ֆինանսական և այլ տիպի օգնությունները մեծ խթան կհանդիսանան շահող համայնքի գործունեության ակտիվացմանը:

944. Մարզային հեռուստաալիքով հնարավորինս ավելացնել «Մարզային ժամ» ծրագրին հատկացված ժամանակը, որը, պարբերաբար և ավելի ընդգրկուն կներկայացնի մարզի յուրաքանչյուր բնագավառը առանձին- առանձին:

12. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

12.1 Մարզի առավել վտանգավոր տարածքներ

945. Արարատի մարզը գտնվում է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում, այն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք: Մարզը գտնվում է ծովի մակերևույթից 812-2971 մ բարձրության վրա, իսկ բնակավայրերը՝ 812-1980 մ բարձրության վրա: Ունի կիսաանապատային կլիմա, նախալեռնային գոտիները սակավաջուր են, միջին տարեկան տեղումները կազմում են 250-300մմ:

946. Բնակելի տարածքների համար արտահայտվում են հետևյալ բնակլիմայական պայմանները՝

ա) չոր ցամաքային, չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով

բ) բարեխառն, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով

947. **Գետեր -** Մարզի տարածքով են հոսում Արաքս և Հրազդան գետերը, իսկ մարզի տարածքում սկիզբ են առնում Արացոգետ գետը, Վեդի գետը իր Կոտուց, Խոսրով, Սպիտակաջուր, Քյուսուզ վտակներով և Ազատը իր Գողթ, Գիլան, Դարբանդ վտակներով:

948. Մարզի տարածքով են անցնում նաև Արտաշատի, Կախանովի ջրանցքները և 4՝ Նարեկ-Քաղցրաշեն-Այգեզարդ-Այգեպատ, Լանջազատ, Արտաշատ և Փամբուկ-Դարա սելավատարները**:**

949. Վերջին տարիներին մարզի սելավատարների հուների մաքրման և ափերի ամրացման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել և մարզի սելավատարների տեխնիկական վիճակը էլ ավելի է վատթարացել: Միայն՝ 2012թ.-ին և 2013թ.-ին Այգեպատ համայնքի միջոցներով մաքրվել է Այգեպատ համայնքի տարածքով անցնող սելավատարի 400 գմ հատվածը::

950. Համապատասխան համայքների տեղական բյուջեների սուղ միջոցները հնարավորություն չեն ընձեռնում աշխատանքներ իրականացնելու համար: Անհրաժեշտ են խոշոր ֆինանսական միջոցներ հիմնախնդրի լուծման համար:

951. Աղյուսակ 12.1-ում ներկայացված են գետերի վտանգավոր հատվածներն ըստ բնակավայրերի:

Աղյուսակ 12.1 Արարատի մարզի գետերի վտանգավոր հատվածները

Գետի անվանումը	Ջրի միջին մակարդակը (սմ) (դիտակետում)	Վարարումների ժամանակ ջրի առավելագույն մակարդակը (սմ)	Վտանգավոր (խոցելի) հատվածներ
1	2	3	4
Արաքս	251 (Արտաշատ)	510	ՌԴ սահմանապահ 4,11,13 ուղեկալներ
Հրազդան	154 (Մասիս)	355	Սիս, Նորամարգ, Գետափնյա, Գեղանիստ, Սիփանիկ, Ղուկասավան
Ազատ	135 (Լանջազատ)	210	Լանջազատ, Արևշատ, Կանաչուտ, Դեղձուտ, Ազատավան, Բուրաստան, Նշավան, Դեղձուտ, Ազատավան,

			Բուրաստան,Նշավան
Վեդի	53 (Վեդի)	185	Ուրցաձոր, Դաշտաքար, Գոռավան, ք. Վեդի, Ավշար, Եղեգնավան

952. **Ջրամբարներ -** Արարատի մարզում են գտնվում Ազատի և Զանգակատան ջրամբարները:

953. Ազատի ջրամբարը գտնվում է Ազատ գետի վրա՝ Լանջազատ համայնքի տարածքում: Ջրամբարի ջրի ծավալը կազմում է 70մլն մ^3, հայելու մակերեսը 285 հա, պատվարի բարձրությունը՝ 78մ, երկարությունը գագաթով՝ 620մ է, առավելագույն խորությունը՝ 73 մ: Ջրի միջին տարեկան հոսքը 229 մլն. մ^3 է:

954. Զանգակատան ջրամբարը գտնվում է Արացոգետ գետի վրա՝ Զանգակատուն համայնքի տարածքում: Ջրամբարի ծավալը կազմում է 1.4 մլն մ^3, պատվարի երկարությունը գագաթով 300 մ է, առավելագույն խորությունը 35մ է, ջրի հայելին 10.7 հա:

955. Ազատի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում կհայտնվեն մարզի 33 բնակավայրեր, իսկ Զանգակատան ջրամբարի պատվարի փլուզման դեպքում Զանգակատան համայնքի տարածքում գտնվող հողատարածքները:

956. Մարզի բնակավայրերի համար վտանգ են ներկայացնում նաև Ապարանի և Ախուրյանի ջրամբարները, քանի որ դրանց պատվարների փլուզման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել մարզի Մասիսի տարածաշրջանից շուրջ 35 բնակավայր:

957. Ջրամբարների պատվարների փլուզման պատճառ կարող են հանդիսանալ ուժեղ երկրաշարժերը, սողանքները և այլն: Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման, սահմանված կարգով մարզում պետք է իրականացվեն սեյսմիկ ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումներ:

958. Մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման նպատակով ՄԶԾ-ով նախատեսվում է 14.5 մլն դրամ, որի իրականացման համար Արարատի մարզպետարանը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացրել համապատասխան հայտ: Մարզի 41 համայնքների կողմից ներկայացրած հայտերի հիման վրա համայնքի զարգացման ծրագրերում նախատեսվել է ավելի քան 102 մլն դրամի աշխատանքներ:

959. Աղյուսակ 12.2-ում ներկայացվում է մարզի ջրամբարների բնութագիրը:

Աղյուսակ 12.2 Արարատի մարզի ջրամբարները

Ջրամբարի անվանումը	Պատվարի երկարություն գագաթով (մ)	Խորություն (մ)	Ջրի հայելին (հա)	Ծավալ (մլն. մ^3)	Ջրածածկման գոտի (կմ^2) բնակչության քանակ (մարդ)
1	2	3	4	5	6
Ազատ	620	73	285	70	234/ 95362
Զանգակատան	300	35	10.7	1.4	25/ 2547

12.2 Բնական աղետներ

960. Արարատի մարզում հնարավոր են հետևյալ վտանգավոր բնական երևույթները՝

1) Երկրաբանական վտանգավոր երևույթներ՝

ա. Երկրաֆիզիկական վտանգավոր երևույթներ՝ երկրաշարժեր,

բ. Երկրաբանական վտանգավոր երևույթներ՝ սողանքներ, փլվածքներ, քարաթափվածքներ, սելավներ, լանջային լվացումներ, ձնահյուսեր,

2) Օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ- փոթորիկներ, մրրիկներ, մրրկասյուներ, ամպրոպ, խոշոր կարկուտ, ուժեղ քամիներ, տեղատարափ անձրև, ուժեղ կամ առատ ձյունատեղում, սառնամանիք, ուժեղ ցուրտ, ուժեղ ձնաբուք, ուժեղ շոգ, ուժեղ մառախուղ, երաշտ, խորշակ, ցրտահարություն:

3) Հիդրոլոգիական վտանգավոր երևույթները- վերգետնյա ջրերի բարձր հորիզոններ (ջրհեղեղ, վարարում), վերգետնյա ջրերի ցածր հորիզոններ (սակավաջուր):

4) Հիդրոերկրաբանական վտանգավոր երևույթները- գրունտային ջրերի բարձր հորիզոններ, գրունտային ջրերի ցածր հորիզոններ:

5) Բնական հրդեհները- անտառային հրդեհներ, թփուտածածկերի, չոր խոտածածկույթի բռնկմամբ, այլ բուսածածկ տարածքների հրդեհներ, հացահատիկի զանգվածների հրդեհներ:

961. Արարատի մարզում սողանքային երևույթների ազդեցության տակ են գտնվում Բայբուրդ-Գեղահովիտի հատվածում՝ 15կմ^2, Վեդի գետի հունի շրջակայքում՝ 3կմ^2 դեպի հյուսիս-արևելք և 117կմ^2 գետի հունով դեպի Ուրցաձոր-Բախչի ջուր,

Լանջազատ-Գառնի ճանապարհի 1կմ² հատված, Բարձրաշեն գյուղի հյուսիս-արևելյան մասում 1.5կմ²: Անտառային հրդեհների համար բարենպաստ տարածքներ է հանդիսանում Խոսրովի արգելանոցի անտառային և խոտհարքի տարածքները շուրջ 13.5կմ² և խոտհարքները:

12.3 Տեխնածին աղետներ

962. Մարզում տեխնածին վթարներից են՝ ավտովթարները, կենցաղային և դյուրավառ նյութեր օգտագործող օբյեկտներում հրդեհները, պայթյունները, արտադրական վթարները թունավոր նյութերի արտահոսքով, շենքերի, շինությունների հանկարծակի փլուզումները, հիդրոդինամիկական վթարները՝ ջրամբարների և պոչամբարների:

963. Վերոնշյալ աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը:

964. Տեխնածին աղետներից խուսափելու և նվազագույնի հասցնելու համար կարևորվում է տեղական հեռուստատեսության դերը բնակչության շրջանում, բացատրական աշխատանքների անցկացման, անվտանգության կանոնների իրազեկման հարցում:

965. Մարզի վտանգավոր օբյեկտներում «ԳեոՊրոՄայնինգ» ՍՊԸ-ում և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ում կարող է տեղի ունենալ արտադրական վթարներ՝ թունավոր նյութերի արտահոսքով, իսկ դյուրավառ նյութեր օգտագործող օբյեկտներում, մասնավորապես՝ «Հայգորգ» Մասիսի մասնաճյուղ, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ՝ հրդեհներ:

966. 2011-2013թթ. ընթացքում Արարատի ցեմենտի գործարանում տեղադրված ժամանակակից ֆիլտրերը, ցեմենտի աղացման և հավելանյութերի արտադրամասում նոր փոշեորսման սարքավորումները, ինչպես նաև «ԳեոՊրոՄայնինգ» ՍՊԸ-ում Արարատի գործարանում պոչամբարի կառուցվածքի վիճակը վերահսկելու համար տեղադրված ստուգիչ և չափիչ սարքերը, զգալիորեն շուրջ 50%-ով նվազեցրել են մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը:

12.4Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում

967. Առաջին և ամենակարևոր ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին:

968. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա:

969. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

970. Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները.

1) Վեդի գետի հունի մաքրում և ափերի ամրացում Ուրցաձոր, ք. Վեդի, Դաշտաքար, Գոռավան, Վանաշեն, Ավշար, Եղեգնավան համայնքների տարածքում:

2) Նարեկի սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում Նարեկ և քաղցրաշեն համայնքների տարածքում:

3) Արտաշատի հեղեղատարի հունի մաքրում ք. Արտաշատի տարածքում:

4) Հրազդան գետի հունի մաքրում և ափերի ամրացում Ռանչպար համայնքի տարածքում:

971. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

12.5 Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն

972. Արարատի մարզի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքը վերահսկում և կանոնակարգում է ՀՀ ԱԻՆ ՔԾ Արարատի մարզի փրկարարական վարչությունը: Մարզում ՔՊ ղեկավարման, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով, և ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 384 և Արարատի մարզպետի 2011թ մայիսի 16-ին ընդունված թիվ 37-Ն որոշումների համաձայն մարզպետարանի վարչությունների և բաժինների բազայի վրա ստեղծվել են թվով 9 մարզային ՔՊ ծառայություններ, որոնք գործում են համաձայն ՔՊ ծառայությունների պլանների:

973. Այդ ծառայություններն են.

1) կապի և ազդարարման ծառայություն
2) ինժեներա-տեխնիկական ծառայություն
3) բժշկական ծառայություն
4) տրանսպորտային ծառայություն
5) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն
6) նյութատեխնիկական մատակարարման, առևտրի ու սննդի ծառայություն

7) կոմունալ-տեղնիկական ծառայություն
8) հասարակական կարգի պահպանման ծառայություն
9) էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն:

974. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի հիմնախնդիրները և դրանց իրականացման վերաբերյալ իրականացմանն ուղված միջոցառումները հետևյալն են.

1) Մարզի տարածքում տեղակայված հակաճառագայթային թաքստոցների վերանորոգում և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և գույքով վերազինում:
2) Բնակչության ամբողջ թվաքանակի պատսպարումն ապահովելու համար պաշտպանական կառույցների կառուցում կամ արագ կառուցվող պարզագույն թաքստոցների կառուցման համար պահանջվող շինանյութերի ձեռքբերում և պահեստավորում:
3.) Տարահանված բնակչության կենսաապահովման համար անհրաժեշտ պաշարների ստեղծում:

4) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումները տեխնիկական և անհատական պաշտպանական միջոցներով ապահովում:
5) Ռազմական դրության ժամանակ գործունեությունը շարունակող կազմակերպությունների շենքերի, շինությունների և արտադրական միջոցների կայունությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ արտադրական շենքերի կոնստրուկցիաների ուժեղացում, արտադրական տեղամասերի պաշտպանության ապահովման համար լրացուցիչ պաշտպանիչ շինարարական կոնստրուկցիաների մոնտաժում, արտադրական միջոցների տեղակայման համար պահուստային տեղամասերի կառուցում՝ հիմնական արտադրական տեղամասերի պաշտպանվածության նվազեցման դեպքում հաստոցների և այլ տեխնիկական միջոցների տեղադրման համար:

6) Մարզպետի կառավարման պահուստային կետի համապատասխանեցում պահանջվող նորմերին:
7) Մարզում ստեղծել կենտրոնացված ազդարարման համակարգ, ազդարարման համակարգը արդյունավետ գործարկելու համար անհրաժեշտ է 41 էլետրաշչակ:
8) Մարզում նոր ջրագծերի անցկացման հետ զուգընթաց տեղադրել հրշեջ հիդրանտներ, իսկ հնարավորության դեպքում գյուղական համայնքներում կառուցել հրշեջ ջրավազաններ:
9) Արտակարգ իրավիճակներում բնակչությանը վարքականոնների ուսուցում, մարզի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի հետ ուսումնավարժությունների անցկացում:

10) Առաջարկել մարզի բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին համայնքի տարեկան բյուջեներում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու, արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը օգնություն ցուցաբերելու նպատակով

975. 2015-2018թթ. մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար ֆինանսական միջոցներ՝ Հավելված 12-ում:

13. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

976. ՄԶԾ առաջընթացի տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար:

977. Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով ՀՀ Արարատի մարզպետի մարզպետի 2014թ. հունիսի 19-ի թիվ 64 որոշմամբ հաստատվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ

978. Խմբերի ղեկավարը ՀՀ Արարատի մարզպետի տեղակալն է:

979. ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում են մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից:

980. ՄԶԾ ՄԳ-ն մի համակարգ է, որը

1) համապատասխանում է ՀԶԾ մոնիտորինգի համակարգին
2) ուշադրության կենտրոնում է պահում առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները
3) ճկուն է
4) նպաստում է կարևոն ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը
5) թափանցիկ է:

981. **Տարեկան աշխատանքային պլան -** ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով մշակվում է Տարեկան

աշխատանքային պլան (ՏԱՊ), որի նպատակն է.

1) համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ նպատակների իրականացման համար
2) ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
3) սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումների իրականացման համար
4) կոնկրետացնել միջոցառումների իրականացման ժամկետները
5) սահմանել ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

982. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

983. ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են Տրամաբանական հենքում:

984. Տրամաբանական հենքն օգնում է.

1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը
2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա
3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար
4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները
5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները
6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

985. ՄԶԾ մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ՀՀ ՀԶԾ-ի արդյունքային ցուցանիշների գնահատման համակարգին և ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

986. ՀԶԾ ցուցանիշների համակարգում հիմնական արդյունքային ցուցանիշը՝ նպատակը, զբաղվածության ավելացումն է, ՀԶԾ-ում կարևորելով ծրագրի հիմնական նպատակին ուղղված քաղաքականությունները՝ դրանք լրացվելու են աշխատատեղերի

ավելացմանն ու գործազրկության կրճատմանը ուղղված ֆինանսական և դրամավարկային գործիքներով:

987. Դրանք դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Աղքատության կրճատման և բարեկեցության աճ, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում,
2) Կրթություն
3) Առողջապահություն
4) Գյուղատնտեսություն
5) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ,մարդկային կապիտալի զարգացում

988. ՄԶԾ ՄԳ իրականացման փուլում կարևոր է նաև, որ մարզպետարանը համագործակցի ՀԶԾ քարտուղարության հետ, քանի որ ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց մարզպետարանները: Դրանք են.

1) ՀԶԾ-ով նախատեսված մարզում իրականացվող միջոցառումների մոնիտորինգ
2) Մազրի մակարդակով ՀԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ և վերլուծություն
3) Պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների մոնիտորիգ և գնահատում
4) Քաղաքացիական հասարակության կառույցների զարգացում
5) ՀԶԾ-ի մասին հանրության իրազեկության բարձրացում:

989. **ՄԶԾ ՄԳ համակարգի կառուցվածքը -** ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1) քաղաքականության ուսումնասիրում
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում
4) ազդեցության գնահատում:

990. Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը, բացահայտում է խոչընդոտները և հետազոտում անելիքները:

991. ՄԶԾ-ի ցուցանիշները և ոլորտները վերանայվում, խմբավորվում են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

1) տնտեսական զարգացում
2) կենսամակարդակ
3) ՓՄՁ զարգացում
4) գյուղատնտեսության զարգացում
5) առողջապահություն

6) կրթություն
7) սոցիալական պաշտպանություն
8) մշակույթ և սպորտ
9) քաղաքաշինություն
10) համայնքային զարգացում
11) շրջակա միջավայրի պաշտպանություն:

992. Հաստատված ժամանակացույցի համաձայն ՀԿ-ների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

993. Մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.

1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում
2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

994. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանականան տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

995. Այնուամենայնիվ, ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով՝ ամրապնդվում է նաև կապը մարզապետարանի և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

996. **ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը -** Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամսիներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա
2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում
3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

997. **ՄԳ հաշվետվությունները -** Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

998. Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը կազմվում է հուլիս ամսին:

999. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է հունվար ամսին և ներառում է հետևյալ բաժինները.

1) ՀԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա
2) ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը
3) Տարվա ընթացքում իրականացված գնումները
4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով
5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ
6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները
7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները
8) Հաջորդ տարվա հիմնախնիդրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

1000. ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական

հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

1001. Սեմինար-խորհրդակցությունը պետք է դիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

1002. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Մարզային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում:

1003. Չափազանց կարևոր է ՄԶԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը:

1004. Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի անբաժանելի մասի ամրագրումը ՄԶԾ մոդելի բաղադրիչների կազմում: Այս համակարգի արմատավորումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել ՀԶԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը:

Աղյուսակ 15.1. ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը	Իրականացման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրականացնող կողմը
Քաղաքականության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:	1. ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն: 2. ՏԱՊ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում: 3. Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում: 4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում: 5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Կիսամյակային հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ

ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում	1. ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում: 2. Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում: 3. Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը գնահատելու նպատակով: 4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ
Մասնակցային մոնիտորինգ և գնահատում	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և արձագանքների վերլուծություն	1. ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում 4. Հետազոտական խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում	Մասնակցային մոնիտորինգի ևգնահատման հաշվետվություն	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտական հետազոտություն	1.ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում 4. Հետազոտական խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում	Ազդեցության գնահատման հաշվետվություն	Անկախ փորձագետներ

14. ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

1005. ՄԶԾ իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 90 մլրդ 211.8 մլն դրամ՝ առանց համայնքների քառամյա զարգացման ծրագրերի: Հաշվի առնելով առկա տնտեսական միտումները և մակրոտնտեսական ցուցանիշների հնարավոր փոփոխությունները, առանձին ոլորտների ֆինանսավորումը նախատեսվել է ոչ բոլոր ուղղություններով, իսկ փոքր և միջին ձեռնարկատիրության, արդյունաբերության ոլորտների ֆինանսավորումը ծրագրով չի նախատեսվել: Այդ ոլորտների համար նշվել են զարգացման համար նախատեսվող միջոցառումները, դրանց ֆինանսավորման հնարավոր ուղիները: Ֆինանսական աղբյուրները կհստակեցվեն, երբ հաստատված կլինեն տվյալ տարվա պետական բյուջեից մարզին հատկացված ֆինանսական միջոցները և համայնքային բյուջեները, ինչպես նաև հայտնի կլինեն միջազգային կազմակերպությունների և տեղական հիմնադրամների կողմից մարզում իրականացվելիք ծրագրերը:

1006. Արդյունաբերության, ՓՄՁ ոլորտի և մասնավոր հատվածի ֆինանսավորման համար նախատեսվում է 3.0 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.3%-ը):

1007. Սոցիալական ոլորտների ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 44.169 մլրդ դրամ՝ ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 49.6%-ը, այդ թվում՝

- **Կրթության ոլորտի** ֆինանսավորումը հիմնականում ուղղված է դպրոցաշինությանը՝ կրթական օբյեկտների կառուցմանը, նորոգմանը և վերազինմանը: Ոլորտի ֆիանանսավորման համար անհրաժեշտ է շուրջ 30.210 մլրդ դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 33.9%-ը)
- **Մշակույթի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 10.53 մլրդ. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 11.8%-ը)
- **Սպորտի և երիտասարդության հարցերի** ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվում է 569.5 մլն. դրամ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.6%-ը)
- **Առողջապահության ոլորտի** ֆինանսավորումը կազմում է 2.665 մլրդ դրամ (2.9%): Նախատեսվում է իրականացնել բժշկական կենտրոնների, հիվանդանոցների շենքերի հիմնանորոգումը, 24 գյուղական համայնքների ամբուլատորիաների, բուժկետերի վերանորոգումը և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումը, արտահիվանդանոցային պոլիկլինիկական, հիվանդանոցային, շտապ օգնության, ախտաբանաանատոմիական և այլ ծառայությունների ֆինանսավորումը:
- **Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման համար** կպահանջվի 201.3 մլն դրամ (0.2%): Նախատեսվում է ֆինանսավորել երեխաների ցերակային կենտրոնների ստեղծումը, թեք հարթակների կառուցումը քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում և այլն:

1008. **Գյուղատնտեսության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսված է ծախսել 9.9 մլրդ դրամ (11.2%): Ոլորտի ֆինանսավորումն ուղղված է ոռոգման

համակարգերի կառուցմանը, նորոգմանը, անասնապահության զարգացմանը, պտղաբուծության զարգացմանը, մեքենատրակտորային պարկերի ստեղծմանը, անասնաբուժական տեղամասերի վերակառուցմանը, անասնաբուժական լաբորատորիաների վերանորոգմանը, դրանց համար անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը, գյուղական համայնքներում կրծողասպան աշխատանքների իրականացմանը:

1009. **Բնապահպանության ոլորտ**ի ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 1.073 մլրդ դրամ (1.2%): Ֆինանսավորումը նախատեսվում է ուղղել մարզում որսահանդակների ստեղծմանը, օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերմանը, արգելոցի և այլ բնապահպանական ծրագրերի իրականացմանը:

1010. **Զբոսաշրջության ոլորտում** նախատեսվում է իրականացնել 776.0 մլն դրամի ներդրումներ (0.9%), որոնք կուղղվեն էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծմանը, զբոսաշրջային օբյեկտներ տանող ճանապարհների վրա վահանակների և պաստառների տեղադրմանը, ոլորտի աշխատակիցների մասնագիտական կարողությունների բարելավմանը: Ընթացքում՝ կապված Տաթևի վանական համալիրի վերականգնման ծրագրի իրակագործման հետ, անհրաժեշտությունից ելնելով Երևան Մեղրի զբոսաշրջային ուղղու՝ ուղղությամբ իրականացվելիք ֆինանսավորումը կվերանայվի և կկատարվեն ճշգրտումներ:

1011. **Մարզային և համայնքային ենթակառուցվածքների ոլորտում** ֆինանսավորման համար նախատեսվում է ծախսել 23.744 մլրդ դրամ (26.6%): Այստեղից պարզ է դառնում, որ մարզի ծրագրի ֆինանսավորման զգալի մասը կուղղվի ենթակառուցվածքներին, այդ թվում՝

- **Ճանապարհաշինության ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 19.3 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 21.6%-ը)
- **Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 1.129 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 1.3%-ը)
- **Գազամատակարարման ոլորտի** ֆինանսավորման համար նախատեսվում է 3.298 մլրդ. դրամ (ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարի 3.7%-ը)

1012. **Քաղաքաշինության խնդիրներին վերաբերող ոլորտում** նախատեսվում է ծախսել 6.2 մլրդ դրամ (7.1%),

1013. **Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության բնագավառում** նախատեսվում է իրականացնել բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման աշխատանքներ՝ սողանքների, սելավների, հեղեղումների վտանգների վերացում և մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմում: 2015-2018թթ. մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար նախատեսվում է ծախսել 101,450 մլն դրամ (0.1%):

1014. Մարզի բոլոր 97 համայնքների 2014-2017թթ. քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ոլորտային կապիտալ ծրագրերի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է **շուրջ 17.9 մլրդ դրամ**: Նշված ծրագրերը, համաձայն հայեցակարգի, առանձին հավելվածով կցվել են ՄԶԾ-ին:

1015. ՀՀ Արարատիի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված ոլորտների ամփոփ ֆինանսավորումը ներկայացված է հավելված 14-ում, ընդհանուր գումարը կազմում է շուրջ 89**.110** մլրդ.դրամ, որից՝

պետական բյուջե	- 2.227 մլրդ դրամ
համայնքային բյուջե	- 100.0 մլն.դրամ
մասնավոր ներդրողներ	- 3.026 մլրդ.դրամ
այլ աղբյուրներ	- 83.756 մլրդ դրամ:

15. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ